Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Шифр
67 - 71

1(01)
գ-90
Ա.

ՏԱՐԵՐՔ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ

թարգմանեալ յօրիենեալ

Ի Հ. ԱԻՔՍԵՆՏԻՈՍԷ Վ. ԳՈՒՐԳԵՆԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Հատոր Գ.



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՍ

—

1869

9271

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

(4334
41)

1868

69-2001

Ա. ՍՏՈՒԱԾԱՅՕՍՈՒԹԻՆ

ՄԱՍՆ Գ.

ՄԱՄՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍՏՈՒԱԾԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Անհերքելի ճշմարտութիւն մի է որ աշխարհքիս որ և իցէ կողմն և ի և իցէ ժամանակ՝ բոլոր մարդկանց սեպհական սեպուած չատ մի գաղափարներ ու ծանօթութիւններ՝ ընկերութեան մէջ պահուած են աւանդի մի պէս, և այս ծանօթութիւններս գալ գալ ու յաղգէ յաղգ կը փոխանցին, մարդկութեան մեծ ազգատոհմին մտաւորական և բարոյական ժառանգութեան պէս: Անոնց կարգն սեպելու է Աստուծոյ գոյութեան, հանդերձեալ կենաց, բարւոյ և չարի զանազանութեան, և մեր պարտուց գաղափարներն: Մարդս այս ճշմարտութիւններս դիտողութեամբ, փորձառութեամբ և ու-

րիշ որ և է ոճով մի չարվիր. հապա ամէ-
նուն մտաց մէջ քիչ շատ պայծառութեամբ
ինքնիրեն կը յայտնուին, որչափ որ մեր
կարողութիւններն կը բացուին ու կը զար-
գանան՝ ընկերութեան մէջ առած աւան-
դական ուսմամբ և կրթութեամբ: Բայց
որչափ ալ մարդուս միտքը ինքնիրեն չգըտ-
ներ այս ճշմարտութիւններս տրամախո-
հական կանոններով՝ սակայն որովհետև
բանաւոր արարած է՝ կուզէ որ իր հաս-
տատապէս հաւատացած բաներուն ալ
պատճառն իմանայ: Մարդկային մտաց
այս պէտքն գոհացընելու և միանգամայն
քանի մի յանդուգն մարդիկն պատան-
ծեցընելու համար՝ որոնք ազգաց և ա-
զանց միաձայն վկայութեան դէմ ելլելու
ժպրհեցան, իմաստասիրութիւնն Աստու-
ծոյ գոյութեան փաստից ցուցակ մի չինած
է: Բայց գերազոյն էակին վրայ ունեցած
գիտութիւննիս անկատար կըլլար՝ եթէ
միայն անոր գոյութեան ապացոյցերն հաս-
տատէինք, առանց դնելու այն կատարե-
լութիւնները՝ որ իր էութեանն իսկակից
են, և այն առարկելիքն որ իր բնութե-
նէն առաջ կուգան: Ապա ուրեմն Աս-
տուածախոսութիւնն երկու մասն պիտի
բաժնուի, մին Յաղագս գոյութեանն Աս-
տուծոյ, և միւսն Յաղագս կատարելու-
թեանց նորա կամ՝ առարկելեաց:

Իմաստասիրութեան այս մասիս Աս-
տուածախոսութիւն ըսինք՝ որչեայս հա-

մար այն գերբնական գիտութենէն որ աստուածային յայտնութեան վրայ հաստատուած է և Աստուածաբանութիւն կըսուի: Կըսուի նաև Բնական աստուածաբանութիւն՝ որովհետև իր փաստերն և ապացոյցներն բնական և բանական սկզբանց վրայ հաստատուած է. որով այս ուսմունքս կրնանք սահմանել «Գիտութիւն որ լուսով բանին ևեթ ճառէ զփաստից գոյութեան Աստուծոյ և զատորոգելեաց նորա[1]»:

1 Եվրոպական լեզուաց մէջ գործածուած է. բառն Théodicée կընշանակէ արդարութիւն Աստծոյ որ Աստուածախօսութեան մէկ մասն է միայն. Էյայնիցի գրածն ալ Աստուծոյ արդարութեան և բարութեան վրայ միայն կը խօսի:

ՄԱՍՆ Ա.ՌԱՔԻՆ

ՅԱՂԱԳՍ ԳՈՅՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա.ստուծոյ գոյութեան ապացոյցներն ստուերաբար իրեք կարգ կը բաժնուին. բնական, բնական և բնազանցական. առանձին ոմանք՝ ի յատկագոհեւ կըսուին, որոնցմով նախապատճառ էակին գոյութիւնը արարածներով կը ցուցուի. միւսներն՝ ի յառաջագոհեւ որով Ա.ստուծոյ գոյութիւնն նոյն իսկ անոր գաղափարէն և անոր հարկաւորութենէն կը ցուցուի: Ա.ստանց գլխաւորներն հոս դնենք:

Ա.ստուծոյ գոյութեան բարոյական ապացոյցերը.

Ա.ստուծոյ գոյութեան բարոյական ապացոյցներն գլխաւորապէս կառնուին Ա.՝ի վիրաձայնուրիւնէ առնային ազգաց. Բ.՝ի բնական օրինաց:

Ա. ՌԱՋԻՆ ՍՊԱՏՈՒՅՑ. — *Միտեալ հաւատոյքին ազգաց.*

Այն բանն որուն ամէն ժամանակ և ամէն տեղ մարդիկ հաւտացեր են և իրենց բնաւորութեան եղած լուսով բանին համոզուեր են՝ պէտք է որ աստուածային ճշմարտութիւն սեպուի. որովհետև անմիջապէս մեր բնութեան վրայ հաստատուած է և ուրիշ հաստատութեան կարօտ չէ. «Միաձայնութիւն ամենեցուն ձայն է բնութեան» ըսաւ Կիկերոն[1]*. այսպէս է ահա Աստուծոյ գոյութեան հաւատքն, որուն կը վկայեն հին և նոր մատենագիրք որ աս բանիս վրայ գրեցին:*

Ի հնոց՝ Կիկերոնի Տուսկուլանաց մէջ կը կարդանք (Գ. 13). «Բազումք յանդէպ զաստուածութենէն իմաստասիրեն, այլ ամենեքին իսկ զգօրութիւն և զբնութիւն աստուածութեանն խոստովանին.. Քանզի յամենայն իրս՝ միաձայնութիւն ամենայն ազգաց՝ օրէնք բնութեան համարելի է»: Օրինաց ճառին մէջ ալ կըսէ. «Զինք ազգ այնպէս անհրահանգ և վայրագ, որ թէպէտ չգիտէցէ զոր աստուած արժան իցէ պաշտել, այլ և չգիտէցէ թէ հարկ է ունել զԱստուած»: Նոյն բանն ըսաւ և

1 Տուսկուլ գիրք Ա, ԺԳ:

Սեննեկա [1]. «Ա՛ռ մեզ ցոյց է ճշմարտութեան, եթէ ինչ մի յամենեցունց ընկալեալ իցէ. իսկ արդ՝ ի մէջ այլոց և զաստուածոյն գոյութիւն այսպէս ընդունիմք, զի յամենեսն միտս առնել են կարծիքս. և զի չիք ուրեք ազգ այնչափ հեռի յօրինաց և՝ ի կարգաց՝ որ ոչ հաւատացէ գոյութեան իրիք աստուածոց»: Պլուտարքոս ալ կըսէ [2]. «Հայեաց ընդ աշխարհ բովանդակ, և տեսանիցես քաղաքս առանց պարսպաց, առանց դպրութեան և զիրկս՝ ի բարեկարգ օրինաց. քնակիչս առանց տանց և սեպհական ստացուածոց և կրառութեան դրամոց, և անմասն ամենևին՝ ի գեղարուեստից ճարտարութենէ. բայց ոչ երբէք գոյես քաղաք անգէտ աստուածական էութեանն և զիրկ՝ ի պաշտամանց կրօնից»: Հնոց մէջ այնչափ ընդհանուր էր Աստուծոյ գոյութեան հաւատքն՝ որ անաստուածն Լուկրետիոս [3] ուրախակից կըլայր Եպիկուրոս վարժապետին՝ անոտնապաշտութեան լուծին տակ ծռած ժողովրդոց մէջէն գլուխ բարձրացնողներուն առջինն ըլլալուն համար: Վերջապէս հին աստենուան մեզի հասած վկայութիւններէն կը հաստատուի որ Աստուծոյ գոյութեան

1 Թղթ. ձԺԵ:
2 Ընդդէմ Եպիկուրեան Կոլոտինեայ ԼՈ:
3 Յաղագս բնութեան էից, գիրք Ա, տող 63 և վին:

հաւատքն հաստատուած էր եկեղեցւոց, Գաղղէացւոց, Հայոց, Պարսից, Հնդկաց, Ասրաբացւոց, Յունաց, Հռովմայեցւոց, Սկիւթացւոց մէջ և այլն: Մարդկան ազգի այս ընդհանուր հաւատքին վկայք են տաճարներն, բագիններն, զոհերն, կրօնական ծէսերն, անդրիներն, աստուածաբարուքիւններն, ելիւսեան գաշտն ու տարտարոսն կամ անոնց համազօր տեղերն, որոնք բոլորն ալ Աստուծոյ գոյութեան վարդապետութեան հետ կապակցութիւն ունին:

Իսկ նոր ժամանակներու գալով՝ յայտնի է նախ որ բոլոր քրիստոնեայք, Հրեայք և մահմէտականք և հեթանոսք կամ կռապաշտք հին մասին աշխարհի՝ որ ըսել է Ամերիկայի գտնուելէն առաջ ծանօթ եղած ամէն ազգերն՝ կրօնական պաշտօն մի ունէին, ինչպէս որ իրենց անունն ալ կը ցուցնէ, որով և առաւել կամ նուազ ճիշդ ծանօթութիւն մի ունին Աստուծոյ գոյութեանը վրայ: Եւ թէ որ ատեն մի տարակոյս ալ եղած է՝ միայն այն ազգաց համար է որ վերջի երեք դարուց մէջ յայտնուեցան. և իրաւի առջի բերան ոմանք անաստուած կարծեցին Ամերիկայի և Ովկիանիայի քանի մի ցեղերն. բայց ետքը աւելի հաւատարիմ և մանրապատում յարաբերութիւններ ունենալով՝ առջի կարծեաց սուտքիւնն և դիտողութեանց վերի վրայ եղած ըլլալն յայտնի եղաւ. և յե-

ին ժամանակս եղած անթիւ ճամբորդութիւններն ցցուցին որ աշխարհքիս երեսը ապրդ մի չկայ որ աստուածային էութեան պաշտօն չմատուցանէ[1]: Բաւական ըլլայ ըսելն որ ամէնէն համառօտ պատմութեանց գրքերուն մէջ ևս՝ ամէն ազգաց կրօնից վրայ ալ կարճառօտ տեղեկութիւն մի կը գտնես:

Այս բաներէս յայտնապէս կը հետևի որ թէ հին և թէ նոր ազգեր համաձայնութեամբ խոստովանած են Աստուծոյ գոյութիւնն, որով և անոր վրայ տարակոյս հանելն՝ բոլոր մարդկութիւնն խենթի տեղ դնել է:

Առարկ Ա. Ազգայ հաւանութիւնն ճշմարտութեան ապացոյց ըլլալու համար՝ պէտք է որ միաձայն ըլլայ. իսկ արդ Աստուծոյ գոյութեան վրայ եղած ազգաց հաւանութիւնն միաձայն չէ. վասն զի այլ և այլ ժամանակներ անաստուած մարդիկ տեսնուած են. ինչպէս հնոց մէջ Պրոտագորաս, Թէոդորոս կիւրենայի, Եպիկուրաս և այլն. իսկ յարդեաց Տիարոյ, Լաէրթի, տ'Հոլպախ և այլն. ասոնք ուրեմն Աստուծոյ գոյութիւնն համաձայնութեամբ ազգաց չկրնար ցուցուիլ:

1 Նոր ազգաց վարժք տես Ուղևորութեանց պատմութիւններն, Տարածման հաւատոյ տեղիներն և այլն:

Պատասխանի. Չանազանի մեծապոյնն։ Հաւանութիւնը ճշմարտութեան ապացոյց ըլլալու համար պէտք է դնել թարդապես համաձայն ըլլայ՝ ընդունիմ... իսկ թէ և բնազանցապէս՝ մերժեմ։

Նոյն չանազանութիւնն զօրէ փոքրագունին համար ալ։

Հաւանութիւն մի երկու կերպով միաձայն կրնայ ըլլալ. բնազանցապէս՝ որ է առանց իրիք բացառութեան. և բարոյապէս որ է բացառութեամբ իւիք։

Ցայտնի է որ ազգաց հաւանութիւնն ճշմարտութեան մի ապացոյց ըլլալու համար՝ ինչուան աստիճան մի համաձայն պէտք է ըլլայ. ապա թէ ոչ ճշմարիտ հաւանութիւն չկրնար ըսուիլ՝ որով և ձայն բնութեան չհամարուիր։ Բայց հարկ չէ որ այս համաձայնութիւնն բացառութիւն չունենայ. վասն զի ինչպէս որ բնական կարգի մէջ քանի մի հրէշներ մարդկային մարմնոյ հանրական ձևն չեն եղծաներ, այսպէս ալ իմացական և բարոյական կարգի մէջ քանի մի բացառութիւնք մարդկային հաւանութեան ընդհանրութեանն չեն վնասներ։

Համոզուած ենք որ Աստուծոյ գոյութեան վրայ մարդկային հաւանութիւնն բնազանցապէս համաձայն չէ. բայց բարոյապէս համաձայն ըլլալուն տարակոյս չկայ. որովհետև հին աւանդէն՝ի վեր եղած բացառութիւնքն բոլոր ազգաց հետ բաղդատեանք՝ ոչինչ են։

Առարկ Բ. Աստուծոյ գոյութիւնն չգիտնալով հաւատալն՝ չհաւատալու հետ հաւասար է. իսկ արդ յայտնի է որ շատ ազգեր ծուռ գաղափարներ միանգ ունեցած են աստուածութեան վրայ. արդ կարելի չէ մարդկանց հաւանութիւնն միաձայնութիւն սեպել այս վարդապետութեան վրայ:

Պիտ. Մերժելի է մեծապոյնն: Իրի մի գոյութիւնն ճանչնալուն և անոր յատկութիւններն ըմբռնելուն մէջ մեծ զանազանութիւն կայ. ժամացոյց մի ցոյս հազարաւոր մարդկանց՝ որ աննեւին տեսած չըլլան. ոմանք պիտի կարծեն որ մէկ մարդու չէնք ըլլայ, ուրիշներն թէ չատերն անոր վրայ աշխատած ըլլան. կրնան չհամաձայնիլ անոր յատկութեանցն վրայ. սակայն ամէնքն ալ կըմբռնեն թէ ժամացոյցն ինքնիրմէ հինուած չկրնար ըլլալ, և թէ պինդ հինող մի ըլալու է. Տ' Ալամպէր այս առարկութիւնս ըրած ըլալով՝ պատասխանել անոր այսպիսի ենթադրութեամբ կը պատասխանէ[1]: «Ենթադրենք որ, կ'ըսէ, երկու հազար հոգի ինձի վկայեն թէ իմ հերքած իմաստասէրս տեսած ըլլան. անոնցմէ ոմանք կըսեն թէ շատ իմաստուն, հաւատաւոր, բարեպաշտ ու պարզախրատ մարդ մի է, ու բացայայտ և խորհրդա-

1 Հետևեանք կամ գաւառական նամակաւն և մասնաւորական. Թրգ. Ն:

բնաւորութ մի. իսկ ուրիշներն թէ թևթևա-
միտ, կռուասէր, կնճռոտ, անապարծ,
խարդախ, ամբարիշտ և հարևանցի մէկն
է. հիմա կրնամ կարծել թէ տ' Ալամպէր
անունով մարդն չկայ, կամ թէ կրնամ
ըսել թէ այս կաճառորդին ինչպիսի մարդ
ըլլալն չգիտնալով հաւատալն՝ չհաւատալու
հետ հաւասար է: Անշուշտ չեմ կրնար ը-
սել. թէպէտ և այս ներհակ վկայութիւն-
ներուն չեմ կրնար անոր վրայ դատաս-
տան ընել, բայց անոր գոյութեան վրայ
չեմ կրնար տարակուսիլ. ահաւասիկ ճիշդ
ատենկ հասկնալու է նաև Ստուծոյ գո-
յութեան վրայ եղած բարոյական ապա-
ցոյցին զօրութիւնն կամ մարդկանց միա-
ձայն հաւանութիւնն: Ապա ուրեմն Ա-
ստուծոյ ստորոգելեաց վրայ եղած կար-
ծեաց պանդանութիւնն՝ արգելք չըլլար
անոր գոյութեան վրայ եղած հաւանու-
թեան միաձայնութեանն:

Եւս առաւել այս միաձայնութենէ դուրս
պէտք չէ սեպել այն իմաստասիրաց կար-
ծիքն՝ որ զԱստուած հոգի աշխարհիս ա-
պեցին: Սուրբ Աւգոստինոս[1] ատենդա-
ծին համեմատ Հռոմայեցոց մէջ ամէնէն
իմաստունն վարրոն՝ կը սորվեցնէ թէ «ա-
նոնք միայն Ստուծոյ բնութիւնն իմացած
են՝ որոնք որ հաւատային թէ Ստուած
հարժմամբ և բանիւ զաշխարհքս կառա-

1 Յալաթ. քղ. Ստուծոյ վերք Դ, գլ. Լ:

վարող հոգի մի է »: Իրաւ այս ննթադրութիւնս թէ Աստուած իմացական էակ մի է որ զաշխարհքս կը հոգևարէ ու կը կառավարէ, ինչպէս հոգին զմարմին, աստուածութեան ճիշդ գաղափար չկրնար ըլլալ, սակայն այս կարծիքս ընդունողներն անաստուածից կարգն չենք կրնար դնել:

Առարկ. Գ. Ազգաց հաւանութեան միաձայնութիւնն Աստուծոյ գոյութեան ապացոյց չկրնար ըլլալ՝ թէ որ այս հաւանութիւնն մոլորական սկիզբէ մի առաջ եկած է. արդ ազգաց համաձայնութիւնն կրնայ մոլորական սղբիւրէ մի առաջ եկած ըլլալ, ինչպէս սոփուորքիւն օրինաց որով վարին տիեզերք. երկիւղ պատճառել յահագին երեւութից բնութեան. քաղաքագետ հնարք իշխանաց և օրէնսդրաց, և կանխակալ կարծիք կամ՝ նախապաշարմունք դաստիարակութեան. ապա ուրեմն հաւանձայն հաւանութիւն ազգաց՝ Աստուծոյ գոյութեան ապացոյց չէ:

Պհ. Մերժի փոքրագոյնն: Նախ և առաջ կըսեենք թէ ազգաց հաւանութիւնն միաձայն ըլլալէն յայտնի է՝ թէ մոլորական աղբիւրէ մի առաջ եկած չկրնար ըլլալ: Փորձն կը ցուցնէ թէ մոլորութիւն ըստածդ մանաւանդ տեղւոյ և ժամանակի մէջ կամ[illegible], և բնութիւննիս կը տրվեցըն է՝ որ ինչ որ ժամանակաւ և տեղեաւ անպատշաճ է՝ ճշմարտութեան յայտնի ապացոյց սեպենք:

Բայց անաստուածից ննթադրութիւնն ալ ընդունելով՝ դիւրաւ կրնանք ցուցնել որ Աստուծոյ գոյութեան միաձայն գաւանութիւնն իրենց դրած աղբիւրներէն մէկէն ալ առաջ չկրնար գալ։ — ա. Եթէ Աստուծոյ գոյութեան հաւանութիւնն ոգիտուածքնիկ առաջ եկած սեպենք՝ պէտք է որ գիտութեանց ծաղկելովն փարատեր. և սակայն ամէն ժամանակ տեսնուեցան մեծամեծ հանճարաւոր մարդիկ որ այս գոյութեան հաւատային։ Որ մնաց որ կրնանք մենք անաստուածներն ստիպել՝ որ մեզի ցուցընեն Աստուծմէ դուրս բանաւոր պատճառ մը, որով համագոյից երևոյթներն մեկնեն։ — բ. Նախկին երկիրղ առնծ գաստուածս յաշխարհի ըստած ամբարիշտ առածն Պետրոնիոսի համարուած հատուածներու մէջ կը կարդանք. սակայն եթէ բնութեան ահաւոր երևոյթներն ինչպէս կայծակն, երկրաշարժն և այլ ահագին երևոյթներն պատճառ եղած ըլլային երկիրդի Աստուծոյ գոյութեան գաւանութեանն՝ պէտք էր որ մարդիկ զԱստուած սարսափելի և անգութ բռնաւոր մի սեպէին. ուր ընդհակառակն բարի և բարերար էակի մի տեղ կը դրուի. ինչպէս յայտնի է Հռովմայեցւոց մէջ սովրական եղած լատին վերտառութենէ D. O. M. Ա. Ա. Ա. Աստուծոյ Ամենաբարւոյ և Ամենամեծի։ Ամէն մարդ կարդացած է կաթնոտա կուրտիոսի մէջ Սկիւթացւոց առ Ալեքսանդր

ըսած այս խօսքերս [1]. «Եթէ Աստուած եւ՝ բարիս չնորհել մարդկան պարտիս, և ոչ զնոցայն բառնալ 'ի նոցանէ»: Որ թողունք որ շատ մարդիկ վախն բանի տեղ չեն դներ, և սակայն ասոնք ալ ուրիշներուն պէս հաստատութեամբ հաւատացած են Աստուծոյ գոյութեանն: Վերջապէս վախն վտանգներէ զգուշացնել կուտայ զմարդս, բայց ամենևին վերաբերութիւն չկայ այս վախիս մէջ և այն հաւանութեանն՝ թէ այս կամ այն պատճառին զօրութենէն առաջ եկած ըլլայ այն վախին ատիթն: — Գ. Աստուծոյ գոյութեան հաստատութիւնն իշխանաց և օրէնսդրաց հնարքեն առաջ եկած չկրնար ըլլալ շատ պատճառ. թէպէտ և այս անհնարին բանն հնարաւոր ալ ենթադրենք թէ ժամանակաւ և տեղեաւ իրարմէ յանհուն հեռու եղող իշխաններն ու օրէնսդիրներն՝ բոլորն ալ այս բանիս մէջ իրարու համաձայն ալ զըտնուած ըլլան, սակայն չէին կրնար ազգերն այս վարդապետութեանն համոզել, որովհետև բոլորովին անոնց կրից և ախտից հակառակ էր, և բոլոր մարդկային կենաց վրայ այնչափ ազդեցութիւն ունի ու այնչափ ծանր պարտքեր կը դնէ՝ որ այն սկըզբունքն հաստատելու համար աւելի անդրդուելի պատճառներ հարկաւոր էին: Եւ երկրորդ որ մարդկային կամքով հնա-

1 Գլուք ե, գլ. ը:

րուած կարծիք մի՝ երկարատև չկրնար ըլ-
լալ. «Չկարծեաց հաստատութիւն եղծա-
նենաւուրք, զբնութեան գատաստան հաս-
տատեն» ըսաւ Կիկերոն[1]: Վերջապէս ե-
թէ աշխարհքս առաջ անաստուած էր՝ ու
յետոյ յանկարծ իշխանաց քաղաքակի-
տութեամբն աստուածպաշտութեան դար-
ձաւ, պէտք էր որ պատմութեանց մէջ աս
մեծ յեղափոխութեանս հետքն գտնուեր,
ինչպէս որ մարդկան ազգի ամէն մեծա-
մեծ յեղափոխութիւններն պահուած են,
զոր օրինակ պետութեանց փոփոխութիւնն
ու մեծամեծ գիւտերն, որ Աստուծոյ գո-
յութեան գաւանութեան հետ բաղդատե-
լով ոչ ինչ բաներ են: — Դ. Չկրնար ը-
սուիլ որ Աստուծոյ գոյութեան հաւատքն
՛ի դաստիարակչական նախապաշարմանց ա-
ռաջ եկած ըլլայ. վասն զի այս նախապա-
շարմունքս Աստուծոյ գոյութեան հաւա-
տոց պէս ամէն տեղ և ամէն ժամանակ
մէկ չէ: Ընդհանրապէս գերագոյն մար-
դիկ՛ի դաստիարակութեան նախապաշար-
մանց ազատ են. և սակայն կը տեսնենք
որ այն մարդիկն ալ իրենց գրուածոց մէջ
Աստուծոյ գոյութեան վարդապետութիւնն
կը պատուեն: Ուր թողունք որ դաստիա-
րակապէս ըսելով կը հասկցուի հրահանգի
մի աւանդութիւնն, և անոր չբացատրուիր
թէ այս աւանդուած կարծեաց սկիզբն ուս-

1 Յաղագս բնութեանն աստուածոց գիրք Ե, գլ. Ե:

կ՚ից է։ Եւ ինչ որ վերը քաղաքագիտութեան համար ըսինք՝ նոյնն ատոր համար ալ կրնանք ըսել, անոր անհնարութիւնն ցուցընելու համար։

Ապա ուրեմն Աստուծոյ գոյութեան դանութիւնն ոչ ՚ի տգիտութենէ առաջ կու գայ, ոչ յերկիւղէ, ոչ ՚ի քաղաքագիտութենէ և ոչ ՚ի դաստիարակութենէ, այս ինքն այն մոլորութեանց աղբիւրներէն՝ որոնց այնչափ մեծ ազդեցութիւն կը ընորհեն անաստուածք։

Առարկ. Դ. Ազգ և ազինք ընդհակառակ ժամանակ չատ մոլորութեանց հաւատացին թէ ՚ի բնական կարգի, ինչպէս թէ արեւս երկրիս բոլորն կը դառնայ. և թէ ՚ի բարոյական կարգի, ինչպէս էր բազմաստուածութեան մոլորութիւնն. ապա ուրեմն ՚ի միաձայնութենէ ազգաց՝ Աստուծոյ գոյութիւնն չկրնար ապացուցուիլ։

Պատ. Հետեւանքն մերժելի է։ Աստուծոյ գոյութեան միաձայն դաւանութեան հետ ամենևին չեն կրնար բաղդատուիլ այդ ընդդիմադրեալ կարծիքներն. վասն զի այդ կարծիքներն ոչ երբէք հանրական եղած են, և որոնց սկիզբն մոլորութենէ մի առաջ եկած ըլլալն կրնայ ցուցուիլ։

Առաջին օրինակին համար կըսենք. արեւուն երկրիս բոլորն չրջելուն մէջ երկուքան կը նկատուի՝ երեւոյթն և երեւութին պատճառն։ Մարդկանց վկայութեան հաստատուն է արեւուն երկրիս բոլորտիքն կա-

տարած առնելոյդ չարժուիմն . և այս չարժուման իրական ճշմարտութիւն ու է թէ և առերևոյթ : Իսկ երևութին բացատրութեանը գալով՝ պէտք է դիտել որ ուսումնական բացատրութիւն ու միայն սակաւաթիւ խնդրոյ կրնան ըմբռնել, և ոչ ոքնց կարծիքն այլոց օրէնք կը սեպուին . այնպէս որ եթէ ներհակ կարծեաց մէջ մոլորութիւն ալ կայ, սակաւուց ոմանց միայն համարելի է , այսինքն անոնց որ այս բաները խելք կրնան հասցնել : Դարձեալ սա ալ դիտնալու է որ այսօրուան ընդունելի կարծիքն ալ պարզապէս դրութիւն ու է՝ որուն ստուգութիւնն բայարձակապէս չկրնար յուցուիլ, թէպէտ վերջի ծայրը հաւանականութեան հասած է :

Իսկ բազմաստուածութեան գալով՝ պէտք չէ կարծել թէ մարդկային մտաց այս ցնորքը յիրաւի ընդհանուր եղած ըլլայ՝ նոյն իսկ հին ժամանակները . վասն զի ինչպէս որ ամէնքը գիտեն՝ Հրեայք զմի Աստուած ևեթ պաշտէին արարիչ երկնի և երկրի . և աստուածաչունչ գրոց մէջ չատ տեղ կը կարդանք որ այլոց ազգաց մէջ ալ նոյն Աստուածն պաշտողներ կային . և եթէ չատ հին առեններն՝ ի վեր ելլենք՝ Հնդկաց, Մենէացւոց , Պարսից և ուրիշ ազգաց սրբազան գրոցը մէջ ալ անհերքելի վկայութիւններ կը գտնենք ամէն էակայ ակզբան միութեանը վրայօք [1] : Նախնի խնամատարութ-

1 Տես՝ ի Պատմութեան խնամ :

երևելիներէն չատերն նոյն ճշմարտութիւնը ճանչցած են, ինչպէս Պիւթագորաս, Անաքսագորաս, Սոկրատ, Պլատոն, Արիստոտել, Կիկերոն և այլն[1]: Եւ բազմաստուածութեանատատպելայ հակառակ Աստուծոյ միութեան ծանօթութիւնն բոլորովին չնչուած չէ հեթանոս աղգաց մէջ. գերագոյն Աստուծոյ մը գաւանութեան հետքը կը գտնենք հեթանոս մատենագրաց մէջ երբ բացարձակ և եզականապէս Աստուած կը կոչեն զնա, նաև ամկին բնականական լեզուին մէջ, ինչպէս որ հռովմայեցիք կըսէին. Ո՞վ Աստուած, Աստուած տեսանէ, Աստուծոյ յանձն առնեմ, Աստուած տացէ քեզ և այլն[2]. որոնց համար Տերտուլիանոս կըսէ[3] թէ բնականապէս քրիստոնեայ հոգւոյ մի վկայութիւններ են:

Վերջապէս բազմաստուածութիւնը աւեն մի որչափ ալ ծաւալած ըլլար՝ սակայն վաղուց՝ ի վեր կրթեալ աշխարհիս կրօնքը ըլլալէն դադարած է. ապա ուրեմն ոչ միայն թուոյ այլ և ժամանակի կտրմանէ ալ ընդհանուր չէ այս կարծիքս. և աստուածութեան գաւանութեան հետ չկըրնար բաղդատուիլ:

1 Տես՝ ի Պատմութեան խմատ:
2 Կիպրիանոս Յալագս նահատութեան գրոշէլոյ գլ. ԺԸ:
3 Տերտուլ. Ազատգոլ գլ. ԺԷ:

Ա. ալ ըսենք որ բազմաստուածութիւնը նախապաշարմանց պղիւրէ առաջ եկած ըլլալը դիւրաւ կը ցուցուի. որովհետեւ մարդիկ՝ ի զգալեաց պաշարեալք՝ չէին կրնար միոյ Աստուծոյ գաղափարին բարձրանալ, որ զգայութեան տակ չէինար. և խելքերնին ալ տակաւ ըլլալով՝ Աստուծոյ զօրութիւնն ալ իրենց խելքովն կը չափէին, և աստուածներն կը շատցնէին՝ որպէս զի տիեզերաց կառավարութեանն բաւեն. կամ վերջապէս իրենց ախտերէն զերծուած կուզէին աստուածոց օրինակովն իրենց կրքերն արդարացնել ու անվեզածիր ընել։

ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՑՈՑՑ. — *Բնական օրէնք.*

Մարդուս խիղճն միշտ պանապանութիւն կը դնէ բարւոյ և չարի մէջ. կը ճանչնայ իր պարտաւորութիւնն մէկն ընելու ու մէկալէն խորշելու, որ մեր հոգւոյն վրայ տպաւորուած օրէնք մի է. արդ ամէն օրէնք օրէնադիր մի կենթադրէ, այսինքն իշխանութիւն մի պանիկայ հրամայելու. իսկ արդ այս օրէնադիրն մարդս ինքն չկրնար ըլլալ. որովհետեւ բնական օրէնքն իր մէջն է, անկէց կախում չունի, և մանաւանդ անոր չուզելովն ևս կայ։ Ապա ուրեմն մարդէ վեր իշխանութիւն մի կայ. այս գերագոյն իշխանութիւնն Աստուած է. ապա Աստուած կայ։ Նոյնպիսի ապա-

ցոյց մի կրնանք հանել նաև՝ի խոյրից խըղճի որ՝ի մեզ է և հակառակ մեզ, և՝ի գերագոյն իմն իշխանութենէ ունի իւր ծագումն։

Աստուծոյ գոյութեան բնական ապացոյցերը.

Այս բնական ապացոյցներն որ աշխարհախօսականք ալ կըսուին՝ երեք են, և կառնուին Ա.՝ի տեսողզգրծոցութենէ. Բ.՝ի շարժմանէ ներքոյ. և Գ.՝ի կարգաց համաձայից։

ԱՌԱՋԻՆ ԱՊԱՑՈՅՑ.—*Տեսողզգրծոցութիւն ներքոյ.*

Բովանդակ աշխարհք համոզուած է որ Աստուած է ստեղծիչ նիւթոյ. ապա գոյ արարիչ ոք նիւթոյ։ Եւ յիրաւի կամ նիւթն չէր կրնար գոյանալ առանց ստեղծուելու, կամ թէ՝ի հարկէ և յիսկութենէ գոյացեալ է. արդ չկրնար ըսուիլ թէ նիւթն գոյ՝ի հարկէ և յիսկութենէ. վասն զի՝ի հարկէ և յիսկութենէ գոլն՝ այնպիսի իմն գոյութիւն է՝ որ անգոյութիւնն՝ հակառութիւնն ածէ՝ի մէջ. և այս երկու զաղափարքս նոյնական են. օրինակաւ մի բացատրելու համար, հարկ է եռանկեան ունել անկիւնս երիս և երիս միայն. այնպէս որ հակառութիւն կըլլայ ըսել եռանկիւն առանել կամ նուազ անկեամբ քան զերիս. և որովհետև զհակառականս կամ զիսկապէս անհնարինս՝ մարդուս միտքը չկրնար ըմբռ-

նել՝ ոչ ոք կրնայ ՚ի միտ առնուլ եռան-
կիւն մը երկու կամ չորս անկիւնով։ Ապա
ուրեմն ամենայն ինչ որ ըմբռնելի է՝ կա-
րելի է և չիք ՚ի նոսա հակասութիւն. արդ
մարդուս միտքը կրնայ նիւթոյ ոչէութիւնն
ըմբռնել. օրինակի համար խորանարդ մե-
տրաչափ նիւթ մի աչքիս առջև բերելով՝
կրնամ ես ինձի հարցընել թէ արդեօք կըր-
նամ անոր ոչէութիւնն ըմբռնել. և կիմա-
նամ որ այս ենթադրութիւնս մտքիս հա-
կառակ չգար։ Նոյնն կըսեն ինձի նաև ա-
մենայն իւելացի մարդիկ, որովհետև միտ-
քըն հարկաւորապէս կըմբռնէր նիւթոյ մի
այս որոշեալ չափով քանակին գոյու-
թիւնն. արդ ինչ որ այս խորանարդ մե-
տրին համար ըսինք՝ նոյնն կրնանք ըսել
ուրիշ մետրի կամ երկու երեք կամ աւելի
չատ մետրի համար, և հետևապէս բովան-
դակ նիւթոյն համար. և որովհետև կըր-
նանք զանիկայ անգոյ համարիլ, ապա հա-
կասութիւն չէ զանիկայ անգոյ համարիլն։
Ապա ուրեմն նիւթն ՚ի հարկէ և յիակու-
թենէ չունի զիւր գոյութիւն. ապա ուրեմն
նիւթն չկարէր գոլ առանց լինելոյ ստեղ-
ծեալ. ապա գոյութիւն նիւթոյ հաստատ
զգոյութիւն Աստուծոյ։

Այս ապացուցիս վրայ կ՚աւելցնենք այս
պատճառս ալ որ նիւթն հազարումէկ թե-
րութեանց և փոփոխութեանց ենթար-
կեալ ըլլալով՝ չատ հեռի է այն անբաւ
կատարելութիւններէն՝ որ իսկական են

էակի հարկաւորութեամբ գոյացելոյ, ինչպէս որ յետոյ պիտի տեսանենք։

Առարկ. Բանն ոչ երբէք կընդունի զանհընարինս. իսկ արդ ստեղծագործութիւնն անհնարին է, որպէս և առաջս ցուցանէ Յովնէ ոչինչ, ապա և այլն։

Պիտ. Ս. Փոքրագոյնն մերժելի է. Բան մտաց շատ ինչ կըմբռնէ իբրև պարզապէս կարելի. արդ մտաց հակառակ չէ որ պարզապէս կարելիք գայցեն ստուգապէս ի գոյութիւն. բաւական է որ զանոնք ի գոյութիւն աճող պատճառ մի ըլլայ. և այսպիսի պատճառ մի կրնանք համարիլ, այսինքն, անհուն էակի մի զերագոյն զօրութիւնն. որովհետև մտաց հակառակ կըլլայ որ անսահման զօրութիւն մի զկապրելիս չկարենայ ածել ի գոյութիւն։ Ստեղծագործութիւնն անհնարին սեպող իմաստասիրաց պատճառն այն է՝ որ կարելիութիւնն չեն ըմբռներ. «Որչափ ապուշ և ծաղրելիք են իմաստասէրքդ, կը գոչէ Մալեբրանչ[1] այս նիւթոյս վրայ խօսելով. կարծեն թէ ստեղծագործութիւնն անհնարին է. վասն զի չեն ըմբռներ որ Աստուծոյ զօրութիւնն այնչափ մեծ է՝ որ կրնայ յոչէից բան մի գոյացնել. բայց արդեօք կրնա՞ն ըմբռնել որ Աստուծոյ զօրութիւնն կարող ըլլայ յարդի մղեղ մի չարժելու»։ Եւ յետոյ կաւելցնէ (թ. 5). «Եթէ նիւթն

1 Խորհրդածութիւնք քրիստ. թ. 3։

անատեղծ էր՝ Աստուած ոչ կրնայ զանիկայ չարժել և ոչ բանի մի բերել. վասն զի Աստուած առանց նիւթն ճանչնալու չկրնար ոչ չարժել զանիկայ և ոչ իր իմաստութեամբն՝ ի յարդ ածել: Արդ Աստուած չկրնար ճանչնալ զանիկայ՝ առանց զինքը գոյացնելու. վասն զի Աստուած ինքն իր մէ կառնու իր ծանօթութիւններն. ոչ ինչ կրնայ անոր վրայ ազդել, կամ զինքն լուսաւորել»: Այսպնից իր Աստուածաբանութեան մէջ (թ. 398) այս հատուածս մէջ բերելով՝ այս խօսքերս կաւելցնէ. «Ես ալ Մալպրանշի կարծիքէն եմ՝ որ ընդհանրապէս ստեղծագործութիւնն՝ ինչպէս որ պէտք է ըմբռնելու ըլլանք՝ այնպէս դժուար չէ անոր հասանիլն ինչպէս որ կարծուի, և կերպով մի արարածոյ յարարչէն ունեցած կախման ծանօթութեան մէջ կը բովանդակի»:

Վերն յիշուած առածն ալ այսպէս զանազանելու է. Ցոյնէ ոչ ինի ինչ, այսինքն ոչինչն չկարէ լինել գործունեայ պատճառ ընչի. ընդունելի է. իսկ այս մարդ թէ որ ինչ ոչն էր՝ չկարէ գալ՝ ի գոյութիւն, մերժելի է: Ոչինչն ընչի պատճառ ըլլալ չկրնալէն՝ չհետևիր որ չեղած բանը չկարենայ գալ՝ ի գոյութիւն ներգործութեամբ աննախընթաց պատճառի: Պէրժիէ կըսէ [1].

1 Պատմական և վարդապետական Ճառ յաղագս Հիմարիտ կրօնիցդ հա. ը, էջ 278:

«Նիւթն առեղծուէն չեղաձէն առնուլ չի-
մացուիր, այլ առ նմին զգայութիւն զոր
ոչն ունէր. յորժամ մենք խորհուրդ կամ
չարժմունք մի կարտադրեմք, ոչ եթէ կա-
նուխ զայնս, այլ դնեմք ուր ոչ գոյր։ Ներ-
գործիչ զօրութեան էութիւնն է առ գո-
յութիւն այնմ որ չգոյր»։

Անձնական փորձով ևս կը հաստատեմք զանգոյս՝ի գոյութիւն ածելոյ զօրութեան էակութիւնն, ոչ միայն երևութից արտա-դրութեամբ այլ և նիւթեղինաց։ Եւ յի-րաւի քանի մի տարի յառաջ ուր էին մեր մտաւորութիւնն, կամքն և մեր եառնե-նըն. քանզի եմք այժմ էակք խոհուն, որ առաւ մի յառաջ չգոյին, և այժմ կան, ապա ուրեմն եկին՝ի գոյութիւն։ Այսպէս յանձինս մեր կը յայտնուի ծանօթութիւն արտադրիչ պատճառի նիւթեղինաց։

ԵՐԿՐՕՐԴ ԱՊԱՑՈՑՑ. — *Կարևորութիւն առաջին շարժման.*

Նիւթոյ նախկին շարժողի զգալիքն՝ ամենազօր էակի մի կամ Աստուծոյ գո-յակարին հետ կը միանայ։ Այդ շարժման գոյութիւնն կը հաստատէ՝թէ գոյ նախ-կին շարժող որ նիւթոյ։ Վասն զի կամ շարժման գոյութիւնն կը հաստատէ նախ-կին շարժողի մի գոյութիւնն, կամ թէ նիւթն՝ի հարկէ և յիսկութենէ ունի զշար-

ժուռին. արդ այս երկրորդ ենթադրութիւնն անընդունելի է։

Վասն զի ե. Եթէ չարժուռին նիւթոյն էական ըլլար՝ անոր դադարուռին Հակառակութիւն պիտի սեպուեր. իսկ արդ կըրնար նոյնիսկ նիւթն ի դադարման Համարել, ինչպէս որ չարժաբանութեան սկզբունք սեպուած է նիւթոյ չարժման և դադարման անմիտելի ըլլալն։ Եւ առաել և այ միայն նիւթն ի դադարման մուռին մուռին մուռ Հակառակ չէ, այլ և դադարուռին անոր բնական վիճակն կրնանք Համարել. և այս այնչափ ճշմարիտ է որ եթէ անհնդ ի նիւթ մի աչքերնուս առջև չարժելու ըլլայ՝ մէկէն կենթադրենք թէ օտար պատճառ մի այն չարժումնէն տուաւ։

ը. Եթէ չարժուռին՝ նիւթոյն էական ըլլար՝ պէտք էր որ այս չարժուռին կամ ամէն ուղղութեամբ ըլլար կամ մասնաւոր ուղղութեամբ մի. վասն զի չարժում մի առանց ո և իցէ ուղղութեան մի չկրնար մուռածուիլ. արդ այս երկու ենթադրութիւններս ալ անընդունելի են։ ա. Ցկըրնար ըսուիլ թէ ամէն ուղղութեամբ չարժում մի նիւթոյն էական ըլլայ. վասն զի ամենայն ուղղութեամբք չարժում մի անհնարին է. որովհետև մարմին մի որ Հաւասարապէս այ և ձախ վեր և վար միտէ կամ թէ ըսել ամէն դիրք ունենայ՝ի Հարկէ պէտք է որ դադարի։ բ. Ցկրնար դարձեալ ըսուիլ որ մասնաւոր ուղղութեամբ

չարժում մի նիւթոյն իսկական ըլլայ . ո՞ր
րովհետև եթէ նիւթոյ չարժման մասնա՞
ւոր ուղղութիւն մի միայն իրեն էական
ըլլայ՝ ոչ մէկ պատճառ մի կրնայ զանիկայ
այլայլել . վասն զի փոփոխելի ուղղութիւն
մի չկրնար էական և հարկաւոր համարիլ :
Իսկ արդ առօրեայ փորձն մեզի կը ցու՛ցը՞
նէ որ նիւթն՝ի չարժման միշտ ուղղութիւ՞
նը կը փոխէ : Ա՛պա ուրեմն չարժումն՝ նիւ՞
թոյն էական չէ՝ ոչ մասնաւոր ուղղու՞
թեամբ և ոչ որ և իցէ ուղղութեամբ : Ա՛՞
պա գոյ նախկին չարժող ոք նիւթոյ, և հե՞
տևապէս գոյ Աստուած :

Եւ չկրնար ըսուիլ թէ կարելի է՝ի նիւթն
ըլլայ էական չարժում մի անորոշ . վասն
զի նախ անորոշ էական չարժում մի՝ ան՞
չարժութեան չատ կը մօտենայ . և չար՞
ժում մի ենթադրելէն առա՛ք է զա՞
նիկայ ամէն դիրքով չարժում մի համա՞
րինք և ունեցող ամենայն ատիճան արա՞
գութեան . ապա թէ ոչ ամմանաւոր և
որոշեալ չարժում մի սեպելու ենք : Ա՛ր՞
այսպիսի չարժում մի յայտնի արտառոց
է : Ա՛պա ուրեմն և այլն :

Գ . Ա՛տենգմէ զատ կը տեսանենք որ երկ՞
նային մարմնոց և երկրիս վրայ եղած մարմ՞
նոց չարժումն՝ իմաստուն , հաստատուն և
անփոփոխ օրինաց մի կը հպատակի : Ա՛ր՞
այս օրինաց ուրիշ պատճառ չենք կրնար
գտնել՝ բայց եթէ դիմելով յիմացական և
յամենազօր սկիզբ մի որ է Աստուած :

Ս.ռսրկ. Ս.մեծայն մարմինք զերար կը ձգեն, ապա ուրեմն չարժուձն՝ նիւթոյն էական է։

Պ/ս. ա. Պէտք չէ մոռնանք որ տիեզերայս ձգողութեան օրէնքը ենթադրութեան մի է, և ոչ առանց վիճաբանութեանց ընկալեալ. և ժամանակէ մի՛ի վեր ծանր տարակոյսներ կելլեն անոր ստուգութեանն դէմ. որովհետև չգիտցուիր թէ ինչպէս կարելի է որ մարմիններն այնչափ հեռուէն ու դատարկութեան մէջէն իրարու վրայ ազդեն՝ առանց միջնորդի որ կարենայ այս ազդեցութիւնն իրարու հաղորդել։ Ս.նոր համար բազումք յիմաստնոց եթերական հռաւոտի մի գոյութիւն կընդունին տարածեալ ընդ տիեզերս, և այս հոսանուտիս մէջ կը շարժին կշռելի մարմինք, և զոր գլխաւոր պատճառ համարին այն երևութից զոր մենք պարզ ձգողութեամբ կը մեկնենք։

բ. Հեռաւոնքն մերժելի է։ Եթէ տիեզերական ձգողութիւնն ևս ընդունինք՝ այն ևս ուրիշ բան չցուցներ բայց եթէ օրինաց գոյութիւն մի որ՛ի նախկին պատճառէ իրաց առաջ կուգայ, և ոչ ալ ինքն էական յատկութիւն կրնայ սեպուիլ նիւթոյն. ուրվհետև ձգողութեան գաղափարն նիւթոյ գաղափարին մէջ չամփոփուիր։ Ս.յս տիեզերական ձգողութիւնն զոր անաստուածք նիւթոյ էական կը համարին՝ այնչափ էական չէ՝ որ իր գոյութիւնն միջոցի հեռա-

սրտութեամբն յանհոգնա կը նուագէ, և յաչինչ կը վերջանայ եթէ միջոցի խորհրդն ընկղմինք։ Սրդ նիւթոյ իսկական յատկութիւն մի չկրնար այսչափ սահմանափակ ըլլալ, որովհետև մարմին մի որչափ ալ հեռանայ՝ նիւթ ըլլալէն չդադարիր։

Եթէ ձգողութիւնն նիւթոյ էական և համարինք, ինչ ընելու է անոր հակառակ եղած վանողական կամ հեռաձգական զօրութիւնն որ տիեզերաց մարմնոց վրայ կերևայ, և ուրիշ մարմնոց վրայ երևցած զանազան ձգողական շարժմունքներն։ Վերջապէս ինչ դրութիւն ալ հնարենք՝ պարզ ձգողութեանն երգործութեամբ չենք կրնար տիեզերաց մէջ եղած սքանչելի կարգաց բացատրութիւն մի տալ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՈՅՆ. — *Կարգ հաւասարից.*

Տիեզերաց տեսարանն Աստուծոյ գոյութեան ապացոյց ըլլալու համար երկու ինչ բաւական է. ա. տիեզերաց մէջ սքանչելի կարգ մի ըլլալն. բ. թէ այս կարգաց յօրինիչն միայն Աստուած է։ Սրդ այս երկուքս ալ ամենատոյդ են։

Նախ թէ սքանչելի կարգ մի կայ տիեզերաց մէջ։ Երբ կը տեսնենք այսչափ անթիւ էակներ հրաշալի գաշնակաւորութեամբ միացած, և անթիւ տարբերութեանց մէջ կատարեալ միութիւն մի, յայտ-

նի ցուցակութեամբ տահմանել վախճա-
նի մի, և այն վախճանին հասանելու յար-
մար միջոցներու ընտրութեամբ, չենք կըր-
նար տարակուսիլ թէ այս կարգս յիրաւի
կայ։ Եւ ահա այս նշաններս կը տեսանենք
աշխարհքիս վրայ՝ եթէ տիեզերաց ընդհա-
նուր ներդաշնակութիւնն դիտենք, և թէ
առանձինն նոյնն ինուռնք այն էակաց և
նիւթոց մէջ որ հողագնտիս վրայ են, և
թէ այն իւրաքանչիւր էակներն ձևացնող
մասանց զարմանալի համեմատութիւնն և
աքանչելի միաձայնութիւնն զննենք։

Հրաշալի ներդաշնակութիւն մի կայ տիե-
զերքս ձևացնող մասանց ամբողջութեանն
մէջ, և առանձինն մեր բնակած երկրին
հինուածքին մէջ։ Դիտենք մէյմը այն ան-
թիւ լուսաւոր մարմիններն որ մեր գլխուն
վերևն կախուած են, ինչ աքանչելի կար-
գաւորութիւն իրենց շարժման և իրարու
հետ ունեցած յարաբերութեանց մէջ. որ-
պիսի ճարտար արուեստիւ կը ճօճան մէկ-
մէկու վրայ անքակ տարածութեան մէջ.
ինչ ճիշդ համեմատութիւն արևուն մեծու-
թեան և հեռաւորութեան մէջ՝ համեմա-
տութեամբ երկրիս հինուածքին. եթէ աւե-
լի մեծ ըլլար և աւելի մօտ՝ երկիրս կը չոր-
նար ու կը բորբոքէր, իսկ եթէ աւելի պզտի կամ աւելի հեռու՝ կը սառէր ու բնա-
կիչ չէր ունենար։

Երկիրս հաստատուն է՝ դմեզ և իր վրայի մարմիններն վեր բռնելու համար. եթէ ա-

աելի կախուղ ըլլար՝ պիտի ընկղմէինք, իսկ թէ աւելի պինդ՝ չկարենայինք պիտի զանիկայ մշակել։ Ծովերու ջրերն ալի են և կարգաւոր չարժմունքէ զատ երբեմն ալ կը խռովին ու տակնուվրայ կըլլան՝ որով փոթաթենէ կը պահուին. որ եթէ այսպէս չըլլար՝ այն ջրոց բազմութիւնն մէջն լեցուած ամէն տեսակ ապականեալ նիւթերով՝ երկրիս բնակչաց մահաւէտ նեխութիւն կը պատճառէր։ Իսկ օդն որ կենդանական կենաց անդադարն է՝ երկիրս կը պատէ, և զանիկայ շնչող ամէն էակաց կազմուածքին կը յարմարի. եթէ աւելի թանձր ըլլար՝ կը խեղդուէին, իսկ եթէ աւելի նօսր՝ կեանքն պահելու անյարմար կըլլար։

Իսկ եթէ աչս ընիս գործարանաւորեակաց վրայ դարձնենք այլ աելի մեր մտադրութիւնն գրաւող հրաշալիք կը տեսնենք։ Եւ որովհետև մեր համառօտութեան ձեռք չատ որ այս ընդարձակ նիւթոյս վրայ խօսքերնիս երկնցնենք, ուստի բաւական սեպենք այս սքանչելի ներդաշնակութեան մէկ քանի հրաշալիքն առաջ բերել։ — Ինչ զարմանալի է բոլոր կազմուածքն. անոնց ամէն մէկ մասն բուսական օրինաց և իրարու համեմատ են, և միանգամայն նախատեսս խնամոտութիւն մի ամէն մէկուն բաժնին յարմար յատկութիւններ տուած է անոնց. օրինակի համար նոճին կարծր կազմուածք մի ունի, խժային կեղևներ ու

մշտապատ տերևներ՝ հիւսիսականց խաւաշունչ քամիից դիմանալու համար. ընդհակառակն հասարակածի փափուկ բոյսերն լայն ու չրոտ տերևներով ծածկուած են՝ արևուն չերմութեանը դիմանալու ու ծաղկին պաշտպանելու համար։ — Իսկ անապատց կազմուածքն իրենց վախճանին յարմար է. ուստի տափակ ակռաներ, բազմաթիւ ստամոքս և երկայն փորոտիք ունեցողներն՝ հարկաւ խոտակեր են. ընդհակառակն մսակերաց ակռաներն սուր, պարզ ստամոքս և կարճ փորոտիք ունին։ Իրենց որսը բռնելու համար բաժանեալ ու չարժուն մատուներ. և ոչ երբէք տեսնուած է որ ամբակաւոր կենդանի մի սայրատուր ակռաներ ունենայ որ չպիղծ յօշելու կուզայ. վասն զի այսպիսի կենդանի մի եթէ ըլլար՝ չէր կրնար ապրիլ։

Օդային, ջրային ու ցամաքային կենդանիներն իրենց կենաց համաձայն և աշխարհքիս մէջ կատարած պաշտօններնուն համեմատ գործիքներ ու յատկութիւններ ունին։ Օդից մէջ միշտ թափառող թռչունքին մեծատուրներն թեթև են՝ որ առագաստի պէս հովով կը լեցուին։ Իսկ ձկանց լուղային ջուրն կը ճղքէ առանց թրջելու։ Ասկից է որ այս երկու դաս կենդանեաց թևաձևներն իրենց բնաւորած տարերաց այսչափ յարմար են։ Ձկներն օդով լեցուն փամփուշտ մի ունին՝ որ ուզածնուն պէս կուռնցնեն ու կը ճղմեն, որով ջրին

ՄԷՋ վեր վար կելլեն ու կիջնեն՝ մինակ իրենց տեսակարար ծանրութիւնն փոխելով։ Իակ ճախանային թռչնոց ճիւերն լայն թիակներու պէս են, փետուրնին ալ խիտ և իւղային հիւթով մի պատած՝ որով ջուր չեն ծծեր։ Իակ գետոց ու լճաց եզերքըն բնակողներն ալ՝ տղմի մէջ քալելու յարմար բարձր ոտուքներ ունին, և իրենց վիզն ու կտուցն ալ անոնց յարմար երկայն է. իրենց կտուցին ծայրն ալ ջղերու փունջ մի՝ տղմին մէջ որդերն ու կերը գտնելու համար։ — Իակ վիրհատի անասնոց մէջ փիղը երկայն ու գլուրաչարժ պատիճ մի ունի, որովհետև գլուխը չատ ծանր ըլլալուն՝ վիզն ալ կարճ իրեն մարմնոյն բարձրութեամբն չէր կրնար ոչ ճարակիլ, ոչ ջուր խմել։ Եւ այն օգտակար կենդանին որ արաբացւոյն գանձն է ու անապատի նաւ կը կոչուի՝ բոլորովին անպիտան կազմուածք մի ունի իր վախճանին համաձայն. իր զարմանալի սակաւապիտութիւնն, իր ստամոքսին մասնաւոր կազմուածքովն երկայն ատեն ջուր խմելու կարօտութիւն չունենալն և իր թաթերուն յօրինուածքն յայտնի կը ցուցնեն, որ անապատին անհուն աղուամն անցնելու համար եղած է։ Ստուծոյ նախախնամութիւնն հրաշալի կերպիւ կը բնաւոյ իր արարածներն պահպանելու միջոցներուն մէջ. ինչպէս ամենապանդաղ անասուն կենդանեաց մէջ կրիայն որ իր ծանրաշարժութեամբն ինքզինքն չկրնար պաշտ-

պանել՝ դրահով մի ամրացած է. թմբրուձուկն թէպէտ լուռլալով իր որսին չհասնիր՝ բայց զանիկայ չանթահարելու կարողութիւն ունի: Եւ ամէնէն տկար միջատներն այնպիսի ճարտարութիւններ ունին՝ որով ինքզինքին՝ ի թշնամեաց կը պաշտպանեն և իրենց ապրուստն կը գտնեն: Ո՞վ չգիտեր մրջիւնին ճարտար գործունէութիւնն՝ որ քաղաքականութիւն կըլլանք կոչել. ո՞վ չէ տեսած անոր անհաշտ թշնամւոյն մրջառիւծին զարհուրը. ո՞վ չի-զարմանար մեղուաց կառավարութեան և իրենց վաստակոց վրայ: Ընդհանրապէս միջատաց կազմուածքն համեմատութեամբ իրենց մարմնոյն մանրութեանն՝ աւելի զօրաւոր է քան զուրիշ կենդանիներն. այնպէս ուժեան հետ թեթեւութիւն, դիւրաշարժութիւն և կորով յամենայն չարժմունս:

— Բայց աւելի զարմանալի է այն նորագիւտ աշխարհքն՝ զոր մանրադիտակ գործիքներն մեր աչաց զօրութիւնն աւելցնելով մեր առջին կը դնեն. օրինակի համար ջրին մէկ կաթիլին մէջ հազարաւոր լուզակք կան՝ որ Ովկիանոսի ձկներուն պէս անոր մէջ կը լողան. Լեօվէնհօէք անուանով բնագէտն այս մանրադիտական ճճեաց բիւրաւորներն համրեց տպաւ մի ծայրին վրայ. աւազոյ հատիկ մի անոնց համար այնչափ մեծ է՝ որչափ հոլապտնաս մեզի համար. և տակաւ աս աննկատելի մանր մարմնոյն մէջ ալ կենաց հարկաւոր գոր-

ծարաններն ունին ճիշդ համեմատութեամբ։

Հիմա քիչ մի կանգ առնուենք արարածոց հրաշակերտին վրայ. և որովհետև այս մեծ նիւթիս վրայ համառօտ մի կը ստիպուինք անցնելու՝ գոնէ բնութեան հրաշալի նկարչին խօսքերն յիշենք. «Մարդուս վրայ ամէն բան՝ նոյն իսկ արտաքին երևոյթը, կըսէ Պիւֆոն[1], իր արարածոց վրայ ունեցած գերազանցութիւնն կը ցուցընէ. կեցուածքն բարձրագիտակ, կերպն հրամայողական, գլուխն երկնաբերձ և կերպարանքն վսեմ, որուն վրայ դրոշմած է իր մեծապատուութիւնն, և հոգւոյն ըզծագրութիւնն իր դիմաց վրայ կերևնայ. բնութեան գերազանցութիւնն նիւթական գործարաններէն դուրս կը ցայտէ և աստուածային բոց մի իր երեսն կը բորբոքէ։ Կեցուածքն վսեմ, քալուածքն տիրական և աներկիւղ՝ իր ազնուական ցեղն կը յայտնեն. մարմնոյն վերջին ծայրերուէն մինակ երկրիս կը դպչի ու հեռուէն զանի կը նըկատէ, և զոգյս զանի կարհամարհէ։ Սանակ է ինքզինքն չնուաստացուցած մարդն. աճեցայն ինչ կը յայտնէ թէ ինքն է տէր աշխարհի, և իր կազմուածքին ու իմացականութեան մէջ ընդունած է այն ամէն կատարելութիւնները որ իր վախճանին հարկաւոր են։ Իսկ եթէ իր նեղքին

1 Բնաբան. յաղագս մարդոյ։

կաղմուածքն ընենք՝ որչափ աւելի զարմանաց նիւթ կը գտնենք. այսչափ անթիւ գործարանաց և շարժմանց մէջ այս համեմատութիւնս և միութիւնն հաստատողն որպիսի իմաստութիւն և նախատեսութիւն ունեցած պիտի ըլլայ. ով կրցեր է այսչափ կատարելութեամբ յարմար գործարաններ հաստատել այն պաշտօններն վարելու համար՝ եթէ ոչ անհուն իմացական էակ մի»:

Ա. յս ամէն ըսածներէս կը ցուցուի որ տիեզերաց մէջ յատակապիծ, ծրագիր մի և որոշ վախճան մի կայ, և այս վախճանին հասնելու յարմար միջոցներ. մէկ խօսքով համաձայնութեան և անոր մասանց մէջ հրաշալի կարգ մի կենար:

Երկրորդ՝ բնութեան կարգայ յօրինիչն Աստուած միայն կրնայ ըլլալ: Յիրաւի այս կարգս կամ գործ է Աստուծոյ, կամ արարիւնք դիպաց և կամ՝ ի հարկէ է. իսկ արդ այս վերջի երկու ենթադրութիւնք ալ անընդունելի են:

ա. Տիեզերաց կարգն դիպաց արգասիք չկրնար ըլլալ. դէպք ըսածդ անիմաստ բառ մի է և պատճառ մի չյայտներ: Արդ եթէ զաչխատիս դիպաց արգասիք սեպենք, կը համարինք որ հրաշալի կարգ մի կրնայ ըլլալ առանց պատճառի. որ մտաց հակառակ է. վասն զի ուր որ յայտնի վախճաններ և այն վախճանաց հասնե-

լու յարմար միջոցներ կը տեսնուին՝ հարկաւ հոն տեղն իմացական էակի մը ներգործութիւնն ճանչնալու է, և խելացի մարդ մի չկայ որ անոր գոյութիւնն չհետեւցնէ։ Իսկ արդ աշխարհքիս վրայ յայտնապէս կը տեսնենք այս վախճաններն և միջոցներն, ինչպէս որ ցըցուցինք։ Արդեօք մարդ մի կը գտնուի որ պալատ մի, անդրի մի, նկարք մի, գիրք մի կամ ժամացոյց մի տեսնելով՝ միտքն դնէ որ սոսկ նիւթոց, գունոց, գրոց, անուոց և գլխակաց դիպուածով նետուածքէ մի առաջ եկած ըլլան. ո՞չ ապաքէն ամէնքն ալ կընդունին թէ պէտք է որ խելացի յօրինիչ մի ունենան։ Եւ սակայն տիեզերաց հետ բաղդատելով ո՞չ ինչ բաներ են։ Ասպա ևս առաւել պէտք է հետևցնել որ տիեզերք ալ ունեցած են իմացական և իմաստուն ճարտարապետ մի։ Ասպա ուրեմն տիեզերաց կարգն դիպաց արգասիք չլլլնար ըլլալ։

Ե. Հարկի արդիւնք ալ չկրնար ըլլալ. վասն զի ա. եթէ տիեզերաց կարգն՝ի հարկէ ըլլար՝ անկէ զատ ուրիշ կարգ չէինք կրնար ըմբռնել, որ այնպէս չէ, և մարդ հակառակ չէ որ ուրիշ կարգով ալ կրնար սահմանուած ըլլալ։ բ. հարկ ըսածդ ալ դէպքի նման բան մի է և իմացական պատճառ մի չցուցներ՝ զոր կը յայտնէ բոլոր տիեզերաց ծրագիրն։ գ. աշխարհքիս վրայ կան մօտ և համօտ ճոխացեալ արարած-

ներ. որպ ասկէց աւելի անխելք բան կըլ-
նայ ըլլալ որ կոյր ձեռատագիրն արարիչ
սեպենք մոտաղ և ազատ էակաց[1]։ դ. վե-
րը ցցուցինք որ գոյութիւնն և չարժուն
նիւթոյն էական չեն, ապա ուրեմն և ոչ
նիւթոյն կարգն իրեն հարկաւոր է։ Ապա
կարգն որ յաշխարհիս՝ չէ արդասիք հար-
կի որպէս և ոչ դիպաց. ուրեմն յԱստու-
ծոյ եթէ յառաջ գայ. հետևապէս գոյ
Աստուած։

Առարկ. Ա. Միտքը կրնայ ըմբռնել հիւ-
լէից անթիւ դիպուածական բաղադրու-
թիւններ, այս բաղադրութեանց մէջ կը
մտնէ նաև աշխարհքիս արդի բաղադրու-
թիւնն ալ. ապա ուրեմն կրնայ աշխարհք
հիւլէից դիպուածական զուգընթացու-
թեան մի արդասիք սեպուիլ[2]։

Պտ. Ամէնէն առաջ նախորդը մերժելի
է այս պատճառներուվ. ա. աշխարհքիս մէջ
մտաւոր էակներ կան՝ որոնք չեն կրնար
հիւլէից դիպուածական զուգընթացութե-
նէն առաջ եկած ըլլալ. բ. պատճառի և
արդասեաց մէջ համեմատութիւն մի պէտք
է որ ըլլայ. իսկ արդ հասարակաց միտքն
պայծառ կըմբռնէ որ դիպաց և աշխար-
հիս պեղեցիկ կարգին մէջ ամենևին հա-
մեմատութիւն մի չկայ. գ. տիեզերաց

1 Մանթէսքիէօ Ոգի օրինաց գլուք Ա, գլ. Ա։
2 Տես՝ ի Պատմ. իմաստասիրութեան. ազանդ
եպիկուրեանց։

կարգն հաստատուն է. արդ եթէ դիպաց դիպուածական զուգընթացութեամբն եզած ըլլար՝ նոյն դէպքն զանիկայ չատոնց եղած կըլլար. դ. հիւլէից զուգընթացութեան դրութիւնն որ ամէն ատեն արտաքոց բան սեպուած էր՝ այսօրուան օրս բոլորովին ընկած է արդի դիտութեանց խուզարկութեամբն: Թէ և բուսական և կենդանական կազմուածոց հրաշալիք մէկդի դնենք՝ կրնա՞նք արդեօք հիւլէից դիպուածական զուգընթացութեամբն մեկնաբանել այն անթիւ բազկացումասնոց յօրինուածքն, որոնց մէջ մասնոց բազկացութեան օրէնքն ճիշդ կը դանուի՝ որչափ ալ զանազան ըլլայ իրենց բազադրութիւնն: Կրնա՞նք դիպուածոյ արգասիք սեպել այն ճիշդ և զանազան ձևերն զոր այլևայլ նիւթք կընդունին բիւրնդակաւորութեան օրինաց համեմատ. և մի թէ կարելի է հիւլէից դիպուածական հանդիպմանց արգասիք համարել այն կենդանական և բուսական տպաւորութիւններն՝ զոր երկրաբանութիւնն ամէն օր մեղի երևան կը հանէ:

Երկրորդ մերժելի է նաև հետևութիւնն: Թէ և արդի աշխարհքս հիւլէից կարելի դիպուածական բազադրութեանց մէջ ալ սեպենք՝ դարձեալ պէտք կըլլայ այս հիւլէից գոյութեան և շարժման պատճառը գնատռել. և այս երկուքին համար ալ հարկաւոր է արարիչ մի և նախկին շարժող մի, ինչպէս որ ցըցուցինք: Վ. երկրորդ այն

պատճառաւ աշխարհքս ալ հիւլէից պատածական զուգընթացութենէն առաջ եկած ըսելնին՝ իբր թէ այս ներկայ բաղադրութիւնն ալ կրնայ նիւթոյ կարելի բաղադրութեանց մէջ դնուիլ, ուրիշ բան ըսել չէ, բայց եթէ այս որ այբուբենի գրոց դիպուածական բաղադրութեանց մէջ Իլիականին բաղադրութիւնն ալ կը գտնուի. ուրեմն Իլիականն ալ կրնայ այբուբենի գրոց դիպուածական զուգընթացութենէն եղած ըլլալ. կամ թէ ներկոց դիպուածական խառնուրդին մէջ կը գտնուի Ռաֆայէլի հրաշակերտից բաղադրութիւնն ալ. ապա ուրեմն Ռաֆայէլի հրաշալի նկարքն ալ կրնան ներկոց դիպուածական զուգընթացութեան արդիւնք սեպուիլ: Այս ենթադրութիւններս որչափ ալ չատցնես՝ ողջամիտ խելքն զանոնք կը մերժէ: Ապա ուրեմն ներկայ աշխարհիս նիւթոյ կարելի բաղադրութեանց մէջ գտնուելու հնարաւորութենէն՝ կարելի չէ հետևցնել թէ, և այլն:

Առարկ. Բ. Ամէն օր կը տեսնենք որ՝ի փոփոխութեանց մանր որդունք ծնանին առանց սերման. նոյն բանն ասելի հաստատապէս կարծելու է մանրացուցական ճըճեաց համար. ապա ուրեմն՝ի սկզբան երկրիս վրայի ամէն էակներն ալ հիւլէից դիպուածական զուգընթացութենէն կրնային առաջ գալ:

Պիտ. Ա. Նախորդն մերժելի է: Ճշմար-

բան այս է որ նեխեալ նիւթք իրենց ջերմութեամբն և խոնաւութեամբն իրենց մէջ ձգուած սերմանց տուածիչք են. բայց այս օրուան օրս ընդհանրապէս հաստատեալ է որ ոչ բոյս մի և ոչ կենդանի մի յառաջ կու գայ պարզ՝ի փտութենէ: «Քանի որ խնամատարք ճանչցան որ առանց սերման գոյակ մի առաջ չգար, և ոչ սերմ մի առանց ծրագրի՝ անաստուածիկս թիւն չատ պակսեցաւ, կըսէ Վոլթեռ[1]: Եթէ այս օրուան օրս գտնուին դեռ ևս ոմանք որ անսերմն ծննդագործութեան կողմն ըլլան՝ անոնց բանն ալ միայն մանրադիտական ճճեաց համար է, և երթալով նուազելու վրայ են. այնպէս որ փտութեանց ճեմարանին կաճառորդներէն մէկն Քաթրըֆաժ 1861ին ժողովքին մէջ այս խօսքերս կը գրուցէր, և ոչ ոք իրեն դէմ կը բողոքէր. «Շատ դժուար է մեկնելն թէ ինչպէս արդիւնաւոր մարդկանցմէ ոմանք՝ դեռ այս վարդապետութեանս կը հաւատան. որովհետև այնպիսի նոր գիւտեր առաջարկուեցան՝ որ անսերմն ծննդագործութիւնն հիմամբ կը ջնջեն»:

Զ. Մերժի հետևութիւնն: Թէ և խնամատոց կարծեացն հակառակ ենթադրանք թէ առանց սերման գործարանաւոր էակք կըրնան ծնանիլ, այս գոյութիւններս ալ դի-

1 Բառարան իմաստ. յօդ. Աշխարհաճարիճ հատ. Դ:

պաց արգասիք չէին սեպուիր, և զանոնք մեկնելու համար միշտ պէտք էր իշխագական պատձառի մի դիմել որ է Աստուած: Եւ այս բանս ճանչցաւ Պորի տը Սէն Վէնսան որ անսերմն ծննդագործութեան հզօր պաշտպան էր[1]:

Աստուծոյ գոյութեան բնազանցական ապացոյցերը.

Այս բնազանցական ապացոյցերս գըլխաւոր երկուքի կրնան վերածուիլ. Ա. ապացոյց հարկաւոր էակի, այսինքն կարեւորութիւն ինքնագոյ էակի, հարկաւորութիւն նախկին և բացարձակ պատճառի. Բ. ապացոյց՝ ի գաղափարէ անհուն կատարեալ էակի:

Ա. ՈՒԱՋԻՆ ԱՊԱՑՈՅՑ. — Էակ հարկաւոր.

Ա. Գոյ էակ հարկաւոր, և էակս այս յանհուն կատարեալ է: Աստուած ըսելով կը հասկնանք զէական հարկաւոր ինքնագոյ՝ ի յաւիտենից և յանհուն կատարեալ. իսկ արդ բանն մտաց չկրնար մերժել զգոյութիւն այսպիսի էակի:

1 Բառարան իմաստասիրութեան 1836 յօդ. Աստուած:

Նախ՝ պոյէական Տարկաւար. վասն զի կամ պոյէական Տարկաւար՝ այսինքն էակ ինքնապոյ, յաւիտենական և անաւարտ, և կամ ըսելու է թէ ամէն էակք պոյութեան սկզբնաւորութիւն մի ունեցած են: Իսկ արդ չկրնար ըսուիլ թէ ամենայն էակք պոյութեան սկզբնաւորութիւն մի ունեցած են. վասն զի եթէ այսպէս ըլլար՝ ամէնքն պոյութիւն ընդունած կըլլային. և յայտնի է որ էակէ մի պէտք էին ընդունիլ. որովհետև ոչինչն բան մի չէ և հետևապէս չկրնար տեղ ծական կարողութիւն ունենալ: Բայց եթէ համարինք թէ ամէն էակք միանգամայն առանց բացառութեան՝ մէկէ մի ընդունած են զպոյութիւն, այս ուրիշներու պոյութիւն տուող էակն՝ պէտք էր որ իր անձին տար. իսկ արդ արտառոց բան է ըսելն թէ էակ մի իր անձին կու տայ զպոյութիւն: Եւ յիրաւի հակասութիւն է ըսելն թէ էակ մի՛ ի նմին ժամանակի ըլլայ և չըլլայ. իսկ արդ ինքն իրեն պոյութիւն տուող էակ մի՛ ի նմին ժամանակի ասիտի պոյր և չպոյր. ասիտի պոյր՝ որովհետև ինքն իրեն պոյութիւն կու տայ և պործելու համար պոյութիւն պէտք է. և ասիտի չպոյր՝ որովհետև ընդունի զպոյութիւն, զի որ արդէն ունի զպոյութիւն ոչ ընդունի միանգամ. ապա արտառոց է ըսելն թէ էակ մի անձին տայ զպոյութիւն. ուրեմն մերժելի է ըսելն թէ ամենայն էակք ուրիշէ մի ընդունած ըլլան զպոյութիւն. ապա ուրեմն՝ ի

հարկէ պոյ էակ մի որ ոչ է ընկալեալ ըզ-
պոյութիւն. այսինքն էակ մի որ յինքեանէ
ունի հարկաւորապէս և իսկապէս զգոյու-
թիւն. էակ մի անստեղծ և յաւիտենական՝
որ է Աստուած:

Երկրորդ՝ էակն հարկաւոր յանհուն
կատարեալ է. յանհուն կատարեալ էակ
մի այն է որ իր կատարելութիւններն տա-
մանաւոր չեն, այլ անեղը անսահման և
անբաւ. արդ հարկաւոր էակն չէ սահմա-
նափակ՝ ի կատարելութիւնս իւր. քանզի
եթէ սահմանափակ էր՝ պարտ էր այնպէս
լինել կամ յայլոյ կամ յինքեանէ. իսկ արդ
չէ սահմանափակ ոչ յայլոյ և ոչ յինքեանէ:

ա. Ոչ յայլոյ. քանզի հաւաստեալ թէ
էակ է հարկաւոր և ինքնագոյ՝ յայտնի է
թէ չէ ընդ ուրուք իշխանութեամբ այլ ան-
կախ ամենևին, և յիւրմէ բնութենէ է որ
ինչ է:

բ. Եւ ոչ յինքենէ. վասն զի եթէ յին-
քենէ սահմանափակ ըլլար՝ պիտի ըլլար
կամ յիւր կամաց և կամ յիւր բնութենէն.
որ երկուքն ալ ընդդէմ է մտաց:

ա. Ոչ է սահմանափակ յիւր կամաց.
քանզի նախ կըմբռնուի էակ մի ունող կա-
տարելութեանց և ապա կըմբռնուի զա-
նոնք չափաւորել ուզելը. և դարձեալ հա-
կառակամարտ մտաց է որ էակ մի կամա-
րարապէս ինքն իրեն թշնամի ըլլայ, և հե-
տևապէս ուզէ սահմանափակ ու անկա-
տար ըլլալ: Այս հարկաւոր էակն ոչ պար-
տական յիւր կամաց:

բ. Ոչ է սահմանափակ յիւր բնութենէն. և սա բանիս համար բաւական է որ հարկաւոր էակին բնութիւնն հակառակ չըլլայ կատարելութեանց անբաւութեանն, այլ ընդհակառակն ամէնկատարելութիւնն յանհուն պահանջէ. իսկ արդ հարկաւոր էակին բնութիւնն ոչ հակառակի կատարելութեանց անբաւութեանն, այլ ընդհակառակն, և այլն: ա. Հարկաւոր էակի բըննութիւննոչ հակառակի կատարելութեանց անբաւութեանն. վասն զի այսպէս ըլլալու համար՝ կամ անբաւ կատարելութիւններն մի և նոյն ժամանակ մէկ ննթակայի վրայ չգտնուելնուն համար պիտի ըլլար, և կամ գոյութեան հարկաւորութեան հետ անյարմար ըլլալնուն համար. առնցմէ մէկն ալ չկրնար լսուիլ: Նախ՝ վասն զի անբաւ կատարելութիւններն մի և նոյն ժամանակ մէկ ննթակայի վրայ գտնուիլն անկարելի է, որովհետև մէկմէկու ալ հակառակութիւն չուներն. ոչ են ըլլալ և չըլլալ, այլ լինել և լինել, քանզի՝ ի միմեանս յարեալ կատարելութիւններ են: Երկրորդ՝ անբաւ կատարելութիւններն գոյութեան հարկաւորութեան հետ անհամաբանելի չեն. քանզի գոյութեան հարկաւորութիւնն ալ կատարելութիւն մի է գերազանց քան զամենայն կատարելութիւնս: բ. Հարկաւոր էակին բնութիւնն կատարելութեանց անբաւութիւնն կը պահանջէ: Եւ արդարև ինչպէս որ ամէն մարդ գիւրաւ կըմբռնէ՝

անբաւ կատարելութիւնք հնարաւորք են։ Արդ եթէ էակն հարկաւոր յիւրմէ բնութենէն զանոնք չունենար՝ կարելի չէին ընդ լար. վասն զի այն ատեն չէին կրնար գոլ որովհետեւ էակի մը վրայ չէին գտնուեր. ոչ՝ ի մակեզուստ կամ պատահական էակի, վասն զի պատահական էակ մի միշտ անկատար է, և նոյն իսկ պատահականութիւնն անկատարութիւն է. և ոչ՝ ի հարկաւոր էակի, որովհետեւ չէր կարող անձամբ անձին տալ զնոսին. զի առ՝ի տալ՝ հարկ էր ունել զնոսա։ Ապա էակն հարկաւոր՝ չէ պարփակեալ՝ ի կատարելութիւնս իւր ոչ՝ ի բնութենէ իւրմէ և ոչ յիւր կամաց. ապա էակն հարկաւոր չէ ամենատիպակ յինքեանէ. բայց և ոչ յայլմէ ումեքէ։ Ապա էակն հարկաւոր չէ պարփակեալ՝ ի կատարելութիւնս իւր, կամ այլապէս կատարելութիւնք նորա անբաւ են և անսահման։

Ապա երկու այս ինչ ստոյգ են, այսինքն թէ գոյ էակ հարկաւոր ինքնագոյ՝ ի յաւիտենից. և զի էակս այս յանդուգն կատարեալ է։ Ապա գոյ Աստուած։

Բ. Գոյ նախկին զգառնաւ հարկաւոր. Ամէն անգամ երբ բնական աշխարհիս վրայ երևոյթ մի կը հանդիպի, կամ գիտակցութեամբ հոգեբանական երևոյթ մի կը ըզգամք, զանիկայ զգառնաւ մի առաջ եկած կը սեպենք՝ մեր իմացական կազմութեամբն այս սկզբան վրայ հաստատուած թէ ամէն

եղելութիւն և ամէն երևոյթ պատճառ մի ունի։ Այս պատճառի ծանօթութիւնն թէ մեր հոգւոյն և թէ արտաքին աշխարհքի պատահարաց յարմարցնելով՝ շատ մի տեսակ առանձնական և փոխոխական պատճառներ կը գտնենք, որոնք կրնային տարբեր կերպ ելլալ կամ ամենևին չելլալ, պատճառք երկրորդականք և պատահականք։ Բայց ասոնք պատահական և երևութական ըլլալնուն համար՝ արարածոց անշարժ յաւիտենական և հարկաւոր պատճառն չեն, կամ հաստատ ըսել առաջին և բացարձակ պատճառ իրայ՝ որ է պատճառ ինքնաբուն. և սակայն հարկ է դիմենք այս նախկին պատճառին, որովհետև բանն պարզապէս կը մերժէ՝ որ երկրորդական պատճառներն յանհուն բազմացնել չըլլար. օրինակի համար գնտակ մի զուրիշ գնտակ մի թէպէտ կը մղէ բայց պատճառն թևը կը սեպուի որ ան մղումը տուաւ. թևէն ալ ուղեղն կը հասնինք, ուղեղէն ալ հոգւոյն, հոգիէն ալ այն պատճառները որ հոգւոյն կարողութիւններն շարժեցին, այս պատճառներէն ալ անոնց՝ որ զանոնք արտադրեցին. և այսպէս աստիճան առ աստիճան կը հասնինք միակ և հանրական պատճառի մի որ ամէն բանի հարկաւոր սկիզբն ու պատճառն է։ Այս հարկաւոր պատճառն որ նախկին սկիզբն է ամենայնի՝ անպատճառ է, և ինքն է իր պատճառն և ինքնագոյ. և հաստատ ը-

անել ինքն է էակ բայարձակ, էակ անբաւ, էակ գերաբուն, էն կամ Աստուած ըստ որում ամէնէն հին գրոց մէջ կը կարդայք «Ես եմ որ էն»։

Նախընթաց ճեռնարկութեան մէջ որ ըստ Էյանիդիոսի կըսուի՝ պատահական առթիւնէ աշխարհի հետևցուցինք հարկաւոր էակին գոյութիւնն. հիմա դնենք ուրիշ մալ ուսկից նոյն բանն ալ՝ տի հետևցնենք՝ պատահականառթիւնէ մարդկային էակի։

Գ. Մարդկային էակի անկատարութիւնն ցուցանէ զգոյութիւն հարկաւոր էակի։ Եմ՝ որովհետև խորհիմ. բայց պիտի եմ՝ և յուսմէ եղեալ եմ. ես ինձմէ եղած եմ թէ ուրիշէ. եթէ ինձմէ եղած ըլլայի՝ ամենայն կատարելութիւն պիտի ունենայի։ Որչափ որ հաղորդեալ և հպատակ էակ մի յանհուն կատարեալ ենթադրենք՝ սակայն դարձեալ յանհուն խոնարհագոյն պտանի քան զէակ ինքնագոյ. ուսկից կըհետևի որ ինքնագոյ էակն յանհուն կատարեալ է յէութեան իւրում։ Արդ յայտնի է որ ես յանհուն կատարեալ էակ մի չեմ, որովհետև կանգիտանամ, կըխաբուիմ, կըտապաւորուիմ. ապա ուրեմն ես ինձմէ չեմ, այլ յայլմէ։ Այս միւս էակն ալ որ է, պիտ անցուցած է այն անբաւ խորհրդէն որ կայ ոչնչութեան և գոյութեան մէջ. և հնարաւոր զօրութիւն մի ինչ աստիճանի մէջ ալ ըլլայ՝ անհունէն խոնարհ պէտք է որ ըլլայ. ապա անիկայ ունի զօրութիւն անհուն, հետևա-

պէս է ինքնագոյ. վասն զի առանց այր անհատն չէր ըլլար: Այս պարագիս մարդկային էակի անկատարութենէն կամ պատահականութենէն՝ իրաւունք ունիմ հետևցնելու՝ որ կայ էակ մը հարկաւոր անհատնա կատարեալ՝ իմ՝ անկատար էութեան ըսանդիչ, այսինքն թէ Աստուած կայ[1]:

Առարկ Ա. Հարկաւոր էակի մի ենթադրութենէն՝ միւս էակաց գոյութիւնն բացատրելու համար է. արդ կրնայ առանց գոյութիւնն առանց հարկաւոր էակի մնալու, այսինքն անվախճան կարգ մի դնելով էակաց՝ որ'ի յաւիտենից մէկզմէկ յաջորդեն. ապա պէտք մի չկայ հարկաւոր էակ մի ենթադրելու:

Պխ. Փորձադոյնն մերժելի է: Առանց սկզբնական պատճառի և յաւիտենական ու անփոփոխ սկզբան մի՝ անվերջանալի յաջորդութեամբ մէկմէկէ առաջ եկած էակներու շարք մի հաստատելն ոչինչ բան է՝ բայց եթէ դժուարութենէն ոտնատան եւ մղել՝ առանց դանիկայ լուծելու. վասն զի այսպիսի յաջորդութիւն մի ուրիշ բան չըլլար՝ բայց եթէ արդեանց շարք մի առանց պատճառի: Այս բանս աւելի զգալի կըլլայ յետագայ օրինակով որ Բլարքի Ա. պագոյց գոյութեանն Աստուծոյ զրկին ծանօ-

1 Ցեհնելան Յաղագս գոյութեան Աստուծոյ. մաս Բ. գլ. Բ:

թուքեան մէջ կը յիշուի[1]: Ենթադրէ ըղձալի մի որ երկնից անծանօթ բարձրութիւնէն վար կախուած ըլլայ. և վարի ծայրն չէ թէ շարժուն՝ այլ անկուած ու կանգուն կեցած՝ թէպէտ բոլոր օդակներուն ծանրութիւնն ալ դէպ ի երկիրս ծանրանայ: Այդպէս ալ ղձալի մի կանգուն կեցած ըլլալն ուզելու համար՝ բաւական է արդեօք ըսելն թէ ամէնէն վարի օդակն երկրորդէն կախուած է, և երկուքն ալ՝ երրորդէն, այսպէս ամբողջութիւնն յանհատանա: Այսու դի ուշ է որ ամէնքն ալ վեր կը բանէ՝ հարցմանքն ուրիշ կերպով չենք կրնար լուծել՝ բայց եթէ արտաքին պատճառ մի դնելով՝ որ բոլոր կախուած ղձալն վեր բռնած ըլլայ: Այսպէս է նաև ղձալաշար պատճառայ և արդեանց համար. և թէ որ այս ղձալս անվերջ համարուի՝ պէտք է ըսել որ անվերջ արդիւնք մի կայ առանց պատճառի, եթէ չուզենանք ընդունիլ յաւիտենական ու անփոփոխ պատճառ մի՝ ուսկից ամէն բան կը կախուի:

Առարկ. Բ. Նախկին պատճառ մի անոր համար կը փնտռենք՝ որովհետև առաջին արգասիք մի կենթադրենք. արդ անվախճան յաջորդութեան մի մէջ՝ առաջին ար-

1 Գլ. գ. Ապացոյցք աւետարանականք հմ. ե. էջ 955 (տպագրութիւն Մխիթ.):

դիւանք մի չըլլալուն՝ նախկին պատճառն ալ աւելորդ է։

Պիտ. Մեծապոյնն մերժելի է։ Նախկին պատճառ մի ընտրելնիս ճիշդ անոր համար չէ՝ որ առաջին արդիւնք մի կենթադրենք, հապա ենթադրելով ալ թէ այս անհատնում շարքին էակներն իրարմէ ծագած ըլլան, սակայն բոլորին մէկէն դարձեալ ըսելու է թէ մէկէ մի ստեղծուած ըլլան ու են, և հետևապէս ստեղծիչ էակ մի հարկաւոր է. ապա թէ ոչ արդիւնք մի է առանց պատճառի։

Նոյնօրինակ առարկութիւններ կրնան ըլլալ նախկին շարժողի համար ալ, և նոյնպէս կը լուծուին։

ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՑՈՅՑ. — Գաղտնիքար կատարեալ էակի.

Ա. Հաւասարիկ համառօտիւ ինչպէս որ կարդեցիս կը մեկնէ այս ապացոյցս։

Ա.[1] Նոյն ատենն որ մենք մեր անկատար էակ ըլլալն կիմանանք՝ կատարեալ էակի մի գաղափարն ալ կունենանք՝ զոր Աստուած կը կոչենք. վասն զի ինչպէս կրնայինք ճանչնալ մեր ունեցած պակասութիւնն և թէ անկատար էակներ եմք՝ եթէ չունենայինք կատարեալ էակի մի գաղա-

1 Խոկմունք դ. Ճաս. զոճոյ դ. մասն։

փարն : Սրդ այս յանհուն կատարեալ էակի մի գաղափարն՝ի մեզ դնողն այն էակն է որ յիրաւի ունի այն ամենայն կատարելութիւնները՝ որոնց գաղափարն մենք ունինք. որովհետև մուց հակառակ է որ հնաւոր արարած մի անհունի գաղափար մի կարենայ տալ ինքն իրեն. քանզի անհուն հնաւորի արդիւնք չկրնար ըլլալ:

Այս պատճառաբանութեանս վրայ կարդեսես ուրիշ մալ կաւելցնէ՝ որ առջինին հետ մէկ կրնայ սեպուիլ: Մենք մեզմէ գոյացած չենք, ապա թէ ոչ մենք մեզի կըրնայինք տալ այն ամենայն կատարելութիւններն որոնց գաղափարն ունինք: Ապա ուրեմն գոյացած ենք. և այս էակն ուսկից որ ենք, կատարեալ էակ մի է. եթէ այնպէս չըլլար՝ մեզի համար ըրած պատճառաբանութիւննիս իրեն ալ կրնայինք յարմարցընել:

6. [1] Ինչ որ էակի մի գաղափարին մէջ կը պարունակի՝ նոյն էակին կրնայ որուիլ: Սրդ այժմեան գոյութիւնն կատարելութիւն մի ըլլալով մեր կատարեալ էակի վրայ ունեցած գաղափարին մէջ կը պարունակի, այնպէս բացայայտ կերպով ինչպէս որ կըսենք թէ եռանկեան մը երեք անկիւնն երկուց ուղղոց հաւասար է: Սրդ այժմեան գոյութիւնն կրնայ հաստատուիլ

1 Խոհմեանք ե. Ճառ զոյոյ Դ. մասն:

կատարեալ էակին վրայօք. ապա ուրեմն պոյ Աստուած :

Այս պատճառաբանութեանս հիմն արդէն տուած էր Ս. Անսելմոս [1] մեծատաղ ներորդ դարուն մէջ. ու Լէյպնից այս կերպով կարդի դրեր էր. Աստուած պոյ եթէ կարելի է. որովհետև իր կարելութեան կամ էութեան հետևանքն է իր պոյութիւնն. վասն զի եթէ հիմա չըլլար՝ կարելի չէր ըլլար, որովհետև պատճառ չէր գըտնուեր՝ որ անոր պոյութիւն տալ կարենայ. ուստի զանիկայ կարելի համարիլն և մինչդամայն պոյ չհամարելն՝ հակասութիւն է :

Աստուծոյ գոյութեան այլ և այլ ապացոյցներուն վրայ դիտելիք :

Աստուծոյ գոյութեան ապացոյցներն կամ պատճառաբանութիւններն զորս կարդացինք՝ կրկին արտայայտիչ նշաններ ունին, որոնք իմաստասիրութեան մէջ կը գանազանին՝ ի յառաջագոյն և՝ ի յետնագոյն անուններով : Ի յետնագոյն պատճառաբանութիւն կըսուի ապացոյց մի երբ ապացուցանելի իրէ մի առն եղած բանով մի կը ցուցուի. ուստի պատճառ մի իր արդիւնքը ներէն ցուցնելն՝ ի յետնագոյն պատճա-

[1] Տես պատ. իմաստ. առաջին դար դասական իմաստ :

ատրանոցին կրատի. որովհետև այդպիսի իրենց պատճառէն եաթն են։ Իսկ ի՛ յա-ռաջագոյնէ պատձառելոցին կըլլայ՝ երբ բանի մի ուրիչի վրայ նախընթացութենեն կըմբռնուի. ինչպէս թէ որ պատճառէ՝ արդասիքն հետևցնենք. կամ պարզապէս բանավ՝ որ նախկին կենթադրուի, այսինքն որ ցուցանելի նիւթոյն հետևորդ չըլլայ. օրինակի համար երբ էակ մի ինքն իրմով կամ իր գաղափարէն ցուցնենք։

Վերի բաժն աղէկ ըմբռնելու համար պէտք է գիտնալ որ երկու կերպ յառաջութիւն կայ. յառաջութիւն ժամանակի և յառաջութիւն բանի։ Այսպէս կերպէն կամ հանգամանքն իրօք յարակից են ննթակայութեան՝ի ժամանակի, բայց բանի կամ մտաց համար ննթակայութեան յղացումն յառաջէ քան զյղացումն հանգամանաց. անոր համար ննթակայութիւնն՝ յառաջութիւն բանի ունի հանգամանաց վրայ։

Աստուծոյ գոյութեան ապացոյցերէն չատն՝ի յետնապունէ են. չատերն գերապոյն պատճառի մի գոյութիւնն իրեն արդասիքներէն կը ցուցնեն՝ երբ տիեզերաց կարգի ու դեղեցկութեան դիտողութենէն մեզի կիմացնեն իմացական պատճառի մի հարկաւորութիւնն, կամ փորձով հաստատուած պատահական արարածոց մի գոյութենէն՝ կը հետևցնեն հարկաւոր էակի մի գոյութիւնն, կամ նիւթոյ չարժումէն նախկին չարժողն, կամ երբ մարդուս բարոյա-

կան վիճակէն ապացոյց մի կը հանեն։ Իսկ այն ցուցմունքներն որ կատարեալ էակի մի գաղափարէն կամ Աստուծոյ էութենէն կը հանուի՝ ի յառաջագունէ ապացոյց է։

Այն ապացոյցներն որ ի համաձայն հաւանութենէ ապգաց և ի կարգաց համաձայնութենէ կառնուին, և պատճառաբանութիւն վերջնական պատձառաց կըտուին՝ ամէնէն աւելի տպաւորութիւն կրնեն ամէն տեսակ խելքերու վրայ ալ։ Կիկերոնի Յաղագս բնական աստուածոց գրքին մէջ նոյն ինքն Եպիկուրեան Վելէյոս չերկմտիր ճանչնալու մարդկային ազգի այս միաձայն վկայութիւնն ըսելով. « Որում ամենեցուն բնութիւն հաւանի՝ հարկ է այնմ գոլ ճշմարիտ. ապա հարկ է խոստովանել եթէ գոն Աստուածք[1] »։ Վերջնական պատձառաց ապացոյցերուն գալով՝ Քանթ որ իր բնական տեսքին պարզ բանին ըսուած գրոց մէջ ինչուան սկեպտականութեան հասաւ, շատ պատկառանօք կը խօսի անոնց վրայ ու կըսէ. « Այս պատճառաբանութիւնս միշտ պատկառանօք յիշատակել արժան է. ո՛րքան ամէնէն հինն ու ամէնէն պայծառն է, և շատերուն խելքին աւելի յարմար »։

Կարդալով ի յառաջագունէ վերջի պատճառաբանութիւնն որ ի գաղափարէ կատարեալ էակի՝ անուանի իմաստասիրին

1 Գիրք Ա. գլ. Ա։

րէն ոմանք հերքեցին ու ոմանք պաշտպանեցին . Հետէն ընդունեցաւ այն կարգաւորութեամբ զոր ծանուցինք : Քանի չանաց ցուցնելու որ այս ապացոյցս պարզ բանաստուեան (տրամաբանութեան) ցուցմունքներու վրայ հաստատուած է , և վերացեալ նիւթ մի միայն կրնայ հետևիլ : Չենք ուրանար որ այս պատճառաբանութիւնս դժուարութիւններ առաջ կը բերէ , սակայն ինչ ալ ըլլան այս դժուարութիւնք՝ վճռական և հատու բաներ չեն , և Քանթի ըսածին չափ անզօր ալ ըլլան՝ կարծեսան գլխաւոր ապացոյցն չեն տակաւին : Այս ապացուցիս վրայ երրորդ խոհան մէջ կը խօսի , ուր միայն էակի վերացեալ գաղափարէն առածն հինգերորդ խոհան մէջ է . որով յայտնի կերևնայ թէ նոյն իսկ հեղինակն գլխաւոր ապացոյց չէր սեպած զատիկայ : Իսկ նախկին ապացուցին արտայայտիչ նշաններն ատոնք են . Իրեն հիմն մարդուս գիտակցութիւնն և կեանքն է : Անբաւութեան գաղափարին հասնելու համար վերացումն և չարաբանութիւն պէտք չէ մեզի , վասն զի ատ գաղափարը մեր մտաց մէջ նախկիններէն է . վասն զի հնաւորն ու անկատարն՝ իբրև անհունին և կատարելոյն բացառութիւնն ու ժխտումն կըմբռնենք : Իմ անձիս գոյութեան անկատարութիւնն կըմբռնեմ՝ իմ մտացս յայտնի անկատարութենէն . բայց հնաւոր և անկատար ըլլալս ուրիշ բանով

չեմ պատր՝ բայց եթէ որ նոյն առեն ունիմ անհուն և կատարեալ էակի գաղափարն՝ որ իմ անկատար էութեան սկիզբն է. և որովհետև ընդհանուր անկատար էակն չէ իմ կարհուրդս սկիզբն՝ այլ իմ մէջս եղած անհատ անկատար էակն, ապա այն կատարեալ էակն զոր կըմբռնեմ իբրև ներհակ իմինիս՝ է էակ իսկապէս և ոչ եթէ վերացեալ էակ մի[1]։

Սոյն գրած խորհրդածութիւններս կը յարմարին նաև՝ ի հարկաւոր էակէ ապացուցին. որովհետև մեծ նմանութիւն կայ աստր և այն ապացուցին որ խառնուած անհուն ու կատարեալ էակի գաղափարէն։ Եւ յիրաւի՝ ի հարկաւոր էակէ ապացուցին սկիզբն՝ աշխարհքիս և մանաւանդ մեր էութեան պատահական ըլլալն է. արդ էակի մի անկատարութիւնն անմիջապէս կցորդ է իր պատահականութեանն հետ. մենք՝ ի նմին ժամանակի երկուքին ալ զգացմունքն ունեցած ենք, և հետևապէս՝ ի նմին ժամանակի կըմբռնենք կատարեալ էակն ու հարկաւոր էակն։

Այս ալ աւելցնենք որ՝ ի յառաջադունէ ապացոյցն Աստուծոյ գոյութեան շատ փաստերուն լրումն համարելու է։ Այս ապացոյցերէս շատն՝ առ յօրինիչ ոք և կարգադրիչ երաց կը հանէ զմեզ. իսկ՝ ի յա-

1 Գուզէն Դասք վիճաբանութենէ Քան. Թի 6։

ռաջադրանէ ապացոյցն կը հասցնէ զմեզ առ անհուն առեղծվիչ տիեզերաց :

Դիտարկութիւն աստուածաբանական .

Մարդկային ազգի մէջ յիրաւի իբրև քացառութիւն մի կրնանք սեպել աստուածները . որովհետև չվախցան ազգաց և ազանց միաճայն հաւանութեանն դէմ պատերազմելու՝ որոնք ամէնն ալ աստուածային էութեան պաշտօն կը մատուցանեն : Անաստուածաբանութեան զաստուածութիւնն ուրանալն աստուածգիտութեան հակառակն է : Անաստուածութեան դրութիւնները երկուքի կրնան վերածուիլ . տարրականութիւն որոնք կը համարին թէ աշխարհքս հիւլէից դիպուածական զուգընթացութեան արգասիքն է . ասիկայ է Եպիկուրոսի աղանդն . մէյմնալ հանաստուածաբանութեան անունով ծպտեալ անաստուածութիւնն . այս դրութիւնս ալ արդի ազգաց մէջ նորոգեց Սփինոզա : Նախնի իմաստասէրներն որ միշտ յաւիտենական համարեցան՝ Աստուծոյ էական ստորոգելեաց մէկն չճանչցան որ է արարչութիւնն . սակայն չատերն անաստուածից կարգն չեն կրնար դրուիլ , վասն զի հարկաւոր սեպեցին Աստուած մի նիւթոյն շարժումն տալու համար , անդունդն որոշելու համար ու տիեզերաց հրաշալի կարգն հաստատելու ու պահելու համար :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԳԼԽԱՒՈՐ ՍՏՈՐՈԳԵԼԵԱՑՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Էական ստորոգեալք կըստանին որով էակ մի կը սահմանուի : Այլ յեսին կարգի էակ մի և՝ քան զոչինչն աւելի է. ապա 'ի գոյութեան է կատարելութիւն իւիւր իսկ կատարելոչթիւնն համեմատութեամբ էութեան է. որոյ սակաւ է էութիւն՝ նուազ է և կատարելութիւն, իսկ որոյ առաւել՝ կատարեալ. ապա ուրեմն էակն անհուն՝ 'ի գերագոյն ծայր կատարելութեան հասեալ կայ : Երկու տեսակ կատարելութեանց կորոշուին. ոմանք պարզ կատարելութիւնք, անխառն 'ի թերութեանց. իսկ միւսանքն չափաւոր ինչ կատարելութիւնք են և կատարելութիւնք սահմանափակք կամ չուռ որում, որպէս ասէին դասականք : Պարզ կամ չուռ կատարելութիւնք երկու յայտարար նշան ունին. ա. որ իրենց գաղափարին մէջ ամենևին անկա-

տարութիւն մի չմտնել. բ. որ ամենևին անմիաբանելի չեն ուրիշ պարզ կատարելութեանց հետ: Իսկ ըստ որում կամ չանդեպ կատարելութիւն ըստացն՝ թէպետ և ոչնչէն վերադասելի է՝ որովհետև ատիճան մի էութիւն ունի, բայց իր գաղափարին մէջ միշտ անկատարութիւն մի կայ, և վերագոյն կարգի կատարելութեան մի հասանիր. այսպէս նիւթական տարածութիւնն՝ թէ և ոչնչէն աղէկ է, սակայն միշտ ահմանաւոր էակի անկատարութիւնն ունենալով՝ մաց չկրնար հաւասարիլ: Ինքն իրեն կիմացուի որ անհուն էակին ամէն տորոշելիքն պարզ կատարելութիւններ են: Էակ մի իր սեռին մէջ կատարեալ կըսուի՝ երբ ունի այն ամէն բան՝ ինչ որ իր բնութիւնն և տորոշելիքն կրնան տանիլ: Ստուած միայն բացարձակ կատարելութիւն կրնայ ունենալ. վասն զի մինակ Ստուծոյ բնութիւնն ու տորոշելիքներն են որ կըմբռնեն բացարձակ ու անհուն էութիւն մի. իսկ արարածք վերբերական կատարելութիւն մինակ կրնան ունենալ, այսինքն չափաւոր էութիւն մի կըմբռնեն իրենց մասնաւոր բնութեան համեմատ:

Ստուծոյ տորոշելիքն կամ կատարելութիւնքն երկու տղգ կը բաժնուին. ոմանք պրիթէ իր էութեան հիմն են, այսինքն անբաժանելի, հարկաւորելի, յաւիտենական, պարզ, մէկ, անչափելի, անխտրելի, բարի. իսկ

ուրիշներն իրեն գործոց սկիզբն են. ինչպէս խնայասիրութիւն կամ գիտութիւն, կարողութիւն, նախախնամութիւն: Ս. աստուածբանութեան ոմանց գաղափարին մէջ կը մտնէ նաև անհունութեան գաղափարն, զոր օրինակ յաւիտենականութեան, անչափութեան. ուրիշներն ալ որ հնարաւոր արարածոյ մի վրայ չափաւոր աստիճանով մի կըմբռնուի, եթէ զանոնք պարզապէս ու առանց սահմանաւորելու իրենց անբաւութեան մէջ ըմբռնենք՝ այն աստիճանին անբաւ էակին բնութեանն կը յարմարին. մարդուս վրայ եղած չափաւոր գիտութիւնն, կարողութիւնն, բարութիւնն, իմաստութիւնն՝ Աստուծոյ վրայ անչափ են ու կըսուին աստուածութիւն, աստուածութիւն եւ այլն:

Իսկ անբաւութեան, հարկաւորութեան ու ինքնագոյութեան վրայ բան մի չունինք ասելիք, որովհետև Աստուածաբանութեան առաջին մասին մէջ բաւական խօսուեցաւ:

Յաւիտենականութիւն Աստուծոյ.

Աստուծոյ ինքնագոյ և հարկաւոր էութենէն կը հետևի որ չունի կարող աստեն մի գինքն ոչ եղեալ ենթադրել, որով ըսել կըլլայ յաւիտենական կամ թէ ունող գոյութեան, որոյ ոչ սկիզբն կայ և ոչ վախճան:

Աչխարհ ամէն կը հաւանի որ հարկաւոր էակն յաւիտենական ապրիլ է ըլլայ . բայց յաւիտենականութեան բնութեանն վրայ ամէնքն չեն մտածեր : Շատերն յաջորդական յաւիտենականութիւն մի կը դնեն, ուրիշներն ալ անյաջորդական կամ միահաղոյն : Այս վերջինս Պղատոնի և իր աշակերտին կարծիքն էր , ինչպէս նաև միջին դարու մէջ Թովմայեանց . ուր ընդհակառակն Սկովտեանք յաջորդական յաւիտենականութիւնն կը պաշտպանէին : Այս յաջորդական յաւիտենականութիւնն կը ձևանայ, կըսէին, ժամանակներու շարքով մի՝ որոնք սկիզբ չեն ունեցած , և որոնք միշտ կը շարունակեն առանց բնաւ վերջանալու : Իսկ անյաջորդական կամ միահաղոյն յաւիտենականութիւնն ուրիշ կերպ չըմբռնուիր՝ բայց եթէ ամենայն յաջորդութեանց 'ի բաց բարձմամբն . Պոյետիոս այսպէս կը սահմանէ « Անվախճան կենաց բովանդակ միահաղոյն և կատարեալ ժառանգութիւն [1] » .

Սովորաբար անյաջորդական յաւիտենականութիւնն աւելի ընդունելի է . վասն զի այ. յաջորդութեան գաղափարն՝ սկզբնաւորութիւն մի կենթադրէ , ուր ընդհակառակն յաւիտենականութեան գաղափարն զանի կը մերժէ . և յ. որովհետև յաջորդութիւնն միայն այն էակներու համար կը

1 Յալագս սխոխանաց խմաստ . գլուխ ե :

հասկցուի՝ որ իրենց պայմանին կամ կեր-
պաւորութեան մէջ բան մի կընդունին
կամ կը կորսունցնեն : — Բայց այս կար-
ծեաց դէմ ալ առարկութիւն կելլէ՝ իբրու
թէ անիմանալի է ու սովորական գաղա-
փարաց հակառակ : Բայց մի թէ յաջոր-
դական յաւիտենականութիւնն ալ աւելի
պարզապէս կրնանք ըմբռնել. ինչպէս կըր-
նանք հասկընալ՝ որ անվախճան յաջորդու-
թիւն մի միշտ վազէ և վախճանի մի հաս-
նի, և այս վախճանս ըլլայ դարձեալ ներ-
կայ ժամանակն : Ինչ որ ըլլայ, թէպէտ մի-
հաղոյն յաւիտենականութիւնն աւելի հա-
ւանական դատինք , պէտք չէ մոռնալ որ
պարզապէս դրութիւն մի է և ոչ սույգ
վարդապետութիւն :

Պարզութիւն Աստուծոյ .

Պարզութիւնն կամ անմիջրակաւորութիւնն ալ
անբաւս կատարեալ էակին բնութեանն
սորագիւղներէն է . ս . վասն զի նախ ա-
մէն նիւթ իսկապէս սահմանաւոր և ան-
կատար է . բ . որ նիւթն որչ և իրարմէ ան-
կախ մտանցմէ բաղկացեալ ամբողջու-
թիւն մի է իրեն նեղքին գոյութեանն նայե-
լով . և այսպիսի բաղադրութիւն մի ան-
բաւ կատարելութեան հակառակ կելլէ :
Եւ յիրաւի , վասն զի կամ ան է որ անսահ-
մանն կատարելութիւնն ամէն մէկ մտանց

մէջ պէտք է որ ըլլայ, և այն ատեն շատ անսահմանները կըլլային, և իւրաքան չիւրն ընդհանրութենէն պզտիկ. որովհետև մանն հարկաւորապէս աւելի փոքր է քան զըլորն. իսկ արդ այս ենթադրութիւնս մտայ հակառակ է. և կամ ան է որ գեղագոյն կատարելութիւնն մասանց ամբողջութեան յարեալ յատկութիւն մի պիտի ըլլայ. այն ատենն ալ ինչպէս անսահման կատարելութիւն մի կրնայ բաղադրելոյ մի մէջ բնակիլ՝ որ էականապէս սահմանաւոր է ինչպէս որ և իսկ թիւ:

Հոգեխաւսութեան մէջ յիշուած մարդկային հոգւոյ աննիւթականութեան ապացոյցներն՝ 'ի յետին կարևորութեան կըլնան աստուածային էութեանն ալ յարմարիլ:

Միւոքին Աստուծոյ.

Աստուծոյ պարզութենէն և աննիւթականութենէն կըհետևի աստուածային էութեան միութիւնն, այս մտքով որ աստուածային գոյացութիւնն ուրիշ մարմնոց պէս 'ի մասանց բաղկացեալ չէ: Եւ սակայն միութիւն Աստուծոյ ըսելով՝ սովորաբար կը հասկցուի թէ մի է Աստուած և ոչ բազմք. մոյ ևնթ Աստուծոյ հաւատալն միաստուածութեան կըտաւ. իսկ այն մտքութիւնն որ շատ աստուածներ կընդունի, կըտաւ բազմաստուածութեան:

Մանաւոր կերպով երկաւոտնաձուքիւն կը կոչուի այն կարծիքն՝ որ արարածոց և իրաց երկու սկզբունք կը դնէ . այսպէս է Մանիքեցոց ազանդն՝ որոնք կը հաւատան թէ երկու նեբհակ և իրարմէ անկախ սկզբունք կան , մին արարիչ բարւոյ և միւսն չարի [1] :

Աստուծոյ միութիւնն յետագայ պատճառաբանութեամբք կը հաստատուի :

Ա. Աստուած է էակ ինքնագոյ . արդ ինքնագոյ էակն մի է : Ինքնագոյ էակին անհաւն կատարեալ ըլլալն առաջուց ըսինք (Տես բնազանցական ապացոյցերն) . արդ եթէ բազում ինքնագոյ էակներ են թադրենք կամ թէ երկու միայն , անոնցմէ մէկն ալ անհաւն կատարեալ չեն կրնար ըլլալ : Մէկ ըլլալով՝ աւելի շատ կատարութիւնք կան ժառանգելու , քան եթէ ուրիշ հաւասարի մը հետ բաժնուելու ըլլայ . վասն զի էակ մի որ ուրիշ հաւասարազօր կարողութեան մի բաժանակից է՝ անոր և անոր ըրածին վրայ կարողութիւն մի չունենար : Երկուց էակաց կարողութիւնն ալ սահմանափակ կ'ըլլայ , և կրնայ անկէ վեր կարողութիւն մի մտածուիլ , այսինքն այն էակին որ երկուքին ունեցած կարողութիւնն ալ միացած ունենայ : Արդ եթէ բազում աստուածք ենթադրենք՝ անոնց կատարելութիւնն ալ չափաւոր կ'ըլլայ . ո-

1 Տես ընդարձակ Եզնկայ Եղծ աղանդոցն մէջ :

րով ճշմարտապէս ատուած չեն կրնար ըլլալ. ուրեմն մի միայն է Ա.ստուած։

բ. Ա.ստուած է էն հարկաւոր, իսկ արդ էն հարկաւոր, մի է։ Եւ յիրաւի հարկաւոր էակի մի գոյութիւնն՝ պատահական էակաց գոյութիւնն բացատրելու համար է. արդ մի էակ բաւական է զայս բացատրելու. ապա ուրիշ մի հարկաւոր չէ։

գ. Ա.ստուած է էն անհուն. իսկ արդ անհուն էն մի է։ Մտաց հակառակ է շատ անհուններ ըլլալն, որովհետև ամէն բազմաւորութիւն էապէս հնաւոր է. քանզի ամէն թուոյ ուրիշ թիւ մի կրնայ աւելնալ նաև յանչափս։

դ. Տիեզերայս պատճառին միութիւնն՝ ճշդութեամբ կրնանք հետեւցնել տիեզերքս կազմող մասանց իրարու ունեցած յարաբերութեանց միութիւնէն. կամ ուրիշ կերպով ըսենք՝ համագոյից ծրագրին միութիւնն՝ անոր արարչին միտքին կը ցուցնէ։

ե. (վերածմամբ չանիներու) Եթէ բազում ատուածք ըլլային՝ ամէն մէկն ալ ազատ և ամենակարող պէտք էին ըլլալ. և կըննայինք ենթադրել որ մէկն իրեն ազատ ուզէր որ աշխարհքս ըլլայ, և իրեն ամենակարող անոր գոյութիւնն հայթայթէր. միւսն ալ իրեն հաւասարապէս ազատ՝ կրնար չուզել անոր գոյութիւնն, և իրեն ամենակարող անոր ոչ գոյութեանն աշխատիլ։ Որով երկու ատուած ենթադրելով աշ-

խարհքս՝ ի նմին ժամանակի պէտք էր լալ և չըլլալ միանգամայն . անհեթեթ հնարանք՝ որով կը ցուցուի ննթադրութեան արտառոց ըլլալն : Ապա ուրեմն մի միայն է Աստուած :

Անտիվանորքիւն Աստուծոյ .

Աստուծոյ անհուն և ամենայնի առաջին պատճառ ըլլալէն՝ կը հետևի անոր անսահմանութիւնն . ա . վասն զի անհուն էակին իսկական է ամէն կերպով անսահման ըլլալն . բ . վասն զի ամենայն ինչ անոր գոյութենէն գոյանալով՝ իր իմացականութիւնն ու կարողութիւնն ամէն բանի վրայ կը տարածուի : Աստուած ամէն տեղ է ըսելով՝ չենք ուզեր ըսել թէ բնականապէս տեղ մի կը գրաւէ . հոգին տարած չունի , և տեղական գոյութիւն չունի : Բայց որով հետև Աստուած յամենայնի ներգործէ՝ անոր համար բանն կը տիպէ հաւատալ թէ ամենուրեք է , և սակայն չենք կրնար հաւատալ թէ ինչ կերպով է այս ներկայութիւնն : Ֆեննելոն կըսէ [1] . « Աստուած բացարձակ և անհուն էակ ըլլալով՝ տեղւոյ և ժամանակի հետ վերաբերութիւն չունի , որ էակի մի սահմանն և եզերքն են . . . Ոչ

[1] Ճառ Ցալագս գոյութեան և սորոգելեացն Աստուծոյ . Ե . մասն գլ . Ե . յօդ . 4 . Թ . 101 :

եղած է և ոչ ալ պիտի ըլլայ, այլ է. ուս-
ում յատկապէս խօսելով ոչ հոս է և ոչ ալ
այսպիսի տահմանէ մի անդին. այլ է բաց-
արձակապէս... Ո՞ւր է ապա. է, և այն-
պէս է, որ ժուր հարցնել չըլլար. ինքն է
էութիւն, կամ աւելի ազէկ՝ է. զգուշա-
ցէք բան մի վրան աւելցնելէն»:

Ինքնիշխանութիւն Աստուծոյ.

Աստուած ըլլալով էն գերագոյն՝ մէկէ
մի կախում չունի, ոչ վասն գոյութեան՝ ո-
րովհետև հարկաւոր է, և ոչ սակս եղա-
նակի գոյութեան, որովհետև հարկաւոր
գոյութեամբն չկրնար ըմբռնուիլ՝ առանց ե-
ղանակի հարկաւոր գոյութեան: Դարձեալ
եթէ իրմէ դուրս եղածներուն ամենայնի
արարիչն է՝ ապա յայտնի է թէ յոչ իմէք
ունի կախումն:

Անխոխոխութիւն Աստուծոյ.

Անհուն և կատարեալ էակն ոչ կրնայ
կորսուանել ինչ և ոչ ստանալ, ոչ աճել և
ոչ նուազել, փոխոխման ենթակայ չէ որ
է ըսել անխոխոխ է ա.'ի կատարելութիւնս
իր, որովհետև հարկաւորապէս և էապէս
ունի զնոսա. և մեզ հակառակ է խակա-
կան և միանգամայն փոխոխական համա-

րել զնոսա. ը. ՚ի վձիռս իւր. քանզի յայտնի է որ խարհուրդք Աստուծոյ ՚ի յաւիտենից սահմանեալ են, ապա թէ ոչ հարկ էր դնել յԱստուած անհաստատութիւն մտաց և անգիտութիւն հանդերձելոց. և երկրորդ յայտնի է և զի ոչ կարէ փոփոխել զնոսա. զի փոփոխութիւն ՚ի վճիռս Աստուծոյ ենթադրէ նոր պատճառս զորս յառաջ անդիտացեալ, որ անհնարին է յԱստուած:

Բարութիւն Աստուծոյ.

Բարութիւնն ընդհանուր առմամբ՝ է յատկութիւն լինելոյ բարի ինչ, այսինքն յատկութիւն լինելոյ ինչ մի, զի ամենայն ատիճան լինելութեան բարի ինչ է՝ լաւագոյն լինելով քան զոչինչն. այս մտօք բարութիւնն կատարելութենէ և էութենէ տարբեր բան չէ: Իսկ բարութիւնն նկատեալ իբր սեպհական յատկութիւն իմացական էակաց՝ է սէր բարւոյ: Ըստ առաջին նշանակութեան՝ բարի է Աստուած, քանզի կատարեալ է. դարձեալ նոյնպէս և ըստ երկրորդ նշանակութեան՝ նախ վասն նոյն պատճառի, և երկրորդ վասն զի սէր բարւոյն՝ այսինքն յԱստուած սէր առ գոյութիւն իւր և որ ինչ կերպարանակից է ինքեան, հարկաւոր հետեւանք է այն ծանօթութեանն զոր ունի զանձն և զիւրոց անբաւ կատարելութեանց:

Բարութիւնն ըստ առարկային այլ և այլ անուններ կունենայ. իմաստութիւն եթէ առարկայն է այն բարին՝ որ յառաջ գայ՝ ի կարգէ իրաց. արդարութիւն եթէ առարկայն է բարին՝ ամենայնի իրենց արդեանց հաւասար վարձատրելու. արքունի եթէ վերաբերի այն բարուոյն որ մասնաւորապէս իբր բարոյական կը նկատուի. և այս առոգելիքս ուղղակի կընդդիմանայ բարոյական չարի կամ մեղաց. ձշմարտասիրութիւն եթէ առարկայն է՝ ի ճշմարտէ յառաջ եկեալ բարին. և վերջապէս պարզ բարութիւն եթէ բարիք ընելով յայտնուի: Հարկ չէ ցուցնել որ այս ամենայն կատարելութիւններս կը վերաբերին աստուածային բնութեան, որովհետև նոյն իսկ մարդկային հոգւոյ կատարելութիւնք են. միանակ միւս աստուածային ստորոգելեաց պէս սոնք ալ յանհունս են յԱստուած:

Իմացականութիւն և գիտութիւն Աստուծոյ.

Գիտութիւն Աստուծոյ է ծանօթութիւն կատարեալ ամենայն իրաց. իսկ նախագիտութիւն Աստուծոյ կըսուի ծանօթութիւնն զոր ունի զապագայից: Մենք Աստուծոյ իմացականութիւնն կըմբռնենք վասն զի արարիչ է մեր իմացականութեանն, և զի սքանչելի կարգ տիեզերաց՝ յայտնապէս կենթադրէ իմացականութիւն

յայնմ՝ որ արարիչ է նորա . և որովհետև անհուն էակի մի վրայ հնարաւոր բան մը չկըրնար ըլլալ՝ ամենատոյգ ենք որ Աստուծոյ իմացականութիւնն ալ անհուն է : Ստոյգ է ա. որ Աստուած ամէն անցեալներն կը ճանչնայ , թէ ոչ պէտք էր ըսել որ Աստուած մտաց մտաւոյտ է , որովհետև անցեալներն իր առջևն եղած են . բ . կը ճանչնայ նաև զկներկայս , վասն զի ինքն ալ ամէն տեղ ներկայ է . գ . ճանաչէ և զհարկաւոր ապագայս , այսինքն զայնոսիկ որ կըլլան՝ ի ձեռն գործօնից որ չեն ազատ , ինչպէս են երևոյթք բնութեան . ապա թէ ոչ պէտք էր ըսել թէ Աստուած չէ ըմբռնած այն օրինաց հետևանքն զորս հաստատեց . դ . ճանաչէ և զամենայն կարելիս . վասն զի եթէ չճանաչէր զնոսա՝ ինչպէս կրնային ըլլալ և ըլլալ կարելի : Այս ամէն կէտերուս վրայ ամէնքն ալ դիւրաւ կը միաբանին . բայց կէտ մի կայ որուն վրայ հակառակողներ կելլեն : Աստուածնաևնևրեև չաը (այս անունովս կիմացուին այն իմաստասէրներն որ Աստուծոյ գոյութիւնն կը ճանչնան բայց զերբնական յայտնութիւն չեն ընդունիր) կը պնդեն թէ Աստուած չկրնար անախտապէս կանխատեսել զառ ապագայս , այսինքն այն բաներն որ մեր կամքէն առաջ գալով՝ ըստ ինքեան կրնան հանդիպիլ կամ չհանդիպիլ :

Յետագայ պատճառաբանութեամբք կը ցուցնենք որ Աստուած առաջապէս նա-

խաւսել զաղաւ ապագայս. ա. պՍ.ա-
տուած իբրև յանհուն կատարեալ էակ
մի միայն կրնանք ըմբռնել, արդ եթէ զա-
զաւ ապագայս չկարենար նախատեսել,
այսպիսի կատարեալ էակ չէր կարող ըլ-
լալ. վասն դի ամէն օր նորանոր ծանօթու-
թիւններ պիտի ստանար ըստ մարդկային
դիպաց որ յաջորդեն միմեանց: Դարձեալ
էակ մի զերազանցօրէն կատարեալ չէ՝
եթէ աւելի կատարեալ մի կրնանք ըմբռը-
նել, արդ եթէ Աստուած ոչ ճանաչէր զա-
զաւ ապագայս՝ կրնայինք ուրիշ աւելի կա-
տարեալ էակ մի ըմբռնել որ զայսոսիկ
ճանչնար: ը. Իմաստուն և խելացի մարդ
մի կրնայ շատ անգամ մեծ հաւանականու-
թեամբ նախատեսել թէ այս այն պարա-
պայից մէջ դիպուած մի ինչ վախճան ալի-
տի ունենայ, և այս այն խառնուածքով
մարդ մի ինչ պիտի գործէ. և տեսեալ
ևս հաւանականութեամբ կը նախատե-
սէր՝ եթէ աւելի խելացի ըլլար. և յի-
րաւի կան անանկ մարդիկ որոնց թափան-
ցողութիւնն շատ վեր է քան զհասարակ
կարողութիւնս: Ապա Աստուած որոյ ի-
մացականութիւնն անհուն է՝ պէտք է որ
զամենայն ինչ ստուգապէս նախատեսէ:
Այս ապացոյցիս հաստատութիւն կրնայ
ըլլալ ազգաց և ազանց մարգարէութեանց
ու պատգամաց վրայ ունեցած հաւատքն,
որ ընդհանուր ըլլալուն համար պէտք
է որ ճշմարտութեան հիման վրայ հաստա-

տուած ըլլայ։ գ. եթէ Աստուած չկարենար ստուգապէս ճանչնալ զաղտ ապագայն անոր համար պիտի ըլլար որ աստիք ստուգապէս ճանչցուելու ենթակայ պիտի չըլլային՝ որոշուած չըլլալնուն համար, որովհետեւ յաղտ կամաց մարդոյ կը կախուին. արդ այս պատճառս չգոյներ, վասն զի որչափ ալ ազատ ըլլան՝ սակայն դարձեալ դրականապէս և ստուգապէս ապագայք են։ Ենթադրենք թէ մարդուն մէկն վաղը ազատութեամբ չրջագայելու պիտի երթայ. այս բանս ճշմարիտ էր ոչ միայն երէկ, այլ և ամիս մը, տարի մը և դար մը առաջ. ՚ի յաւիտենից ատյգ և ճշմարիտ էր որ աստիճն սա ժամն այս մարդս չրջագայելու պիտի երթայ. այս գործս ՚ի յաւիտենից ստուգապէս ապագայ էր, ապա ՚ի յաւիտենից նախատեսանելի էր։

Հոգեբաստութեան Յաղագս ազատութեան գլխոյն մէջ հետքեր ենք այն առարկութեամբն որ կըլլայ ՚ի գժուարութենէ միտանելոյ զկանխատեսութիւն Աստուծոյ ընդ մարդկային ազատութեան։ Տես և ինչ որ ալ ասկէ ետև պիտի ըսենք նախախնամութեան յօդուածին մէջ յաղագս զուգընթացութեանն Աստուծոյ՝ նկատմամբ մարդկային գործոց։

Կարողութիւն և Զգաստութիւն Աստուծոյ .

Աստուած ամենակարող է որովհետև անհուն էակի մի բնութիւնն ահմանի և ներից մէջ չամփոփուիր , և ի տիեզերքս ստեղծելու համար զերագոյն աստիճանի կարողութիւն հարկաւոր է : Արարածոց վրայ կամքն՝ի կարողութենէ զատ կրնանք ըմբռնել , որովհետև երբեմն կամքն կարողութեան ահմանէն ալ անդին կանցնի. իսկ Աստուած կամք և կարողութիւն անբաժանելի են :

Կարողութիւնն գործելոյ ընտրութեամբ և ըստ կամի կըսուի ազատութիւն , և այս ազատութիւնս աստուածային կարողութեան և կամաց էականկերպաւորութեանց մէկն է : Պատճառ , վասն զի ա . այս ազատութիւնս կատարելութիւն մի կըմբըռնենք . բ . և զի այս կատարելութիւնս ունի մարդս , և հետևապէս պէտք է որ ըլլայ յարարիչն մարդկայինս բնութեան : Զազատութիւնն լաւ չենք կրնար ըմբռնել Աստուած , եթէ չզանազանեմք՝ի նմա երկու տեսակս գործոց ներքին և արտաքին : Ներքին գործք կըսուին Աստուած որոնց առարկայն ինքն է , որպէս ճանաչել և սիրել զինքն . իսկ արտաքին գործք որ յարարածս ծաւալի , որպէս ստեղծագործութիւն և զեկավարութիւն աշխարհի : Ամէն

մարդ գիտէ որ՝ի ներքին գործս ոչ գոյ Աստուած ազատութիւն. զի՝ի հարկէ ճանաչէ և սիրէ զինքն: Հետևապէս ազատութիւն աստուածային յարտաքին գործս միայն է. և որ այս կերպով կապացուցուի. Աստուած կամ ազատութեամբ ստեղծեց զաշխարհս կամ՝ի հարկէ սահմանեց ստեղծուլ զնա. իսկ արդ Աստուած ոչ՝ի հարկէ բերաւ՝ի ստեղծուլ զաշխարհս, քանզի ինքն ինքեան բաւական է: Զարձեալ՝ի հարկէ ստեղծագործութիւն ենթադրելով՝ պէտք է համարինք որ աշխարհքիս գոյութիւնն ալ՝ի հարկէ է, որ չէ. որովհետև կրնանք ըմբռնել որ եղած չըլլայ կամ եղածէն տարբեր ըլլայ:

Հարկ է՝ի միտ առնուլ որ Աստուծոյ ազատութիւնն իր անփոփոխութեան հակառակ չէ. քանզի ազատ կամք Աստուծոյ՝ի յաւիտենից անդարձ վճռեալ են:

Նախախնամութիւն Աստուծոյ.

Աստուծոյ գոյութիւնն և իր գլխաւոր կատարելութիւններն ցուցնելէն ետև՝ խօսինք Աստուծոյ այն տիեզերական ներգործութեան վրայ՝ որով իր արարածոց հետ կը հաղորդուի՝ զանոնք պահելով կատարելագործելով և իրենց վախճանին հասցնելով, և կըսուի Տեսչութիւն կամ Նախախնամութիւն, և կը սահմանուի այսպէս.

«Գոյծ Աստուծոյ որով վարէ նա զաշխարհս՝ եթէ ըստ բնական և եթէ ըստ բարոյական կարգի»։ Հին աղանդներէն ոմանք և՛ ի մանաւորի եպիկուրեանք նախանամութեան վարդապետութիւնն ուրացան, որոնք ամէն բան դիպուածով եղած կը սեպէին. իսկ յարդեաց՝ ոմանք յաստուածեանց, որ կը մերժեն զամենայն ազդեցութիւն Աստուծոյ՝ և վերայ մարդկային գործոց։

Ըստ վերոյգրեալ սահմանին նախախնամութեան առարկայ են ամենայն արարածք եթէ իմացականք և հոգևորեալք և եթէ արարածք զերկիք յիմացականութենէ և՛ ի կենաց. վասն զի ամէնքն ալ իրենց վախճան ունին, և այս վախճանին հասնելու միջոցներն։ Աշխարհքս վարելու համար նախախնամութեան գործած միջոցներն են բնական և բարոյական կարգի օրէնքն։ Իմացականութենէ զուրկ արարածներն ներքոյ անկեալ են բնական և հարկադրիչ օրինաց. այսպէս բոյսերն՝ ի հարկէ հնազանդին իրենց բնութեան օրինացն։ Այն էակք որ՝ ի միութենէ բանական հոգւոյ և գործիաւոր մարմնոյ եղեալ են, ինչպէս մարդիկ, իրենց էութեան ան մասանց՝ որ պարզապէս նիւթական կարգի կը վերաբերի՝ բնական օրինաց հպատակ են, որ մեծաւ մասամբ կը փոխոխուին իրենց կամաց ազատ գործածութեամբն։ Բաց ասկէ հպատակ են նաև ոչ հարկադրիչ՝ այլ պար-

տաւորիչ օրինաց բարոյականաց, որպիսի են օրէնք արդարութեան և գթութեան և այլն: Վ երջապէս նախախնամութեան արգասիքն՝ ըստ բնական կարգաց այս են որ ամէն բան իր վախճանին կը հասնի բուսական, կենդանի և կատարեալ, սակայն՝ ի բաց առնուլ այն դէպքերն՝ յորս ազատ արարածոց կամքն կրնայ արգելք ըլլալ. իսկ ըստ բարոյական կարգաց այս են՝ որ ամէն իմացական արարած ստեղծեալք այնպիսի վախճանաւ մի որ իրենց բնութեանն և կարողութեանցն հետ կատարեալ ներդաշնակութիւն ունին, ընդունին բաւական միջոցներ այն վախճանին հասնելու:

Աստուածային նախախնամութեան ապացոյցներէն առաջ խոհական մարդ մի չկրնար այս յետագայ նախադասութիւնները մերժել. ա. որ իմացական և իմաստուն էակի մի ստեղծելու կամայն մէջ և նոյն կամաց կատարման մէջ հարկաւորապէս պատճառ մի ենթադրելու է գործելու, և վախճան մի համեմատ իր իմաստութեան և իմացականութեան. բ. այս վախճանս հայթայթելու դիտաւորութենէն անբաժանելի է յարմարագոյն միջոցներու ընտրութիւնն և կարգադրութիւնն. և այս է ճիշդ նախախնամութեան իսկութիւնն, որ յետագայ պատճառաբանութեամբք կը ցուցուի.

Ա. Ամենայն ազգ որ Աստուծոյ գոյութիւնն ճանչցան՝ օտար չսեպեցին զանի-

կայ 'ի մարդկային գործոց. միշտ և ամէն տեղ ամենայն ժողովուրդք զաստուածու-թիւնն պաղատեցին որ իրենց վրայէն վտա-րատէ թէ այն վնասներն որ 'ի բնական ար-կածից առաջ կու գան, և թէ անոնցմէ՝ որ 'ի մարդկային ազատ կամաց, որ ըսել է թէ միշտ հաւատացած են աստուածային նա-խախնամութեան: Անոր համար կըսէ Վի-կերոն [1]. «Չի եթէ աստուածք չեն կարող օգնել մեզ և ոչ կամին և ոչ իսկ խնամեն մեզ, և ոչ զոր գործեմքն իմանան, և չէ ինչ որ 'ի նոցանէ հասցէ մարդկայնոյ կե-նացս, առ ինչ ապա պաշտամունս և պա-տիւս և աղօթս վերառաքեմք անմահից աստուածոց»: Ը. պա ուրեմն հաւանութիւն ազգաց ոչ նուազ ցուցանէ զճշմարտու-թիւն աստուածային նախախնամութեան քան զգոյութիւն նորա. և այս մէյնն ընդ-հանուր հաւատք ըլլալուն համար, և եր-կրորդ որ ինչպէս իր գոյութեանն համար ըսինք՝նախախնամութեան վարդապետու-թիւնն ալ չկրնար առաջ գալ 'ի նախա-պաշարմանց և 'ի մոլորութեանց, գրեթէ նոյն պատճառներուն համար:

Բ. Բնութեան մէջ տեսանուած հիանալի ու հաստատուն կարգն՝ յայտնի կը ցուցնէ որ աս բանս որոշեալ ծրագրով մի եղած է, և զանիկայ յարդիւնս ածելու պատշա-ճական միջոցներ գործածուած են:

1 Ցպաղպս բնութեան աստուածոց Ա. գլ. Բ:

Տիեզերաց ծրագրին խնդիրն լուծելու համար տես ինչ որ ըսինք Աստուծոյ գոյութեան ապացույցին մէջ՝ի կարգաց համագոյից. և ինչ որ Զարևաց վրայ խօսելու առեննիս հերքումներ ալիտի դնենք։

Առարկ Ա. Եթէ նախախնամութիւն ըլլար՝ դիպուածական բան պիտի չըլլար աշխարհքիս մէջ. իսկ արդ աշխարհքիս մէջ շատ բան դիպուածով կը հանդիպի, ապա ոչ գոյ նախախնամութիւն։

Պհ. Որոշի վտքրապոյնն։ Աշխարհիս մէջ շատ բան դիպուածով կըլլայ՝ նկատմամբ մեզ, ընդունիմ. իսկ յինքեանս և նկատմամբ Աստուծոյ, մերժեմ։ Դիպուածական ըսելնիս ուրիշ բան չէ, բայց եթէ որ պատճառն չենք գիտեր. բայց բան մի առանց պատճառի չըլլար, և ամէն պատճառ ծանօթ է Աստուծոյ, ապա յինքեանս և նկատմամբ Աստուծոյ դէպք ըսած բանդ չկայ։

Առարկ Բ. Նախախնամութիւն ենթադրելով կենաց գործոցն անհոգութիւն առաջ կուգայ՝ բոլորովին անոր վստահելով. իսկ արդ այս սկզբունքս ոչ ոք կը գործադրէ, ապա ոչ գոյ նախախնամութիւն։

Պհ. Մերժի մեծապոյնն։ Յիրաւի աստուածային նախախնամութիւնն ղեկավարէ զամենայն արարած իրենց բնութեան յարմար եղանակաւ. այսպէս մարդկային սեռն կուզղէ ազատ բնութեանց օրինօք, այնպէս որ խոհեմութեան տեղ

բական կարգաց չեղիլն՝ աստուածային նա֊
խանամուԹեան կարգին հակառակ գոր֊
ծել է ։

Առարկ Գ. Տիեղերաց ղեկավարուԹեամբ
կը ստիպուի Աստուած իր մեծվայելչու֊
Թեան անարժան՝ ոչինչ բաներու զբաղե֊
լու. ապա նախախնամուԹեանն վարդա֊
պետուԹիւնն անընդունելի է ։

Պհ. Նախորդն մերժելի է ։ Նախ վասն
զի Աստուած անհուն ըլլալով միով ևեթ
ներգործուԹեամբ կամայ հակէ՝ի վերայ
ամենայնի. և երկրորդ որ ինչպէս ստեղ֊
ծուլն Աստուծոյ մեծվայելչուԹեան անար֊
ժան չէ՝ այսպէս նաև կառավարելն. վասն
զի խելքի հակառակ է որ իմացական և ի֊
մաստուն էակ մի գիպաց ձեռք ձգէ իր
գործն ։

ԶուգընթացուԹիւն կամ օժանդակուԹիւն Աստուծոյ՝ի մարդկային գործս.

Ք րիստոնէական հաւատոյ վարդապե֊
տուԹիւն է Թէ շնորհք որ անմիջական ներ֊
գործուԹիւն է Աստուծոյ՝ հարկաւոր է մեզ
առ ամենայն գերբնական գործս և օգտա֊
կար՝ի փրկուԹիւն ։ Այս վարդապետու֊
Թիւնս իմաստասիրաց միտքն ձգեց քննե֊
լու Թէ որպիսի՞ ինչ է օժանդակուԹիւն Աս֊
տուծոյ զոր ներգործէ՝ի մեզ՝ի բնական
գործս ։ Արարածք պէտս ունին օժանդա֊

կութեանն Աստուծոյ ոչ միայն առ՝ի կեալ և հանապազորդել՝ի գոյութեան, այլ և առ՝ի գործել: Անժխտելի է եթէ նախախնամութիւնն մերձ կայ՝ի գործս մարդոյ. որ և է հաւասար ազդի մարդկան՝ հաստատեալ՝ի սորոգելիս Աստուծոյ: Բայց մնծ դժուարութիւններ կելլեն թէ ինչ եղանակաւ կալցայ այս մերձակայութիւնս, որովհետև այնպէս պէտք է ըլլայ՝ որ մարդուս ազատութեանն չվնասէ, Աստուած ալ պահէ իր զերագոյն իշխանութիւնն զոր կը պահանջեն իր սորոգելիքն: Արդ Աստուած իր իշխանութիւնն կը պահէ՝ եթէ իր արարածոց կամքն կուզէ. բայց ինչ կելլայ յայնժամ ազատութիւնն: Արարածք ալ իրենց ազատութիւնն կը պահեն՝ եթէ աստուածային մերձակայութեան դէմ կարենան դնել. բայց ինչ կելլայ յայնժամ Աստուծոյ զերագոյն իշխանութիւնն: Այս այնպիսի առեղարկ մի է՝ որուն պարզ լուծումն մարդուս միտքն չկրնար գտնել. սակայն այլ և այլ բացատրութիւններ հնարուած են՝ որոնք գլխաւորապէս երկուքի կը վերածուին դրուխիւն Մոլինեանց այսպէս կոչուած Մոլինա անուն ապանիացի յիսուսեան կարգէն հնարողին անունովը, և և դրուխիւն Թոմայականաց կամ դպրոցի Ս. Թոմասի ազուինացւոյ: Առնց վրայ խօսելն Աստուածաբանութեան կիյնայ ուր մեր ծրագրէն դուրս է, և շատ օգտակարութիւն մ'ալ չունի զանոնք բացատրելն,

որովհետև երկուքն ալ միտքն բաւական չեն համոզել : Այսչափ ըսենք որ մարդկային ազատութիւնն՝ ներքին զգացմունքէ և՛ի բանէ մտաց ապացուցեալ իր մի է. ուրիշ կողմանէ ալ նախախնամութեան մարդկային գործոց հետ ունեցած զուգընթացութիւնն բնական մտօք կիմացուի՝ որով մարդիկ Աստուծոյ մերձակայութիւնն կը խնդրեն յարկածս կենաց նաև իրենց բարոյական վիճակին համար : Այս երկուքն ալ բաւական ապացուցեալ են, մինակ որոշ չըմբռնուիր այն յարաբերութիւնն որ զանոնք իրարու հետ կը կապէ. բայց պէտք է յիշել որ երկու իր կրնան մեզի համար անկցորդելի երևնալ՝ առանց իրարու մէջ ներհական ըլլալու : Այլ մարդ գիտէ՝ որ երկու ապացուցեալ բաներն մերժել չըլլար՝ մինակ աս պատճառավ որ զանոնք իրարու հետ չենք կրնար կցորդել. այս գիրենք միացնող կապն ըմբռնելու անկարողութիւննիս մինակ մէկ բան մի կը ցուցնէ, այսինքն մեր իմացականութեան սահմանաւոր ըլլալն :

Յաղագս չարի.

Չարիք բնականք որ վշտակրեն զմարդ և չարն բարոյական որ պղծէ զնա, և մէկ խօսքով ազգի ազգի անկատարութիւնք և ախտք և թշուառութիւնք՝ իմաստասերքն

բէն ոմանց անվիտաբանելի երևցան ընդ նա-
խանամուքեանն Ա.տուծոյ, որ քարի է
և առքր և արդար և իմաստուն, և ընդհան-
րապէս ընդ անուանիւն կատարելոքեանցն
Ա.տուծոյ: Մանաւանդ հերետիկոսք եր-
րորդ դարուն՝ բարեաց և չարի պատճառն
տալու համար երկու սկիզբն կը դնէին յո-
րինիչ աշխարհի, մին բարի արարիչ բար-
ւոյ և միւսն չար պատճառ չարի: Պայլ իր
բառագրոց մէջ մանիքեցւոց վրայ խօսելու
պատրուակաւ՝ հաւաքեց այն ամենայն ա-
ռարկութիւններն որոնցմով հաստատել
կուզեն թէ չարի գոյութիւնն անվիտաբա-
նելի է ընդ կատարելութեանցն Ա.տուծոյ:
Էյսանից իրեն Ա.տուածախօսութիւնն
գլխաւորապէս գինքը հերքելու համար
գրած է: Մենք ալ առարկութեանց պա-
տասխան տալով՝ պիտի ցուցնենք որ գո-
յութիւն չարի շատ լաւ կրնայ միաբանիլ՝
ամենակատարեալ Ա.տուծոյ նախախնա-
մութեան հետ:

Չարն երկու տեսակ կը զանազանուի, չար
բնական և չար բարոյական. բնական չարն
կերպով մի արարածոց էութեանն յատուկ
է ու իրեք դաս կը գատուի ա. վիշտք և
ցաւք ազգի ազգի. բ. արկածք և անկար-
գութիւնք բնութեան՝ աղէտք աղետից
մարդոյ. գ. անկատարութիւն և անհաւա-
սարութիւն կատարելութեանց արարածոց:
Իսկ չարն բարոյական յանցաւոր գործէ
գարգարողն՝ որ է չար յանցանաց կամ մեղք:

Զարն որ յանկատարութենէ բնութեան՝ բնազանցական չար կըսուէր երբեմն կամ չար բնութեան, բայց հիմա այս զանազանութիւնն չգործածուիր։

Առարկ. Ա. Երկրիս վրայ մարդուս կազմութիւնն հազարումէկ տեսակ հիւանդութեանց և թշուառութեանց ենթարկեալ է. արդ այսպէս չէր ըլլար՝ եթէ աշխարհս ամենակատար Ստուծոյ մը նախախնամութեամբն կառավարուէր, ապա ուրեմն աշխարհիս վրայ նախախնամութիւն չկայ։

Պհ. Երկրորդ նախադասութիւնն մերժելի է։ Առարկութեանց մէջ յիշուած չարիքն շատ պատճառներով կը միաբանին ամենակատար Ստուծոյ մի նախախնամութեան հետ։ ա. Եթէ ցաւոյ զգածմամբ մարդս չզգուշանար այն բաներէն՝ որ իր գործարանաց ամբողջութեան վնաս կը բերեն՝ չէր յորդորուեր զանոնք պաշտպանելու անոնցմէ՝ որ զանոնք եղծանել կը ջանան։ բ. Այս չարիքս պէտք է պատիժ և քաւութիւն համարինք մեր անժուժկալութեանն և ամէն տեսակ յանցանաց։ գ. Բնական չարիք մարդուս ամբարտաւանութիւնն կը խոնարհեցնեն՝ իր տկարութիւնն և հպատակութիւնն իմացնելով. իր

առաքինութիւնն կը գտանեն, համբերութիւնն կը փարձեն, ներկայ կենաց կրաստական բարեաց ճիշդ յարգն կը ճանչցնեն և երկնային բարեաց կը վերբերեն, որոնք են միայն ճշմարիտ և մնայուն երջանկութիւն։ Հիւանդութեան ատեն մարդ զՍատուած կը կարդայ և կը յիշէ իր մարդ ըլլալն։ «Ջինչ հրապուրէ զախտաժէտն արծաթասիրութիւն կամ հեշտութիւն. ոչ տարեալնաց արբանեակէ, ոչ պատուոյ ցանկայ, զինչս անտես առնէ, և զդուզնաբեկեայն բաւական համարի զի կորնչելոյ են. յայնժամ յիշէ զաստուածն և թէ մարդ է ինքն». բաւ Պլինիոս կրաբերն [1]։ ո. Սակայն բարիք չարիքներէն աւելի են ընդհանրապէս, որովհետև ամէնէն թշուառք ևս երկնչին՝ ի մահուանէ և որչափ կարելի է իրենցմէ կը հեռացնեն. հետևապէս՝ ի բաց առեալ զչարիս՝ այնչափ բարիք կըմնան մարդուս՝ որոնց համար պարտական է Սատուծոյ բարութեանը։

Սռապկ. Բ. Եթէ աշխարհքս ամենակատար աստուծմէ կառավարուէր՝ ամէն բանի վրայ անոր կատարելութիւններն ալ ան տեսանուէին, և սակայն բնական աշխարհիս ամէն մասանց մէջ այնչափ անկարգութիւնք և չարիք կը տեսանուին՝ որ բնութեան արարչին իմաստութեան և բարութեան նուազութիւն կը բերեն։ Օրինա-

1 Թուղթք Գլրք է. իջ։

*կի համար երկրիս վրայ վնասակար կեն-
դանիք և թունաւոր բոյսք, հրէշներ, ջըր-
հեղեղներ, երկրաշարժներ, մոլեգին մըր-
րիկներ որ ամէն բան տակնուվրայ կընեն.
ապա ուրեմն...*

*Պիտ. Ե. Նախ կը պատասխանենք. աշ-
խարհքիս այն բաներէն որոնց օգտակա-
րութիւնն չենք ճանչնար կամ մեզի իմաս-
տութեան նուազութիւն կերևցնեն, չենք
կրնար հետևցնել որ ամենակար էակի գործ
չըլլայ. ինչպէս որ իրաւունք չունինք հե-
տևցնելու թէ մարդու ճարտարութեամբ
չինուած չեն այն հրաշալի մեքենայներն որ
մեր գարուս պարծանք են, պատճառով որ
քանի մի մասանց օգտակարութիւնն չենք
հասկնար: Երկուքին մէջ բանաւոր հետե-
ւանքն մեր տգիտութիւնն խոստովանելն է:*

*Ե. Փոքրագոյնն մերժելի է: Տիեզերաց
ամենայն մասանց պատճառն իմանալուհա-
մար՝ պէտք է ամենուն կեդրոնն և տեսու-
թեան կէտին վրայ կենալ. սա մասն որ ա-
ռանձին առնելովանպէտ կամ վնասակար
կը տեսնուի առջի բերան, եթէ բոլորին
քովն դնես՝ ան ատեն օգտակարութիւնն
կը տեսնես: Դիւրին է ցուցնելն որ մեր
կարճ տեսութեամբ վնասակար ըսած էակ-
ներն՝ բնութեան մէջ իրենց օգտակարու-
թիւնն ունին: Առանց չաղղակեր անաս-
նոց որչափ պիտի բազմանային սողուն-
ներն և միջատներն երկրիս վրայ. և ո՛ր-
չափ հոտած դիակներ ու փտած նիւթեր*

օդն և ջուրն պիտի ապականէին՝ թէ որ պանոնք լափող տեսակներ չգտնուէին։ Վնասակար կենդանեացմէ մէկ հատն մինակ օրինակ բերելով օձին թոյնն ալ բնական կերպով կը մեկնուի. որովհետև դանդաղ ու վախկոտ կենդանի մի է և անդամներ ալ չունենալով չէր կրնար իր անունդն ճարել՝ թէ որ բնութենէ առած չըլլար իր որան ցմահ վիրաւորելու կարողութիւնն. քիչ անգամ մարդուս վրայ կը յարձակի, և թէպէտ երբեմն վտանգաւոր ալ ըլլայ՝ սակայն ծրչալի զգուելի ու պիղծ անասուններէն զմեզ կազատէ։ Սարսուռեան ծրագրին մէջ ամէն տեսակն մէյմէկ պաշտօն ունի կատարելու, և անպատեհ և անօգուտ ստեղծուած մի չկայ, զոր թէ և միշտ չենք տեսներ, բայց հաստատապէս այնպէս է. շատ մի դրսուանց վնասակար բոյսեր և կենդանիներ կան՝ որ աւելի կատարեալ տեսակներու անունդ կըլլան, ատոնք ալ ուրիշներու, ինչուան կը հասնին այն տեսակներու որ անմիջապէս մեզի հարկաւոր են։ Նոյն իսկ մեր զգեստներն և ուտելիքն կրծող տեսակներն՝ նախանամութեան ծրագիրն կը լեցնեն որ չուզեր թէ բան մի կորսուի տիեզերաց մէջ. և վնասակար նիւթեր կան որ օգտակար դեղերու մէջ կը խառնուին, ինչպէս որ կըսէ Ռասին Լ[1].

1 Լ. Ռասին Յաղագս կրօնից քերթ. գլ. Ս։

« Աբուեստից հեթեթանք և 'ի թիւնից առնու օճան »։ Եւ այն որ մէկ տեսակին թոյն է՝ միւս տեսակի մի անուն է։

Բնութեան ընդհանուր կարգէն չեղած երևոյթներն որ հրէշ կըսուին՝ ամէն էակի յարակից անկատարութենէ առաջ եկած արդելքներէն կը ծագին, և այն ընդհանութենէն որ այլ և այլ ազդեցութիւններէ կրնայ պատահիլ իմաստուն օրինաց մէջ զոր Աստուած պարտական չէ փոխոխելու՝ հրէշի մի գոյութիւնն արգիլելու համար. և բնութեան օրինաց այլայլութիւնն աւելի մեծ չար կըլլար՝ քան թէ քանի մի հրէշներու գոյանալն։

Փոթորիկներէն, հեղեղներէն, չարժէն և ուրիշ տեսակ արկածներէն առաջ եկած վնասներն ալ որով շատ արդարք և մեղաւորք ալ կը կորսուին՝ բնութեան ընդհանուր օրինաց հետևանքն են. և այս բաները արդիլելու համար զանոնք միակերպ այլայլելն ոչ Աստուծոյ մեծագործութեանն կը վայլէ, և ոչ մարդուս ալ օգտակար է։ Լսենք այս բանիս վրայ ըսը Մէսթր կոմլեն [1]. « Աշխարհքս ընդհանուր օրէնքներով կառավարուելուն կարծեմ թէ չես յանդգնիր ըսելու՝ որ եթէ այս պատճառիս համեմ հղած յանկարծ

1 Ելեւէջինք Ս. Բէթէրսպուրկի ա. զրուցատրութեան։

վրէն ու պատշգամն օդին մէջ առկախեալ
Ցնայ՝ Աստուած մեզի համար նոյն ատեն
կենդրոնաձիգ զօրութեան օրէնքն դա-
դրեցնէ, որովհետև երբ հոգի անոր վրայ
կեցեր են որ ոչ գողութիւն ըրեր են և ոչ
մարդասպանութիւն. ուստի կինանք ու
կը ջախջախինք որչափ ալ արդար ըլլանք...
Կուզէիր որ կարկուտ եկած ժամանակ ար-
դարոյն արան չզարնուեր, բայց ատիկայ
հրաշք կըլլար: Իսկ թէ որ հունձքէն եւթն
արդարն մեղք մի գործէր՝ պէտք էր որ
չուեմարանին մէջ ցորեն փտտէր, ահա
քեզի հրաշք մի ալ: Այնպէս որ ամէն վայր-
կեան հրաշքի կարօտ ըլլալով՝ հրաշքն աշ-
խարհքիս սովորական կարգն պիտի դա-
նար»: Այս տեսակ գաղափարներն առաջ
բերելն մինակ բաւական է զանոնք հեր-
քելու համար, կաւելցնէ հեղինակն:

Այս ամէն անկարգութիւն սեպուած-
ներն որոնց վրայ կը զարմանանք, պատ-
ճառաց և արդեանց չարաչարութիւն մի է՝
որոնց մանրամասն միտք չենք կրնար հաս-
ցնել, բայց բաւական ու օգտակար վախ-
ճան մի չեն կրնար չունենալ: Օրինակի հա-
մար մրրիկն որ երկրիս երեսն տակնուվրայ
կընէ՝ օրէնքէ մի առաջ կուգայ որ ամենա-
հարկաւոր է օդն մաքրելու և անոր զու-
պակշռութիւնն պահելու համար. երկրիս
մէկ ծայրէն միւս ծայրը փչող հովերն մըթ-
նոլորտին խաւերն կը խառնեն, և այսպէս
ամէն տեղն, ամէն տեղ և ամէն բարձրու-

թեան մէջ անոր խառնուրդն կը միա-
կերպեն :

Այս ամէն պատճառներուս վրայ կըր-
նանք աւելցնել՝ որ բնութեան քանի մի մա-
սանց առ երեսոյթ անկարգութիւնն՝ միւս
մասանց կարգն ու գեղեցկութիւնն աւելի
կերևցնէ . ինչպէս նկարչի մի վրայ ըս-
տուերներն :

Թէ որ բնական աշխարհիս արկածնե-
րուն համար ըստացն մանաւորապէս
մարդկանց աղիտից նկատմամբ է, պատաս-
խանն գրեթէ առաջին առարկութեան լու-
ծումն է : Իսկ մահուան արկածին համար
ալ կրնանք աւելցնել որ մահաբերնիւթերն
և եղծման որ և իցէ պատճառներն՝ պէտք
է մահուան սկզբանցն կարգն դնել որ մեր
մահկանացու բնութեան յարակից են, և
մեր կենացն յարմար՝ որփորձուելու ու գե-
ւորի վիճակ մի է, և միանգամայն անկեալ
բնութեան և պատժոյ նշանակ : Այն մահ-
կանացուաց վճարելի հարկ մի է մեռնիլն՝
եթէ բնական մահուամբ կամ հիւանդու-
թեամբ եղեր և եթէ դիպուածով, գա-
զանի մի ժանիքներով կամ թունաւոր նիւ-
թով մի :

Այս ամէն խորհրդածութիւններէս կը
հետևցնենք՝ որ սուտ է ըսելն թէ բնական
աշխարհքիս անկարգութիւններն անհուն
կատարեալ Աստուծոյ մի նախախնամու-
թեան հետ չհիաբանիր :

Առարկ . Գ . Արարածոց վրայ տես-

նուաճ անկատարութիւններն և կատարելութեանց անհատատարութիւնն չարիք են, որովհետև բարոյ պրկումն է, և չատերուն նուաստութիւն կը բերէ. արդ եթէ աշխարհքս արդար և բարի Աստուծմէ կառավարուէր՝ սանկ չէր ըլլար. ապա ուրեմն մարդկանց վրայ տեանուաճ անկատար և նուաստ վիճակն Աստուծոյ կատարելութեանց հետ չմիաբանիր:

Պիտ. Երկրորդ տապալութիւնն մերժելի է: Արարածոց անկատար վիճակն և կատարելութեանց անհատատարութիւնն Աստուծոյ տորոգելեաց հետ միաբանելն դժուարբան չէ. վասն զի ա. արարածք միանակ իրենց պատահական էակը ըլլալնէն՝ էականապէս սահմանաւոր և անկատար պէտք է ըլլան. բ. ամենարդար և ամենաբարի Աստուած մի պարտք չունէր իր ամէն արարածներն ալ հաւասարապէս կատարեալ ստեղծելու. վասն զի մէկու մի պարտական չէ, և բաւական է որ տուածն բարիք ըլլայ՝ որչափ ալ ըլլայ: Դարձեալ գերազանցապէս արդար և բարի Աստուած մի գերազանցապէս ալ իմաստուն և ազատ է. իմաստուն ըլլալնէն պէտք էր զանազանութիւն տալ իր արարածոց յատկութեանցն ու յարմարութեանցն՝ նախ միակերպութիւնն կտրելու համար, երկրորդ աշխատանքի բաժանումն դիւրացնելու համար որ հարկաւոր պայման մի է ամէն պաշտամանց ազէկ կատարուելուն

և ամէն տեսակ մարդկային ընկերութեան շահաւոր արուեստներուն յառաջադիմութեան : Պէտք ալ ըլլալով այնչափ իրաւունք ունէր ուզածին պէս աստիճան տալ մանել իր արարածոյն մէջ, և այս այն վիճակի մէջ դնել զիրենք՝ որչափ որ իրաւունք ունէր ամենևին չաւերզծելու :

Բարոյական չարէ առաջ ևկած առարկութեանց
ընդունելին .

Առարկ Ա. Աշխարհքիս վրայ բարոյական չարի գոյութիւնն՝ յայտնապէս հակառակ է աստուածային կատարելութեանց այնինքն իր բարութեան , արդարութեան , իմաստութեան և այլն. արդ եթէ աշխարհքս անհուն կատարեալ Աստուծոյ մի նախախնամութեամբ կառավարուէր՝ երկրիս վրայ բարոյական չար չէր ըլլար :

Պհ . Նախորդն մերժելի է : Բարոյական չարի գոյութիւնն ամենակատար Աստուծոյ նախախնամութեանն հետ կրնայ միանիլ : Վասն զի բարոյական չարն կամ մեղքն զեղծումն է ազատութեան . իսկ արդ՝ այս զեղծումն կրնայ մեկնուիլ ամենակար Աստուծոյ կառավարութեան տակն : Այս բանիս համար բաւական է որ ամենակատար Աստուած մի տուած ըլլայ մարդոյ ազատութիւն , և արդար չունենայ անոր զեղծմանէն արգիլելու . իսկ արդ այս եր-

կու բանա ատոյգ են։ ա. Ատոյգ է որ ամե-
նահատարն Աստուած կրցեր է տալ մար-
դուս զազատութիւն. վասն զի բան մի
չկայ որ արգելու զանիկայ մարդուն բնու-
թեան ամէնէն գերազանց կարողութիւնն
տալու, ինչպէս է ազատութիւնն որ մար-
դուս ամէնէն ազնուական ձիրքերէն մէկն
է, և որուն վրայ շատ նախանձաւոր է, և
իր արդեանց և առաքինութեանց աղբիւրն.
և Աստուած այս ձիրքս տալով մարդուս՝
որուն բան մի պարտական չէր, ուզեց որ
անով յաւիտենական վարձուց արժանի
ըլլայ։ բ. Ամենակատար Աստուած մի
պարտական չէր ազատութեանդ ձղձմանքն
արգելուլ. վասն զի այս բանիս ուրիշ բա-
նի համար չէր կրնար պարտաւորուիլ,
բայց զի աւելի մեծ բարիք մի կըլլար մար-
դուս. իսկ արդ այս անզօր պատճառ մի
է. ապա թէ ոչ կը հետևէր որ զերազան-
ցապէս բարի Աստուած մի պարտաւորէր
ամէն կարելի բարիս տալ իր արա-
րածոյն, որ չկրնար ըլլալ. որովհետև որ-
չափ բարիք ալ տար՝ չէր կրնար ալ աւելին
չտալ, առանց յանհուն հասնելու։ Իր
կատարելութեանց չհակառակելու համար՝
բաւական է որ իր ստեղծն ըստ ինքեան
բարի ըլլայ, բայց ան բարեաց չափ ու
սահման դնելն իր ձեռքն է։

Դարձեալ եթէ մարդս բարին և չարն
զանազանելու կարողութիւն չունենար, ու
ստիպեալ ըլլար բարիք ընելու՝ այն ատեն

մարդս ճշմարիտ ազատութիւն չէր ունե-
նար : Վասն զի թէպէտ չարիք ընելու կա-
րողութիւնն ազատութեան էական չէ , ո-
րովհետև Աստուած ազատ ըլլալով չկըր-
նար չարիք ընել , սակայն չար ընելու կա-
րողութիւնն ան կենայց մէջ մարդուս ա-
զատութեան մասն է . և ան քանս իր քը-
նութեան անկատարութենէն , իմացակա-
նութեան սահմանէն ու կամաց տկարու-
թենէն առաջ կու գայ : Արդ եթէ չենք ու-
զեր ենթադրել որ մարդ բոլորովին զըր-
կուած ըլլայ իր ազատութենէն՝ որով
բոլորովին իր մարդկութեան պայմաննե-
րէն դուրս կելլէ , պէտք է ընդունինք որ
աշխարհքիս վրայ բարոյական չարի գո-
յութիւնն կրնայ միաբանիլ ամենակատա-
րեալ Աստուծոյ մի նախախնամութեան
հետ : Ռուսսոյ կըսէ [1]. « Տրտնջալն թէ Աս-
տուած ինչու չարգիլեր մարդուս չարիք
ընելն՝ ուրիշ բան չէ՝ բայց եթէ դանգա-
տիլ դանիկայ գերազանց բնութեան մի
տէր ընելուն համար , անոր գործերն ազ-
նուացնելու դրած բարոյականութեան հա-
մար , և անոր առաքինութեան իրա-
ւունք տալուն համար : Աստուծոյ կարո-
ղութիւնն մեր բնութեան մէջ հակասու-
թիւն կրնար մի հաստատել , և բարեգոր-
ծութեան վարձ տալ անոր՝ որ չէր կրնար
չարիք գործել : Ի՞նչ , մի թէ մարդուս չա-

1 Եմիլ. գիրք դ :

ւիք ընելն արգիլելու համար՝ զինքն անբան
մի ընելու էր »։

Առարկ Բ. Այն բանն որուն չար հետե-
ւանքն կրնայ գուշակուիլ՝ զերազանցապէս
բարի սկիզբէ մը չկրնար գալ. արդ Աս-
տուած մարդուս ազատութիւն տալով գու-
շակեց որ պիտի զեղծաներ. արդ մարդուս
ունեցած ազատութիւնն ինչպէս որ է հի-
մա՝ այսինքն ազատութիւն խառն ընդ
զեղծման կամ բարոյական չարն գուշա-
կեալ Աստուծոյ՝ չկրնար միաբանիլ ընդ
բարերարեան Աստուծոյ։

Պխ. Զանազանի մեծագոյնն։ ինչ որ կը
գուշակուի որ չար է՝ի հեռևանն բա-
րերարեան և բան մտաց առաջին չկրնար զե-
բազանց բարի սկիզբէ մի յառաջ գալ՝ հա-
ւանիմ. բայց եթէ՝ի չար գործածութենէ
առաջին ուրանամ։ Ազատութիւնն ըստ
ինքեան բարիք մի է՝ թէպէտև զեղծմունքն
գուշակուի. որովհետև ըստ ինքեան բարի
ըլլալով օգտակար կրնայ ըլլալ և օգտի հա-
մար տրուած. իրի մի զեղծմունքն անոր
բնութիւնն չաւրեր։

Թոմասեան։ Հայր մի որ իր զաւկին
ձեռքն զէնք մի տայ՝ աստուածպէս գուշա-
կելով որ զեղծմամբ զաւակն պիտի վնա-
սուի, բարի հայր մի չկրնար ըլլալ. նոյն-
պէս և Աստուած տուած ազատութեան
զեղծմունքն գուշակելով։

Պխ. Հետևանքն և օրինակն մերժելի է։
Ար. քննած նիւթոյն նկատմամբ շատ է-

կան պանապանութիւններ կան ընդ Աստուած և ընդ հայր որ : ա. Աստուած մարդս վիճակին գերագոյն տէրն՝ ազատութեամբ կը սահմանէ իր արարածոց տալու կատարելութեանց և բարեաց աստիճանն. իսկ հայր մի իր որդւոյն ալէս արարած է՝ ենթարկեալ բնական օրինաց՝ որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ կամք Աստուծոյ . արդ այս օրէնքն կը պարտաւորէ զինքն որդւոյն վրայ հսկելու : բ . Հօրն ըրածին մէջ բարի դիտաւորութիւն մի ու պատճառ մի չկայ. իսկ Աստուծոյ ըրածն ամբողջ արարածոյ սահմանադրութիւն մի է , վասն բարոյական էակաց: գ. Պայլին ըսածին ալէս [1] ալէտք չէ մոռնալ որ մեր բնական գաղափարներն հաւարակ չափ մի չեն կրնար ըլլալ աստուածային և մարդկային բարութեան . վասն դի հնաւորին և անհունին մէջ համեմատութիւն չկայ ուստի ան բանն որ մարդկային բարութեան հետ չվիճաբանիր՝ կրնայ շատ ալէկ վիճաբանիլ աստուածային բարութեան հետ , թէ և մեր տկար միտքն զանիկայ չըմբռնէ : Այն իսկ մարդկանց մէջ բարութիւնն զանազան կերպով կըմընէ՝ բնաւնէնք՝ անոնց վիճակին համեմատ , որ օրինակ հօր , թագաւորի և գաւառի վրայ :

Աչառկ Դ . Աստուած այնչափ բարի էակ մի է՝ որ աւելին չենք կրնար ըմբռնել. արդ

1 Գործք . հա . գ . էջ 997 :

չարիք արդելող էակ մի չարդիլողէն բա-
րեզոյն է . ուրեմն եթէ աշխարհս ամենա-
բարի Աստուծոյ նախախնամութեամբ կա-
ռավարուէր՝ չարիք չէր ըլլար :

Պհ . Փոքրագոյնն մերժելի է : Աստուծոյ
բարութեան կատարելութիւնն իր ներքին
զօրութեան և անքաւութեան կոչմանէ ան-
փոփոխելի է, և մարդուս յայտնուած ըլլա-
լովն չփոխուիր : Աստուած չկրնար իր բո-
լոր բարութիւնն հաղորդել արարածոց
վասն զի անսահման է , ապա ուրեմն պէտք
է որ ինքն որոշէ անոնց կատարելութեան
աստիճանն . և այս աստիճանն ինչ ալ ըլ-
լայ Աստուած անով առաւել կամ նուազ
բարի չկրնար ըլլալ յանձն իւր :

Առարկ ե . Բարոյական չարի թոյլտո-
ւութիւնն Աստուծոյ արդարութեանն հակառակ
է . վասն զի մեզքն անմիջապէս իր արդու-
թեան տարողելոյն դէմ է . ապա բա-
րոյական չարի գոյութիւնն չկրնար միաբա-
նիլ Աստուծոյ նախախնամութեան հետ :

Պհ . Նախարդն մերժելի է : Արդութիւնն
կը պահանջէ որ էակն տուրբ ոչ գործէ և
ոչ հաւանի ընդ մեզս . արդ ոչ արդելոյն՝
դի մեզք լինիցին՝ ոչ գործել է և ոչ հաւա-
նիլ . ապա ոչ վնաս արդութեանն Աս-
տուծոյ :

Առարկ Զ . Մարդիկ կան որ իրենց բնա-
կան բերմամբն և գոնուած առիթներէն
դէպ 'ի չարն կը մխուին . արդ այսպիսի
պայման մի Աստուծոյ կատարելութեանց

հետ չմիաբանիր մանաւանդ արդարու-
թեանն, ասա և այլն:

Պիւ. Ա. յս մարդիկս կամ ունին կարողու-
թիւն խորհելոյ ի չարէն և կամ ոչ. առա-
ջին դէպքին մէջ յանցաւոր են թէ որ չար
գործեն, և իրենց յանցաւորութեանն հա-
մեմատ պիտի պատժուին. իսկ երկրորդ
դէպքի մէջ չեն մեղանչեր ու պիտի չպատ-
ժուին:

Դիտելիք. — Մարդկային արդի վիճակին
մէջ հանդիպած չարի խնդրոյն ամէն պա-
րագայներն լուծելն անհնարին է, եթէ
կեանքս փորձութեան վիճակ մի չհնկա-
տենք, և չտեսանենք անոր վրայ անկեալ
բնութիւն մի և պատժոյ հետքերն: Ա. յս ճըշ-
մարտութեանս նոյն իսկ հեթանոսք ան-
դրադարձան, ինչպէս որ կը տեսանենք Կի-
կերոնի [1], Բնաթաօս Պլինիոսի [2], Սեն-
կայի, և ուրիշ ազգայ մէջ: Նոյն բանին
հետքն կը տեսանենք քանի մի ընդհանրա-
պէս ծաւալեալ սովորութեանց մէջ. ինչ-
պէս նորածին տղայոց մաքրագործութիւնն
ջրով կամ հեղմամբ արեան: Սակայն
սկզբնական մեղքն և մեր բնութեան ան-
կումն՝ միայն ի ձեռն յայտնութիւնն
մեզի այս ալ կը տրվէցնէ որ Աստուած

1 Յաղագս հաստատութեան գիրք գ. թ. 1. և
Հաստուածք Հորդենեսոսի:
2 Բնաբանութիւն գիրք է. գլ. Ա:

կօգնէ մեր կամացն՝ մեր տկարութիւնն զօրացնելով. ուստի քնաւ պէտք չէ բաժանել երկարմէ զվարդապետութիւն սկզբնական մեղաց և զկարևորութեան շնորհաց: Ա. մենայն մարդ ընդունի յԱստուծոյ զբաւական շնորհս, և չէ անիրաւութիւն եթէ ընդդիմադրութիւն շնորհացն պատուհասեսցի յԱստուծոյ (4 Թուղթ կե.):

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՐՈՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԻՒԹ ԲԱՐՈՑԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Հոգեխօսական ուսմանց ընդհանուր հե-
տևանքն այն էր որ ցուցնեն մեզի թէ հո-
գւոյ կարողութիւններն են իմացողութիւն,
ազատ կամայ ներգործութիւն և զգայո-
ղութիւն : Բանախօսութիւնն պարզեց մե-
զի այն կանոններն որովք պիտի ուղղի ի-
մացողութիւնն. քարոյախօսութիւնս ալ վախ-
ճանն կամքն կարգաւորել կը սորվեցնէ .
իրաւ զգացողութիւնն և հոգւոյն միւս կա-
րողութիւններն ուղղելն այս երկու ուս-
մանցս ալ կը վերաբերին , բայց մանաւա-
նապէս քարոյականին պաշտօնն է :

Դիտողութիւնն և փորձն կը հաստա-
տեն մեր հոգւոյն մէջ կամայական գործոյ
հոգեխօսական երևոյթն , և նոյն ատեն
միտքն կըմբռնէ այն պարագաները որով
այս գործերն նոր կնիք մի կունենան՝ որ
նոյն գործոց քարոյականութեան կըսուի որ

է անոնց բարեբախտութենն կամ չարեբախտութենն, որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ անոնց հաճման կամ անհամաճայն ըլլալն գործնական կանոններ նկատելով կրթչի և բարոյ հետ։

Կամայական և ազատ գործոց մէջ կարգի յարդիւնս գալն և բարւոյ գործադրութիւնն ուրիշ կերպով չհասկցուիր՝ բայց եթէ կամաց կանոն սեպուած սկզբանց հետ յարմարութիւնն. արդ պիտութիւն մի կայ որուն առարկայն է այս կանոնները ճիշդ կերպով որոշել. այս է բարոյախօսութիւն, կամ բարոյական իմաստասիրութիւն կամ պարզապէս բարոյական ըսուածն. զոր այսպէս կրնանք սահմանել «Գիտութիւն ո՞յ վախճանն է ոդիկ գիտւս՝ ի գործադրութիւնս բուրոյ»։

Բարւոյ գործադրութիւնն գիմաւորապէս պարտաւց կատարման վրայ հաստատուած է. ուստի բարոյականն ալ սովորաբար իբրև գիտութիւն պարտաւց կը նկատուի։ Սակայն պէտք չէ մոռնալ նաև ուրիշ ազդ մի գործոց՝ որ թէ և պարտաւց կատարում չեն՝ սակայն բարոյական գործք են. օրինակի համար քանի մի առաքինական գործք, ինչպէս մեծանձն գոհ մի, գիւղացնական անձնանուիրում մի, որոնք գործադրելով՝ պարտք մի չենք կատարեր. վասն զի կան գործեր որոնք կատարելու պարտական չենք, և սակայն ըրածնիս բարոյապէս բարի են։

Ուստի բարոյականին գիմաւոր առար-

կայն է պարտուց բնուրիւնն և զանազան ուսակներն գրելն : Որդ այս պարտքերս կատարելու պարտաւորութիւնն չկրնար մարդ ըմբռնել՝ առանց ննջադրելու իշխանուրիւն մի որ զմարդ կարենայ բռնադատել կապի մի հնազանդեցնել, և անոնց կատարումն իրեն օրենք հրամայել : Պարտուց հիմն ու պատճառն բարուց և չարի հակառակ զանազանուրիւն է . բայց բարին գործելու և չարէն խորշելու օրէնքն գերագոյն օրենդրի մի կամքեն առաջ կու գայ . ապա թէ ոչ միշտ տարակուսական կը մնար թէ պարտաւորիչ զօրուրիւն մի ուսկից կը ծագի մարդուս համար :

Այս օրէնքս ամէն մարդու խղճին մէջ յայտնի է, և այնչափ ընդհանուր է որ մեր բնուրեան յարակից կրնանք սեպել . և բարոյական խղճի հիմնական և հանրական սկզբունքն՝ նոյն իսկ բնուրեան տիրոջ ձայնն համարելու է :

Աստուած սէրն բնուրեան անհուն կատարեալ էակ մի ըլլալով իր արդարութեամբ կը պարտաւորի իր արարածներն ըստ իրենց արդեանցն վարձատրել . բայց այս համեմատական վարձատրուրիւնն նեղկաց կեանքս մէջ չտեսնուիր . ապա գոյ կեանք հանդերձեալ . և այս հանդերձեալ կեանքն իր վարձաբն և պատժալք կատարեալ հաստատուրիւն կուտայ բարոյական պարտաւորութեան : Ասոր այն ամենայն բարոյական որ Աստուծոյ գոյութեան և

հանդերձեալ կենաց ճշմարտութեանն հետ նեղբին կապակցութիւն չունի, հարկաւ անկատար բարոյական մի կըլլայ անհիմն և անզօր :

Բարոյականին նուէր սեպուած պարտքերն կրնան կամ յընդհանուր նկատուիլ, ինչպէս որ տեսանք, կամ ընդ զանազան տեսակօք, ինչպէս են պարտք առ Աստուած, առ անձն և առ նմանս : Ասոր բարոյականն կը զանազանի բարոյական ընդհանուր և բարոյական մասնաւոր : Առաջինն կրնայ կոչուիլ գիտութիւն պարտուց ընդհանուր, և երկրորդն գիտութիւն պարտուց մասնաւոր կամ տեսակաց :

Այս համառօտիւ բացատրած ճշմարտութիւններս են հիւթ բարոյականի, զոր մի առ մի պիտի մեկնաբանենք :

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Բարոյական ընդհանուր .

Ընդհանուր բարոյական ամէնէն առաջ անոր էական հիմունքն դնելէն կը սկսի՝ որ են խիղճ, ծանօթութիւն պարտուց, կատիր բարւոյ և չարի, պարտաւորութիւն բարոյական և օրէնք . յետոյ կը քննէ այն պատձառաց զօրութիւնն որ մեր գործոց վրայ կազդեն, որով և կը խօսի անոնց բարոյականութեան արտայայտիչ նշանաց

*կամ կնքոց և պայմաններուն վրայ. եր-
րորդ թէ որոնք են պարտուց կատարման
և ջանցառութեան հետևանքն. այս հե տե-
ւանքն թէ արդի և թէ հանդերձեալ կե-
նաց մէջ կը ձեւացնեն բարոյականի հատ-
ուածն: Այս գաղափարս ալ
ինքն իրեն կը միանայ վարդուց վախձանին և
հոգւոյ անմահութեան ծանօթութեանն հետ:*

ՀԱՏՈՒԱԾ Ա.

Հիմունք բարոյականի

*Բարոյականի հիմունքն երկուքի կրնան
վերածուիլ խիղճ և օրէնք, և ինչ որ բնա-
կանապէս անոնց հետ կը միանան, ինչպէս
ծանօթութիւն և զգացումն պարտուց, իր-
մէ բարոյ և. չարի և պարտաւորութեան բա-
րոյական: Խղճով մարդ բարին չարէն կը
զանազանէ, և օրէնքին մէջ կը գտնէ այն
իշխանութիւնն որ իր վրայ պարտք կը դնէ
մէկն գործել և՛ ի միւսէն զգուշանալ:*

§. Ա.

ՅԱՂԱԴԱՏ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՂՃԻ

*Առաջ ըսինք որ բարոյականն գործնա-
կան գիտութիւն է բարւոյ. արդ բարին
պայ՛ի գոյութիւն յայն գործս մարդոյ բա-
րոյապէս նկատելոյ՝ որոնք իր ազատ կամ-*

չեն առանձ կուգան . որովհետև յայտնի է թէ առանց ազատութեան բարոյական պարտականութիւն չըլլար [1] : Այս կամայական գործոց առարկայք՝ կրնան ըլլալ գործել կամ իմանալի, որոնց վրայ կամքն կը ներգործէ , կամ այնպիսի բան մի որ զանիկայ ազատութեամբ կորոշէ այս կամ այն կերպով գործելու : Այս առարկայքս հոգեխօսական երևութից երեք դաս նիւթերն են, այսինքն զգացողութիւնք, խորհուրդք և գործք բարոյապէս նկատեալք , որով և կըսուին բարոյական երևոյթք :

Դիտելիք զբարոյական իրաց : Երբոր թէ նիւթական առարկայէ մի և թէ բարոյական ներգործչէ մի մեր դիտողութիւնն կը չարժի՝ հաճոյ կամ անհաճոյ զգացմունք մի կառնենայք : Եթէ մեր յօժարութիւնքն և փափաքն կարգաւորած չեն , և եթէ մեր բնական ազդմունքներէն ու սովորութիւններէն ընկճուած ենք , եթէ զգաժմունքէ մի կամ հաճոյական զգացողութենէ մի չարժած առեննիս չափն անցնենք , օրինակի համար եթէ ըստ պատշաճի անուանդն արկրամոլութեան վրխաւ, կամ թէ զգայական ախորժներու դերի ըլլանք , ներքատէս մենք զմեզ կը մեզադրենք , որ հակառակ պարտքին մէջ չհանդիպինք : Նմանապէս անհաճոյ զգացմունք մի առնե-

1 Տես՝ ի Հոգեխօսութեան զգայացոյցս ազատութեան մարդոյ :

ցած ատեննիս՝ անհամբերութիւն ունե-
նանք՝ օրինակի համար օդոց խաւութեան
դէմ նեղանանք, կամ թէ բարոյական ա-
թի վէջ ներհակութիւն կամ ատելութիւն
ու զգանք, դարձեալ մենք զմեզ կը մե-
ղադրենք. ուր ընդհակառակն եթէ կրցեր
ենք այս զգացմունքներուս յաղթել՝ հա-
ճոյական զգացմունք ու կունենանք, որ
սովորաբար առաքինական գործերէն ան-
բաժան է:

Երբ մեր խնացողութիւնն բանուկ է՝ շատ
ու խորհուրդներ կը ծնանի, որոնց վէջ
բարոյական զանազանութիւն դնելու վա-
ժած ենք: Զոհանա օգտակար խորհուրդ
կը համարինք, պայլս վտանգաւոր, ըստ
որում համեմատ և կամ հակառակ են ու-
ղիղ մտաց և բարոյականի, և ըստ ազդե-
ցութեանն որ կրնան ունենալ մեր և մեր
նմանեաց վրայ: Եթէ այս խորհուրդներէն
ոմանց հաւանինք և մտքերնուս վէջ որո-
ճանք, մենք զմեզ կը յանդիմանենք. ուր
ընդհակառակն ուրիշ խորհուրդներ մեր
հոգին չեն վրդովեր այլ և անոյշ խաղա-
ղութիւն ու կուտան: Նոյն կերպով կը
պատմինք նաև. օտարաց խորհուրդնե-
րէն. ամէն մարդ գիտէ թէ վտանգաւոր
սկզբունքներն և ապականեալ մտածո-
գրաց անվայել գործուածքներն որչափ
վնաս կրնեն բովանդակ ազգերու. և ընդ-
հակառակն լաւ խորհուրդներն և իմաս-
ուն սկզբունքներն որչափ կը վերթարնեն,

կը զօրացնեն և լաւացնեն մարդկային ընկերութիւնն :

Պէտք չէ մոռնալ դարձեալ որ այս երեք հոգեխօսական երևոյթներս այսինքն ներգործութիւն կամեցողութեան, իմացողութեան և զգացողութեան՝ այնպէս կը միանան որ զանոնք որոշելն դժուար է, և անոնցմէ որն որ կը տիրէ՝ երևութին ալ նոյն անունն կը տրուի : Ի զգայական և չիմացական տարերաց առաջեալած երևոյթներն ալ բարոյական կնիք մի կառնուն, որով հետև կենթադրուի թէ մարդ ան երևութէն մէջն ալ իր ազատ կամքն կը գործածէ . և միայն աս պատճառաւ գովութեան կամ պարսաւանաց արժանի են : Բայց կան երևոյթներ՝ որոնց սեպհական և տիրող կնիքն է պարզ ազատ կամաց ազդեցութիւնն, զոր օրինակ ջարն ու բարին որոշել, կամ ըստ բնութեան բայց ոչ ըստ պարագային անգամանալն բան մի ընդունիլ կամ մերժել, որոնց մէջ յայտնապէս կերևնայ կամաց ազատ ներգործութիւնն և այն ըզգացումն որուն վրայ է խօսքերնիս : Եթէ նոյն գործոց մէջ ներքին զգացմունք մի ունենանք թէ մեր ազատութիւնն օրինաւորապէս գործածեցինք՝ այն աստեն կըզգանք զայն զոր կը կոչեմք վկայութիւն բարի խղճի . իսկ հակառակ դիպաց մէջ կը զգանք ներքին մեղադրութիւնն մի որ է խայր խղճի :

Մեղի նման բարոյական էակաց գործերն ալ նոյն կերպով գովութեան կամ պարսաւանաց արժանի կը գտանենք :

Սահման բարոյական իղձի և պարտուց և այլն. Էական խոխր բարոյ և չարի: Այս զուրցածներնէս կը հետևի որ գիտական տպաւորութիւններն և իմացական գործողութիւնք կամաւոր և յաղաւնեորգծանելենէ ուղղեալք, նաև կամաց սեպհական որոշմանքներն, իրենց գուգընթաց պայմանաց համեմատ գովեստեան կամ պարսաւանաց արժանաւոր կը դատուին, ազէկ կամ գէշ, իրաւ կամ անիրաւ, և ողջամիտ բարոյականի յարմար կամ անյարմար կը համարուին: Այս գործնական դատողութիւններս կը կատարուին բարոյական իղձի ձեռքով որ պարզապէս խիղճ կըսուի, որ կը սահմանուի « Ներքին ոյս հոգոյ՝ որ ցուցանէ մեզ զառնելին և զիրաժարելին: Այս մեր բրածներուն գործնական ընտրութիւնն՝ սովորաբար զգալի կնիք մալ կունենայ որ սովորաբար բարոյական զգացումն կըսուի: Շատ անգամ մարդս կամակար յօժարութենէ մի կը մղուի կամ տեսակ մի բարոյական ողջմտութենէ՝ ուրիշ կերպով մի կնմանայ և մտքով ալ կըմբռնէ թէ ինչ բան ընելու է և ինչ բանէ հրաժարելու:

Խղճի ձեռքով ազէկն ու գէշն, գովելին ու պարսաւելին ճանչնալէն ետև՝ կըմբռնենք և կը զգանք որ պարտիմք զանոնս առնել և յայլոց հրաժարել, և սոսկ կը ձևանայ՝ ի մեզ պարտուց ծանօթութիւնն և զգացումն, այսինքն ինչ որ պարտական ենք ընե-

լու և կամ՝ հրաժարելու։ Խղճի այս դատաստանն և պարտուց ծանօթութիւնն՝ յայտնապէս կենթադրեն՝ որ մարդկային գործոց մէջ ամէն բան անխաթար է. ապա թէ ոչ պատճառ մի չէր ըլլար զատնիք ընելու. քան թէ մեսաներ, կամ՝ թէ ատենակէ հրաժարելու. քան թէ ուրիշներէն, կամ թէ զոհանա բարի և զայլս չար դատելու։ Մեր գործոց մէջ եղած այս տարբերութիւնն զոր խիղճն կըմբռնէ, կըսուի խորհրդարան և. չարի։

Զանազանութիւն բարոյ և. չարի.

Բարոյ և չարի որոշ զանազանութիւնն ճշմարտութիւն մի է որ ամէն լեզուաց մէջ իր բացատրութիւնն ունի. և ամէն բարոյականի բացարձակ հիմն է և իրաց էութեանն յարակից։ Շատ խնդատակէրք այս վերջին կնիքս չճանչցան, և տեսակ տեսակ դրութիւններ հնարեցին բարոյական գաղափարաց սկզբան բնութիւնն բացատրելու համար։ Նախ համառօտիւ զանոնք բացատրենք և յետոյ փորձով ցուցնենք անոնց արժէքն։

Այս խնդրոյս վրայ տրուած լուծմունքն իրենք զանի կրնան բաժնուիլ. Դրութիւն անձնասիրական, Դր" զգացողական և. Դր" մտաւորական, կամ թէ բարոյական շահու,

բարոյական զգացողական և բարոյական իմացողական [1]:

Ա. Դաստիարակութեան անձնասիրական կամ բարոյական շահու: Անձնասիրական սկըզբունքն շատ տեսակ կերպարանք կառնու. անձնասէրն երբեմն ամէն բան յայտնապէս իր անձին կը սեպհականէ, երբեմն ալ դրսուանց հասարակաց բարւոյն ինքզինքն մոտիկր ցուցնելով, ներքսապէս միայն իր երջանկութեանն կը նայի. ուրիշ անգամ ալ առաքինութեան եռանդ կըլլայ՝ իբրև երջանկութեան հասնելու միջոցի մի. բայց որ և իցէ անձնասիրաց դասուց գործոցն սկիզբն ներքսապէս անձնական շահասիրութեանն է: Հնոց մէջ Եպիկուրոս բարւոյն հաճոյից մէջ կը հաստատէր, իսկ չարն՝ ի ցաւս: Արդ ճշմարիտ դրսաճութեանն կամ ճշմարիտ երջանկութեանն, իրեն խօսքին նայելով, ուրիշ բանով չգտնուիր, բայց եթէ հոգւոյ խաղաղութեամբ և մարմնոյ առողջութեամբ, այս երկու պէկութեանս ալ առաքինութեամբ կրնանք ստանալ. ապա պէտք է առաքինութեանն գործել իր օգտակարութեանն համար. ուրեմն բարին և չարն ուրիշ բան չեն՝ բայց եթէ օգտակարն և վնասակարն: Եպիկուրոս հոգւոյ հաճոյքն մարմնոյ հա-

1 Աբելի մանրամասն տեղեկութեան համար տես՝ ի Պատմ. իմաստասիրութեան ամէն յիշուած մարդկանց անուններէրը:

ճոյքներէն վեր կը սեպէ . և այս նկատմամբ կը բաժնուի Աբրահամական վարդապետութենէն որ կիւրեղեական աղանդոյն գլուխն էր : Նոր աւեններս Հոպս անգլիացի իմաստասէրին դրուածներն մեծ խնդիրներ յուզելու պատճառ եղան նոյն նիւթոյն վրայ , որ շատ տեղ մանաւանդ Յաղագս քաղաքին ճառին մէջ այս սկըզբունքներս կը յայտնէ . ա . թէ մարդ անօգուտ կարողութիւն մի՛ի բնութենէ ընդունած չըլլալով՝ իրաւունք ունի ընելու ինչ որ կրնայ ընելու , օրինակի համար գողնալու , մարդ սպաննելու և այլն : բ . մարդիկ տեսնելով որ այս վիճակիս մէջ ապահովութիւն մի չկայ՝ իրարու հետ դաշնադրութիւններ ըրեր են , որով ամէն մարդ իր իրաւունքին մէկ մասէն հրաժարեր է հասարակաց բարւոյն համար : Այս եղած դաշնագ հաստատիմ մնալն բարի է , և բռնաբարելն չար : Այս է ահա ըստ Հոպսի բարոյական օրինաց միակ ծագումն : Հնչելիս որ Յաղագս ոգւոյ դիրքն գրեց՝ և մեր օրերն օրէնագէտ անգլիացի Պէնթհէյմ՝ նմանօրինակ վարդապետութիւն մի պաշտպանեցին :

Բ . Դրութիւն զգացողական կամ բարոյական զգացողական : Այս դրութիւնս քանի մի անգլիացի իմաստասէրք հնարեցին՝ որոնց գլխաւորն են Ադամ Սմիթ և Հիւչսըն , որ և երկուքի կը վերածուի , հանապարհական և բարոյական զգացման , և՛ ի շա-

հասկրութենէ ազատ գրութիւններ կեն-
թադրուին : Մենք բնականապէս կը փա-
փաքինք մեր նմանեաց հետ զգայական տը-
պաւորութեանց մէջ համաձայնութիւն մի
ունենալ . աս է սիրելուքիւն կամ հաճա-
կրուքիւն ըսածնիս . այսպէս երբ մեր նը-
մաններէն մէկն կը տեսնենք որ խեղճի
մի կօգնէ՝ անոր զգացած կարեկցութեան
մասնակից կըլլանք , անոր ըրածն կը յար-
գենք և բարոյապէս բարի կը դատենք .
ընդհակառակն եթէ ուրիշ պարագայի մէջ
մեր նմանեաց վրայ այնպիսի զգայմունք-
ներ կը տեսնենք՝ որ մերիններուն հետ
չհամաձայնիր և ներհակութիւն մի կունե-
նանք՝ այն գործն չար կը դատենք : Ա.յս
դրութեանս մէջ գործ մի բարի կամ չար
կը դատուի՝ ըստ որում նոյն գործն տես-
նողներն համակրութիւն մի կունենան
կամ չեն ունենար այն զգացմանց հետ՝
ուսկից որ առաջ կու գայ այն գործն . այս
է բարոյ և չարի դաղափարին սկիզբն .
Ա.դամ Սմիթի դրութիւնն այս է զոր կը
բացատրէ իր Դրոքիւն բարոյական զգաց-
մանց գրքին մէջ : — Իսկ Հիւչսըն՝ Հոպսի
վնասակար վարդապետութիւնն հերքելու
համար մտածեց որ բարոյական դաղափա-
րաց սկիզբն՝ ըմբռնման մասնաւորմէկ կա-
րողութենէն առաջ եկած սեպէ : Ա.յս
դրութեանս մէջ ամէն դաղափարք՝ ըմբռ-
նման անմիջական մէկ կարողութեանն կը
հաղորդին որ միտք կըսուի , և բարոյական

միտք մի ալ կայ որ իրաւէ և անիրաւ, բարւոյ և չարի բարոյական յատկութիւնները կամբռնէ. ինչպէս նաև ըմբռնման մասնաւոր մէկ գործութիւնն ալ անմիջապէս կըմբռնէ մարմնոյ տարածութեան, ձևոյ և այլ յատկութեանց զաղափարներն: Հիւսվածքն ալ ընծին ընայելով բարոյական բարիքն միայն բարեզգածական յօժարութենից և անոնցմէ առաջ եկած անշահասէր գործոց մէջ կը գտնուի:

Գ. Դրուխիւն մասնաւորական կամ բարոյական իմացողական. որուն պաշտպանն էին հիններէն առոյիկեանք. յարդեաց Ռիտ, Տիւկալտ Սթիւարթ, Բանթ. արդի վրանկական դպրոցի իմաստասէրք և առանձինն Թ. Ժուֆրուա[1]: Այս իմաստասէրքներս իրաւամբ կը հաստատեն թէ խոհրբարւոյ և չարի նոյն իսկ իրաց բնութեանն և պատճառաց վրայ հիմնած է, ոչ շահու վրայ, ոչ դաշանց ոչ բնական ազդմանց և ոչ զգացողութեանց: Բայց չարին կանցընեն՝ երբ 'ի բարոյական գործոյ մի բաղադրութիւնն կը մերժեն օգտակարութիւնն՝ զոր մարդ կը դիտէ ազէկութիւն մի ըրած ժամանակ. ինչպէս է երկիւղ պատժոյ և վարձուց ակնկալութիւնն:

Աստուածաբաններէն ոմանք համարեցան թէ որալհետև բարոյական օրինաց

1 Դասք բնական էրատանց՝ որուն մէջ հետևեալին այս դրութիւններս կը բացատրէ ու կը քննէ:

կատարման պարտաւորութիւնն՝ ի կամ
մայն Աստուծոյ յառաջ կուգայ, ապա ի
րաւի և անիրաւի սահմանն ալ նոյն կամքն
է որոշողն որով և բարոյական բարւոյ և
չարի խտիրն ալ անկէց կը ծագի։

Մենք հիմա պիտի ցուցնենք որ բարւոյ և
չարի խտիրն այս վերն գրուած սկզբանց
մէկէն ևս առաջ չգար, այլ նոյն իսկ իրաց
էութենէն։

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. — *Բարիւ և չարիւ զանա*
զանիւն էապես։

Ապացոյց. Ա. Մեր մտքովն առուզապէս
կը դատինք որ ճշմարիտն էապէս զանա
զանի՝ ի սուտ, որն որ բացայայտ սկզբանց
համար շատ ակներև է, այսպէս են չա
փաբանական ուսմանց առածներն՝ որոնց
վրայ սկեպտականութիւնն իր տարակոյս
ներն չկրնար բանեցնել։ Այդ նոյն իմա
ցական առուգութիւնն ունինք բարւոյ և
չարի էական զանազանութեան վրայ. ինչ
պէս որ յիրաւի չենք կրնար սա յետագայ
սկզբանց առուգութեան վրայ տարակու
սիլ։ Ամէն մարդու իրենն տալու է, չա
րախօս ու ապերախտ ըլլալն չար է. ար
դար ու բարեգործ ըլլալն բարի է. ինչպէս
նաև չենք տարակուսիր այս առաջարկու
թեանցս վրայ թէ բոլորն մեծ է քան զմ
ասն իւր. եւկու ինչ որ հաւասար իցեն

երտրդի , հաւատար են և միմեանց : Եւ ինչպէս որ ճշմարտութիւն չենք կրնար հաստատել ըսելն՝ թէ մանուկն հաւատար է մեծաթեամբ բոլորին , այսպէս ալ չենք կըրնար ըմբռնել թէ բարերարն նախատեսէն և սաննելն բարիք ըլլայ. արդ բարւոյ և չարի զանազանութիւնն այնպէս բացայայտ է մեր մտաց առջին՝ ինչպէս ճշմարիտն ու սուտն . ապա ուրեմն բարին և չարն զանազանին էապէս :

Պատգոյց Բ . Բարին և չարն կամ էականէս զանազանին՝ ի միմեանց , կամ պէտք է ըսել որ այս զանազանութիւնն որ ամէն ազգ և լեզու ընդունած են կամ անճնական և հասարակաց օրտակրութենէ մի առաջ եկած ըլլայ , կամ թէ հասարակաց օգտին համար մէկմէկու հետ ըրած դաշինքներէ և կամ բնական ազդեցութենաց տրամադրութենէ , և կամ վերջապէս յառաջադիմի դրական կարաց : Առնցմէ զատ եղած ենթադրութիւններն ալ՝ նոյն յիշատածներուն տակն կերթան : Հիմա պիտի ցուցնենք որ այս չորս ենթադրութիւնքն ալ ընդունելի չեն :

Ա . Բարւոյ և չարի զանազանութիւնն օգտակարութենաւ վրայ հաստատուած չէ . նախ վասն զի բարւոյ և օգտակարի զանազանութեանց մէջ նոյնութիւն մի չենք կրնար ըմբռնել , ինչպէս և ոչ չարի և վնասակարի զանազանութեանց մէջ . և երկրորդ եթէ այս սկզբունքս ընդունինք՝ շատ հետևանքներ

կելլեն զորս ուղղամտութիւնն կը մերժէ. ինչպէս ամէն մարդ իրաւունք պիտի ունենար ամէնէն մեծ ոճրագործութիւններն ընելու՝ եթէ անոնց օգտակարութեանն համոզուած ըլլար, որով կրնար համարձակ չարախօսութիւն, մատնութիւն և մարդասպանութիւն գործել՝ և այլն: Իսկ հասարակաց օգտին գալով՝ այս հետևանքը ալ կելլէ՝ որ եթէ բարոյականին մի միայն կանոնն հասարակաց օգուտն ըլլար՝ ուրիշ առանձնական գործերն ամենևին բարոյականութիւն մի պիտի չունենային, որով ոչ բարի պիտի ըլլային և ոչ չար: Որ ինաց որ դիւրաւ կըմբռնենք թէ միայն շահուն վրայ հաստատուած գրութեան մէջ հասարակաց օգտակարն ուրիշ բան չէ՝ բայց եթէ առանձնականաց օգտակարութիւնն, որ երկու պատճառք իրարու հետ կը միանան:

6. Մարդկային դաշինք չեն կրնար իրանց գանազանութիւն մի հաստատած ըլլալ բարոյ և չարի մէջ, որով և չհետևիր ըսելն թէ դաշինքն պահելն է բարի, և զանց առնուլն չար. որ և կը հաստատուի այս պատճառաբանութեամբ. Դաշինքն պահելն կամ էականապէս բարի է և չպահելն էականապէս չար է, և կամ ոչ: Առջի պարագային նայելով՝ ըսել է թէ բարին և չարն էականապէս իրարմէ կը զանազանին, իսկ երկրորդ պարագային նայելով բարի կամ չար չկայ՝ ոչ դաշինքէ առաջ և

ոչ եւթն: Վասն զի եթէ բարին և չարն անխտիրք են յինքեանս՝ գաշնադրութենէ եւթն ալ նոյնպէս ըլլալու են. որովհետև ըստ կամս եղած բան մի իրաց բնութիւնն չկրնար փոխել:

Գ. Բարւոյ և չարի գանազանութիւնն չկրնար բացատրել բնական ազդեցութեանց տրամադրութիւնք, ինչպէս են հաւակրութիւնն կամ թշնամական զգացումն: Նախ համակրութիւնն հաստատուն կանոն մի չունի, որովհետև ըստ անձանց և ըստ տրամադրութեանց անձանց կը գանազանի, ինչպէս որ փորձով դիւրաւ կըրնանք տեսնել. և երկրորդ ամէն պարագայի չյարմարիր. գործել համակրութեան կանոնն մեծաւորիկ մարդու մի համար բանի չգար: Այն ալ գիտեմք որ շատ անգամ բարեբար մարդ մի՝ իր նմանեաց բարիք ընելու ժամանակ ամենևին համակրութիւն չզգար: Ընդհանրապէս զգացողութեան վրայ հաստատեալ իմաստասիրութիւնն թէ համակրութեան վրայ հիմնած ըլլայ և թէ բարոյական զգացման, իրեն սկիզբն բնորոշին յարաբերական էութիւն մի ունենալուն պատճառաւ՝ չկրնար ընդհանուր և բացարձակ բան մի հաստատել. որով չկրնար առանց հիմնովին այլայլելու մեկնել իրաւանց և պարտուց բարւոյ և չարի գաղափարներն, զորս միշտ հանրական և անխոտոր սեպած է ազգ մարդկան, ինչպէս որ կը հաստատէ ա-

մէն ազգաց բարոյականի սկզբանց վրայ ունեցած վիճայնութենէն : Իսկ բարոյական զգացման վարդապետութեանն համար աս ալ կրնանք աւելցնել՝ որ այս դրութեամբ մարդուս վրայ ցնորական և անօգուտ կարողութիւն մի ալ աւելցնել հարկ կըլլայ , վասն զի եթէ մարդկային միտքն իր խնդութեամբն կրնայ ըմբռնել իրաւի և անիրաւի , ճշմարտի և սուտ , սրտաճաի և արդեանց ծանօթութիւնները , ինչ հարկ կայ նոր կարողութիւն մի ալ աւելցնել . ուր միայց որ անոր գոյութիւնն ալ հաստատելն անկարելի է :

Դ . Բարեաց և չարի զանազանութիւնն առաջնոյ ազդու կամաց վրայ հաստատուած է . իրաւունէ այս զանազանութիւնն չկրնար ազատ կամաց մի հաճոյքէն սահմանուած ըլլալ . որովհետև որ և իցէ դրութեամբ միշտ մարդուս մտայ հակառակ կուգայ՝ որ բարին չար եղած ըլլայ և չարն բարի : Օրինակի համար ինչպէս որ և իցէ ենթադրութեամբ անկարելի է համոզելն որ զՍ.սուած արհամարհելն , իր բարերարն նախատելն և անմեղն հարստահարելն ազէկ բան ըլլայ , այսպէս ալ թէ ճշմարիտն սուտ փոխուի , սուտն ճշմարտի և այլն : Ասա զանազանութիւն բարեաց և չարի յաւիտենական ճշմարտութիւն մի է որ Աստուծոյ յաւիտենական իմաստութենեն կը վերածելի , բայց անոր ազատ կամքէն չսահմանուիր :

Նախընթաց խորհրդածութիւններէս կը հետևի որ բարուց և չարի զանազանութիւնն անփոփոխ և բացարձակ ճշմարտութիւն մի է՝ նոյն իսկ իրաց էութեանն և մտաց բանին վրայ հաստատուած :

Առարկ . Եթէ բարին և չարն իսկապէս զանազանէին՝ ամէն մարդկանց միտքն ալ նոյնպէս պիտի ճանչնային բարոյականին օրէնքն . իսկ արդ յայտնի է որ բարոյականի օրէնքն ամէն տեղ նոյն չեն . օրինակի համար՝ ակեղեմոնացիք գողութեան ազատութիւն տուած էին , և սպարտներն պաններն իրենց երիտասարդաց կրթութիւն մի համարուած էր : Կարթեդոնացիք , Կելտք և ուրիշ ազգեր մարդասպանի սովորութիւն ունէին , Մազդուք՝[1] սկիւթացւոց մէկ ցեղն՝ իրենց ծերացած ծնողքն կը սպաննէին , մարդակեր ժողովուրդներ եղած են և ինչուան հիմա ալ կը գտնուին և այլն . ապա ուրեմն բարին և չարն իրենց էութեամբն չեն զանազանիր իրարմէ :

Պիտ . Զանազանի մեծագոյնն : Եթէ բարին և չարն իրարմէ էականապէս զանազանէին՝ պէտք էր որ բարոյականի օրէնքն ամէն տեղ նոյն ըլլային իրենց նախկին սկզբանց և նոյն սկզբանց մերձաւոր հետևանքներուն մէջ , և ամէն մարդկանց մէջ բարոյապէս խօսելով , այսինքն անոնց մեծ մասին մէջ , ընդունիմ . իսկ ամէն մարդ-

1 Հերոդոտոս գիրք Ա . 216 :

կանոյ մէջ բացարձակապէս, և նոյն սկըզբանց ամէն հետաւոր հետևանաց գործադրութեանն մէջ, ուրանամ:

Եթէ բարին և չարն էապէս զանազանին և այս զանազանութիւնն յիմակութեան անդ իրաց հաստատեալ է, անշուշտ պէտք է որ գոնէ անոր նախկին սկզբունքներն ամէն մարդիկ ալ ընդունին. բայց անկից չհետևիր թէ ամէն մարդիկ պէտք է միաբանին այս սկզբանց ամէն հետևանաց գործադրութեանն մէջ. վասն զի ամենուն միտքն հաւասար կարողութիւն չունի զգալու ըմբռնելու նոյն սկզբանց հետաւոր հետևանքներն. ու թէպէտ մտքով ալէկ ալ ըմբռնելու ըլլան՝ պէտք է ըսենք որ գործադրութեան մէջ բանաւոր կերպով չեն վարեր զանոնք: Ամէն մարդ գիտէ որ շատ գործ կընենք մեր խղճի բողոքին մասին չընելով կամ տկարութեամբ կամ չհասկնալով կամ ուրիշ պատճառներով՝ որով սկզբանց ուղղութիւնն կը չեզի:

Նոյն զանազանութիւնն ընելու է մտքատգեղծութեան համար ալ: — Իրաւ այլ և այլ ազգաց մէջ քանի մի զանազանութիւն կը տեսնենք բարոյական կարգայ, սակայն այս զանազանութիւններն նոյն սկզբանց հետաւոր հետևանաց գործադրութեանն մէջն է, չէ թէ նոյն իսկ սկզբանց վրայ. ընդհակառակն աստղութեան մէջ բնական օրինականներն, որչափ ալ անկարգ բաներ ըլլան՝ անմիջապէս կատակեցու-

թիւն ունին սկզբանց դատաւորութեան մի հետ, ուսկից մասնաւոր դիպուածոց մէջ մինակ խոտորմունք մի կամ զանցառութիւն մի կը տեսնենք, որոնց պատճառներն ալ գտնելն շատ դիւրին է։

Բարոյականի նախկին սկզբունքներն անգիտացող մարդիկ՝ միշտ բնութիւննին ապականած անձինք կըլլան, որ բարոյական կարգի մէջ նոյն դիրքն ունին՝ ինչ որ հրէշներն բնական կարգի մէջ։

Լակեդեմոնացւոց մէջ գողութեան որջափ ալ թոյլտուութիւն կար՝ սակայն չափ ու սահման մի ունէր և ոչ երբէք բացարձակ հրաման կը տրուէր, այլ միայն պատանեաց՝ ան ալ ուսելիքի. դարձեալ կը պահանջէին որ գողութիւնն ճարպկութեամբ ըլլայ, որովհետև վախճաննին զանոնք պատերազմական հնարքներու վարժեցնել էր. ևս առաւել կրնանք ըսել որ գողութիւն ալ չէր եղածն. վասն զի գողցուած բաներն գողցողին չնորհուած կը սեպուէին հասարակապետութեան կողմանէ։ Իսկ ստրուկներն չարչարելն և սպաննելն յաղթողներու յաղթուողաց վրայ ունեցած կենաց և մահու իրաւանցն անզուգ զեղծումն էր. ուր մեծ անօրէնութիւն կը սեպուէր Սպարտիոյ քաղաքացւոց հետ նոյն կերպով վարուիլն։ Նոյն իսկ այն աղգաց մէջ որ մարդասիրն կընդունելի էր՝ մարդասպանութիւնն մեծ ոճիր կը սեպուէր. մինակ մասնաւոր պա-

պագայից մէջ կարծէին թէ մարդասէրն ոչ միայն ներեալ՝ այլև հրամայեալ էր՝ ի պէս։ Իսկ մարգարէր ազգաց մէջ մարդկային բնութիւնն այնչափ անարգութեան հասած է, որ բաւական է պատմանելն թէ մարդուս բնական եղածն անոնց մէջ ինարուել չըլլար։ Սակայն որչափ ալ վատթարացած ըլլան՝ այսու ամենայնիւ ուրիշ մարդկանց պէս անոնք ալ կը ճանչնան բարոյականի հիմնական սկզբունքներէն շատերն։ Իսկ իրենց ներացած ծնողքն ըսպանողներն՝ ալևորութեան խեղճութիւններէն զանոնք ազատելու համար էր. անտարակոյս գործն բարբարոսական էր, բայց ուրիշ ժամանակ իրենք զիրենք միշտ պարտական կը սեպէին որդիական սիրոյ պարտքերն վճարելու։

Այսուամենայնիւ բացատրութիւններէս յայտնի կերևնայ՝ առարկութեան մէջ յիշուած օրինակներուն նկատմամբ, որ ազգաց մէջ եղած զանազանութիւնն՝ բնական օրինաց նախկին սկզբանց հետևանքներուն վրայ է միայն՝ կամ նոյն սկզբանց գործադրութեանն; և չէ թէ անմիջապէս նոյն սկզբանց վրայ։

Բարոյական խոհի բաժանումները.

Ինչպէս որ առջի բաժններէն երևցաւ՝ խիղճն ինքն իրեն և ընդհանրապէս նկատեալ՝ մեր հոգւոյն բնական մէկ լոյսն է.

իսկ երբ զանիկայ այս այն դիպաց վրայ կը յարմարցնենք՝ այն ատեն այսպէս կը սահմանուի. «Դատումն գործնական որ բնդարձակ է առնել և յորմէ խորշել »։

Բարոյախօսք կը զանազանեն խիղճն ի՛ ձշմարիտ և ի՛ սուտ կամ մոլար, յաղթելի կամ անյաղթելի, ի՛ խիղճ ապրանով և երկմտական, հաւանական կամ անհաւանական։ Այս բաժանմունքներով սկզբունքներ կը հաստատուին և կանոններ կը դրուին՝ որով մարդկային կենաց դիպաց մէջ կառավարութիւնք. բայց այս խնդիրներս մասնաւոր կերպով բարոյական աստուածաբանութեան մէջ ընդարձակ բացատրուած ըլլալուն՝ որուն արդէն կը վերաբերի, պէտք չսեպեցինք հոս խօսքերնիս երկարեցնել։

§. Բ

ԾԱՂԱԳՍ ԲԱՐՈՑԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ։

Բոլոր տիեզերաց արարածոյն մէջ երկու տեսակ օրէնք կան. օրէնք բնական որով կը կառավարուին ազատութենէ զուրկ ու բնական էակներն. և օրէնք բարոյական որ կը վարեն զազատ էակս։

Էակաց մէջ շատ տեսակ առընչութիւններ կան, այն առընչութիւններէն՝ որ բարոյական կարգի և բարոյ վրայ հաստատուած ըլլալով՝ բարոյական առընչութիւնք

կըտաւին, կը ծագին իրաւունք և բնական հե-
տեւութեամբ՝ պարտք: Ստրուիչն բնական
իրաւունք ունի արտադոյ վրայ, և այս
իրաւունքէն կը ծագին մարդուս պարտ-
քերն առ ստրուիչն, որպէս և առ անձն
և առ նմանիս իւր: Եւ յիրաւի Աստուած ի-
րաւունք ունի մարդէս պահանջելու որ իր
վարքն ողջմտութեան ցցուցած կանոննե-
րուն համաձայնէ. և մարդուս պարտաւո-
րութիւնն է աստուածային կամայ հնա-
զանդիլ: Աստուծոյ բացարձակ յիրաւանց
առաջ կուգան մարդկանց մէկմէկու ունե-
ցած իրաւունքն. այս իրաւանց կը համա-
պատասխանեն և պարտք: Ստյսպէս ամէն
մարդուս պարտք է չվնասել այն իրաւանց
որ ամէն մարդ ունի իր կենաց, ընչից,
ազատութեան և պատուոյն վրայ:

Նակաց բնական իրաւունքն հաստա-
տեալ է բացարձակ կարգի, յատկեանա-
կան իմաստութեան և նոյն իսկ իրաց էու-
թեանն վրայ. այս իրաւանց դէմ ըլլալն ուրիշ
բան չէ՝ բայց եթէ կարգն վրդովել և իմաս-
տութեան դէմ մեղանչել. ապա պարտա-
կանութեան ցցուցածին հակառակ գոր-
ծելն՝ 'ի բարոյական բարւոյ պակսիլ է, և
հետևապէս բարոյական չարի մեղապարտ
դանուիլ և իր պարտքէն պակսիլ:

Պարտուց ծանօթութիւնն որ բարոյ և. չա-
րի զանազանութեան հետ անմիջապէս կա-
պուած է ըսինք, պարզապէս մեր մտաց հա-
յեցողական ծանօթութիւն մի չէ, այլ ճա-

նաչում մի որ գործ ալէտք է յայտնել: Ա.յս ճանաչումս էապէս անբաժանելի է, բարոյական պարտաւորութեան ճանաչմանքէն, այսինքն այն բարոյական կապէն որ մարդուս խիղճն իր պարտաւորէ՝ի կատարումն պարտուց, և որ հաստատուած է օրինաց մի վրայ՝ որ իր արարչին պէս յաւիտենական է:

Բարոյական պարտաւորութեան սկզբանց վրայ:

Իմաստասէրք բոլորովին միաբան չեն բարոյական պարտաւորութեան սկզբանց վրայ. անոնցմէ շատերն՝ որոնց մէջ ողջամիտներ ալ կան, կը համարին որ բարին ընելու և չարէն խորշելու պարտաւորութիւնն նոյնիսկ բարւոյ և չարի էութենէն առաջ կու գայ: «Ա.րտաւոյ բան մի է հարցնելն, կըսէ Տիւկալա-Սթիւարտ [1], թէ ինչո՞ւ առաքինութիւն գործելու պարտաւոր եմք: Ա.ռաքինութեան ճշմարիտ ծանօթութեան մէջն է նաև պարտաւորութեան ճանաչումն. ամէն էակ իրաւի և անիրաւի զանազանութեան գիտակցութիւնն ունի, ուրեմն նաև օրինաց մի ծանօթութիւնն՝ զոր պարտաւոր է պահելու»: Մեծ մասն ի-

1 Ծրագիր բարոյական իմաստասիրութեան եր 218:

մատաղիրաց իրաւամբ կը պաշտպանեն որ իրապես պարտաւորութիւն բառիցն՝ Աստուծոյ գերագոյն իշխանութենեն առաջ կոչ գայ:

Ոչ ոք կրնայ ուրանալ՝ թէ նոյն իսկ բարոյ և չարի էութիւնն պատճառ չըլլայ մէկն ընելու և՛ի մէնէն խորշելու: Եւ իրացնէ իրաց էութեան վրայ հաստատուած այնպիսի բացայայտ գործնական առաջարկութիւններ կան՝ որ ամենևին տարակոյս չեն վերցներ. արդ այս առաջարկութեանց ճշմարիտ ըլլալն չենք կրնար ճանչնալ՝ առանց մի և նոյն ատենն չըմբռնելու՝ որ մեր բնութենէն ստիպեալ ենք գործադրութեան մէջ ալ անոնցմէ չհեռանալու: Եւ սակայն եթէ աստուածային գերագոյն կամքն չըլլար ուղղակի կերպով մեզի պարտաւորութիւն դնող՝ պարզապէս պատշաճութեան և կատարելութեան պատճառ մի մինակ ալիտի մնար չարէն խորշելու և բարին գործելու, և ոչ եթէ խիստ պարտաւորութիւն մի, ինչպէս որ յաստուածային իշխանութենէ ծագած համարելով կընդունինք. վասն զի այն ենթադրութեամբ՝ որովհետև մենք մեզմէ միայն կախուած կըսեպնինք՝ ուրեմն իրացնէ կախեալ չենք կրնար համարել. էական պարտաւորութիւն մի ալ չմնար՝ որովհետև ամէն առեն ազատ կրնայիր ըլլալ այն կապէն՝ որ մենք մեզի դրած ենք: Բուն և էական պարտաւորութիւն մի հարկ է որ իշխանութենէ մի դրուած ըլլայ:

Յետագայ պատճառներէս կը ցուցնէ թէ Աստուած յիրաւի կը պարտաւորէ զմեզ առնել գրարին և խորշիլ ի չարէ ։

Ս. Աստուած զմեզ ազատ ստեղծած է , և մեր ազատութեան գործութեամբն կրնանք ընտրութիւն ընել բարւոյ և չարի . արդ Աստուած մարդուս չէր կրնար տալ այս կարողութիւնս՝ առանց որոշ վախճանի մի, և իր անբաւ կատարելութիւններէն յայտնի է՝ որ կուզէր որ մենք բարին վերապահենք և չարէն խորշինք ։

Բ. Աստուծոյ այս կամքն կը յայտնուի մեզի ի ձեռն խղճի , այսինքն այն ներքին յանդիմանութենէն զոր ակամայ կը զգանք երբ չար կը գործեմք . նոյնպէս այն բարի վկայութենէն զոր խիղճն կու տայ բարւոք ըրած ատեննիս ։

Գ. Բոլոր ազգաց հաւանութիւնն՝ որով կը հաւատայ հանդերձեալ կենաց մի պատժոց և վարձուց , կենթադրէ թէ մեր գործերն Աստուծոյ աչքին առջև անտարբեր բաներ չեն , և հետևապէս կուզէ որ բարին ընենք և չարէն զգուշանանք ։

Այս ալ աւելցնենք որ Աստուծոյ այս կամքն աւելի ակներև կերևնայ մեզի ի ձեռն յայտնութեան , որուն վրայ պիտի խօսինք կրօնական պաշտամանց վրայ գրած ատեննիս ։

Բնական օրինաց վրայ :

Աստուած՝ ի յաւիտենից կըմբռնէ զբազմարիկ կարգն . այս կարգի ծանօթութեան մէջն է բարոյական ճանաչումն՝ որուն բաղդատութիւնն է չարն՝ և ինչպէս վերն ըսինք Աստուած կուզէ որ այս կարգս պահուի : Այս գերագոյն իմաստութիւնն և Աստուծոյ գերաբնութիւնն՝ որ բարոյական պարտաւորութեան հիմն է՝ կը սահմանէ բնական օրէնքն որ ըստ Սրբոյն Աւգոստինոսի է « Իմաստութիւն և կամք աստուածային՝ հրամայելով զպահպանութիւն որ ինչ է ըստ կարգի , և արգելլով զբռնաբարութիւնն նորին [1] » : Մեր հոգւոյն մէջ տըպաւորուած յաւիտենական օրէնքն է բնական օրէնք ըսուածն, որ և ըստ սահմանի Սրբոյն Թովմայի [2] է « Յաւիտենական օրինաց հաղորդակցութիւն՝ ի բանաւոր արարած » : Բնական ըսուելուն ալ պատճառն՝ վասն զի նոյն իսկ մեր բնութեան իւրութեանն վրայ հաստատուած է , բայց իր պարտաւորիչ զօրութիւնն գերագոյն օրէնսդրի կամքէն առաջ կու գայ :

Բնական օրինաց պարտաւորութիւնն իւրաց էութեանն վրայ հաստատուած ըլլա-

1 Ընդդէմ Փաուստա գիրք իբ· գլ· իէ :
2 Իովանդակ· աստուածաբ· Ա· բ· խնդիր 91 յօդ· 2 :

լավ և Աստուծոյ անխոտխոտելի կամքէն ա-
ռաջ եկած , բացարձակ է և ոչ երբէք կը
փոխուի . ամէն առաջ կուգան իր երկու
յայտարար կնիքն հաւերակաւորելու և անա-
փոխարինելու . այսինքն թէ զամէն մարդկի
ամէն ժամանակ և միշտ կը պարտաւորէ :

Յայտնի է որ եթէ բնական օրէնքն մեզի
ծանօթ չըլլար՝ մեր գործոյն կանոն չէր
կրնար ըլլալ . ուրեմն պէտք էր որ նախքան
լոյս մի գանիկայ մեզի ցուցնէր՝ մեր ընե-
լիքին վրայ զմեզ լուսաւորելով, այս լոյսն
է բանիլ գործնական որ բարոյական խիղճ կը
կոչուի , ինչպէս որ վերն բացատրեցինք :
Աստ՝ի ձևոն խղճի բնական օրէնքն ամէն
մէկիկոնուս կը յայտնէ . բայց պէտք է դի-
տել որ խիղճն այն աստեն յայտնապէս կը
կը լուսաւորէ՝ երբ մարդուս կարողութիւն-
ներն բաւական բացուած են . և միտքն կը
ցուցնէ որ այս բացուածքն ալ ընկերու-
թեան մէջ կըլլայ՝ որ և իյէ հրահանգավ մի ,
և երբ մեր կռմանէ էական արգելք մի
չենք դներ : Աստ պարտքերէն հարկաւո-
րութիւնն կը յայտնէ՝ թէ ինչու բնական
օրէնքի ծանօթութիւնն ամէն մարդոց մըտ-
քին մէջ հաւասարապէս զարգացած չէ ,
ինչպէս են ապուշներն , խուլ համրերն
և այլն , և ոչ ալ ամէն հասակի մէջ :

Բնական օրէնքէն զատ կան նաև դրա-
կան օրէնք . որով կիմացուի օրէնք մի յա-
զատկաւոր օրենսդրական իշխանութեան ան-
ձանէն , որ արտաքին նշանով մի ծանու-

ցեալ է . այսպէս է Փրանկիոյ հինական օ-
րէնքն որ Սահմանադրութիւն կըսուի , և կամ
այլ և այլ ազգաց օրէնքներն :

Ինչ որ բնական օրէնքն կը հրամայէ ինքն
ինքեան բարի է , և ինչ որ կարգելու ինքն
ինքեան չար . իսկ դրական օրէնքն կրնան
անխտիր բաներ ալ հրամայել կամ արգե-
լուլ : Բայց հարկաւոր պայմաններով հաս-
տատեալ դրական օրինաց կատարման
պարտաւորութիւնն՝ բնական օրինաց վրայ
հիմնեալ է՝ որ կը հրամայէ հնազանդել օ-
րինաւորապէս կարգեալ իշխանութեանց :

Դրական օրէնքներն կրնան ունենալ դա-
դարումն , բացառութիւն և անօրինուիմն ,
այսինքն կրնան բոլորովին կամ մասամբ
վերջանալ , կամ անոր պահպանութենէն
զմարդ ազատ կացուցանել . բայց բնական
օրէնքն ոչ երբէք . պատճառ , վասն զի ինչ
որ՝ի բնութենէ իրաց պարտաւորիչ է՝ ըլ-
լըրնար դադարիլ՝ի պարտաւորելոյ . և
ինչ որ ըստ ինքեան չար է՝ օրինաւոր չկըր-
նար ըլլալ ոչ ըստ բոլորին , ոչ ըստ մասին
և ոչ ըստ անձին . այսպէս ոչ ոք կրնայ
ազատ ըլլալ իր ընկերոջն բարեզգած ըլլա-
լէն , և ոչ ոմեք նեղելու է ապերախտու-
թիւն :

ՀԱՏՈՒԱԾ Ը

Զանազան պատճառք գործոց ելից .

Մարդ իր որոշեալ գործոց մէջ միշտ պատճառ մի ունի գործելու , առանց որոյ իր գործն կոյր և մեքենական մղում մի կըլլար , և ոչ իմացական և ազատ զօրութեան մի արգասիք : Այս զմեզ գործելու յորդորող առիթն կըսուի պատճառ :

Պատճառն է խորհրդածեալ մտաց ո-րոշում մի . բայց շատ անգամ պատճառի մի վրայ հաստատուելէն առաջ կամքն բնական յօժարութիւններէ կը հրապուրուի , որոնք շարժառիթք գործոց կըսուին , և երկու դասի կրնան վերածուիլ կարիք և կիրք : Կարիք կամ պէտք են այն միտմունքներն որ միայն մեր գոյութենէն յառաջ եկած՝ ի ներքս՝ ի մեզ կը զօրանան , օրինակի համար անանելու կամ ծանօթութիւն մի ստանալու պէտքն : Իսկ կիրք են ճգողական կամ վանողական միտումնք որ պէտքի սահմանն կանցնին : Այս միտմունքս սովորաբար կը զարգանան՝ կամ արտաքին պատճառի մի ազդեցութեամբ , կամ նոյն իսկ մեր սրամտդրութիւններէն . օրինակի համար հպարտութեան , ագահութեան , փառասիրութեան ու բարկութեան շարժառիթք : Ի կարեաց և՝ ի կրից ոմանք բոլորովին կամ մասամբ մեր կազ-

մութենէն կը կախուին, իսկ այլք մասնա-
տրապէս հոգւոյ կը վերաբերին։

Հոգեվաստութեան մէջ սկզբունք գործու-
նեայք անուանով շատ մի չարժաւորիք համ-
բերինք, ինչպէս յօժարութիւնք, խղճք,
որոնք երբեմն իբրև կարիք և երբեմն իբրև
կիրք կամ պարզ բնական տրամադրու-
թիւնք՝ մեր գործունէութիւնն կը գրգռեն
և պարագայք առաջ կածեն՝ որոնց մէջ կա-
տարեալ երևոյթն կը զարգանայ։

Հոգւոյ ազատ գործելն աղէկ ըմբռնելու
համար այս ալ դիտելու է՝ որ պատճառ և
չարժառիթ բառերն հոգիէ զատ ներգործ-
չի մարդով առնելու չէ, իբր թէ մեքենա-
կան գործութեան մի պէս հոգւոյն մղումն
տուող։ Մեր որոշմանցն վրայ պատճառաց
ազդեցութիւնն պէտք չէ անգիտանանք,
բայց անմիջական պատճառն նոյն իսկ
կամքն է՝ որ իբրև գործունեայ զօրութիւն՝
բանի մի վրայ կը հաստատուի թէ առնէ
մի չարժեալ և թէ առանց առնէ պարզ՝ի
կամելոյ։

Վերածումն պատճառաց գործոց չերկուս
դաս։ Մարդկային գործք յանբաւ պատ-
ճառաց ծագին, սակայն կրնանք զանոնք
երկու դասի վերածել։ Մէկ կողմն կրնանք
դնել՝ ինչ որ զգայականութիւնն կը չար-
ժեն, ինչպէս հաճոյք, շահ, կիրք, սէր
նմանեաց և անձին և անձնասիրութիւն.
այս ամէն պատճառներս կրնանք պատճառ
զգայական անուանել, որովհետև զգայա-

կան բարին է անոնց մէջ տիրողն : Եւս անգամ այս պատճառներուս վրայ կերևնայ անձնասիրութեան պատճառաց կնիքն : — Միւս կողմն ալ կը դնենք , պատշաճն , արդարն , բարոյական ուղղութիւնն , օրէնքն , պարտքն , միտք բանիւ բարոյական բարին յորոց կը ճևանայ բարոյական պատճառն կամ պատճառն պարտուց , զոր կրնանք իմացական պատճառ կոչել , որովհետև իմացական ըմբռնմանց վրայ հաստատուած է :

Զգայական պատճառաց նուրբ զանազանութիւններն կրնան ընդհանրապէս անձին միտյ վերածուիլ , թէ հաճոյն և օգտակարն մինետև լինել ըլլայ անոնց վախճանն և թէ որ և իցէ կրից մղումէն չարժեալ : Սէր անձին երկու տեսակ է . սէր անձին բնական՝ առանց խորհրդածեալ հաշուի և ոչ բացբառնական . և սէր անձին հաշուող և բացբառնական ամենայն անշահասէր յօժարութեանց . այս վերջինս կըսուի անձնասիրութիւն և յարակից պատճառքն անձնասիրականք :

Ցաճախ մեր նմանեաց սէրն նրբին անձնասիրութիւն մի է . և այս դիպուածիս մէջ մարդ ինքզինքն կը սիրէ իր սիրոյ առարկային վրայ , և ինք իր գոհութիւնն կը փնտռէ , որ յայտնի կերևնայ . օրինակի համար , երբ իր հանդիսան չխռովելու համար վատնեցողամտութեամբ մի բարեկամին սխալմանն աչք կը գոցէ , պիտանի համարձակ որ անոր ընտանեկան

ըլլայ : Իսկ զուտ և անշահասէր ընկերասիրութիւնն՝ ինչուան անձնանուիրութեան և անձնամոռացութեան կը հասնի :

Իմացական պատճառն կամ պատճառ պարտուց ըսածն զգայական տպաւորութեանց վրայ հաստատուած չէ , այլ մտաց ըմբռնման՝ որ բացարձակ կերպով կը ճանչնայ բարոյական և իսկական բարին , ինչպէս նաև գործադրութեան մէջ անոր համաձայնելու պարտաւորութիւնն , և որ կը ցուցնէ մեզի թէ պարտքն կատարելու է շահու և անձնական գոհութեան ալ հակառակ , որովհետև բարի է , և կարգն այնպէս կը պահանջէ , և տիեզերաց գերագոյն օրէնսդրին կամքն այն է :

Ակնարկելի է այս պատճառներս՝ի մի վերածել : Արդեօք մեր գործոց ամէն պատճառներն որչափ ալ զանազան ըլլան՝ մէկի չեն կրնար վերածուիլ՝ որ է սէր անձին . որովհետև արդէն կը տեսանենք որ զգայական պատճառք բուսածներն հաճոյք , շահ , օգուտ՝ ընդհանրապէս սիրոյ անձին կը վերաբերին . քաց ասկէ միտքն և փորձն կը ցուցնեն որ չկայ ճշմարիտ հաճոյք և օգտակարութիւնք բայց եթէ՝ի կատարման պարտուց . վասն զի պարտուց ներհակ ենթադրեալ շահ մի ճշմարիտ շահ չէ . որովհետև մեր բնութեան կատարելութենէն զմեզ մոլորեցնելով՝ մեզի չիրաւի վնասակար կըլլայ . և զի գործել պարտքէ դուրս եղած հաճոյք մի լաղկի խայթերովն

կըթանաւորուի և կը խառնի, որով հաճոյքն վտանգ կը վտանուի : Ասկէց չատերն հետևցուցին որ պարտքն կատարելն ուղղախոհ շահասիրութեան և անձին երջանկութեան համար է . և թէ վերջապէս որչափ ալ պատճառք նրբին զանազանութիւններ ունենան՝ բոլորն ալ մէկի կը վերածուին որ է սէր անձին կամ շահ անձնական :

Ըսածնուս պէս որչափ ալ նմանութիւն գտնուի մեր գործոց պատճառացն մէջ, և տակայն կարելի չէ զանոնք մէկի վերածել : Իրաւ շահու և հաճոյից պատճառներուն նրբին զանազանութիւններն կրնան մէկուն հետ չփոթիլ՝ որ է սէր անձին, և որ յանախ անձնասիրութեան կը վտանուի, տակայն պարտուց պատճառն՝ որ մենք միայն բարոյական պատճառ կը սեպենք, շատ հակառակ զանազանութիւններ ունի՝ որով ուրիշներուն հետ չկրնար չփոթիլ[1] :

Ս. Պարտուց պատճառին վրայ մինակ կերևնայ պարտաւորիչ ըլլալու կնիքն, իսկ պարտաւորութեան գաղափարն միւսներուն ալ կայ :

1 Պէտք է դարձեալ յիշել որ բայ՝ ի այն բարոյական գործերէն որոնց կատարումն՝ ի պարտք է, կան նաև ուրիշներ՝ և աւելի կատարեալ գործեր՝ որ միայն՝ ի խրատ են : Հարկ չկայ ապացուցանել թէ բարոյական կատարելութեան գրեթէ ամբողջ էական գործերն՝ չեն կրնար հաճոյից և շահու հետ միաբանել :

բ. Անձնական չահն և երջանկութիւնն զգացողին բնութեան համեմատ է, և ըստ անձանց և ըստ պարագայից կը փոխուի. ապա ուրեմն չունի այն հանգրուանն և հարկաւոր կէտը՝ որ բացարձակ սկիզբ մի կրնայ ունենալ՝ ինչպէս է պարտուց և պարտաւորութեան սկիզբն, որ հանրական և հարկաւոր օրինաց առածնելու կրնան փոխուիլ, որ ամէն մարդու կը պատչաճին և իրաց իսկութեան վրայ կը հաստատուին, ինչպէս են բարոյականի սկզբունքն. հետևապէս պարտուց պատճառն չկրնար հաճոյից և օգտակարութեանց հետևոյն սեպուիլ՝ որոնք այս կնիքս չունին:

գ. Յաճախ կրից և տաբինութեան, պարտուց և չահու մէջ պատերազմներ կելլեն, հաճոյք և չահ կուզեն յաղթել, բայց խիղճն կը բողոքէ զանոնք պարտուց հնազանդեցնելու համար. և առանց պատերազմի տաբինութիւն չըլլար: Կրկ են՝ թաղրելով թէ պարտուց պատճառն անձին սիրոյ և չահու զանազանութիւն մի ըլլայ՝ ներհակաց մէջ պատերազմ չըլլար պիտի, այլ բնական համաձայնութիւն պակէս՝ մէջ նմանեաց: Դարձեալ ենթադրեալ թէ պարտուց պատճառն չահու պատճառի կըրնայ վերածուիլ՝ հաճոյից, չահու և պարտուց մէջ ընտրութիւն ընել պէտք եղած ժամանակ՝ որվհետև անոնց հետևանքն մի և նոյն սկզբան վերածելի են, ապա

բարոյական ներգործիչն ներքին խոյք և տագնապ պէտք չէր ունենալ :

Դ. Ամէն լեզուաց մէջ ալ պարտք և շահ ցուցնելու յատուկ բառեր կան , և ոչ երբէք իրենց որոշ իմաստն չփոթած ու այլասած է :

Եւ ոչ ոք կրնայ վերն դրուած առարկութիւնն նորէն հաստատել՝ ըսելով թէ պարտուց պատճառն ողղախոհ շահու պատճառին հետ նոյն է . վասն զի ամէն հաճոյք և օգտակարութիւն մէկդի ալ դնելով դարձեալ բարին ընելու և չարէն խուսափելու պարտաւորութիւնն կըմբռնենք , ինչպէս այս պատճառաւ՝ որ նոյն իսկ իրաց իսկութեան վրայ հաստատուած և յաւիտենական կամաց հրամայեալ պարտք մի է : Մէկ խօսքով՝ առանց հաճոյից և օգտի մտածելու՝ բարին գործելու է որպէս բարի , և՝ի չարէն խորշելու է որպէս չար . ինչպէս որ Ովրատիոս կըսէ [1].

Արդարք զմեզս առեցին՝ արդարութեանն առ՝ի աւր :

Որուն կը փափաքէր Սենեկայ որ բոլոր աշխարհք լաւ հասկցած ըլլայ , երբ կըսէր [2]. « Յառաջ քան զամենայն այմ իրաքանչիւր ոք համոզուիլ ինչի անձին թէ « Պարտ է ինձ արդար լինել՝ և առանց իսկ վարձուց ակնկալութեան » : Եւ ինչպէս

1 Եսայի Ա. 16 :
2 Թուղթ ՃԻԹ :

կրնանք անձնական չահէ առաջ եկած սե-
պել այս պետական խօսքը՝ զոր Ֆենելոն կը
դնէ Տելեմաքայ բերանը՝ երբ պետի առավ
մի կրնար իր և իւր բարեկամին Նարբա-
լայ կեանքն ազատել՝ ըսելով՝ [1]. « Շատ է
որ առաքինն առաքինի իցէ՝ առ անվայել
գոլոյ ՚ի բերան առն՝ որ խօսի յանդիման
երեսաց աստուածոց, և յամենայնի պար-
տական է պատկառ կալ ճշմարտութեան »:

Ապա ոչինչ պարտուց պատձառն չկրնար
չիտրել ուրիշ որ և իցէ պատձառի հետ:

Հիմա ուրիշ կէտէ մի նկատենք պար-
տուց և բարոյական բարւոյ պատճառն,
որով ամբողջապէս անոր նկարագիրն տը-
ւած կըլլանք, այսինքն թէ այս պատճառս
բնականապէս վերաբերուբիւն մի պիտի ու-
նենայ առ Աստուած: Ամենայն ինչ յԱս-
տուծոյ է, ապա և առ Աստուած պէտք է
վերաբերի: Ամէն մարդ իր կարողութիւն-
ներն յաստուծմէ ընդունած է, և ինչ որ
այս կարողութիւններովս կը գործէ՝ իրեն
էութեան արարչին գօրութեամբն գործած
կըլլայ՝ որ զանոնք իրեն տուեր է. ապա
ուրեմն մարդկային գործք պէտք է որ
մարդկային բնութեան արարչին վերաբե-
րին: Յայտնի է որ Աստուած միայն իրեն
համար ստեղծած է զանոնք, որովհետև
ինքն գերագոյն էակ ըլլալով՝ ամէն բանի
սկիզբն և վախճանն է. ապա ստեղծագոր-

1 Գիրք Գ:

ծութեան վախճանէն հեռանալկըլլայ՝ դէպ
ի Աստուած չդիմելն : Նիւթական աշ-
խարհքս՝ առնչագործութեան ծրագիրն
կը կատարէ , որովհետև կը կատարուի
բնական օրինօք՝ որ նոյն իսկ արարչին
կամքն են : Իմայական և ազատ արարած
ալ պէտք է որ նոյն կամքն կատարեն՝ ու-
ղիղ բանին հետ միաձայնելով՝ որ կը պա-
հանջէ ազատութեամբ թէ ղիրենք և թէ
իրենց կարողութիւններն ու գործերն՝ ի-
րենց արարչին վերաբերելու . ապա պէտք
է որ Աստուծոյ համար գործեն : Բայ սակէ
Աստուած իր անբաւ կատարելութեանցն
և բարերարութեանցն համար արժանի է
որ սիրուի ծառայենք և հնազանդինք իրեն .
և հետևապէս կը պահանջէ ալ այս բանս ,
որովհետև ինչ որ ի կարգի է չկրնար չու-
զել : Ապա ուրեմն մարդուս համար պար-
տաւորութիւն մի կայ Աստուծոյ սիրոյն հա-
մար գործելու :

Նախընթաց խորհրդածութիւններէս կը
հետևի՝ որ մարդկային գործք բարոյապէս
բարի ըլլալու համար՝ պէտք է կերպով մի
Աստուծոյ վերաբերին գոնե անուղղակի .
այսինքն երբ անմիջապէս և որոշակի Աս-
տուծոյ չեն վերաբերիր , գոնէ բարի և հա-
մաձայն պատճառի մի համար եղած ըլլան՝
որ ի բնէ աս Աստուած կը դիմէ : Աս-
տուած ամէն բարութեան արդարութեան
և սիրելութեան աղբիւրն ըլլալով , և մար-
դուս բնական կատարելութիւններն ան-

բաւ զերազանցութեամբ անոր մէջ բո-
վանդակեալ ըլլալով՝ այն մարդն որ բա-
ցայայտապէս կը գործէ՝ այս կատարելու-
թիւններս նկատելով՝ նոյնն իսկ լռելեայն
և անուղղակի վասն Աստուծոյ գործած
կըլլայ :

Սակայն մեր խիղճն գոհացնելու համար
բաւական չէ որ մեր գործերն անուղղակի
վերաբերին Աստուծոյ . վասն զի ողջմտու-
թիւնն մեզի կը թելադրէ թէ կայ խիստ
պարտաւորութիւն մի ճանաչելոյ և սիրե-
լոյ զԱստուած բացայայտապէս , և պա-
տուելոյ զնա ուղղակի բացայայտ կերպով
և ոչ միայն լռելեայն կերպով :

Մեր գործոց պատճառներուն հետևանո-
րդաբար իրարու ունեցած կարևորութեան
վրայ :

Վերն արուած մեկնութեանցս հետե-
ւանքն՝ մեր գործոց պատճառներն և վախ-
ճանական դիտաւորութիւնք երկու որոշ
տեսակի կը բաժնուին . մին որ միայն մեզի
կը վերաբերի , իսկ միւսն որ ինչուան ա-
բացարձակ բարին կը բարձրանայ որ է
Աստուած :

Այն պատճառներն որ վախճանական
կերպով ա՛ռ մեզ կը վերաբերին՝ երկու կէ-
տով կընկատուին, և երկուքն ալ՛ իսէրան-
ձանց և՛ ի չահ անձնական կը վերջանան :
Առնցմէ մէկուն հիմնական կնիքն է հա-

ձոյից գաղափարն, իսկ մխայինն օգտակարին, որ է ըսել հաձոյք և օգտակարութիւն. այս վերջի պատճառս պարզապէս կըսուի նաև շահ։

Հիմա տեսանենք թէ այս վերջապէս ի՛նչ մեզ յանգեալ պատճառաց նրբին զանազանութեանցն՝ այսինքն հաճոյից և օգտակարութեան վերբերական կամ համեմատական կարևորութիւնն որն է. և երկրորդ թէ այս կրկնակ պատճառներս համեմատութեամբ երրորդին կամ պարտուց պատձառին ինչ զօրութիւն ունին։

Մեր դրած ամէն պատճառներն ալ իրենց յատուկ կարևորութիւնն ունին. պատճառի մը կարևորութիւնն ալ համեմատ է իրմէ առաջ եկած գործոց և հետևանաց զօրութեանն։ Արդա պէտք է որ իրեն օգտակարն փնտռէ, և ներեալ է բանաւորապէս անոնց կատարմանն մէջ օգտի մի ալ ցանկալն. բայց բարոյապէս բարի ըլլալու համար՝ պէտք է հաճոյից և օգտի պատճառներն՝ բուն բարոյական պատճառի հպատակին՝ որ է պարտուց պատճառն կամ բարոյական բարին։

Անտարակոյս մեր բնութեան օրէնքներէն ամէնն է՝ որ երբեմն զուարճալի սփոփանաց կարօտ ըլլանք, և պատշաճ զբաղութիւններն ալ ատոնցմէն նախանձութեան կարգին մէջն են։ Սակայն հաճոյականին և զուարճալւոյն պատճառն՝ ամէն պատճառներէն աւելի տակա-

զօրութիւն ունի, որով և շատ տակաւ կա-
րևորութիւն՝ համեմատութեամբ այլոց :
Պարզ հաճոյական պատճառաւ գործելն՝
ինքզինքն գիւր զառ՝ ի վայրի մի կամ հո-
ւանքի մի տալ է . այսինքն այնպիսի վարք
մի՝ որուն մէջ ոչ կարճութիւն կայ ոչ առա-
քինութիւն և ոչ արդիւնք . ասիկայ ամէ-
նէն վատ ու ցած մարդկանց ճամբան է ,
և յայտնի է որ ինքզինքնին հաճոյից տուած
մարդիկ՝ սովորաբար անարժան թուրու-
թեան մի ու բոլորովին ոչնչութեան մի մէջ
կը սպառին :

Իսկ օգտի մի վախճանաւ գործելն , և
ասոր եղած ժամանակ աշխատանք և նե-
ղութիւն յանձն առնուլն՝ արդէն միտքն
կոյր յօժարութեանց վրայ իշխան դնել է ,
և բանաւոր վախճանի մի համար հաճոյա-
կանն զոհել է . որով և ուժի , կարճութեան
ու խելքի աստիճան մի է : Ասիկա օգտակա-
րութեան վախճանաւ եղած գործի մի բը-
նական հետևանքն ալ՝ կրից ազգմունքնե-
րէ եղածներուն վրայ իրական և դրական
առաւելութիւն ունին : Ուրեմն օգտակա-
րութեան պատճառն աւելի զօրութիւն
և կարևորութիւն ունի՝ քան թէ հաճոյից
պատճառն :

Բայց ամէնէն աւելի հարկաւոր է մար-
դուս՝ պարտուց պատճառաւ գործելն , որ
է զանց չառնել ընելու ինչ՝ որ պարտա-
կան է : Պարտուց պատճառին վրայ անհոգ
ըլլալով՝ օրինաց զանցառութիւն ըրած

կըլլանք, կարգի սկզբունքն բռնաբարած, և յաւիտենական արդարութեան կանոնները կոտրած, որ ողջամիտ մարդու առջև շատ աւելի մեծ կարևորութիւն ունին, քան թէ օգտի և հաճոյից զանցառութիւնն: Դարձեալ, փորձն կը հաստատէ որ ուրիշ պատճառաց նիւթական դործադրութիւնն շատ դէշ հետեւանքներ կունենայ՝ թէ որ պարտուց պատճառն և բարոյական բարին անոր չափ մի չդնեն: Հաճոյից պատճառին տեղի տալու սովորութիւնն՝ վատութիւն ու թուլութիւն առաջ կը բերէ, ամէն ուժ, առաքինութիւն ու մեծանձնութիւն կը ջլատէ, և թէ՛ ընկերութեան և թէ անհատին շատ վնաս կը հասցնէ: Իսկ շահու պատճառն երբոր կը զօրանայ հոգւոյն վրայ՝ շուտով անձնասիրութեան կը տանի, անձնասիրութիւնն ալ ուրիշի վշտացն անզգայութիւն կը բերէ, որով ամէն վեհանձնութիւն, անձնանուիրութիւն և հասարակասիրութիւն կը մարի: Ա.պա ուրեմն մինակ հաճոյից և շահու պատճառներով աշխարհքիս վրայ բարոյական կարգ չկրնար ըլլալ, և հետևապէս ոչ մարդկային ընկերութիւն:

Իսկ հաճոյից և օգտի պատճառներն մէկմէկու հետ բաղդատելով՝ որոնց երկուքն ալ մէկի կրնան վերածուիլ, այսինքն անձնասիրութեան, ամէնէն տակաւ կարևորութիւն ունեցողն հաճոյից պատճառն է. իսկ երկուքն ալ մէկտեղ առնելով՝ ի-

բնից կարևորութիւնն շատ նուազ է պարտուց պատճառէն, որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ պատճառ կարգի, արդարութեան և բարոյական բարուց: Երկու առաջին պատճառներէ առաջ եկած գործերն բարոյական զօրութիւն մի չունին՝ բայց երբոր պարտուց պատճառին կը հպատակին: Նաև կրնանք ըսել՝ որ թէ անհատից և թէ ընկերութեանց ջամարիտ երջանկութիւն և իրական օգտակարութիւն չկրնար ըլլալ, բայց եթէ կարգի և օրէնքի համաձայնելով, որ է ըսել պարտուց կատարմամբ:

Թ. Ժուֆրուա իր Դասք բնական իրաւանց գրքին մէջ յետ ցուցնելու թէ մեր գործոց երեք պատճառներն պէտք է որ միշտ համաձայնին իրարու, այսպէս կը յաւելու [1]. «Եւ սակայն այս երեք պատճառներս ալ իսկապէս պանտպան են, և մէկուն կամ միւսոյն հնազանդիլն ալ հաւասար չէ... Երբ մարդ կրից տենչիք կուտայ՝ իր որոշմունքն պարզ անաանական է, և քանի որ այս կերպով կը գործէ՝ իր կեանքն անբանի կեանք է: Այն օրն որ մարդ կը բարձրանայ առ շահն ուղղակի՝ այն առեն բանաւոր էակ մի կըլլայ, իր ընթացքն կը կշռէ, իր կարողութեանց տէրն է, և պանպանք իր մտքի դրածին կը հնազանդեցնէ. արդէն ինքն մարդ է, բայց առակաւին բարոյական մարդ չէ. և

1 Դաս գ. հա. ս. էջ 91:

այն օրն միայն կըլլայ՝ երբ կը թողու իր անձին բարւոյն գաղափարն՝ և կը հնազանդի բուն իսկ բարւոյ գաղափարին »։ Այս վերջի իմաստս կարի չափազանց է, վասն զի գաղափար մի կրնայ բարոյական կան ըլլալ՝ առանց բոլորովին՝ ի բաց մերժելու վարձուց ակնկալութիւնն և պատժոց երկիւղն։ Վարձու մի յուսացող և պատժէ մի վախցող հոգին՝ այնպէսով ալ կրնայ օրինաւոր ճամբով մի իր բնութեան վախճանին դիմել. վասն զի մարդկային բնութեան վախճանն է առաքինութեան գործադրութեամբ դերագոյն բարւոյն հասնիլ։ Այլ որոնք որ վարձ մի ընդունելու կու յուսան, և պատժէ մի խորշիլ մըտքերնին կը դնեն՝ ի նմին ժամանակի կրնան դիտաւորութիւն ունենալ պարտքերնին կատարելու, Աստուծոյ կամքն ընելու և առաքինութեամբ երջանկութեան հասնելու։

ՀԱՏՈՒԱԾ Գ

Վարդապետն Բարոյական.

Բարոյական օրէնքն զօրութիւն չունենար՝ քանի որ օրէնադիրն զանիկայ պատուել տալու միջոցներն չէ բանեցուցած. այս պատճառաւ ամէն բարոյական օրէնք պէտք է որ իր վարդապետն կամ հաստա-

տուրիւնն ունենայ : Վասերացուցին ըսելով կիմացուի այն բանն՝ որ օրէնքի մի իշխաշնորհիւն կոչուայ . և սոնք սովորաբար են պատիժք և վարձք : Պատիժք և վարձք պէտք է որ համեմատ ըլլան գործոց պրպեսնց և ապրպեսնց, ինչպէս որ պիտի մեկնենք :

Ապրպեսնց և. ապրպիսնց, առաքինութեսնց և. ախտից վրայ .

Գոյ օրէնք մի բնութեան վրայ հաստատեալ և՝ի բարոյական խղճէ ծանուցեալ : Այս օրէնքս պարտաւորութիւն մի կը դնէ, բայց ոչ և հարկաւորութիւն . վասն զի մարդ իր ազատութեան զօրութեամբն իշխանութիւն ունի պահելոյ զօրէնս և ապախտ առնելոյ : Ցիրաւի խիղճն կը խրատէ զմարդ կատարելու այն պարտքն զոր ունի գործելոյ ղբարին և խորշելոյ՝ի չարէն , և ուղիղ միտք ալ իրեն կիմացնէ որ միայն բարին կրնայ զինքն երջանկութեան հասցնել՝ իր բնութիւնը կատարելագործելով . սակայն այս ծանօթութիւնն չեղծաներ չարի դէմ պատերազմելու դժուարութիւնն. այն աւանն՝ յաղթելու համար պէտք եղած արութիւնն կը ծնանի՝ի մեզ զգաղափար արդեսնց կամ բարոյական արժէից գործոյն. և ընդհակառակն վատութիւնն որ յաղթուիլն կիմացնէ հոգւոյն՝ մեր մէջն կը զարթուցանէ զգաստիւր ապարդեսնց կամ

պահատուքեան քարոզական արժէք։ Այսպէս երբ մարդկային գործք համաձայն են ուղիղ բանի՝ և պարտաւ կատարման կը դիմեն, որովհետև այս գործերս ընելու համար հոգւոյ կողմանէ իր պատուհեան գործածութեան մէջ ջանք մի հարկաւոր է, ուստի այն գործերուն համար կըսեինք թէ արդեանց կնիք մի ունին կամ արդիւնաւոր են. ընդհակառակն երբ գործք ուղիղ մըտաց հակառակ են, և՛ ի բնէ պարտաւ կատարման պահատութիւն կը բերեն, որովհետև այս գործերուս մէջ կերևնայ թէ պատուհեան գործածութիւնն իր արդիւնաւոր ուժէն պակաս է՝ ուստի կըսեինք թէ պատրդեանց կնիք մի ունին կամ պարզիւնաւոր են։

Երբեմն հաճոյքն պարտաւ կը զոհենք, և անձնասիրական պատճառն բարոյական պատճառով կը մերժենք. երբեմն ալ պարտքն հաճոյից կը զոհենք, և անձնասիրական պատճառն բարոյական պատճառին վրայ կը զօրացնենք. այս զանազանութիւններէս կորոշուին արդիւնքն և պարտիւնքն։ Արդեանց ատենն կը չափուի այն ճգանցմէ և զոհերէն՝ որ այն գործն կատարելու համար կը գործուի։

Արդեանց և պատրդեանց տեսլութենէն կը ծագի մեր հոգւոյն այն վիճակն որ կըսուի առաքինութիւն կամ պար։ Առաքինութիւն բառին գրաւոր նշանակութիւնն պատրաստուիլ է. բայց արիութիւն մի բարոյա-

պէս նկատելոյ. արիւթիւն մի ընդդէմ ըլլալու այն յօժարութեանց՝ որ զմեզ ի չարն կը տանին. մէկ խօսքով առաքինութիւնն է զօրութիւն բարւոյ. իսկ նուազութիւն զօրութեան բարւոյ չարի է պատճառն։ Ամէն գործելի գործ որ մեր կողմանէ ճիդն ու կը պահանջէ առաքինութիւն է. իսկ գործ մի ախտաւոր է՝ երբ ընելու առեն չարին տեղիք կուտանք։ Սակայն տկարութեան առաքինութիւնն և ախտն գործոց յարաբերութիւն ու կը պահանջեն, և առանձինն գործ մի թէ արդիւնաւոր եղեր է թէ ապարդիւն՝ զմարդ առաքինի կամ ախտաւոր չըներ. այս անուանց արժանի ըլլալու համար տկարեալ գործ պէտք է։

Անձնական գործերնիս բարոյական խըղճի ձեռքով կը գատենք, իսկ ուրիշց ըրածն մերիններուն հանգիստութեամբն։ Անոր համար ուրոյ վրայ եղած գատաստանն այնչափ տարբեր է. տվեալաբար առաքինի մարդիկ ուրիշներու ըրածն ալ նոյն պատճառէ առաջ եկած կը համարին որով որ իրենք կը գործեն. իսկ որոնք որ իրենց կրից կը հետևին՝ ուրոց ըրածն ալ նոյն սկզբան կը տանին։

Պատժոց և վարձուց վրայ։

Միայն բաւական կը համարինք ասոնք՝ որ եթէ առաքինութիւնն արդիւնաւոր է՝ պէտք է վարձատրուիլն ալ ունե-

Նայ , և թէ որ ախտն ապարդիւն՝ պէտք է պատիժ մի ընդունի : Վարձքն պղտևանց հատուցմունքն է . իսկ պատիժն ապարդևանց . որոնք անմիջապէս մէկմէկու հետ միացած են : Հատուցմունք և պատուհասք իրեք տեսակ կրնան բաժնուիլ . ոմանք՝ ի վեր , այլք՝ ի ներսեւց , և ուրիշներն մասնաւորապէս յԱստուծոյ . բայց մէկ մտքով ամէնն ալ յԱստուծոյ կուգան :

Նոյն իսկ այս աշխարհիս մէջ աստուածային նախախնամութիւնն հատուցման կարգ մի սահմանած է ըստ գործոց իւրաքանչիւր : ա . Այս հատուցմունքն նախ կըլլայ՝ ի վեր : Առաքինութեան գործ մի սովորաբար հոգւոյն մէջ բարոյական գոհունակ մի կը ծնանի՝ որ իր առաջին վարձքն է :

Ոչինչ անձին ստգտանել , ոչինչ մեղօք չարաչարուիլ ըստ Ովրատիոս [1], ուր որ ախտի ընկերակից խայթն իր առաջին պատիժն է .

Անգութ ապաշաւ նախկին դահիճ է մարդոյ
Որ՝ի լանջ մեղապարտ հարեալ մխէ զսուսեր [2] :

Եւկիկերոնի հայրապանի համար ըսածին [3] պէս « Որքա՜ն են յամբարշտացն անմեկին և բնակակից կատաղիք , որք զսխե և զգիշեր

1 Ովրատ . Նամակ ա . 1 :
2 Ոտանին որդին Երգ կրօնից Երգ ա :
3 կիկ . Առենար . վան Ս . Ոտակխատ Թ . 24 :

զվրէժ ծնողացն յանապարոյն որպեսզի պահանջեն »։

Խղճի խայթէն և բարի վկայութենէն զատ՝ մարդ յանձին իւրում իր պատիժն և վարձքն կը գտնէ իր վարուց հետևանաց կանխատեսութեամբ և կամ նոյն իսկ հետևանաց մէջ։ Այս կանխատեսութիւնս ալ վարձոյ վրայ հաստատուած է՝ որ ամէն մարդ ալ երած կրնայ ըլլալ, այսինքն զեղծմունէ եւս յաջորդաց յաւիրութիւնն և զրկումն, և անձնանսիրութենէ եւս եւ կած զոհութիւնն և բաւարարութիւնն։ — բ. Ի նմանից ընդունած վարձք և պատիժք երկու տեսակ կուգան, որ են հանապարհորդք և օրենք կամ իշխանութիւն հասարակաց. համարմունքն կուտայ զգուելութիւն և զանուն բարի, և կամ զնախատինս և զարհամարհանս. իսկ օրէնք հարկանեն զմեզ՝ի ստոյգս, ՚ի պատուի, յազատութեան և ՚ի կեանս. և ըստ գործոց մերոց կը տրուին մեզ պատուաւոր և շահաւոր ասագութիւնք, և կամ վատահամբաւ պատուհասք։ — գ. Յաճախ և սխեղերաց կառավարութեան մէջ առաջնորդին՝ կը տեսնէ առաջադային յայտնի բերակայութիւն որով կը բաշխէ զվարձս և զպատուհաս։

Այս խորհրդածութեանս դէմ՝ կառարկեն ոմանք թէ շատ անգամ՝ բարեաց և չարեաց բաշխմունքն արդարութեան հակա-

ռակ կերևեաց, և արդեանց և ապարդեանց բաշխումն ներհակ։ Եւ բարոյական պրոպածոց մէջ մրջյուն բաներ խօսուած չեն արդարոց թշուառութեանցն և չարաց յաջողութեան վրայօք։ Այս դիտողութիւնս անհիմն չէ, և չենք ուզեր անդել թէ աշխարհիս վրայ հաստուցմունքն արդարապէս կըլլայ ըստ գործոց իւրաքանչիւր, որուն վրայ քիչ մի ատենէն պիտի խօսինք։ Սակայն Ավրատիոսի ըսածին պէս թէպէտ Հաշտռան պատուհասան [1] ուշանայ գալու մեզաւորին վրայ, սակայն քիչ անգամ կը պակսի։ Եւ թէպէտ երբեմն չարագործ մարդկանց երկայն յաջողութիւնն զաշխարհքս զարմացնէ, սակայն պատիժն որ ուշանալովն աւելի կը սաստկանայ՝ վերջապէս վրանին կը հասնի, և կերեսով մի Նախանամութիւնն կարդարացնէ, կվաստիանոս քերթողին ուժգնութեամբ ըսածին պէս.

Հուսկ ուրեմն մահ Ոտքինեայ զխաղճն ՚ի բաց պարուրեաց
Եւ զաստուածս արդարացոյց [2].

Բայց Նախախնամութիւնն այս արդարացուցման կարօտ չէ, որ եթէ այս աշխարհիս վրայ ալ չերևնայ՝ կը մնայ միշտ հանդերձեալ կեանքն Աստուծոյ արդարութեանն հաստուցանելու համար։ Եթէ ախ-

1 Երդք գնդք գ. 2։
2 ի Հռոմինոս գնդք Ա. տող 20։

տաւար մարդն քիչ անգամ իր արժանաւոր արտաքին պատուհասէն կազատի, այլ աւելի սակաւ կրնայ վախչիլ ինքն իր անձին մէջ զգացած պատժէն. ճոխութեան և առատութեան մէջ ալ ներքին տագնապներու և կրից խառնուածք է, հեշտութեանց զեղծմունքն կը յագեցնէ ու կը յափրացնէ, հոգին և մարմինն կեղծանէ, և խղճին կրծող որդն՝ որ բոլորովին մեռցնելն անհնարին է, կարթննայ ու կը խլրտի հոգւոյն մէջ. և այնպիսի տանջանքներ են առնք՝ որ մարդ չէ եղած որ բոլորովին անոնց ձեռքէն ազատած ըլլայ:

Պատժոց պէս վարձքն ալ համեմատ չեն բնաւ արդիւնաւոր գործոց հետ: Բայց կրնանք ըսել որ ընդհանրապէս առաքինի մարդիկ երկու օգուտ կը վայելեն՝ որ այս խօսքիս մէջ կը բովանդակի «Առողջ միտք յառողջ մարմնի[1]». և հարկ չկայ ցուցնել որ այս կեանցս մէջ աւելի պատուական հատուցմունք մի փնտռել անհնարին է: Երկորիքն Ս. Բերբատուկի գրոց մատենագրին հետ կրնանք հաստատել թէ նոյն իսկ ժամանակաւոր երջանկութեան վնասզոյն վտանգ չէ թէ առաքինի մարդոյն՝ այլ առաքինութեան կորուստն պատկանին (ընդհանրապէս): Եւ թէ «Բարոյական կարգն արդարութեան օրինաց հետ համաձայնեցնելու համար,

1 Յուվենալ էրգին. ժ. տող 356:

պէտք էր որ առաքինութիւնն վարձա-
տրուեր և ախտն պատժուեր նաև ժամա-
նակաւորապէս, բայց ոչ միշտ և ոչ վաղվա-
ղակի. հարկ էր որ երջանկութեան անհամե-
մատ գերազանց վիճակ մի՝ քան զժամանա-
կաւոր երջանկութիւնն, տրուեր առաքի-
նութեան, և համեմատ թշուառութեան
վիճակ մի ախտից, բայց պէտք էր որ մարդ-
բանի մի վրայ վատահութիւն չունենար.
և յիրաւի այսպէս ալ սահմանուած է: Ո՛ւ-
րիշ ինչ ենթադրութիւն ալ մտածես, ներ-
կայ բարոյական կարգն աւրած կըլլաս, և
ուրիշ աշխարհ մի ստեղծուլ պէտք էր[1]»:

Ա. Յս կենաց մէջ բարոյականի վաշերացման անբաւականութիւնն.

Նախընթաց բացատրութիւններէն տես-
նուեցաւ՝ որ այս կենաց մէջ բարոյակա-
նի վաւերացում մի կայ, և թէ այս վաւե-
րացումն մեր խղճին վկայութեան վրայ
հիմնած է. նմանապէս մեր գործոց համե-
մատ ընկերաց մեզի հետ ունեցած վար-
մունքէն, և ընդհանրապէս մեր վարքին
վատաւոր և օգտաւոր հետևանքներէն
այս բանս ցցուցինք: Սակայն այս վաւե-
րացումն ամէնուն արդեանց համեմատ

1 Տաւվերիոս ալ Մէսթր և. զբուցատրու-
թիւն:

հատուցմունք չըներ, և ոչ ալ ամէն պա-
րագայի մէջ. նաև շատ անգամ մարդուս
ներկայ վիճակն արդեանց ներհակն է։
Ապա ուրեմն ատոնցմէ արդարութիւնն
ներկայ կեանցս մէջ չգոհանար, ուր որ
բարոյական վաւերացումն ձիշդ և ամբողջ չէ։

Եւ արդարև խղճի խաղաղութիւնն և
խայթն, և մարդկանց համարմունքն և
արհամարհանքն և մեր գործոց հետևանքն՝
արդարութեան օրինաց բաւական և հա-
մաձայն հատատուբիւն մի ըլլալու հա-
մար՝ հարկ էր գոնէ որ խղճի խայթն և
մարդկանց արհամարհանքն յանցանաց հա-
մեմատ աճէր. նմանապէս խղճի ցնծու-
թիւնն և մարդկանց համարմունքն առա-
քինի գործոց արդեանց համեմատ աւել-
նար. նոյնպէս ըլլալու էին նաև այս կե-
նաց միւս վարձքերն և պատիժներն. և
սակայն իրապէս այսպէս չենք տեսներ.

Ա. Ոչ խայթից և պատժոց կողմանէ.
վասն զի յայտնի է որ խղճի խայթն նո-
րեկ յանցաւորաց վրայ միայն կազդէ,
ուր խստացեալ մեղաւորք՝ անօրէնու-
թեանց ուժով կրնան զանիկայ մարել.
այնպէս որ եթէ հանդերձեալ կեանք չըլ-
լար՝ անպատուհասութիւնն վարձք մի-
ու ըլլար յանցանաց բազմաւորութեանն։
Դարձեալ՝ ախտից վարժելն մէկդի ալ դնե-
լով, շատ անգամ խղճի կրծող որդն մաս-
նաւոր հոգւոյ վրայ աւելի ազդեցութիւն
ունի՝ համեմատութեամբ աւելի թեթև յան-

ցանքներու մէջ, ուր որ ուրիշներն աւելի մեծ յանցանաց համար նոյն տագնապն չեն կրեր։ Ուր մնաց որ առանց հանդերձեալ կենաց պատժոյն վախուն՝ խիղճ ըսածդ ալ չենք կրնար ըմբռնել։ — Եւ ոչ ալ անարգութեանց արհամարհանաց և այլ պատժոց կողմանէ որ ախտից պատուհաս պէտք էին ըլլալ. վասն զի ընդհակառակն կը տեսանենք՝ որ շատ ապականեալ մարդիկ բաղդն իրենց ձեռնտու գտնելով՝ ամէն բանի մէջ կը յաջողին ու կը վայելեն, մէկ կողմանէ ալ իրենց յանդգնութիւնն ժողովրդեան գովեստներովն և համարումովն կը շատնայ։ Եւ թէ որ առաքինին իր արդար հատուցմունքն ալ գտնէ՝ շատ անգամ մեռնելէն ետքն կըլլայ՝ որ շատ ուշ ըսել է՝ եթէ ամէն բան կը վերջանայ ի գերեզմանի։ — Վերջապէս այնպիսի ճշմարտութիւններ ալ կան՝ որ յերկրաւոր պատժոց բոլորովին կը փախչին՝ երբ յանցաւորն ոճիրն գործելէն եառև անմիջապէս կը մեռնի։

Ե. Բարի խղճի ուրախութիւնն և մարդկանց գովութիւնն ալ առաքինի գործոց արդեանցն համեմատ չեն։ Վասն զի բարի խղճի վկայութեան ցնծութիւնն ալ ճշմարտս բնութենէն ու պարագայներէն կը կախուի. այնպէս որ արդիւնաւոր գործոց ճիշդ համեմատ չէ։ Նաև շատ դէպքեր կան որ առաքինութեան գործադրութիւնն շատ նեղութեամբ և սիրտ

մաշուքով կըլլայ, որ ախտաւոր մարդկանց անծանօթ են. օրինակի համար կան խղճահար անձինք որ բոլոր կեանքերնին անտանելի բարոյական տանջանքով կանցնեն: Բայց ասկէ ինչ ըսելու է անոնց համար՝ որ բռնաւորութեան և անիշխանութեան զոհ ըլլալով կը մեռնին՝ մինակ բարերար մարդիկ սեպուելնուն համար. կամ անոնց համար որ մարդկային արդարութեան սխալմանցն զոհ կըլլան կամ ի բնէ հաւատոց համար կընահատակուին: Խղճի վկայութիւնն կրնայ անոնց համար հաւատցմանք սեպուիլ՝ որ մեռան: Դարձեալ ան ալ պէտք չէ մոռնալ՝ որ բարի մարդկանց խղճի հանգստութիւնն աւելի չարչրկած կապեալ է ոչխիշ կենաց ակնկալութեան հետ. արդարն անոր համար՝ի խաղաղութեան կարիւ ու կը մեռնի՝ որովհետև ակնկալութեամբ կարիւ ու կը մեռնի:

— Իսկ մարդկանց համարումն և առաքինի գործոց ուրիշ հատուցմանցն գալով՝ պիտենք որ շատ անգամ մարդուս ամէնէն մաքուր գիտաւորութիւններն ալ ուրիշներն կը ծռմռին և կաբեն. և յաճախ առաքինութեան և անձնանուիրութեան օրինակ սեպուած մարդն՝ իր բարերարութիւններէն ուրիշ բան չքաշելով՝ բայց եթէ աւելութիւն, չարախօսութիւն, արհամարհանք, վիշտ և մահ ևս: Պատմութեանց պիտքն բանալ բաւական է՝ բիւրաւոր օրինակներ գտնելու համար. մանաւանդ

Փրանկից բառագրութիւնն առեալ է.

Սա բառագիր նորագրութիւնս կը պատճառի Փրանկից տալով անուանել Հայրապետական տեղեակս[1], որ շատ ուժով կը յորդոր[ի] զայրագնութեան ատելութիւն և անհրաժեշտութիւն. «Ատելութիւն և անուն ոչ այնչափ ատելութիւն գործոց վրայ է՝ որչափ կամաց ներգործութեան վրայ, որ որոշումն կը հանի՝ ի բարին կամ՝ ի չարն. Գործոց բարեգործութիւնն հաստատուած է այն խորհրդին վրայ՝ որ գանիկայ կը շնչէ, գիտութիւնն՝ որ գանի կը կենդանացնէ, և վախճանին գոր կը գիտէ. բայց այս վախճանս, գիտութիւնս և խորհուրդն են՝ որ շատ անգամ անիմաստանալի են. որով կըլլայ որ աշխարհս և նոյն իսկ աստուածն մեզի՝ որ ատելութիւն վրայ մեզմէ կը գանեն, հաստատութիւնք և գոյութիւն կամացն այնպիսի գործոց՝ որ ատելագործ են և երբեմն հետևանք իսկ յանցագործ. և քանզհանգամանքն կը ատելագործեն և կը գատապարտեն Աստուծոյ առջև գրեթ, ատելութիւն և

գիտութեան հանդարտ գործերն. անդր հանգար որ այն գործոց ատելագործութիւնն երևոյթ կամացն անհաճոյ է, և երևոյթ բերբ

1 Փորձելս եղելութեան Աստուածոյ. Անկարելի[ն] կամ՝ պատճառիլ ընդդէմ ի յեռն բանին լ. առաջ գրոյն մէջ։

տեսանք թեան տալմն պատկառանք : Ա.պա
ի՞նչպէս բառնալոյն կրնանք տեսել այսպիսի
Հաստատութեան՝ որ պրկեր միշտ տեսել
կը վճռէ. տեսնեմ տէր է որ տեսիչ Հաս-
տատութեան մը էրեսյ »

Ա.Նատրոնկոյս այս ցուցած անհանգիս-
տութեանները մարդուս նկրկոյ վիճակին
համար հարկաւոր են. վասն զի եթէ ամէն
բան այնպէս կարգադրած ըլլար որ տեսնք
և տատրճնութեանք անհրաժեշտ էրնոց հա-
մեմատական պատճառ մը վարդին տա-
նեն, բարեգործութեանն կերպով մը հա-
մեմատութեան կրկասել, և մարդ-
կային պարզ կրկասեցնել են այն բարեգո-
ծութեանց որ ամենուն վրայ կը տարածուին
է : Ամենքն այս վիճակս անհարգութեան
մը ըլլալով՝ պէտք է որ Ա.ստուծոյ անհան-
ման արդարութեանն գանգատ ունենք :
Ասոնցմով հարցուածոյ մարդ՝ ամեն-
տեղ որ երթայ վրայ ճշդ արդարու-
թեան օրէնքն չատհատեր բարոյ և չարի
վարձատրութեան մէջ, և հետևապէս Ա.ս-
տուծոյ արդարութեանն արարքն է տես-
նելով ուրիշ կեանք մը որ այս կեանքէ
անհարգութեանները ուղղութեն : Ա.պա ու-
րեմն ինչպէս որ մեր գոյացութեանք՝ նոյն
խոկ այս կեանքս մէջ կոչ բարոյականութեան
տատրճնութեան մը, զոյգ բանականութեան և կա-
տարեալ Հաստատութեան բան մեզ ար-
դարացնել մեզնէ հանգիստ կեանք վար-
*ձոյ և պատճառ մէջ կը գտնենք, ուր որ

մարդուս վախճանն որոշակի և անշարժա-
պէս ամուր հաստատուած ։

ՀԱՏՈՒԱԾ Դ

Վախճան մարդոյ .

Որովհետև ամէն արարած իմացական և իմաստուն էակէ մի ընդունած են իրենց գոյութիւնն կարգաւոր դրութեամբ մի , ապա պէտք է որ վերջ մի ունենան հասնելու և վախճան մի կատարելու ։ Էակ մի կատարեալ չէ , կամ իր վախճանին , որ է ըսել իր բնութեան կատարելութեանն հասած չըլլար՝ բայց եթէ իր կարողութիւններն գործածելով և զարգացնելով . իսկ արդ մարդուս մէջն կայ անսահման կարողութիւն մի ճանչնալու և կարողութիւն մի սիրելու ։ Հնարաւոր բարիք մի չկրնար գտնել իրեն կարողութեանց անբաւութիւնն , և միայն գերագանց ձշմարտութիւնն և գերագոյն բարութիւնն որ է ըսել Աստուած, կրնայ յագեցնել մեր իղձն ։ Ապա ուրեմն մեր վախճանն Աստուած ժառանգելն է ։ Եւ սակայն յայտնի է որ այս կեանքս մէջ Աստուած օրինակաւ միայն և իբր ՚ի հայելոջ արարածոց կը տեսանենք , առաքելոյն բառին պէս իբրև ընդ հայելի օրինակաւ [1]. որով արտերնիս ոչ երբէք լրումն

1 Ա. Կորնթ. ԺԳ. 12 ։

գոհ կլլայ : Որպէս Աւգոստինոս ալ իր խոհգնաբեխնիներն Աստուծոյ առջև խոստովանած ժամանակ կը գոչէ [1]. « Արարեր զմեզ վասն քոյ , և անհանգիստ է սիրտ մեր՝ մինչև հանգիցէ՛ ի քեզ » : Փորձառ ալ յայտնի է որ աշխարհիս մէջ բան մի չկայ որ մեր մտաց և սրտին դատարկութիւնն լեցնէ . և հետևապէս մեր հոգւոյն սիրոյ նկատմամբ ամենայն ինչ ընդունայնութիւն է , այս մտքով որ ամենայն ինչ անբաւական է մեր կարողութեանց համար :

Աշխարհքիս մէջ ինչ միմակն ալ հասնինք՝ չկրնար զմեզ լիովին գոհացնել , և միշտ բան մի կը մնայ փափաքելու մեր վախճանին հասնելու համար . ապա ուրեմն մեր կեանքն ակնկալութիւն մի է :

Ճանչել զԱստուած սիրել զնա և ծառայել այսինքն ուզել առ Աստուած մեր խնամակալութիւնն զգացողութիւնն և կամաց զործակցութիւնն՝ այս է մեր պրիծ կեանց վախճանն . ծառայելն զԱստուած կամ զբռնաբռնել և գձչմարտութիւնն գերազոյն՝ այս է մեր յետին վերջն և պրշակի վախճանն , ուրանի բան կոչուած ենք ուրիշ կեանց մի մէջ : կամ թէ բանիք ճշմարիտ վախճան մարդոյ է զործել զառաքինութիւն յերկրի և ընդունել զհատուցումն՛ ի յերկինս . այս հատուցմանքն երբեն չպակսիր՝ երբ ինքն ալ յառաջինութենէ չպակսի : Եւ որովհետև ներ-

1 Խոստովանութիւնք գիրք Ա· գլ· Ա·

կայ կենաց մէջ չենք գտներ որոշակի կատարեալ վախճանի մի կնիքն, ապա զերազոյն խնդատութեանն էակից կատարելութիւններէն պէտք է հետևցնել՝ թէ մենք ուրիշ վիճակի մի սահմանեալ ենք՝ ուր որ կարենանք հասնիլ մեր վախճանին. որ ըսել է թէ մեր հոգին անմահ է, ճշմարտութիւն մի որուն ապացոյցներն հիմա պիտի դնենք:

Մեր հոգւոյն այս վախճանն կը հաստատուի նաև՝ի վերայ կարևորութեան արդար վաստերացման քարոզականի, որ կըսէ արդեանց և ապարդեանց համեմատ վարձուց և պատժոց բաշխմանէն, ինչպէս որ վերն ցցուցինք:

Ապացոյցք անմահութեան հոգւոյ.

Առաջարկութիւն Ա. Մարմնոյ եղծմամբն՝ հոգին չոչնչանար:

Ա. Այս առաջարկութիւնս կը ցուցուի այն ամէն պատճառաբանութեամբք՝ որով ցցուցինք թէ հոգին մարմնէն զատ էակ մի է (տես՝ի Հոգեխոստութեան). վասն զի եթէ մարմնոյ եղծանելի կազմութենէն որչէ՝ ապա պատճառ չկայ որ մարմնոյ ապականութեամբն հարկաւ ինքն ալ կորսուի: Ա-նոր համար որոնք որ մահուամբ հոգին ալ կեղծանի ըսին՝ կազմութեան կերպաւորութիւն մի կը սեպէին զանիկայ:

ե. Հոգին ոչ կորնչի հարկաւ ընդ մարմնոյ՝ թէ որ կրնանք անոր գոյութիւնն առանց մարմնոյ ըմբռնել։ Այլ կրնանք հոգւոյն առանց մարմնոյ ըլլալն ըմբռնել. վասն զի հոգւոյն մէջ չատ մի կարողութիւններ կան որ՝ի բնէ հարկաւոր կապակցութիւն մի չունին մարմնոյ հետ. ինչպէս են կամք, կարողութիւնք համեմատելոյ, տրամաբանելոյ, խորհելոյ և բարձրանալոյ՝ի խորհրդածութիւն գերագոյն ճշմարտութեանց։ Ընդհակառակն փորձուած է որ մարդուս բնական կենաց չափազանց զօրութիւնն՝ յաճախ արգելք մի է այս կարողութեանց գործածութեանն։ Տիւկալ Սթիւար կըսէ [1]. «Շատ պարագայք խորհել կուտան մեզ՝ որ արդի վիճակնուս մէջ հոգւոյ և մարմնոյ միութիւնն՝ ոչ միայն մեր կարողութեանց զարգացմանն էական չէ, այլ և ընդհակառակն մեր գիտութեանց առաջին աղբերաց կազմութեան և կառավարութեան վրայօք աւելի պայծառ տեսութիւն մի ունենալու։ Եւ յիրաւի երբ աչքերնուս առջև կը բերենք մտաց գործողութեանց և նիւթոյ յատկութեանց մէջ եղած զանազանութիւնն՝ աւելի դժուարին է ըմբռնելն՝ որ այս երկու էութիւնքս տեսածնուս պէս ներքսապէս ալ իրարու հետ միացած ըլլան, քան թէ առ-

1 Տրագիր բարոյական իմաստ. Թ. 328։

չինին համար ենթադրել թէ երկրորդէն պատուած ըլլալով՝ կրնայ ունենալ անձին գիտակցութիւն և իրաց ծանօթութիւն [1] »։

Պատասխանի Բ. Հոգի մարդոյ՝ մարմնոյ մեռնելէն ետև ալ կեայ ։

Ա. ՈՒՆԱՉԻՆ ԱՊԱՑՈՅՑ. — *ի կատարելոցեանց Պատուոյ.*

Պատուած իր ստորոգելեաց հետ՝ի հակասութեան չկրնար ըլլալ. իսկ արդ եթէ հոգին մարմնէն ետքն ալ ոչ կեայր՝ Պատուած իր չատ ստորոգելեաց հետ՝ի հակասութեան պիտի ըլլար. որովհետև պիտի է ցուցնել թէ յայնժամ չէր ըլլար ոչ արդար, ոչ բարի և ոչ իմաստուն ։

Ա. Եթէ ուրիշ կեանք մի չըլլար՝ Պատուած արդար չէր ըլլար. վասն զի արդարութիւնն զամէնքն իրենց արդեանց և իրենց գործոց համեմատ վարձատրելն է ։ Արդ այս արդար հատուցմունքն ներկայ կենացս մէջ չկայ. այլ շատ անգամ ախտաւոր մարդիկ փառօք և մեծութեամբ

1 Այս իմաստիս հիմն կը գտնենք Կիկերոնի Տուսկուլեանց մէջ. « Այժմ երբև ընդ ծակտիս ինչ մարմնոյ տեսանէ հոգին, զի երկրայնին և թանձր մարմինք ընդ մէջ անկեալ կան ։ Իսկ յորժամ բաց հոգւոյ ոչ ինչ այլ լինիցի՝ ոչ ինչ արգել՝ի մէջ անկանիցի, վասն որոյ տեսցէ որ ինչ էն և որպիսի ». Գիրք Ա. գլ. ի ։

ճոխացեալ՝ հեշտութեանց մէջ կը յղփա-
նան . ընդհակառակն առաքինութ
լից կեանք մի ունին պղքատութեան , ա-
նարգանաց և ցաւոց մէջ . զարձեալ յա-
ճախ գովելի գործք չարաց նախանձն գըր-
գռելով՝ բարերար մարդկանց վրայ հա-
լածանք և կործանումն կը հասցընեն . և
պախարակելի գործք վարպետութեամբ
ծածկուելով՝ չարերու համար յաջողու-
թեանց պղբիւր կըլլան . այնպէս որ եթէ
ուրիշ կեանք չըլլար՝ շատ անգամ արդա-
րադատ Աստուծոյ աչքին առջին առաքի-
նութիւնն ալիտի պատժուեր և ախտ վար-
ձատրուեր . որ հակառական և անընդու-
նելի է : Ապա ՚ի հարկէ պէտք է ուրիշ
կեանք մի ըլլայ ուր արդարութիւնն իւր ի-
րաւունքն ունենայ :

ե . Եթէ ուրիշ կեանք չըլլար՝ Աստուած
րարի չէր ըլլար . բարի տէր չպատիւր այն
մարդն որ իր հաւատարիմ ծառայներն ան-
վարձ և առանց միտաւոյ վոխարինու-
թեան կը թողու . նաև զանոնք ևս որ իր
ծառայութեան նախանձաւորութեամբ՝ ա-
մէն խիստ նեղութիւն յանձն առեր են :
Արդ այսպէս կըլլար Աստուած ալ՝ եթէ
հանդերձեալ կեանք չըլլար :

զ . Եթէ ուրիշ կեանք չըլլար՝ Աստուած
իմաստուն էակ չէր ըլլար . վասն զի իմաս-
տութիւնն այն է որ ամէն բան կարգով ըլ-
լայ . այսպէս կարգն կը պահանջէ որ տը-
րուած միջոցներու և հասնելու վախճա-

նին մէջ համեմատութեան մի ըլլայ : Այլ այս միջոցներուս և. դասերուն հետևողքին ներկայ կենացս մէջ չկայ մարդկային հոգւոյ կարողութեանց և բնական տրամադրութեանցն մէջ. ինչպէս որ եւթն ալիտի տեսանենք գ . ապացոյցին մէջ :

Պէտք է այս ալ տեսնենք որ եթէ ուրիշ կեանք չըլլար՝ Աստուած նկատեալ իբրև օրենսդիր՝ իր իմաստութենեն պակսած կլլար . վասն զի օրէնսդրութիւն մի հաստատած կըլլար զուրկ ՚ի կարևոր հատուածներե . ինչպէս որ ալիտի բացատրենք դ . ապացուցին մէջ :

ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՑՈՅՑ . — *Ի միտս հաշտեցուցիչ ազգաց .*

Ամենայն ազգաց պատմութիւններէ վերկայեալ ճշմարտութիւն մի է թէ ՚ի հնոց և թէ յարդեաց՝ եթէ բովանդակ ազգ մարդկան միշտ հաւատացած է հանդերձեալ կենաց գոյութեան :

Նախ հարցնենք հին տարեգիրներն . ի բացնէ կը տեսանենք որ գրեթէ ամէն տեղ անոխակալութիւնն այլոյլեր է վարդապետութեան պարզութիւնն , և ամէն տեղ քերթողաց երևակայութիւնն և ժողովրդոց հետաքրքրութիւնն զարմանալի տառապելներ հնարեր է . սակայն դիցապաշտութեան առասպելաց մէջ ալ յայտնա-

պէս բուլանդական կը դանենք մեր հոգւոյն անմահութեան և ուրիշ կենաց մէջ վարձուց և պատժոց ճշմարտութիւնները։ Յայտնապէս աս բանս կենթադրէին Եւիսեան դաշտքն և Տարտարոսք, հոգեփոխութեան հաւատքն, աստուածարարութիւնները, հմայութիւնները, հաչտարար զոհերն և երկիւղն 'ի մեռելոց։ Ա.յն մասնաւորապիրները որ այս նիւթոյս վրայ խօսեցան շատ դրական վկայութիւններ կը բերեն հին ազգաց դասանութեանն վրայ, ինչպէս էին Եգիպտացիք, Հնդիկք, Հայք, Պարսիկք, Յոյնք, Հռովմայեցիք, Կելտք, Գերմանացիք և այլն. բաւական ըլլայ մեր ազգային պատմութենէն յիշել Գեղեցիկն Ա.րայի անցքն և Ա.րտաւազդայ առասպելն [1]. և Կելտաց համար Յուլիոս Կեսարոս յիշածն՝ որ պատերազմի երթալու առաջնին իրենց դրուխդներն գիրենք կը քաջալերէին անմահութեան ակնկալութեամբ՝ մահն արհամարհելու [2]։ Ա.յս հաւատոց միաձայնութիւնն ըսել կուտար Կիկերոնի [3]. « Ի միաձայնութենէ ամենայն ազգաց հաստատեալ եմք երեւի հոգիք կան և. մնան անեղծանելիք »։ Սննեկայ ալ նոյնպէս կը ճանչնայ այս միաձայն հաւանութեան զօրութիւնն և զօրութիւնն [4]։

1 Խորենացի գիրք Ա. Ի. — Գիրք Բ. ԿԱ։
2 Յալ. Գալլիական պատերազմին գիրք Զ. 14։
3 Տուսկուլ Ա. 16։
4 Թուզմ. ՃԻ։

Նոր ազգաց համար բաւական է յիշել ինչ որ այս նիւթոյս վրայ կը խօսին բազմաթիւ ճանապարհորդաց գրուածքները՝ որոնք աշխարհիս ամէն կողմն քալեցին, և ինչ որ աշխարհագրական գրոց մէջ իւրաքանչիւր ազգաց կրօնքին վրայ գրուած է. որով մարդ կը համոզուի թէ Աստուծոյ գոյութեան ընդհանուր համաձայնութիւն ուր որ կայ՝ հոն կը գտնուի նաև հանդերձեալ կենաց դաւանութիւնն: Ոմպէրթըն անգլիացի հռչակաւոր պատմիչն կըսէ [1]. «Այս դաւանութիւնս համատեալ կը գտնենք Ամերիկայի մէկ ծայրէն ինչուան մէկալն, տեղ տեղ մութ և տեղ տեղ աւելի բացայայտ և կատարեալ. բայց ոչ տեղ մի անձանօթ»: Այսօրուան օրս յայտնի է որ Ովկիանիայի պէս նոր աշխարհքի մի մէջ ուր որ այնչափ իրարու անձանօթ ժողովուրդներ կան, սակայն ճանապարհորդն կը տեսնէ որ ուրիշ կենաց մի հաւատքին գալով՝ ամէնքն կը միաբանին: Նոյն իսկ քանի մի սովորութիւններ զօրաւոր ապացոյցներ են ժողովրդոց հանդերձեալ կենաց վրայ ունեցած հաւատքին. ինչպէս Ամերիկայի և Ովկիանիայի մէջ ընդհանուր տարածուած սովորութիւնն՝ որ հին աշխարհքին չատ կողմերն ալ կար՝ մեռելոց հետ թաղելայն նիւթերն՝ որ իրենք երկրիս վրայ գործածեր

1 Պատմութիւն Ամերիկոյ գլուք դ:

էին, կամ անոնց նոր կենացն համար պա-
շարներ դնելն, մեծամեծ մարդկանց խա-
րուկին վրայ մարթել կամ էրել այն մար-
գիկն՝ որ անոնց ծառայութեան մէջն էին,
և այլն:

Ա.պա ուրեմն ստոյգ է որ հոգւոյ անմա-
հութեան վարդապետութիւնն ամէն ժամա-
նակ ամէն տեղ և ամէն ազգ ընդհանրա-
պէս ընդունած են: Եւ որովհետև արդէն
շատ անգամ և մանաւանդ Ա.ստուծոյ գո-
յութեան բարոյական ապացոյցներուն մէջ
բացատրած ենք՝ թէ ինչպէս ազգաց միա-
ձայն հաւանութիւնն ձայն է բնութեան և
անսխալ նշան ճշմարտութեան, ապա ու-
րեմն կրնանք հետևցնել թէ մեր հոգին
անմահ է:

ԵՐՐՈՐԴ ԱՊԱՑՈՅՑ. — *Ի բնութենէ համեմա-
տութեան և անբռնաշխատութեան ազգի կենաց
ընդ կատարողութեանց և ընդ բնական տրամա-
դրութեանց հոգւոյ մարդոյն.*

*Համագոյից ամենայն մտածանցն մէջ երև-
ցած սքանչելի կարգն՝ յայտնապէս կը ցու-
ցընէ մեզի դերադանցապէս իմացական և
իմաստուն պատճառի մի՛ներգործութիւնն:
Ա.յս կարգս գլխաւորապէս կերևնայ այն
ճիշդ համեմատութենէն զոր կը տեսանենք
միջոցներու և վախճաններու մէջ, և ա-
րարածոց կարողութեանց և իրենց վեր-*

ջերուն մէջ. իսկ արդ կը տեսանենք որ իմացական և իմաստուն պատճառի մի աչքն գործոց այս հարկաւոր կնիքն՝ արդի կենաց մէջ մարդուս հոգւոյն նկատմամբ չերևնար։

Մարդէս դուրս եղած ամէն էակից՝ և նոյն իսկ՝ մարդուս կազմութեան հետ նմանութիւնն ունեցող արարածոց բնական կարողութիւններն և տրամադրութիւններն՝ արդի կենացս հետ համեմատ են։ Այսպէս անասնոց մէջ չանք մի չենք տեսներ, ոչ յառաջադիմութեան, ոչ կարողութեանց անսահման զարգացման, ոչ բարոյական և կրօնական գաղափարք, և ոչ փոքր նշան մի ներկայ աշխարհքէս դուրս բարձր վիճակի մի ծանօթութիւն ունենալնուն։ Ընդհակառակն ներկայ կեանքս յայտնապէս անհամեմատ է մարդուս բնութեան պայմաններուն և կարողութեանցն նայելով։

Ա. Իմացական կարողութիւնք. — Մարդս անսահման կատարելութեան մի ընդունակ է. իր իմացականութեամբն՝ աներջ մտածութիւն մի ունի՝ որուն միշտ ետեւէն կը վազէ՝ առանց երբէք ա՛ս աշխարհքիս վրայ անոր հասնել կարենալու։ Եւ չկրնար ըսուիլ որ մարդկային ազգն անդադար յառաջադիմելով վերջապէս ա՛ս աշխարհիս մէջ իր բնութեան վախճանին պիտի հասնի. վասն զի նախ մեր խօսքն անձնական և անհատներու վրայ ալ ըլլա-

լոմ վերացեալ էակին կամ տեսակին յառաջադիմութիւնն անհատին օգուտ մի չունի: Ամէն մարդ առանձին էակ մի է, որ իր անհատական էութիւնն ունի ուրիշներէն զատ, և պէտք է որ իրեն յատուկ կարողութեանց համեմատ՝ որոշակի վախճան մի ունենայ այս իմաստութեամբ կարգաւորած աշխարհիս մէջ. արդ յայտնի է որ ժամանակի որոշեալ կէտի մի մէջ ապրող մարդն՝ այս անձնական վախճանին չհասնիր՝ ուրիշ մարդկանց ապագայ ժամանակաց մէջ երած յառաջադիմութեամբն:

Սակայն մարդկային ազգն ըլլալն մէկէն ալ առնելով ինչ պիտի ըլլայ անոր երած յառաջադիմութիւնն իր հոգեղէն բնութեամբն: Գիտութիւններն որչափ ալ ճոխացած տեսնենք՝ ուրիշ բան չեն կարող ընել՝ բայց եթէ մեր խաւարին թանձրութիւնն քիչ մի փարատել. և ամէնէն զեղուկ գիտութիւնն ալ սակաւ մի կը լուսաւորեն ուժեզ՝ դարձեալ մեծագոյն մասամբ ուժեզ մթութեան մէջ թողլով: Ընդհանրապէս իրն կը հասատատենք, բայց չենք կրնար բացատրութիւնն տալ, և իրաց պատճառն՝ որ էական և ամէնէն բարձրն է, մեզմէ անծանօթ կը մնայ: Օրինակ միայն տալու համար՝ ելեկտրութեան հետևյալ արգասիքն կը ճանչնանք, բայց մեզի համար գաղտնիք մի է անհասանելի՝ ուժեզ պարմայնող զօրութեան էութիւնն. և չենք գիտեր թէ ինչպիսի բան է այս անըմբռ-

նելի ներդործիչն, որ կերպով մի չենք կրնար լուծել։ Ա.յս կենաց մէջ որչափ ալ առաջ երթանք՝ սակայն դեռ անսահմանն ապագայ մի կայ՝ որ մարդուս միտքն ալ ապի չըմբռնէ, բայց մի և նոյն ատեն պահարն ու փափաքն ունինք անոնց գոյութեանն թափանցելու, և յոյս ունինք որ մենք ուրիշ տեսակ էութեան մի փոխուելով՝ այն փափաքնիս պիտի ճշմարտի. և ասիկայ մեր հանդերձեալ վախճանին յայտնի նշան մի է։ Տիեզերաց պէս գեղագոյն իմաստականութեան գործոյն մէջ չկրնար զուր տեղն ստեղծուած ըլլալ այնպիսի էակ մի որ այսչափ գերազանց հանգամանք ունենայ և ինչուան անհունի փափարն բարձրացող միտք մի, որուն և աշխարհս բովանդակ նեղ կու գայ. ապա պէտք է որ ըլլայ ուրիշ աշխարհ մի ուր որ ներդաշնակութիւն մի հաստատուի միջոցաց և վախճանի մէջ զոր հոս տեղս չենք տեսներ։

Բ. Բարոյական կարողութիւնք. — Ա.չխարհիս վրայ միայն մարդս է բարոյական էակ, և ինքն միայն ունի ճանաչութեան և ազատութեան ատիճանն, առանց որոյ գործոց պարտաւորութիւն չկրնար ըլլալ։ Անոնք կը պատժենք՝ զանիկայ ուղղելու և վարժեցնելու համար, բայց ոչ եթէ իբրև յանցաւոր կը պատուհասենք, և չենք կրնար անոր տրվեցնել պարտուց և բարոյական բարուց պատճառն՝ որ բոլորովին օ-

տար են իրմէ ։ Բայց մարդս ունի զիտող բարոյական որ իրեն կը թելադրէ ինչ որ ընելի է և խորշելի . դարճեալ ունի զազատութիւն բարոյական որ իրեն կարողութիւն կուտայ իր խղճին թելադրածն ընելու կամ չընելու ։ Արդ եթէ աշխարհիս վրայ եղածներուն մտադրութիւն ընենք՝ չուտով կըմբռնենք որ մարդկային գործք ճիշդ արդարութեան պահանջածէն շատ հեռու են։ Բացայայտ բան մի է՝ որ գործոց արժանաւորած վարձքն ու պատիժն արդարապէս բաշխուած չեն երկրիս վրայ (տես Ա. ապացուցին մէջ) ։ Ապա պէտք է ուրիշ կեանք մի ըլլայ՝ ուր որ ճշդրտի այն կարգն՝ որ կատարեալ արարչի մի չինածն կը պահանջէ ։

Ասիկայ ակներև ճշմարտութիւն մի է՝ զոր գերագանց հանճարներն ճանչցան . Ռուսսոյ կըսէ [1]. « Եթէ չարագործաց յաջողութենէն և արդարոց թշուառութենէն զատ ուրիշ ապացոյց չունենայի հոգւոյն նիւթականութեան վրայ , այս բաւական էր տարակոյսս վերցնելու։ Տիեզերաց ներդաշնակութեան մէջ այս չարաճայնութիւնն՝ ինձի յորդոր կըլլար այս բանիս բացատրութիւն մի գտնելու ու կըսէի . կեանց հետ ամէն բան չվերջանար մեզի համար , այլ մահուան տակն ամէն բան կարգի կը մտնէ » ։ Գ. Քիւվիէ ալ որ բնագէտ

1 Եմիլիա գիրք Դ ։

ՄԷՋ ամէնէն խորախորհուրդն է՝ նոյն լե-
ռան կը բանեցնէ՝ ըսելով[1]. « Երբ մարդ
առաքինութեան թշուառութիւնն և յան-
ցանաց յաջողութիւնն կը տեսանէ՝ շատ ա-
ղէկ կը գգայ ապագայ կարգի մի կարևո-
րութիւնն. վասն զի կը տեսանէ որ Աստուծոյ
քնութեան տիեզերաց մէկ մասն ալ այս-
պիսի անկարգութեան մէջ ձգած չէ »։

Գ. Մարդկային հոգւոյ բնական որոշ-
պրոշիւնները. — Բնական, ընդհանուր և
անյաղթելի զգացում մի՝ պէտք է որ իր
գոհութիւնն ունենայ՝ իմաստուն էակի
մի դրած կարգին մէջ. ապա թէ ոչ իր
գործոց մէջ ներդաշնակութիւն չըլլալէն
զատ՝ նաև հակասութիւն ալ կըլլար. ո-
րովհետև ատ յօժարութիւններս՝ որ իրենց
հանրական և անյաղթելի ըլլալնուն համար՝
պէտք է որ բնութեան տիրոջմէն առաջե-
կած ըլլան, իրենց վախճանին չէին հաս-
ներ, և անոր դրած կարգին հետևութ-
թեամբն՝ իրենց առարկայէն կը զրկուէին։
Աստ եթէ ուրիշ կեանք մի չըլլար՝ մարդուս
ունեցած շատ զգացմունքն նոյն բողոքն պի-
տի ընէին Աստուծոյ դէմ։ ինչպէս.

Ա. Կեանքի և գոյութեան հանար ոչնչացած
բնական յարմարութիւս, և անյաղթելի վախն
ոչնչանալոյ. Գոյութեան յարմարութիւն ըս-
ուած չենք հասկնար մարմնաւոր տեսակ գո-
յութեան մի համ արդի կեանքիս՝

1 Բնագատութեան առաքելոյ։

զոր գիտեմք որ պիտի վերջանայ . այլ յաւ-
րում մի առ գոյութիւն բացարձակապէս ,
առ գոյութիւն անվախճան : Այս զգայ-
ման բնական կերպով կը հետևի ուրիշ մի՝
որ է երկիւղ բնաւորեր և խորհրդածեալ
զոր ամէն մարդ կըզգայ յոչնչանալոյ :
Արդ այս երկու հանրական և անյաղթելի
զգայմունքս մեզի բնութենակից է , և կա-
տարեալ էակի մի զրած կարգին իսկակից՝
ուսկից որ առեր եմք զգոյութիւն . ապա
չկրնար զմեզ խաբել :

Բ . Փափաք երջանկոջեան որ ամեն մար-
դոջ բնական է . Յայտնի է որ մարդս՝ի բը-
նութենէ կամ՝ի տեառնէ բնութեան ըն-
դունած է յօժարութիւն մի որով միշտ կա-
տարեալ և անխոտոր երջանկոջեան կըցան-
կայ . յայտնի է դարձեալ որ այս իղձս՝ի
զուր զրուած չկրնար ըլլալ մարդուս սիրտն,
վասն զի ամէն բանի մէջ իւր անբաւ կա-
տարելութիւնն վայլող էակի մի՝ անարժան
բան կըլլար իր արարածներն այսպէս չար-
չարելն՝ ամէնուն հոգւոյն մէջ դնելով այն-
պիսի իղձ մի՝ որ ոչ երբէք պիտի կատա-
րուի , թէ և մեր կոչմանէ արդելք մի չը-
դնենք : Արդ եթէ ուրիշ կեանք մի չըլլար՝
Աստուած՝ի զուր զրած պիտի ըլլար մեր
սիրտն այս անմեռ փափաքն երջանկու-
թեան , որվհետև ներկայ կենացս մէջ
բան մի չկայ որ կատարելապէս գոհ ընէ
մեր հոգւոյն կարողութիւններն , և կամ
բանի իր մի չկայ որ մեզի աներեի երջանկու-
թիւն տայ :

Ոչ արտաքին բարիքն, այսինքն փառք և հարստութիւնք: ա. Ոչ հարստութիւնք վասն զի ժուռարութեամբ կը ստանանք, անհանգստութեամբ կը վայելենք և ցաւով կը կորանցնենք. բայց ասկէ իղձերն կը չատցնեն, և չարերն ալ իբրև արդարոց հաւասար զանոնք կը վայելեն: բ. Ոչ փառք. բաղդն այնչափ անկայուն է՝ որ բանի մի մէջ հաստատութիւն չունի. հաւատարց նախանձելի կընէ զմեզ, ատրնագունից ատելի և ամենուն անտանելի, և հարստութեանց պէս անոնք ալ իղձերնիս կը չատցնեն, և մինակ արդարներն չեն զանոնք ժառանգողներն: — Եւ ոչ բարիք մարմնոյ այսինքն առողջութիւն և հեշտութիւնք: ա. Առողջութիւնն դիւրակորոյս է և անհաստատ. և ինքն միայն մեր հոգւոյն ամէն պիտոյքն չկրնար, և կրից յարձակմունքէն չկրնար պաշտպանել, և ոչ մարդկային ամէն թշուառութեանցն դէմն առնուլ: բ. Իսկ հեշտութեանց հետևանքն են զզուանք, անձկութիւն, ցաւ և խայթ խղճի, և մարդուս ամէն ուժն կարելէն զատ՝ չատ հիւանդութեանց և ախտից ալ պատճառ: — Եւ ոչ դարձեալ հոգւոյ բարիք, որպիսի են դիտութիւն և առաքինութիւն: ա. Մարդկային դիտութիւններն ստանալու համար անխոնջ աշխատութիւն պէտք է. ասկէց զատ այնչափ սահմանափակ է և մթութեամբ ու մոլորութեամբ լեցուն՝ որ չկրնար մեր բը-

նութեան մէջ եղած ուսանելու փափաքն լիովին լեցնել : Բ . Աստիճանութիւնն իրաւ երջանկութեան տանելու ճամբայն է, սակայն ինքն իսկ պարզ ու անխառն երջանկութիւնն չէ . որովհետեւ մեր բնութեան անկարդ յօժարութեանց դէմ պատերազմելով կը ստացուի ու կը պահուի . մինակ չկրնար ուրացուիլ՝ որ ամէնէն մեծ երջանկութիւնն կրնայ չնորհել մեզ՝ որչափ որ երկրիս վրայ բնութիւննիս կը տանի : — Աս ալ ըսենք որ այս համրած օգտակարութիւններս ալ չատ մի բնական և բարոյական թշուառութեանց նեղքդրանք կեալ են , և մահուընէ զմեզ չեն կրնար ազատել . ուստի ոչ երբէք ճշմարտապէս երջանիկ վիճակ մի կրնան տալ մարդուս :

Արդ եթէ ուրիշ կեանք մի չըլլար՝ կըրնայինք մեր Արարիչն մեղադրել որ մեր բնութեան մէջ այսչափ իղձեր դրեր է և զանոնք չկատարելով խաբեր է զմեզ :

Գ . Քանի մի ուսանելու զգացմունքներ . Գերեզմանաց չնծայուած տեսակ մի յարգութեան և ուրոյց յիշատակն . Եթէ արարիչ բնութեանս անմահութեան հաւատքն դըրած չըլլար մեր սրտին մէջ ուրոյց յիշատակն անտանելի բան պիտի ըլլար մեզի, և գերեզմանաց տեսութիւնն մինակ վախ ու սարսափ պիտի բերէր : — Անձնասիրութեան ուսանելիքներ և. գիտուրական քաջութիւն . Եթէ հոգինիս ալ մարմնոյս հետ ապականէր՝ այս զգացմունքս բան մի չէին նշանա-

կեր, քայց անխնամելի խնեղմտութիւն մի։
— Արդիւնաբերութեան պատիւ բերող անձանց յիշատակն զուրս ամենայն ազգէ կը յարգեն. Ա-մէն աշխատիլ անյոգնելի ընդդիմամտութիւն մի ունի հաւատալու՝ որ այս տեսակ անձինք մնանաւանդ՝ բոլորովին ոչնչացած ըլլան, և թէ այն յարգութիւնն զոր կընծայենք՝ մինակ անարդ փոշւոյ համար ըլլայ։

Ա.յս ամէն խորհրդածութիւններէս կերեւայ որ ներկայ կենաց և հոգւոյ կարողութեանցն և բնական որամադրութեանցն մէջ ամենևին համեմատութիւն և ներդաշնակութիւն մի չկայ։ Արդ եթէ հանդերձեալ կեանք մի չըլլար՝ պէտք էր ըսել՝ որ արարիչ բնութեան պակսեր է յիմարութեան, ճիշդ նկատմամբ այն էակին՝ որ ամէնէն գերազանցն է և այլոց կեդրոնն ու վախճանն կը սեպուի. որ արտառոց և ուղիղ մտքի հակառակ դրութիւն մի է։

Իմմանուէլ Քանթ վերջի դարուն անուանի իմաստասէրն՝ այսպէս կը համառօտէ այս ապացոյցս. «Ինչպէս որ խելքն կը ցուցընէ և երբև սկզբունք կընդունի՝ թէ որ և իցէ կենդանի արարածոց մէջ, գործարան մի, կարողութիւն մի, ցօժարութիւն մի և ուրիշ որ և իցէ բան մի չկայ որ պէտք մի համար սահմանուած չըլլայ ու առանց վախճանի, այլ ընդհակառակն ամենայն ինչ որոշ վախճան մի ունի, այսպէս ալ մարդս որ ամէն բանի վերջնական նպատակն է՝ չկրնար այս սկիզբէն ազատ ա-

բարած մի ըլլալ։ Իր բնութեան ճիւղերն՝ և այսպէս ըսելով չեմ հասկընար մինակ իր յատկութիւններն և յօժարութիւններն գործածելու համար ընդունած է, այլ մանաւանդ իր մէջն եղած բարոյական օրէնքն, այս ճիւղերն, կըսեմ, այնչափ զեղանց են այս կեանքիս մէջ անոնց ձեռքն ընդունած օգտակարութեանց. քանի՝ որ նոյն բարոյական օրինաց ձեռքով կը տրվի ամէն բանէն վեր սեպել աղէկ մարդ ըլլալու համար պէտք եղած զգայնանց գիտակցութիւնն ունենալն, անոր քով բան մի տեղ չդնելով որ և իցէ բարիք և նոյն իսկ փառք ըսուած ատուներն. և ներսէն ազդեցութիւն մի կըզգայ՝ որ ամէն օգտակարութիւններ ոտքի տակ առնելով՝ իր վարքին արժանի ըլլայ՝ սեւի լաւագոյն աշխարհքի մի քաղաքացի ըլլալ՝ որուն գահոյքն արդէն ունի[1]»։ Գանթ աս ապացոյցս զօրաւոր և անհերքելի կը համարի՝ եթէ անոր վրայ սեւնայ ամէն բան վերջնական նպատակին ծանօթութիւնն։

1 Գուզէն Դասք գիտաստասխրութենէ Գանթի
ջ. էջ 195։

ՉՈՐՐՈՐԴ ԱՊԱՑՈՒՅՑ . — *Ի կարևորությանէ վաշխրացման բարոյականի .*

Երբ բարձրագոյն իշխանութիւնն օրէնք մի կը սահմանէ՝ ամէն յարմար միջոցներ կը բանեցնէ որ իր օրինաց հնազանդողներն ու արհամարհողներն իրենց գործոյն համեմատ հատուցմունքն ընդունին . այս է վաշխրացումն օրինաց ըստացն , որ ամէն իմաստուն և արդար օրէնադրաց պարտքն է : Այս թէ ոչ՝ զուր տեղ կըլլար անոր հրամանն , և այն օրէնքով վարեալ ընկերութիւնն անիշխանութեան ձեռք կը մատնուէր : Արդ եթէ գործոց համեմատ երջանիկ կամ թշուառ հանդերձեալ կեանք մի չըլլար՝ յայտնի է որ Աստուած հատուցութենէ զուրկ օրէնադրութիւն մի սահմանած կըլլար , վասն զի խղճի և մըտաց ձեռքով հրամայելով մարդուս՝ բարին գործելու և չարէն խորշելու , հանդերձեալ կեանք մի չըլլալուն՝ չէր կրնար այս կեանց անկարգութիւններն ուղղել , որովհետև առաքինութեանց և մեծագոյն համեմատ հատուցմունք մի պիտի չըլլար : Այսպատճառաւ քաղաքակրթութեան համարտեսիններ մեկնութիւններ որ տուին՝ Այս կեանց մէջ բարոյականի վաշխրացման անբաւականութիւնն ըստաց յօդուածին մէջ :

Իմաստասիրութեան դասագրոց մէջ

հոգւոյ անմահութեան ապացոյց կը տրուի անձնիշխական գոյացութեան անուսականութիւնն, որ չխոտրնիկ ապացոյց կըսուի. ո՞րով կը հասկցուի թէ հոգեղէն գոյացութիւն մի՛ի բնութենէ իւրմէ անմահ է՝ որով հետև ապականացու և եղծանելի մանն չունի: Սակայն այս պատճառաբանութիւնէս հետևանք մի չելլեր. վասն զի կըմբըռնենք թէ կարելի է որ էակ մի Աստուծոյ կամօքն ոչնչանայ՝ առանց հարկաւոր ըլլալու որ իր մասունքն եղծմունք մի կրեն: Դարձեալ հանդերձեալ կենաց դոյութիւնն ցուցնելու համար՝ բաւական չէ ապացուցանելն թէ հոգին մասանց եղծում մի չըկրեր և չոչնչանար, այլ նոյն ցուցմանց մէջ պէտք է նաև երևնայ թէ հոգին կը յարատևէ իր գիտակցութեամբն և անցեալ կենաց յիշատակաւն. ապա թէ ոչ դարձեալ ոչ վարձք կըլլայ ոչ պատիժ, հետևապէս և ոչ հատուցութիւն օրինաց: Սակայն հոգւոյ անմահականութիւնն իր անվախճանին ապացոյց ան առնել կըլլայ՝ երբ աննիւթական էակն ոչ միայն գոյութեան անեղծութեանն նկատմամբ կըմբըռնենք՝ այլ և այն կարողութեանց նկատմամբ որ բացարձակապէս իր էութեանն անբաժան են: Այս կնիքներս՝ նոսթեանն վրայ յորմարած վախճանական պատճառաց պատճառարանութեան հետ միանալ՝ վերն դրուած ապացոյցն կը ձևացնեն (Տես Գ. ապացոյց): Սակայն որ և իցէ են-

թագրութեամբ ալ հոգւոյ անեղծանելիութիւնն մեզի բաւական է ցուցնելու՝ որ մարմնոյ պէս չմեռնիր :

Դիտողութիւն . — Թէ և նիւթականք ուրիշ կենաց գոյութիւնն կը մերժեն, սակայն այս ճշմարտութիւնն հոգւոյ աննիւթականութեան անմիջապէս ենթարկեալ չէ : Թէպէտ անկարելի է , բայց ենթադրելով թէ հոգին նիւթեղէն ըլլար՝ էր կրնար հետևիլ թէ մարմնոյ հետ հարկաւ պիտի մեռնի . ւան պի ինչպէս ֆելէր կըսէ[1]. « Պէտք էր այս հետևանքն հանելէն առաջ ցուցընել թէ իմացականութեան կարող նիւթ մի՝ անմահութեան կարող չէ , և թէ աւելի դժուար է անմահ նիւթ մի ըմբռնել՝ քան թէ խոհուն նիւթ մի » :

Առարկ՝ Ս . Աւգուստինոսեան դէմ . Մարդուս հոգին բոլոր կենաց մէջ մարմնոյ տկարութիւններն կը ղգայ՝ ապա անոր հետ ալ կը մեռնի :

Պա . Ս . Նախորդն մերժելի է : Հոգին ինչուան աստիճան մի մարմնոյ տկարութիւններն կը ղգայ , սակայն դարձեալ իր կամաց ազատութիւնն և իր մտաւորական ըմբռնութեան անփոփոխելի ղգացումն կը պահէ : Դարձեալ ատեն կըլլայ որ կարծես թէ հոգին մարմնոյ կապերէն բոլորովին ազատեր է . և շատ անգամ խելք ու ցա-

1 Բնութենական վարդապետութիւն խմատական գլուք Բ . գլ . Բ . § 1 :

ազար մարմին ունեցողներ՝ զարմանալի քաջասրտութիւն ցցուցած են. ինչպէս նաև ձերց իմաստութիւնն առակ եղած է՝ որ տարիքով մաշած մարմնոյ մէջ հոգւոյ պե֊ րազանցութեան նշանն է. և շատ անգամ մեռնելու մօտ եղողներուն միտքն աւելի ուժովցած կերևնայ:

Ե. Հեռևութիւնն մերժելի է: Երկուց էակաց մէջ եղած վիճակի և գործոյ հան֊ գիստութիւնն՝ ցցուցներ թէ այս բանս հար֊ կաւոր է, և թէ միշտ նոյնպէս պիտի մնան, եթէ, ինչպէս ցցուցինք, այս երկու էակաց բնութիւնն որիշ է, և հեռևապէս զատ զատ էութիւն ունին իրենց բնութեան օրինացն համեմատ. այս բաւական է ցցուներու որ մէկն հարկաւ միւսոյն հետ չմեռնիր:

Ա.ռարկ Ա. ընդդեմ Բ. Ա.ռաջարկութեան. — Մարդիկ գոյութեան սիրով և ոչնչութեան վախէն հնարած են հանդերձեալ կեանքն, ապա հոգւոյ անմահութեան հաւատքն իբրաւամբ կանխակալ կարծիք կրնայ համարուիլ:

Պա. Նախորդն մերժելի է: ա. Ա.յն բանն որ դրական փաստերու վրայ հաստատուած է՝ մարդկանց երևակայութեան ընծայելն անհնարին է: Ճշմարտութիւն մի մեզի օգտակար ըլլալուն համար անոր գոյութեան վրայ տարակուսելն՝ անտանելի բան է, որպէս թէ մարդուս օգտակար ճշմարտութիւնք ամենևին չըլլային: բ. Եթէ գոյութեան սէրն ըլլար անմահութեան

հաւատքն հնարաւոր՝ ինչպէս մեկնելու է հանդերձեալին մէջ երևակայած տանջանքներն :

Առակ բ. Եթէ հոգին մարմնոյ հետ չըմեռնէր՝ մահէն այնչափ չէր վախեր , ապա ուրեմն և այլն :

Պիտ. Նախարդն մերժէ : ա. Մահուան բնական վախն զօրաւոր միջոց մի է որով արարիչն զգուշացեր է հոգւոյ և մարմնոյ միութեան պահպանութեանն : բ. Մարդըս Աստուծոյ արարածելի դատաստանին պատճառաւ՝ միշտ վախնալու բան ունի հանդերձեալ կեանքէն :

Առակ գ. Եթէ հանդերձեալ կենաց հաւատքն՝ ներկայ կենաց բարոյականին հաստատութիւն տալու կարող ըլլար՝ գվատորապէս կրքերն պէտք էր սանձել : Իսկ արդ կրքերն չսանձեր , ապա և այլն :

Պիտ. Փոքրագոյնն զանազանելի է : Հանդերձեալ կենաց հաւատքն միշտ կրքերն չսանձեր՝ հաւանիմ , իսկ թէ յիրաւի շատ անգամ չսանձեր՝ մերժեմ : Հանդերձեալ կենաց հաւատքն միշտ և հանապազ կրքերն չսանձելէն չհետևիր ըսել՝ թէ անոնց սանձահարութեանն համար անօգուտ է . զի այս հետևանքն արտաքոյ կըլլար՝ ինչպէս կըսէ Մոնթէսքիէօ[1] . « Կրօնքն միշտ չսանձահարելուն համար ըսելն՝ թէ կրօնք սանձահարիչ պատճառ չեն , ըսել է թէ և

1 Յաղագս ոգւոյ օրինաց գիրք ԻԴ. գլ. ԹԵ :

ոչ քաղաքային օրէնք առնձահարիչ պատճառ են » :

Վերն տեսանք առարկութեան պատասխանն՝ որ առ աշխարհիս մէջ առաքինութիւնն միշտ իր վարձքն՝ և մեռան միշտ իր պատիժն ընդունելով Աստուծոյ առողջութիւնք էին պարտաւորեր որ ուրիշ կեանք մի լլար :

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԲԱՐՈՑԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Բարոյական վառնուշտր .

Բաժանումն պարտուց .

Պարտուց ընդհանուր գիտութենէն եաև՝ յորում ցցուցինք պարտուց կնիքն և սահմանադրական հանգամանքն , բնականապէս կու գայ բարոյական վառնուշտր լսուածն՝ որուն առարկայն է զանազան պարտքերն որոշել : Վասն զի պարտուց ծանօթութիւնն որ բարոյականին հիմն է՝ գործադրութեան մէջ կը զանազանի մեր առանձինն յարաբերութեանց նկատմամբ, որ ունինք առ արարիչ էութեան , առ էութիւն անձանց և առ էութիւնն մերոց նմանեաց : Ասկից իրեք տեսակ պարտք կը ծագին ա . Պարտք առ Աստուած . բ . Պարտք առ անձինս մեր . և գ . Պարտք առ նմանեսն մեր , որոնք մասնաւոր բարոյական բաժանումնքն պիտի լլան :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Պարտք ՀԱՅՈՑ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ։

Նախընթաց գիտութեանցս նիւթ եղող Աստուծոյ գոյութենէն, առորոգելիքներէն, յիրաւանց և յիշխանութենէն՝ զոր ունի իր արարածոց վրայ՝ բնական կերպով յառաջ կու գան մեր այլ և այլ առաք պարտքերն ։ Գանթի աշակերտներէն մէկն գերմանացին Ֆր. Գ. Սնէլ այս գիտութիւնս կընէ [1] որ « Ս. մէն առ մեզ և առ նմանիս ունեցած պարտքերնիս՝ են նաև պարտք առ Աստուած, որովհետև զանոնք կատարած առեննիս՝ իբրև գերագոյն օրէնսդիր գինքն մեծարած կըլլանք » ։ Ս. պա առ մեզ և առ նմանիս ունեցած պարտքերնիս ալիսի կատարենք աստուածային իշխանութեանն պատճառաւ, և անոնց կատարմանն ու զանցառութեանն համար Աստուծոյ պատասխան ալիսի տանք ։ Ս. պա այս մտքով բովանդակ բարոյականն ալ կրօնական կրնայ ըսուիլ. բայց այս անունս մասնաւորապէս կը տրուի բարոյականին այն մասին՝ որ մեր ազգակից առ Աստուած ունեցած պարտուց վրայ կը խօսի ։

1 Տարրական Հաւ. Զբարոյականէ § 45 ։

Մարդուս այս կենաց մէջ Աստուծոյ հետ ունեցած յարաբերութեանց բովանդակութիւնն կրօնք կամ կրօնական պաշտօն կըսուի :

Պաշտօն ներքին .

Պաշտօն ըսելով սովորաբար կիմանանք կրօնական գործերով առ Աստուած ընծայուած ուխտարանքն : Աստուած իր կատարելութեանց պատճառաւ ներքնապէս արժանի է ուխտարանաց , ապա կարգն կը պահանջէ՝ որ իրեն պաշտօն մի մատուցանենք : Աստուած մեր ներքսապոյն խորհրդոց ներկայ ըլլալուն՝ կրնայ պատուիլ պարզապէս ներքին ներդործութեամբք . հետևապէս այնպէս ալ պէտք է ըլլայ , և ներքին պաշտօն մի իրեն մատուցանելու պարտական ենք , ինչպէս որ պիտի ցուցուի :

Ներքին կամ հոգւոյ պաշտօնն կըլլայ գլխաւորապէս երկրպագութեամբ , սիրով , աղօթով և շնորհակալութեամբ : Մեզ մարդուս պարտքն է երկրպագել Աստուծոյ , սիրել զնա , աղօթել և շնորհս մատուցանել :

Ա. Պարտիմք երկրպագել Աստուծոյ, վասն զի ուղղամտութիւնն կը պահանջէ որ Աստուծոյ անբաւ կատարելութիւններն պատուենք , և իր ամէն բանի վրայ ունեցած գերագոյն իշխանութիւնն ճանչնանք . այս կը նշանակէ երկրպագութիւն բառն :

Բ. Պարտիմք ախոյեղնա. որովհետև ինքն տուաւ մեզի կարողութիւն սիրելոյ, և միանգամայն ինքն է անչափ սիրելի էակն՝ ուսկից կը ծագին արարածոց վրայ երևցած բարութիւնքն և սիրելութիւնք:

Գ. Պարտիմք աղօթել նմա. վասն զի մարդուս բնութեան յարակից է վտանգաւոր դիպուածի և յետին չքաւորութեան մէջ անոնց օգնութիւնն հայցել՝ որոնք ունին կարողութիւն և կամք օգնելու իրեն: Արդ այս կենացս մէջ մեր վիճակն ալնըկատմամբ Աստուծոյ ճիշդ այսպէս է. և որովհետև Աստուած կը պահանջէ մեզմէ ինչ որ մեր իմացական էակ ըլլալուն յարմար կու գայ, ապա կըհետևի որ աղօթելու պարտական ենք:

Դ. Պարտիմք շնորհակալ ըլլալ իրեն, ապա թէ ոչ մեր գերագոյն բարերարին ապերախտութիւն ըրած կըլլանք:

Առարկ Ա. Արդ չկրնար հաստատել թէ ինչ որ Աստուծոյ անարժան է՝ մարդս իրեն նուիրելու պարտաւոր ըլլայ: Արդ մարդուս ամէն պաշտամունքն անարժան են Աստուծոյ. վասն զի Աստուծոյ անբաւ կատարելութեանցն և մարդուս պէս պակասաւոր արարածոյ մի մատուցած յարգութեան մէջ ամենևին համեմատութիւն չկայ. ապա չկրնար հաստատել որ աստուածային պաշտօնն մարդուս համար պարտաւորութիւն մի ըլլայ:

Պի. Ա. Նախորդն մերժելի է: Նոյն-

*ախտ տրամախոհութեամբ կրնար ցու-
ցուիլ որ Աստուծոյ անարժան բան էր զաշ-
խարհս ստեղծելն ու կառավարելն : Ուր
ինաց որ ուղղամտութեան ընդունածն ու
հրամայածն Աստուծոյ անարժան չկրնար
ըլլալ :*

*Նախորդին ապացոյցն ալ զանազան-
լու է : Հաւատարմութեան համեմատութիւն
մի չկայ՝ ընդունիմ, իսկ վերաբերութեան՝
մերժեմ : Եւ յիրաւի, հոգին այնպիսի կա-
րողութիւններ ունի՝ որոնց առարկայն կըր-
նայ ըլլալ Աստուած, ինչպէս ճանաչելոյ և
սիրելոյ կարողութիւններն և այլն :*

*Առարկ ԺԱ. Ներքին պաշտօնն գլխաւո-
րապէս աղօթքն է . արդ աղօթքն (խըն-
դրուածքի մտքով առնելով) անօգուտ՝ մա-
նաւանդ թէ պախարակելի բան է , ինչու
որ եթէ խնդրածնիս՝ի կարգի է՝ Աստուած
մեզի կուտայ զայն առանց մեր խնդրելուն,
իսկ թէ չէ՝ ամբարշտութիւն կըլլայ խըն-
դրելս . արդ ներքին պաշտօնն և անոր
գլխաւոր մասն որ է աղօթք՝ անօգուտ է
և այլն :*

*Պհ. Փոքրագոյնն և իրեն ապացուցին
առաջին մասն մերժելի է : Եւ յիրաւի Աս-
տուած ստիպական չէ ամէն կարելի բա-
րիք իր ստարածոցն չնարհել , սակայն կըր-
նայ սահմանած ըլլալ՝ իր տուրքերէն շատն
տալու՝ աղէկ աղօթք ընելու պայմանաւ ,
ինչպէս որ ընդհանուր մարդկանց աղօթք
ընելու սովորութիւնն այն բանս կը հաս-*

տատէ : Դարձեալ աղօթք ընելու չատ պատ-
ճառներ ալ ունինք . որովհետև աղօթքն
ևեծարանք մի է զոր Աստուած մեզմէ կը
պահանջէ որպէս երախտապիտութիւն մեր
հպատակութեանն . միջոց մի է Աստուծոյ
և մարդկան հաղորդակցութեանն՝ որով
արարչին յիշատակն մեր մտաց մէջ աւելի
կը ճնայ . որովհետև զգալի բաներու հետ
զբաղած ըլլալով՝ կրնայինք զանիկայ չու-
տով մոռնալ , եթէ մեր կարօտութեանց
զգացմունքն միշտ դէպ՝ ի իրեն չմղեր զմեզ
իակ փոքրագոյնին մէջ բերուած երկրորդ
պատճառին համար բաւական է ըսելն՝ որ
այն բանն որ՝ ի կարգի չէ՝ անոր խնդիրքն
ալ ներքին պաշտաման ներգործութիւնն
չկրնար սեպուիլ :

Պաշտօն արտաքին .

Արտաքին պաշտօնն ուրիշ բան չէ՝ բայց
եթէ Պաշտօնեն ներքին զգալի արտայայտ՝ի
ձևոն արտաքին գործոց :

Մարդս պարտի մատուցանել Աստուծոյ
զարտաքին պաշտօն . վասն զի ա . Մարդս
յերկուց գոյացութեանց բաղկացեալ է ,
և որովհետև այս երկու գոյացութիւնքս
ալ և իրենց կարողութիւններն Աստուծոյ
գործն են , ապա յայտնի է որ մարդ զա-
նոնք պէտք է Աստուծոյ ընծայէ : Արդ
մարմնոյ մատուցած պաշտաճ պատիւն՝ ա-

ասնց մարմնոյն կցորդութեանն չենք կըրնար ըմբռնել, այսինքն առանց արտաքին պաշտաման: ը. Մեր կասկածենն այնպէս է՝ որ մեր հոգւոյն զգացմունքն՝ բանական է որ ճշմարիտ ու սակաւ մի առանիկ ըլլայ, բնականապէս արտաքին նշաններով կը յատնենք: Իսկ արդ պէտք է որ մեր հոգին կրօնից սաստիկ ազդեցութիւնն ներքն ունենայ դէպ ուս Աստուած, ապա պէտք է որ այս զգացմունքներս դրսէն ալ յայտնուին, ինչպէս որ կը յայտնուին ալ, որպէս և ցուցանէ տիեզերաց տէրութիւնն:

Առարկ Ա. «Հոգի է Աստուած, և երկրպագուաց նորա պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկիր պագանել[1]». ապա ներքին պաշտօնն բաւական է:

Պհ. Մերժելի է հետեւութիւնն: Իրաւունք նախապէն կը հետեւի՝ որ արտաքին պաշտօն մի չկրնար հաճոյ ըլլալ Աստուծոյ՝ եթէ ներքին պաշտաման հետ միացած չէ. բայց ոչ երբէք այն թէ Աստուծոյ արտաքին պաշտօն մատուցանել պէտք չէ. վասն զի արտաքին պաշտօնն՝ ներքնոյն բնական հետեւանքն է, ինչպէս որ ցցուցինք:

Առարկ Բ. Մարմնեն արդեանց ու պարզեանց ընդունակ չէ. ապա արտաքին պաշտօնն մարդս պարտաւորութիւն չկրնար հատուցանել:

1 Յովհ. դ. 24:

պիս . Հեռևանքն մերժելի է . թէ և մարմինն արդեանց ու ապարդեանց ընդունակ էր՝ սակայն հոգին՝ որուն գործիքն է ինքն, ընդունակ է . և ուղղամտութիւնն մեզի կը պատուիրէ մեր բոլոր էութիւնն անոր նըւիրելու :

Պաշտօն հրապարակական .

Հրապարակական պաշտօն ըսելով կիմանայ Պաշտօն ժառանգեալ Աստուծոյ յանուն Քրիստոսի ժարդոյ յանձնուած ըստ սահմանեալ արարողութեանց :

Հրապարակական պաշտօն մի մատուցանելու պարտաւորութիւննիս կը հաստատի այս պատճառներով :

ա . Մարդ Աստուծոյ արտաքին պաշտօն մի մատուցանելու պարտական է , ինչպէս որ ցուցուեցաւ : Արդ այս պաշտօնս պատշաճ ժամանակ հրապարակական ձև մի առնելու է . ապա թէ ոչ այնչափ պաշտամունք պիտի ըլլայ՝ որչափ անհատք . և այս պաշտամանց առանձնութեամբն անթիւ անհատականութիւնք առաջ կու գային , և աստուածութեան վրայ ծուռ գաղափարներ , և իրեն վայելուչ պարտուց մէջ մոլորութիւններ : Բաց ասկէ՝ փորձուած է որ եթէ բաղմութեան կրօնական զգացմունքն հրապարակական ձևերով չանանի՝ քիչ առնէն կը ջնջուի . և այսպէս որ և

իջէ պաշտօն՝ նոյն իսկ ներքին՝ անհատ կըլ-
լայ մարդկային ընկերութեան մէջէն ։

Բ . Մարդկային ընկերութիւնն՝ մասնա-
ւոր բարերարութիւններ կընդունի յԱս-
տուծոյ իբրև ընկերութիւն . ապա որ-
պէս ընկերութիւն պէտք է որ պատուէ
պԱստուած հրապարակական ներգործու-
թեամբ ։ Եւ ուրիշ բանի համար ալ չըլլայ՝
գոնէ իր պահպանութեանն համար պէտք
է այս պաշտօնս ունենայ . վասն զի պաշ-
տօնն ընկերութեան գլխաւոր կապն է .
և այնպիսի ճշմարտութիւն մի՝ զոր աւե-
նայն օրէնսդիրք և քաղաքագէտք հաստ-
ցած են ։

Գ . Ամէն ժամանակ և ամէն տեղ գըտ-
նուած են տաճարներ , սեղաններ , քահա-
նայներ , հասարակաց ձէսեր և հանդէսներ ,
որուն կը վկայեն անթիւ յիշատակարանք ։
Մրդ այս ամենայն հաստատութիւններս
կը ցուցընեն բացայայտ զմիտաձայն դաւա-
նութիւն ազգաց . և այս հաստատ և հանրա-
կան համոզումն մեր բնութեան օրինացն
վրայ մխայն հաստատուած կրնայ ըլլալ ։

Առարկ . Հրապարակական պաշտօնն շատ
ազգաց մէջ անթիւ ծաղրելի և անճոռնի
անտիապաշտութեանց պատճառ եղած է .
ապա հրապարակական պաշտօնն ոչ միայն
անօգուտ է , այլ և վնասակար ։

Պտ . Ս . Պատճառաբանութիւնն թիւր-
բնալ է ։ Աստուծոյ գաղափարէն մարդուս
միտքն բազմաստուածութիւնն և անճոռնի

առաւաելներն հնարեց . կրնանք ըսել թէ Աստուծոյ գաղափարն վեհագոյն է :

Բ . Նախորդն մերժելի է . վասն զի կըրնանք հրապարակական պաշտօն մի ըմբըռնել՝ առանց անոտիապաշտութեան . ապաութեան պաշտամանէ ետքին չէ անոտիապաշտութիւնն հնարողն՝ այլ նախապաշարմունքն , տգիտութիւնն , կրքերն և այլ պատճառք օտարք՝ ի պաշտամանց : Դարձեալ պաշտամանց պարզութիւնն աւրոշ անոտիապաշտութիւններն իսկ կը ցուցնեն թէ անոր հիմնական գաղափարն կայ , և հետևապէս իրենց հանրականութեամբն ալ արգելք չեն ըլլար մեզի պաշտօնն պարտք մի սեպելու զոր կը դնեն մեր վրայ բնութիւնն ու միտքն :

ՅԱՒԵԼՈՒԱԾ . — Աստուածային յայտնութեան վրայ .

Բաւական սեպեցինք առ գլխոյս մէջ համառօտիւ դնել այն հիմնական պատճառներն և ընդհանուր սկզբունքն որով կը հաստատուի կրօնական պաշտօնն ինչպէս որ միտքն կըմբռնէ . բայց անկէց չհետևիր թէ մարդուս միտքն ինքն իրեն ձեռքով կրնար հաստատել պաշտօն մի որ յիրաւի արժանաւոր ըլլայ Աստուծոյ մեծավայելչութեան :

Թէ և բացարձակապէս անկարելի չէր որ զանուէին քանի մի ուղղամիտ և՝ ի կրից աղտ մարդիկ՝ որ բնականապէս կարե- նային ճանաչել զԱստուած, և պաշտաց պաշտօնիս մի մեծարել, և անոր հրա- մայած պարտուց վրայ ճիշդ գաղափար մի ունենալ, սակայն նոյն ենթադրութիւնն եթէ բոլոր մարդկան ազգին համար ընենք՝ գնորական և անհիմն բան մի կըլլայ, և պատմութիւնն մինակ բաւական է ցուց- նելու անոր սուտութիւնն:

Իրաւցնէ ճշմարիտ է՝ որ միշտ և ամէն տեղ մարդիկ կրօնական պաշտամանց մի պէտքն իմացեր են՝ որպէս հիմն ընկերու- թեան. և այս համոզմամբս էր որ հիներէն մէկն [1] կըսէր թէ «աւելի դիւրին է օդայ մէջ թաղաք հինել՝ քան թէ առանց հա- ւատոյ աստուածութեան՝ աէրութիւն մի հաստատել և պահել»: Եւ սակայն այս զգացմունքէս ուրիշ բան առանձ չեկաւ աշխարհիս ամէն կողմն՝ բայց եթէ վնասա- կար մոլորութիւններ և անարգ ախտեր, թէպէտ սկզբունքն ճշմարիտ էր:

Ֆէնէլոն կըսէ [2] «Տեսանեմ զազգս յո- լովս որ պաշտօն հարկն քարի և փայտի և հրահալելւոյ, հաւատալով եթէ ծածկեալ կայցեն աստուածութիւնք ընդ կերպարա- նօք մարդկան և անասնոց՝ ի զանազան

1 Պլուտ. Ընդդէմ Կոլոթէն Լ.Ա:
2 Թուղթք՝ ի վերայ կրօնից գլ. Ա. Տ:

եւթոց ճարտարելոց » . . . « Ա.յլ և նոքին իսկ զոր պաշտեցին ընդ անուամբք Ա.րա-մազդայ և Հերայ , Ա.րեսի և Ա.ստղկան , և Հերմեայ և Դիոնիսի , ոչ միայն առ-տուածք էին , այլ արարածք կարի թերա-կատարք անարգ և եղծագործք » :

Եւ ըստ Պոսիւէի [1]. « Իմաստնագոյնք և հանճարեղագոյնք իսկ յազգաց՝ որպիսիք էին Քալդէացիք և Եգիպտացիք , Փիւնի-կեցիք և Յոյնք և Հռոմք կարի տգէտք և պաշտուք էին ՚ի հաւատոյս . . : Ո՛ հա-մարձակեսցի պատմել զարարողութիւնս աստուածոց անմահից և զպիղծ պաշտա-մունս նոցին . տարիանք նոցա և անգթու-թիւն , մահանք ատելութեան և այլ ամե-նայն քարուքանութիւնք նիւթք էին տո-նից նոցա և զոհագործութեանց և երդոց որ ՚ի պատիւ նոցին նուագէին , և նկարուց ձօնելոց ՚ի տաճարս նոցա : Եւ այսպէս ո-ճիրք ՚ի պատուի էին և կարևոր համա-րեալք ՚ի պաշտամունս դից » :

Նոյն պղծութիւնքն այսօրուան օրս կը գտնուին Հնդկաց և անդր մօտ աշխար-հաց , և աշխարհիս այլ և այլ կողմերն ե-ղած կռապաշտ ազգաց մէջ :

Հեթանոսութեան անատակութեանց հետ միացած էր նաև անգթութիւնն . կարթե-դոնացւոց և Կեղտաց մէջ , նաև երբեմն առ Հռովմայեցիս և առ Յոյնս մարդապո-

1 Խօսք ՚ի վէպս Ցմման գլ. ԺԶ :

հեր կըլլային ՚ի պատիւ աստուածոց. նոյն ահռելի զոհերն կային նաև Մեքսիկացւոց և այլոց ազգաց մէջ աւելի բարբարոսական խժդժութեամբ։

Եւ այս արտառոց չիմարութիւններս ոչ միայն կրօնական պաշտամանց մէջ կերևնային, այլ և շատ անգամ վարուց ուղղութեան և բարոյական կարգայ բնական լոյան ալ մթնցած ու խաւարած էր։

Նախ պէտք է գիտնալ որ աստուածոց օրինականերն՝ զիրենք պաշտողներուն համար ալ շատ ծանրակար ու վտխատրական էին, և ժողովրդեան բարոյական զգացմանցն շատ վնաս կը բերէին։ Օրինակի համար Տերենտիոսի մէջ[1] կը տեսնենք որ երիտասարդ մի Ս.րամազդայ օրինական ախտից կը գրգռուէր. Ովրատիոսի մէջ[2] անատակ մի Լավէռնեայ աստուածուհւոյն օգնութիւնն կը խնդրէ. Ովիդիոսի մէջ[3] վաճառական մի Հերմէսի կաղաչէ իրեն օգնելու որպէս զի յաճախորդներն շաբէ։ Ս.ծէնէն կոհական իմաստասէրը և այս ազդեցութիւններէս ազատ չէին. Պլատոն (Օրէնք Զ.) Դիոնիսի տօներուն մէջ գինովնալու հրաման կուտայ. Արիստոտէլ (Քաղաքագիտութիւն Է.) աստուածոց պաշտաման համար պիղծ

1 Նեղքին ար գ. տես ե։
2 Նամակ Ա. ժԶ։
3 Արուեստ ե։

նկարքներն ներելի կըսեպէ : Իսկ իրենց
ինչ վարքի տէր ըլլալնին յայտնի է և խօս-
քի կարօտ չէ :

Մարդկային ազգի նախկին ատանդու-
թեանց հետքն բոլորովին չըջնջուեցան .
սակայն հին ատեն գրեթէ ամէն տեղ և
այս օրուան օրս քրիստոնեայ չեղող ազ-
գաց մէջ կը տեսնենք որ սովորութիւնն օ-
րինաւոր սեպած է շատ մի առածներ և
գործքեր որ յայտնապէս հակառակ են
բարոյականի ուղիղ ծանօթութեանցն :
Պատմութիւնն ուրիշ բան չներկայացներ
մեզի՝ բայց եթէ ամէն-տեսակ անառա-
կութիւն , առ նախնիս կանանց սեռին
անարգութիւնն ու խեղճութիւնն, ինչպէս
որ է ինչուան հիմա Ղուրանի օրէնքին
տակն և վայրենի ազգաց մէջ նորածին
աղջկայ անխնամ թողուիլն ու կորսուիլն՝
ինչպէս Ի Զինաստան և յայլ աշխարհս ,
դերեայ դէմ անարդական ու բարբարո-
սական խժդժութիւններ , Հռովմայի մէջ
տեսերամարտից կռիւներ , և տեղ տեղ
ծերերն սպաննելու սովորութիւն , Հընդ-
կաստան այրի կանանց խարոյկներ , և ու-
րիշ դատապարտելի նախապաշարումներ
և տեսլի սովորութիւններ՝ զորոնք չենք
ուզեր մի առ մի յիշել : Մարդկային ազգի
գրեթէ այս ընդհանուր վիճակն՝ յայտնա-
պէս կը ցուցնէ պարզ բնական կրօնքի մի
անբաւականութիւնն , և միանգամայն թէ
արշալոյս հարկաւոր էր մարդուս մտացն որ

առաջնային յայտնութիւն մի լրեն օգնութեանն հասներ . և յիրաւի այս օգնութիւնս եկաւ հասաւ ինչպէս որ առաքեալն ալ կըսէ [1]. « Բազում մասամբ և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք , իսկ ՚ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն » :

Յայտնեալ կրօնքն յԱստուծոյ՝ կու տայ մեզ զճշմարիտ ծանօթութիւն Աստուծոյ , պաշտաման և բարոյականի վրայ : Աւելորդ կը համարիմք յաւելուլ որ միայն քրիստոնեական կրօնքն է յայտնեալ կրօնքն , և ինքն միայն ունի հաստատ ապացոյցներ իր ճըշմարտութեանն : Քրիստոնէութեան հակառակորդներն ուրացան յայտնութեանն ճըշմարտութիւնն . բայց այս օրուան օրս որ Եւրոպայի անդաստար հաղորդակցութիւնները յաճախած են աշխարհիս միւս մասանցն հետ , որով և աղգաց կրօնից ու վարուց վրայ հաստատ տեղեկութիւններ առնուած է , ուղղամտութեան նախատինք ըրած կըլլայ մէկն՝ թէ որ յանդգնի քրիստոնէութիւնն ուրիշ մեկի ծանօթ կրօնքի մի հետ բաղդատել :

Այս նիւթոյս վրայ խօսքերնիս աւելի չենք ուզեր երկնցնել . վասն զի դասագրացս սահմանն ու չափն ալ չներեր աւելի մանրամասն քննութիւններու մէջ մտնել :

1 Առ Հեբրայեցիս ա. 1 :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Պարտք մարդոյ առ անձն իւր .

*Մարդ բնական օրինաց հաւեմատ և զե-
րագոյն օրէնսդրին իշխանութեան զօրու-
թեամբն՝ պարտքեր ունի կատարելու առ
իւր էութիւնն : Յերկուց գոյացութեանց
բաղկացեալ ըլլալով՝ հոգեղէն և նիւթե-
ղէն՝ մարդս կարողութիւններ և գործա-
րաններ ունի ուղղելու . ապա առ անձն
ունեցած պարտքն երկու տեսակ են , ո-
մանք հոգւոյն վերաբերեալք և ոմանք մարմ-
նոյն : Այն գիտութիւնն որ այս պարտքե-
րուս վրայ կը խօսի՝ կրնայ կոչուիլ Բարոյա-
կան անձնական :*

ՀԱՏՈՒԱԾ Ա.

Հոգւոյն վերաբերեալ պարտքեր .

*Մարդուս հոգւոյն վերաբերեալ պարտ-
քերուն վախճանն է՝ ուղղել և կատարե-
լագործել անոր կարողութիւնները , որ են
զգացողութիւն , խնդացողութիւն և կամեցո-
ղութիւն :*

§. Ա

ՋԳԱՅՈՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՐՏՔԵՐ.

Մարդս բնական զգացողութեամբ ազդուի կընդունի ինչ որ պէտք է ընէ, և ուսկից [1]սորչի՝ որով ազատի այն պատճառաց ներքո գործութենէն՝ որ միշտ իր կազմութիւնն այլայլելու և եղծանելու կաշխատին: Մարդկային կազմութեան օրէնքներէն մէկն է որով մարդ միշտ պէտք կիմանայ, և զորս հարկ է գոհացնէ իր գոյութիւնն օրինաւոր վիճակին մէջ պահելու համար, և այս պիտոյից լրումն ալ հաճոյական զգացմունքով պէտք է ըլլայ: Այս հաճոյական զգացմունքս միջոց մի է զոր արարչին իմաստութիւնն սահմաներ է՝ իր գործին պահպանութեանն համար: Բայց շատ անգամ մարդս այն բանն որ միջոց մի է՝ վախճանի տեղ դնելով՝ զուարճութեան եռևէ կըլլայ՝ իբրև վախճան, և իր իղձերն իրական պէտքէն ալ անդին կանցնին: Ասկէ առաջ կու գան աներակ հեշտութիւնք, անչափաւորութիւն՝ի կերակուրս, արբեցութիւն և անառակութիւն: Իսկ անկարգութիւնն իր հետ կը բերէ աշխատութիւն և յափրութիւն. և թէ որ նոյն ճամբուն մէջ մէկն չարունակէ՝ շուտով ապականութեան ծայրն կը հասնի: Նիւթական հեշտութեանց սովորութիւնն՝ մար-

դուս ամէնէն վանմ կարողութիւններն ալ իրեն գերի կընէ, և մտաւորական աշխատութեանց անյարմար կընէ զանիկայ։ Չգայութեանց երկարատև բռնութիւնն՝ կամաց կամաց հոգւոյն դիմակալ զօրութիւնն կը տկարացնէ, և կրնայ ընել կուտայ այն բարոյական ազատութիւնն որով մարդ յանանց կը զանազանի։ Ամէն մարդ գիտէ որ սովորութեամբ բնական զգայողութիւնն կը բթանայ. և եթէ յայնժամ աւելի զրգռիչ պատճառաց դիմէ՝ այն զրգռութեան բոլորովին կը թուլցնէ զինքն և շատով եղծման կը տանի։ Ընդհանրապէս բնական զգայողութեան անկարգութիւնքն՝ վաղահաս մահուան կը տանին մարդուս գործարաններն վրդովելով՝ որ չատ անգամ անճնաստանութեամբ կը վերջանայ։ Այս չար հետևանքներս ապացոյց մի է՝ որ մարդ չկրնար անպատուհաս ազատիլ՝ երբ բնութեան և բարոյական օրինաց գրած սահմաններն կանցնի։

Մեր բարոյական զգայողութեան այսչափ վնասակար ցաւերն և կրից փոթորիկներն այէտք է մեղմացնենք բարի խղճի խաղաղութեամբն՝ զոր առաքինութիւնն միայն կրնայ տալ։ Շատ անգամ մարդուս համար առաքինութեան գործադրութիւնն ուրիշ բան չէ՝ բայց եթէ՝ ի տրամութեանց չլքանիլ և քան զչար զօրաւոր երևիլ։ Մարդ առաքինութեամբ իր կրից կը յաղթէ, և հոգւոյն մէջ կարգաց անդորրութիւն

թաղաւորել կու տայ՝ որուն խաղաղութիւն պարտ կըսեենք : « Խաղաղութիւն ամենայն իրաց՝ անպորրութիւնն կարգայ » ըսաւ Ս. Աւգոստինոս[1] : Մտաց և սրտի վրաբաժանութիւններն սահման մի ունին՝ որոնց զգուշանալու է եթէ այն սահմանն անցնինք՝ անչափաւորութեամբ կը մեղանչեմք՝ որ մեր բնութեան օրէնքն կը բռնաբարէ, և ան բռնաբարութեան առաջին պատիժն է մտաց տկարութիւն և հոգւոյ վրդովմունք :

Ապա ըսածներէս կը հետևի թէ մեր պարտքն է բանաւարութեամբ ուղղել մեր զգայական կարողութիւնները, և ուղիղ բարոյականին օրինացն դրած սահմաններն պատուել : Ընդհանրապէս անոնք որ վարուց անմեղութեան պատուական գանձն անարատ պահած են՝ այս կենաց մէջ ալ հատուցմունքն կընդունին. երկայն ապրէլէն աւքն ալ՝ իրենց կազմածքն առողջ և ուժգալ է, և լաւին քերթողին ըսածին պէս դալարագեղ ծերութիւն մի կը վայելեն. սրտերնին միշտ պատանի, և ինչուան ծերանան իրենց բարոյական զգայութիւնն փափուկ և անարատ կը պահեն, որով հետև կրից սաստկութեամբ զանիկայ չեն բթացուցած :

1 Յաղագս քաղաքին Աստուծոյ ժթ. 13 :

§. 6

ԻՄԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՐՏՔԵՐ.

Ամենայն էակք իրենց կարողութիւնք վախճանի մի համար ընդունած են, ապա չեն կրնար անկէց շեղիլ առանց իրենց բնութեան օրէնքն բռնաբարելու. արդ մեր ճանաչելոյ կարողութեան միակ անունդն ձշմարտութիւն է, որուկէսա սուտն չէ ինչ իրական: Ուրեմն մարդուս պարտքն է իր իմացողութիւննդէպ'ի ճշմարտութիւն ուղղել. և առաւել որ ճշմարտութիւնն և սուտթիւնն մեր մտաց մէջ զարգանալով՝ դործադրութեան մէջ շատ ծանր հետեւանքներու սկիզբ կըլլան: Ապա ուրեմն մարդ պարտական է ամէն բանէն վեր իր իմացողութիւնն ճշմարտութեան գիտութեանն դործածել՝ որուն ծանօթութիւնն իրեն հարկաւոր է իր պարտքերն կատարելու և իր վախճանին հասնելու համար:

Ասկէց զատ պէտք է որ մարդ իր իմացողութիւնն զօրացնէ՝ իր բնութեան օրինաց համեմատ ներգործութեամբ մի, պէտք է որ զանի տեսակ տեսակ ծանօթութեամբք ճոխացնէ, ինչպէս են գիտութիւնք և արուեստք, զգուշանալով որ այս գիտութիւնքս և ծանօթութիւնք՝ որ ըստ ինքեան բարի և օգտակար են՝ ճշմարտութիւնն ի-

բնոց վախճանն ըլլալուն, մեզի վնասակար չըլլան՝ զանոնք չարաչար զրկածելով։ Բայց այս զեղծմունքներս չեն կրնար արդարացնել՝ վերջի դարուն իմաստասէրներէն ոմանց[1] անճառնի կարծիքն, որ վայրենութեան վիճակին՝ նախամեծար կը սեպեին, և ինչուան կը համարէին թէ քաղաքակրթութիւնն մարդկային բնութեան ապականութիւն է։ Թէ որ մէկն պատմութեան դիրքն ձեռքն՝ բարբարոսական դարերն քաղաքակրթեալ դարերու հետ բաղդատէ՝ չկրնար առջիններուն վախճարիլ։ Ան՚ալ յայտնի է որ մարդկութեան ճշմարիտ բարերարք սեպուած են այն մարդիկն որ վայրենի ազգաց մէջ քաղաքականութեան լոյսն մուծեր են, զոր կը խոստովանին նոյն իսկ վայրենիք։ Դարձեալ դիտենք՝ որ վայրենի ազգեր՝ որչափ ալ լաւ յատկութիւններ ունենան, միշտ զողութեան, կեղծաւորութեան, անարդ ախտերու, արտաքոյ անոտիապաշտութիւններու, պիղծալի կատաղութեանց և ինչուան մարդակերութեան հակամէտ են։ Սակայն չենք կրնար ուրանալ՝ որ քաղաքականութիւնն առաջ երթալով՝ շատ ապականութիւններ ալ վրայ հասած են. բայց ասոր պատճառն չէ թէ գիտութեանց և արուեստից ծաղկիլն է, այլ մեղկութիւնն, շռայլութիւնն և ախտաւոր սովորութիւններն որ կամաց

[1] Ցովհաննէս Ցակոբ Ռուսսօ, և այլն։

կամաց ծաղկեալ ընկերութեանց մէջ կը մտնեն: Սակայն ամէնէն աւելի զգուշանալու է իմաստասիրական ոգւոյ զեղծմունքէն՝ որուն հետեւանքներն չարաչար վնասակար են. վասն զի բոլոր մարդկութեան ընդունած ճշմարտութեանց վրայ տարակոյսներ հանելով՝ ամէն ստուգութիւն խախտելու և սկեպտականութեան մէջ ընկնալու վախ կայ. ուսկից առաջ կու գայ ամէն տեսակ գաղափարաց ոչընչութիւն մի, և հետևապէս ժխտութիւն և անհանդարտութիւն մի՝ որ ընկերութեանց կործանումն է:

Մեծ խնդիր մի եւս է՝ թէ արդեօք ուսմունքն ժողովրդեան մէջ տարածելն՝ ընկերութեան օգտակա՞ր է թէ վնասակար: Ընշուշտ ըստ ինքեան բարի է. բայց որպէս զի գիտութիւնն ժողովրդեան ձեռքն ապականութեան ու մահու գործիք մի չըլլայ՝ հարկաւոր է որ անոնց հաղորդած սակաւ գիտութիւնն՝ միացած ըլլայ հաստատուն կրօնական ուսմանբ: Խօսքիս յարմար կուգայ Պաքոնին գեղեցիկ խորհրդածութիւնն թէ կրօնքն հաւեմ մի է՝ որ զուսմունքն ապականելէն կը պահէ. «Անդեղեայս այս կամ հաւեմ՝ որոյ խառնուած անուշէ զգիտութիւնս և առողջարար և ևս գործէ զնա՝ կրօնքն են[1]: Մեր դարուս

1 Յառաջս արժանապատուութեանց և բարգաւաճանաց ուսմանց. գիրք Ա. էջ 7. տպագիր Փարիզոյ 1624:

մէջ եղած ոճրագործութեանց համարա-
տութիւնները՝ որոնց մէջ կերևնայ թէ
որչափ որ գիտութիւնք ծաղկեր են՝ նոյն-
չափ ոճիրք բազմացեր են, յայտնի կը
ցուցնեն որ այս իմաստուն առածս ոչ եր-
բէք մոռնալու է: Դժուար բան մի չէ ըմ-
բռնելն՝ որ գիտութիւնք այն ատեն միայն
բարոյական ազդեցութիւն մի կունենան
ամբարտաւանութիւնն զսպելու և ամօ-
թալի ու եղեռնական յանցանքներն սան-
ձելու, երբոր անմիջապէս կրօնական ըզ-
գացմանց և բարի վարուց սովորութեանն
հետ միացած են:

Իսկ թէ ընկերական կենաց ծառայու-
թեանց մէջ ամէն մարդ ինչ ուղղութիւն
պիտի տայ իր կարողութեանցն՝ ասոր հա-
մար ամէն մարդ պէտք է աղէկ հասկընայ
իր էական կոչումն և իր մտաց ճշմարիտ
ուժն. առանց որոյ շատ անգամ մարդ իր
ամբարտաւանութեամբն կամ ազգակա-
նաց թերևամտութեամբն այնպիսի աս-
պարէզի մի մէջ կը մտնէ՝ որուն ամենևին
յարմարութիւն չունի՝ բաց յանձնապանծ
անբաւականութենէ: Այս պատճառաւ
շատ անգամ պատուական կարողութիւն-
ներ անգործ կը մնան, որոնք եթէ լաւ ուղ-
ղուած ըլլային՝ ընկերութեան իրական
ծառայութիւններ կրնային ընել. ուր ընդ-
հակառակն այնպէս չըլլալով՝ և իրենց կա-
րողութենէն դուրս բաներու գործածուե-
լով՝ ընկերութեան անկարգութեանն պատ-
ճառ կըլլան:

§. Գ

ԿԱՄԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՐՏՔԵՐ.

Ա.ՄԵՆԱՅՆ բարոյական և ամենայն պարտուց կատարումն գործողին կոչմանէ կամք և ազատութիւն կենթադրէ. վասն զի առանց ազատ կամաց՝ դրեթէ մինակ մեքենական շարժում մի կըմբռնենք որ բարոյականութեան հետ մասն չունի: Ա-ապա ընդհանրապէս բարոյականին ամենայն մասանց վախճանն ալ մարդուս կամքն ուղղելն է: Ա.պա ամենայն մեր պարտքերն սկզբամբ մեր կամաց հետ կապուած են, և մեր ղեկավարութեան և իմացողութեան վերաբերեալ պարտքերն ալ ուրիշ բան չեն՝ բայց այն ուղղութիւնն որ մեր կամական գործունէութիւնն պիտի ունենայ մեր իմացողութեան և ղեկավարութեանն: Եւ սակայն պարտքեր կան որ ուղղակի կերպով և մանաւանդապէս մեր կամեցողութեան կը վերաբերին: Մարդուս պարտքն է իր կամայ՝ իմացողութեան և ղեկավարութեան վրայ ունեցած իշխանութիւնն հաստատել: Մարդուս ղօրութիւնն և արժանապատուութիւնն իր կամական գործունէութիւնն է, ուսկից առաջ կուգայ կենաց սկիզբն և ազատ ներգործութիւն: Ինչպէս որ բանաւոր

կերպով ցուցուած է՝ որ եթէ ամէն ազգեցութեանց անձնատուր ըլլանք՝ փոխանակ գործօն ըլլալու գործիք կըլլանք, և զերի՝ փոխանակ տէր ըլլալու. և կըննանք ըսել որ անձի վիճակէն իրի վիճակ կանցնինք:

Կամաց կատարելութիւնն և արդիւնքն իր չարէն խորշելու և բարին առնելու զօրութեան վրայ է: Ապա մեր կամեցողութեան վերաբերեալ պարտքերն պիտի ըլլան այս բարւոյ զօրութիւնն կատարելագործել, մեր հոգին առաքինական սովորութեանց վարժեցնելով, և բան մի չընելու որ կարգի դէմ ըլլայ և մեր վախճանին հակառակ: Բայց յաճախ կըլլայ և այլ ուրիշ պատճառք մարդուս վրայ կը բռնանան և՛ի բարւոյ կը հեռացնեն: Վնասակարապէս երեք ախտք հոգին կապականեն և կամքն կը նուաստացնեն, այսինքն ամբարտաւանութիւն, ագահութիւն և հեշտութիւն: Ի հպարտութենէ կը ծնանին նախանձ, փառասիրութիւն, բարկութիւն, վրէժխնդրութիւն, և այլն: Յագահութենէ՝ այսինքն աշխարհիս նիւթական բարեաց յարմանքէն առաջ կու գան անիրաւութիւն, խարդախութիւն, սոերշմնութիւն, անկարեկցութիւն ազեաց այլոց: Ուրեմն պէտք է ուժով թամբ մի կանգնել այս ախտից դէմ որոնց հետևանքն այնչափ բազմաթիւ և վնասակար են: Իսկ հեշտութեան աղբիւրէն առաջ եկած անկարգու-

թեանց վնասակար հետևանքներն վերն տեսանք՝ Չգայողութեան վերաբերեալ պարտուց վրայ խօսած ատեննիս։ Պէտք չէ ամենևին մոռնալ որ այս թշնամւոյս միայն փախստեամբ կրնանք յաղթել. ա- պա ամէն մարդ պարտական է խուսափելու ապականեալ ընկերութիւններէ, վնասա- կար գրքերէ և բարուց վտանգաւոր դըպրո- ճութիւններէ, և այլն։ Առանց մանրա- մասն խրատներ տալնելու՝ բաւական ըլլայ ըսելն որ մարդ իր անկարգ յօժա- րութեանց յաղթելու համար կրօնից օգնու- թիւնները անհրաժեշտ կարևոր են, և ա- մէն օրուան փորձն յայտնապէս կը ցուցնէ որ ուրիշ որ և իցէ հնարք անբաւական են։

ՀԱՏՈՒԱԾ Բ

Մարմնոյն վերաբերեալ պարտքեր.

Մարդկային կեանքն ձևացնող հոգւոյ և մարմնոյ միութեան հարկաւոր պայմանն այն է՝ որ հոգին հակէ այս միութեան պահ- պանութեանն, որովհետև մարմինն ինք- նին անբաւական է այս բանիս։ Պա- հարկ է որ հոգին որչափ որ կրնայ՝ պահէ դործարանաց գործոց կարգաւորութիւնն, այնպէս որ մարմինն այնչափ չտաժանչայ՝ որ հոգին կերպով մի խղդէ, և ոչ ալ այն-

*չափ տկարանայ՝ որ հոգին անկարող լ-
ևայ անոր ձեռքով իր պաշտօններն կատա-
րելու, հապա երկու գոյատրութեանց մէջ
համեմատական զուգակշռութիւն մի և
ներդաշնակութիւն մի պահուի: Ապա բա-
նաւոր խնամք մի տանելու է մարմնոյ, և չա-
փազանց աշխատութեամբ զանիկայ ճնշե-
լու չէ: Եւ որովհետև մարմինն գէշ տուր-
րութեամբք գրգռելէն ու ապականելէն ա-
ւելի վնասակար բան չկայ որ գինքն ամե-
նայն ախտից գերի կընեն, ուստի պէտք է
զանիկայ բարեխառնութեան չափի մի մէջ
պահել, որպէս զի միշտ ուղղամտութեան
հնազանդի, զգուշանալով միանգամայն
այն չափազանց խստութիւններէն՝ որ զա-
նիկայ կը հիւծեն ու կը մաշեն: Թէ և զար-
մանանք ումանց խստակրօն քաջութեան
վրայ՝ սակայն բարեպաշտ մատենագրի[1] մի
հետ սա դիտողութիւնն կրնանք ընել որ
«Շատ սուրբեր որոնք իրենք գիրենք ա-
պաշխարանաց խստութեան տուած էին՝
յետոյ տարիքնին առնելով զղջացին՝ որ
սխալ նախանձաւորութեամբ իրենց մար-
մինն մաշեր էին, որով և Աստուծոյ և ըն-
կերաց ծառայութեանն անօգուտ եղեր
էին»: Ս. Բեռնարդոս ալ՛ի սկզբան գար-
ձին այս վտանգիս մէջն ընկնալով՝ վեր-
ջերն իր չափազանց խստութեանց վրայ կը*

1 Իշխանն Ալէքս. Հոհէնլոհ. Յիշատ. և փոր-
ձառութիւնք քահանայական կեանց. էջ 198:

պանգատէր , և երիտասարդութեան զա-
ռանցանք կը կոչէր զանոնք ։

Ա.պա մարդս այնպիսի բան մի պէտք
չէ ընէ՝ որ իրեն գործարանաց ամբողջու-
թեանն վնասէ , կամ կենացն կարճըն-
լուն պատճառ ըլլայ . և առաւել ներելի
չէ իր կեանքն վերցնելն ։ Հնոց մէջ գըլ-
խաւորապէս Աստիկեանք , և նորոց մէջ
ալ քրիստոնէութեան հակառակորդ իմաս-
տասէրք՝ անձնասպանութիւնն օրինաւոր
կամ անմեղադրելի սեպեցին։ Ուստի անոր
յանցաւորութիւնն հոս առջև ցուցնենք ։

Ա.ՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . — Ա.նձնասպանութիւնն
ապօրինաւոր է ։

Ով ուժեր ներեալ է ապառամբ լինել
Աստուծոյ , ապաշնորհ առ ընկերութիւն
և անգութ առ անձն . արդ անձնասպանն
այս իրեք յանցանօքս ալ ոճրագործ է ։

Ա. Անձնասպանն ապառամբ է Աստու-
ծոյ . վասն զի տակնուվրայ կընէ գործ
աստուածային նախախնամութեան, որ ըզ-
մեզ ստեղծեց իր խորհրդոց մէջ որոշեալ
վախճանով մի . անհաւատարիմ է առ Ա.ս-
տուած՝ որ մեզի յանձնեց կենաց ատենն.
և կը զրգռէ Աստուծոյ արդարութիւնն՝ իր
տեղն ձգելով ու փախչելով . կը հակառա-
կի աստուածային կամաց՝ որ կը յայտնուի
ի մեզ այն մահուան տարատիէն որ մարդ-

կային բնութեան անկախից է : Ա.նոր հա-
մար ամէն բարի մարդ կը հաւատայ որ
աստուածային կամաց զօրութեամբն կա-
պուած է այս կենաց հետ , ինչուան որ իր
էութեան արարիչն ուրիշ կերպ սահմանէ
բան սովորական օրինաց նախախնամու-
թեան : Զայս առ Ա.ստուած պարտաւո-
րութիւննիս այս կերպով կը բացատրէ Կի-
կերոն յերազն Սկիպիոնի [1]. « Որպէս և
քեզ , Պոպլիէ , և ամենեցուն աստուա-
ծասիրաց՝ համարելի է հոգին ի պահպա-
նութիւն մարմնոյն տուեալ , և ոչ անհրա-
մանի ի նմանէ յորմէ տուաւն՝ ի մարդկա-
նէ կենօք հրաժեշտ տալ , զի մի զաւանդ
մարդկային տուեալ յԱ.ստուծոյ խարդա-
նել երևեսջիք » :

ԹԻ. Ապաշնորհ է առ ընկերութիւն. վասն
զի յետ անկէց ընդունելու իր կեանքն, ըս-
նունդն և պաշտպանութիւնն՝ զանիկայ կը
զրկէ անդամէ մի՝ որ անոր օգտակար կըր-
նար ըլլալ՝ գոնէ կտրճութեան և համբե-
րութեան օրինակ ըլլալով . չար օրինակով
ընկերութիւնն կապականէ , և անոր հետ
ըրած լռելեայն դաշինքն կը կոտրէ՝ որով
պարտաւոր էր ծառայելու անոր՝ անկէց
ընդունած պաշտպանութեան փոխարէն :

Գ. Անգութ է առ անձն իւր . վասն զի
ինքզինքն ոչնչացնելով՝ կը զրկուի դիմե-
լու ի կատարելութիւնն որուն կրնար հաս-

1 Յաղագս Հաւատոյ ե. 8 :

նիլ, և կելլէ իր պատաւորին առջին՝ գոնէ տարակուսի մէջ ըլլալով՝ թէ արդեօք մեծապէս յանցաւոր չէ՞ անոր դիմացն, թէ և ինքն ինչ կարծեաց և ինչ հաւատքի տէր ալ ըլլայ։

Ա.յս ապացոյցս աւելի զօրութիւն կառնու ազգայ միաճայն հաւանութենէն որ անձնասպանութիւնն մեծ ոճրագործութիւն կը սեպեն. որուն Վիրգիլիոս[1] ալ կը վկայէ այս խօսքերով.

Ծանրաթախիծք կան ապա մերձ առնոսին
Որք տարապարտ մահուամբ երթեալ գիւրովին,
Եւ լուսատեացք ըզկեանս՝ի բաց ընկեցին.
Չի՛ ցանկալի նոցա արդ յօդըս վերին
Եւ ցականիլ և կրել կարիս վըշտագին.

Առարկ. Ա. Մեր բնութիւնն միշտ մեր երջանկութիւնն կը խնդրէ և հետևապէս՝ի թշուառութենէ կը փախչի. արդ երբեմն կըլլայ որ նեղկայ կեանքս մեզի մեծ թշուառութիւն է. ապա ինքզինքնիս սպանելով՝ բնութեան ձայնին հնազանդած կըլլանք։

Պա. ս. փոքրագոյնն մերժելի է։ Ոչ մի անգամ կը հանդիպի որ ամենամեծ թշուառութեանց մէջ ալ՝ բարւոյ առաւելութիւն մի չգտնուի՝ որ կեանքն յոչ գոյութենէ նախապատուելի կընէ, և կրանցմանելուն համար վախ կը բերէ։

1 Ենէական գիրք 2. տող 620։

Տանել վշտաց քան մեռանել
Ահա է մարդկան նշանագիր,

բսաւ Լաֆոնթէն [1]. բայց սակայն ինչ ալ ենթադրեանք, որովհետև մարդուս վախճանն Աստուած է, և էակի մի համար ճըշմարիտ երջանկութիւնն իր վախճանին հասնիլն է, կը հետևի թէ ինչ որ՝ի կարգի աստուածային նախախնամութեան է՝ մարդուս համար չար չկրնար ըլլալ, և իրեն ամէնէն մեծ բարիքն աստուածային կամաց հնազանդիլն է։ Ուր ճիապ որ շատ անգամ մենք մեր յանցանաց համար կը տանջուինք՝ ապա պէտք է որ պատիժն կրենք։ Բայց սակէ անտանելի երևցած վշտերն սակաւանև են, և այս պարագայիս մէջ մարդուս ստոյգ մխան իր անհամբերութիւնն է, որ կարգիլէ դարմանին սպասելու՝ որ թերևս շուտ պիտի հասնէր։ Շատ անգամ ալ երևակայեալ թշուառութիւններ են, և խեղթութեան աստիճանին անցնելէնետև մենք ալ կը զարմանանք՝ թէ ինչպէս այն թեթև բանին համար յուսահատութեան մէջ ընկեր ենք։

Բ. Հետևութիւնն մերժելի է։ Ողղամըտութիւնն ալ՝ որ ուրիշ բան չէ բայց եթէ ճշմարիտն ու բարին ըմբռնող իմացականութիւննիս, այն ալ մեր բնութեան կը վերաբերի. և յայտնի է որ իմացականութեան լոյսն կոյր բնական ազդեցութեանց

[1] Առակք Ա. 16։

վրայ պէտք է իշխէ . իսկ արդ ինչպէս որ ցցուցինք՝ ուղղամտութիւնն կարգելու մեզ, բառնալ պիտանա մեր , և կը տրվեցընէ որ մեր ճշմարիտ բարին մեր վախճանին կատարմանն մէջն է , այսինքն Աստուծոյ մեր վրայ ունեցած դիտաւորութեանն : Ապա տուտ է ըսելն թէ մենք զմեզ սպաննելով բնութեան ձայնին մտիկ ըրած կըլլանք :

Առարկ բ . Անճնասպանութիւնն կորըճութեան գործ մի է , ինչպէս որ Կատոնի , Բրուտոսի , Աննիբաղայ և ուրիշ օրինաւորներէն յայտնի է . ապա ինքնասպանութիւնն ոճրագործութիւն մի չէ :

Պհ . ա . Նախորդն զանազանելի է . անճնասպանութիւնն ինքնիրեն կորճութեան գործ մի է մինչև ատիճան մի , նեըելի կը սեպենք նախորդն . . իսկ պարապայից նայելով ուսկից առաջ կու գայ՝ մերժելի է նախորդն : Բացարձակապէս չենք կրնար ըսել թէ անճնասպանութեան մէջ ատիճան մի կորճութիւն չըլլայ . որովհետև բոլորովին վատ մարդիկ որ թշուառութեանց չեն կրնար համբերել , սակայն ինքզինքնին սպաննելու ալ չեն համարձակիր , ինչպէս Ներոնի օրինակին վրայ կերեւնայ . բայց կուրանամք թէ անճնասպանութիւնն նկատել ՚ի պարապայս իր յորմէ կը ծագի , ճշմարիտ քաջութեան գործ մի ըլլայ . վասն զի կտրիճ մարդուն ճշմարիտ փորձն նոյն իսկ թշուառութիւնն է . և ոչ որ ինքզինքն կը սպաննէ ուրիշ

բանի համար չըններ՝ բայց եթէ այն թշուա-
ռութենէն ազատելու համար՝ զոր տանե-
լու կարճութիւն չունի . ինչպէս որ Մար-
տիալէս քերթողն ալ ըսաւ

Ի յանձկութիւնս դիւրին լինի է արհամարհել մարդս
ըզկեանս ,
Այլ հըզօր այն ոք եւեթ որ թշուառըն գիտէ լինել :

Տարակոյս չկայ որ առարկութեան մէջ յիշուած մարդիկն իրենց կենաց մէջ քա-
ջութեան օրինակ սեպուած էին , բայց ա-
նոնց կորճութեան անունն աւելի պիտի
մեծնար թէ որ բաղդի արկածից համբե-
րելու հաստատութիւն ունենային . և այս
վերջիններուս օրինակ կրնան ըլլալ Արիա-
տիդէս , Հռեգուլոս , Վարրոն՝ կանեայ
պատերազմէն առաջ , Սուրբն Լուդովիկոս
յԵգիպտոս և Նափոլէոն ի Սուրբ Հելինէ
և ուրիշ շատեր : Այս ալ ըսելու ենք որ
հնոց մէջ եղած երևելի մարդիկն որ անձ-
նասէր եղան՝ միայնակար նախապաշար-
մունքէ մի չարժեցան՝ որ ամէն բարոյա-
կանն աւրուած դարերուն սովորական
սխալն է :

Ե . Հեռատեսութիւնն մերժելի է : Ինչ կամ
շատ կորճութիւնն իրաւի և անիրաւի չափ
չկրնար ըլլալ , և այս պարագաներուն մէջ
ամենևին կցորդութիւն չկայ . այնպէս որ
եթէ անձնասպանութիւնն ամենայն նկատ-
մամբ ալ քաջութեան գործ մի համարինք՝
չենք կրնար հետևցընել թէ անձնասպա-
նութիւնն ազօրինաւոր չէ :

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Պատուէր մարդոյ առ ևս ևս իւր։

Մարդուս պատքերն միայն առ անձն ունեցածներովն չեն վերջանար, որովհետև երկրիս վրայ առանձին չապրիր, այլ ընկերութեան մէջ որոշեալ տեղ մի բռնած է, և այս դիրքս իր և նմանեաց մէջ յարաբերութիւններ կը հաստատէ՝ ուսկից պարտքեր առաջ կուգան։ Այս օրուան օրս ալ վէճ չվերցներ թէ մարդս ընկերութեան համար հաստատուած է, և մէկուն մտքէն ալ չանցնիր Ռուսոյին[1] հետ պընդել թէ մարդս բարի ծնած է, բայց ընկերութիւնն է զինքն ապականողն։ Յայտնի է որ մարդ հաստատապէս և ընդհանրապէս բնական միտում մի ունի ընկերական կենաց, և քանի մի կարգէ դուրս և բացառեալ պարագայներէ՝ մարդ մի չգտնուիր որ ընկերութենէ դուրս ապրի. և սա բանս աւելի յայտնի կըլլայ մարդուս կարողութիւններէն և յօժարութիւններէն որ բնականապէս ընկերական վիճակի յարմար են. և դարձեալ բուլոր կենդանւոյն մէջ մանաւանդ՝ ի մանկու-

1 Ձառ սակս ծագման և հաստատութեան անհաւասարութեանց՝ ի մարդիկ։

թեան իր նմանեաց օդնութեանն կարօտ է, ինչպէս որ իր բնական ազդեցութեանց տկարութենէն և իր կազմութեան բնութենէն ալ կերևի:

Այդ ընկերութեամբ կապեալ մարդիկ՝ իրարու մէջ անդրադարձ իրաւունք կունենան, զոր օրինակ իրաւունք յարգելոյ ըլլեանս, զպատիւ, զինչս և զազատութիւն: Ասկից առաջ կուգան և զանազան պարտք, որոնցմէ ոմանք կը վերաբերին մարդուս ընդհանրապես նկատեալ, իսկ ուրիշներն տեսակ մի ընկերութեան մասնաւոր պարտքեր են: Այս պարտքերնուս բովանդակութիւնն կրնայ ըսուիլ բարոյական կրնայ ըսուիլ:

ՀԱՏՈՒԱԾ Ա

Պարտք մարդոյ ընդհանուր.

Մարդկանց իրարու ունեցած պարտքերնին այս երկու սկզբան վրայ հաստատուած են՝ որ բոլոր ընկերական բարոյականին համաձայնութիւնն կը սեպուին. Ուրիշի երէ այն բանն՝ ինչ որ կուզես որ քեզի ընեն. մի ըներ ուրիշի այն բանն՝ ինչ որ չես ուզեր որ քեզի ընեն: Ասպա ուրեմն այս պարտքերս կամ հաստատական են և կամ ժխտական. առաջիններուն մէջ բան մի կը հրամայուի ընելու, իսկ վեր-

*ջիննեբուն մէջ բան մի կարգելուի . ուս-
կից կը ծագին համեմատ պատուհերքներ հա-
ռական կամ արգելական [1] :*

§ . Ա.

ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ .

Ա. ա մարդ ընդհանուր ունեցած գլխաւոր հաստատական պարտքերնիս ասոնք են . ա . Սէր մերոց ևհաևնաց . մարդկան ազգն մեծ գերդաստան մի է՝ որուն անդամքն իրարու եղբարք են . ապա պէտք է ամէն մարդ սիրենք , և ամէն դիպուածի մէջ բարեկամութիւն ցուցնենք : Քրիստոնէական կրօնքն՝ մարդս սիրելու պատուէրն՝ զԱ.ատուած սիրելու գերազոյն պարտուց տակն ձգելով՝ Գրոհիւն ըսուած առաքինութիւնն յարդարեց՝ որուն ամէն օրէնքն այս պատուիրանիս մէջ բովանդակած է . « Սիրել զԱ.ատուած ’ի վեր քան զամենայն , և զընկերն իբրև զանձն վասն Ա.ատուծոյ » :

բ . Արդարութիւն . առաքինութիւն մի է որ ամէնուն կուտայ իրեն ընկածն : Ա.րդարութեան դաղափարն մանաւորապէս

1 Այն զանազանութիւնս կայ նաև ’ի պարտս առ Ա.ատուած և առ անձինս . բայց մանաւորապէս առ նմանիս պարտուց մէջ յիշեցինք , որով հետև այս տեսակ պարտուց մէջ աւելի յայտնի կը տեսնուի անոնց տարբերութիւնն :

կապուած է իրաւունքն յարգելու դատաւարին հետ : Արդարութեան մէջ կը բովանդակի հաւատարմութիւնն որ է իր պարտաւորութիւնն կատարելու ճշդութիւն, և այս պայմանաւ միայն ընկերութիւն կըրնայ ըլլալ : — գ. Բարեգործութիւն որ է մեր նմանեաց օգտակար ըլլալ՝ որչափ որ բարեպէս կարող ենք, որովհետև կը վաւաքինք որ ուրիշներն ալ մեզի նոյնն ընեն : Բարեգործութեան պարտուց կատարումն ընդհանրապէս Սարդասիրութիւն կըսուի :

դ. Երախտագիտութիւն ընկալեալ բարեաց : Ապերախտութիւնն բոլոր աշխարհի սարսափ կը բերէ :

§. Բ

ԱՐԳԵԼԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ.

Հաստատական պարտքերու հետ քնանկանապէս կը համաձայնին արգելական պարտքերն, որով արգիլուած են ատելութիւնն, անիրաւութիւնն, անհաւատարմութիւնն, չարագործութիւնն և ապերախտութիւնն, և այլն :

Մարդուս իր նմանեաց ունեցած մերժական պարտքերն՝ արգելական պատուէրքներուն վրայ հաստատուած են, որ մեզ կարգելուն՝ ինչ որ այլոց վնասակար են : Այս

*ունակ պատուէրքներն գլխաւորապէս ա-
նոնք են՝ որ կարգելուն մարդուս որ և
իցէ դաս ընդդէմ կենաց , ընչից , ազատու-
թեան և պատուոյ այլոց , որ ըսել է գող-
դաւորութենէ , զգողութենէ , գիւրատուհա-
րուածութենէ , զչարախօսութենէ և զպղպատու-
թենէ, և այլ որ և իցէ վնասք :*

*Ա. Դաս ընդդէմ կենաց . — Մարդասպա-
նութենէն է գործ սպանանելոյ զմարդ առանց
ունելոյ իրաւունս [1]. որ միշտ և յամենայն
տեղիս մեծ ոճիր սեպուած է , և՝ ի քնա-
կան օրինաց յայտնապէս արգիլեալ : Բը-
նական օրէնք կարգելուն նոյնպէս զայն
ամենայն որ վնասեն առ ընդհանրական մարդ-
կային ազգի, ինչպէս անդամահատութիւն,
վէրք , հարուածք, բանտարկութիւն, կռիւ,
և հարկաւոր պարենի և զգեստուց զլա-
ցուցն և այլն :*

*Թէ և բազում հարք եկեղեցւոյ և աս-
տուածաբանք հակառակն հաստատեցին՝*

1 Ընդհանրապէս ընդունելի է որ հասարակաց
իշխանութենէն կամ պետութենէն քանի մի պարա-
պայից մէջ իրաւունք ունի մարդուս կենացն վրայ
Թէ պատերազմով և Թէ արդարութեան վճռով
որ իր անուանքն կը տրուի : Եւ յիրաւի ընկերու-
Թիւնն հապէս ունի այն ամենայն իրաւունքն որ
հարկաւոր են իր պահպանութեանն համար . և այս
իրաւունքս իրեն տուած է իր բնութենէն ու հաբէա-
սութենէն և հետևապէս Աստուած՝ որ արարիչ
է այս բնութեանս և որ այս հարկաւորութիւնն
կամեցեր է :

սակայն այսօրուան օրս ընդհանրապէս կը
տրվեցնեն թէ ամէն մարդ կարող է՝ ա-
նարատութեամբ խղճի, իր կեանքն պաշտ-
պանել՝ վնասու կենաց անիրաւ յարձակո-
ղի, եթէ ուրիշ կերպով ինքզինքն պաշտ-
պանելն անհնարին ըլլայ. այս բանս կը
հրատարակեն մարդկային ազգի ընդհա-
նուր հաւանութիւնն և անձին սիրոյ բնա-
կան ձայնն՝ որ հարկաւոր է ամէն էակց
իր պահպանութեանն հսկելու համար:

Տեսակ մի մարդասպանութիւն ալ կայ՝
որ հասարակ մարդասպանութենէ մաս-
նաւոր կերպերով կը զանազանի, այս է
վճռաւորութիւն ըսուածն՝ որ է երկուց հա-
կառակորդաց ազատութեամբ իրարու հետ
պատերազմելն՝ տեղն, ժամն և զէնքն ո-
րոշելով: Այս անգութ սովորութիւնս՝ որ
Յունաց և Հռովմայեցւոց անձանօթ էր՝
Չ դարուն մէջ հիւսիսային բարբարոնե-
րէն մտաւ Եւրոպայի զանազան կողմերն:
Մենամարտութիւնն շատ դարեր կը գոր-
ծածուէր նաև յանցաւորն յայտնելու օրի-
նաւոր միջոցի մի պէս, և Դատաստան Աս-
տուծոյ ըսուած դատաստանական փորձե-
րու կարգն կը համարուէր. եւթն միայն
անիրաւութեան վրէժխնդրութիւն ընելու
և պատուոյ հատուցմունք պահանջելու հա-
մար կը գործածուէր: Թէ և մեր օրերն ա-
մարտական կատաղութիւնն տկարացած
է, սակայն դեռ շատերն զոհ կըլլան անոր,
ուստի հարկաւոր է ցուցնել թէ ինչ պատ-

ճառաւ ողջամիտ բարոյականի վնասակար է : Ըսելիքնիս այն տեսակ մեռնամարտութեան համար է՝ որ մարդ իր առանձին իշխանութեամբ կը գործէ . վասն զի ամէն մարդ գիտէ թէ յանուն պետութեան և հայրենեաց շահուն համար եղած մեռնամարտութիւնն կրնայ օրինաւոր ըլլալ, ինչպէս որ յայտնի է Դաւթի և Գողիաթու և Մանլիոսի կեղտի մի հետ ըրած մեռնամարտութիւններէն և այլն :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ . — *Մեռնամարտութիւնն ապօրինաւոր է .*

Ա . Ոչ ոքի՛ւ երբեք է ինքն իր մահուան պատճառ ըլլալ , կամ իր առանձին իշխանութեամբն իր նմանն սպաննել . հետևապէս և ոչ կամաւորապէս ինքզինքն վտանգի մէջ դնել՝ սոսկայի մէկն կամ միւսն գործելու : Սրդ այս բանս կընեն մեռնամարտողք՝ որովհետև ինքզինքնի՛ն վտանգ կըդնեն սպաննուելու կամ հակառակորդնին սպաննելու :

Բ . Մեռնամարտութիւնն իրաւամբ վնասակրնայ համարուիլ ընկերութեան իրաւանց դէմ : Սրդի իմաստասէրներէն մէկն [1] կըսէ . « Մեռնամարտութիւնն ընկերատապա-

1 Լ . Ե . Պոթէն . Իմաստասիրութիւն բարոյականի հա . Բ . գլ . ժ . § 114 :

նութեան ոճիր է, որովհետև ուղղակի ընկերութիւնն կործանելու և անոր հաստատութեան սկզբունքն խախտելու կը ջանայ : Ընկերական վիճակի առաջին պայմանն այն է՝ որ իւրաքանչիւրոց կեանքն և իրաւունքն օրէնքով և հասարակաց զօրութեամբ պաշտպանուի : Սրտի երկու անհատ իրենց կռիւն վերջացնելու և նախատինքի վրէժխնդրութեան համար իրարու ձայն տալով՝ կամովին իրենք զիրենք օրէնքէ դուրս կը դնեն . . . Եւ որչափ կըրնան վայրենի վիճակի մէջ կը մնանեն՝ ուր որ ամէն մէկուն պահպանութեան խնամքն իրեն ձեռքն է : Մենամարտութեան սովորութիւնն որ բարբարոսութենէ առաջ եկած է՝ եթէ ընդհանուր տարածուի, նորէն չուտով՝ ի բարբարոսութիւն տանի զմեզ » :

Գ . Այն բանն որ ճշմարտապէս իմաստունք դատապարտած են՝ պէտք է որ ապօրինաւոր ըլլայ . արդ այսպէս է մենամարտութիւնն ալ : Եւ այս առաքինի մարդկանց խղճին բողոքին իրաւունք տալու համար՝ չատ թագաւորներ խիստ պատիժներ սահմանած են մենամարտողաց դէմ. ինչպէս Սուրբն Լուդովիկոս, Հենրիկոս Դ և մանաւանդ Լուդովիկոս ԺԴ . Մեծն : Այս օրէնքներուն ինչպէս որ ըսինք այս բարբարոսական սովորութիւնս և նախապաշարմունքս երթալով պակսելու վրայ է Եւրոպայ՝ մանաւանդ Փրանկիոյ մէջ :

դ. Մեծամարտութիւնն արդարացնելու համար բերուած պէսպէս պատճառն՝ անարգութենէ խորշել և պատուոյ հատուցումն ընդունելու հարկաւորութիւնն է. և սակայն շատ ունայն է այս պատճառս. վասն զի ա. այն մարդիկն որոնց խօսքն ու վկայութիւնն աւելի արժէք մի ունի՝ անոնք այս մեծամարտութեանս հակառակ են. ապա մեծամարտին ճշմարիտ պատիւ մի չէ. բ. ճշմարիտ պատիւ մի չէ՝ պարապ բանի մի համար կամ վնասակար նախապաշարման մի հնազանդելու համար իր կեանքն վտանգի մէջ դնելն, որ շատ անգամ ընկերութիւնն կը զրկէ այնպիսի անձերէ՝ որոնք մեծամեծ ակնկալութիւններ կուտային. գ. անիրաւութիւն կրողն ամէն անգամ յաղթող չելլեր, այլ կրնայ իր հակառակորդին պէս սպաննուիլ. և այս դիպուածիս մէջ փոխանակ իր անձին անիրաւութեան վրէժն առնելու իրեն անիրաւողին զոհ կըլլայ, և նախատինքէ զատ մահ ալ կը ժառանգէ, անիրաւողն ալ կըլլին յանցանաց տէր կըլլայ:

Առարկ. — Պատիւն կեանքէն աւելի յարգի է. ապա ներելի է իր կեանքն վնասել՝ պատիւն ազատելու համար:

Պիտ. Նախորդն զանազանելի է: Պատիւն որ է ըսելամէն ամօթալի գործէ զգուշանալն կեանքէ աւելի պատուական է, հաւանիմ ընդ նախորդն. իսկ պատիւն որ՝ի կարծիս մարդկան է հաստատեալ, մեր-

ժեմ։ Նոյն զանազանութիւն զօրէ հետևորդին համար ալ։ Անշուշտ պատիւ ըստծնիս երբ կը հասկցուի իր պարտուց հատատարմութեան մտքով, կեանքէն աւելի պատուական է, և ոչ միայն ներելի է՝ այլ և պարտաւորութիւն կայ աւելի մեծ նելու՝ քան թէ անպատուող գործ մի ընելու. բայց ճշմարիտ չէ ըսել թէ պատիւն հաստատեալ՝ի կարծիս մարդկան՝ կեանքէ աւելի յարգի է։ Վասն զի հաստատակաց համարմանէն աւելի փոփոխական բան չկայ, և ոչ մարդկանց դատաստանէն աւելի ընդունայն և սուտ. անտարակոյս ըստծէս այն չեղլեր՝ թէ պէտք է հաստատակաց կարծիքն արհամարհենք՝ այլդերի չըլլանք անոր։ Մեր գոյութիւնն պահպանելու պարտքն՝ զոր Աստուած տուաւ մեզ՝ որուն ժամանակին ինքն որոշած է, աւելի դերագոյն կարգ մի է, քան թէ մեր նմանեաց բարի համարման պահպանութիւնն՝ թէպէտ բանաւոր և ստոյգ ալ ըլլայ. ապա ևս առաւել կեանքէ աւելի վերապահելի չէ այն կարծիքն՝ որ ուղղամտութեան հակառակ նախապաշարմանց վրայ հաստատած է, ինչպէս որ կը հանդիպի ըստծէպ մեռնամարտութեան խնդրոյ մէջ։

Բ. Դառ չնդդեմ չնչից. — Ինչպէս որ ըսինք չնկերոջին մարդուս բնական վճռին ըլլալով և այս վիճակն առանց իրաւանց առագրան չկրնալով դիմանալ, կըրնանք հետևցնել թէ այս իրաւանց գործա-

*դրութիւնն ընկերութեան քնութեանն յա-
րակից է , և անոր դէմ ընել չար :*

Հիմն առաջնական .

*Քաղաքային Օրինագրոց [1] առաջ առ-
ման Համեմատ Առաջնորդն է իրաւունք
վայելելոյ և վարելոյ զինչս բացարձակապես ,
բաւական է որ յօրինաց արդելեալ չըլլայ
գործածութիւնն : Այլ եթէ մարդկային
ընկերութեան պայմաններն քննելու ըլ-
լանք՝ ամէն տեղ և քաղաքակրթութեան
ամէն ժամանակ կը տեսնենք որ այս իրա-
ւունքս առանց բացառութեան խստիւ պա-
հուած է : Ամէն պզտիկ մէջ մըչտ կը գըտ-
նենք գոնէ շարժական առաջնուծոց գոյու-
թիւնն : Այրենի որսորդն ունի գոնէ իր
աղեղան , նետերուն և զարկած կենդան-
ոյն առաջուածքն . և վրանաբնակ հովիւք
ունին իրենց վրաններուն և հօտերուն
առաջուածքն : Գրեթէ ամէն տեսակ շար-
ժական առաջուածոց հետ կը վիճանան ան-
շարժ առաջնուածք այսինքն կալուածք , տուն
և այլն : Եւ որովհետև սա բանս մարդ-
կանց մէջ ընդհանուր է , ապա առանց
ուրիշ ապացոյցի կարօտ ըլլալու՝ կրնանք
հետևցնել թէ առաջնութիւն մեր բնորդական օ-
րէնք մի է : Բայց ամենայն գժուարութիւն*

[1] Յօդուած 544 :

վերցնելու համար՝ նոյն իսկ խնդրոյն հիմէն առած պատճառաբանութեամբք քննենք թէ յորմէ համառաւեալ է հիմն առաջնոյն։

Մարդս իր հոգւոյն կարողութեանցն մէջ բնական յատկութիւն մի ունի՝ որուն արգասիքն և գործն իրեն կը սեպհականին. ինքն այս կարողութեանցս օգնութեամբն կրնայ բնութեան վրայ իշխել և զանիկայ իր գործոցն ծառայեցնել։ Հոգին առած բերքն յայտնապէս մարդուս և կենդանեաց ախտոյին յարմար են. և այս բերքերէս առաջ կուգան կենաց ամէն ախտոյից հարկաւոր զանազան նիւթերն. իսկ անասունք որ մարդուս ծառայութեանն համար առեղծուեցան՝ առատապէս կուտան անոր անուշդն, զգեստն և այլն, և որոնցմէ անթիւ ու անհամար օգուտներ կը քաղէ ամէն նկատմամբ։ Ի սկզբան առնցմէ մէկն ալ մանաւորի մի ստացուած չէին, և օրինաւորապէս առաջին գրաւողին գործածութեան համար էին, որ իրեն ազատութեամբն զանոնք ախտի ընտրեր։

Եւ որովհետև մարդիկ ամէնքն ’ի բնութեան հաւասար են, և մէկուն ազատ ընտրութիւնն աւելի զօրութիւն չունի՝ ուրիշի մի նոյն բանին ընտրութենէն, ապա կը հետևի թէ ստացուածոյ մի տիրութիւնն նախ և առաջ ստացման կանխաւորութեան մէջն է. յետոյ անմիջապէս անոր հետ կը միանայ վաստակոց տիրութիւն։ Ապա ու-

բեմն նիւթը՝ նախ իրենց սկզբնական վի-
ճակին մէջ և յետոյ իրենց կերպարուրու-
թեամբն, արդեամբք և պարագայիւքն ա-
նոր սեպուհեցան՝ որ առաջին գործածող ե-
ղաւ, անոր որ զանոնք պահեց, չատցուց
և փոխեհեց իր աշխատուրեանցը համար.
որով
ունեցաւ գիրարուհու առագուհուց, և ար-
դարապէս կրցաւ պաշտպանել զանիկայ
ամենայն յափշտակուրեններէ։

Եթէ այս սկզբունքս չընդունինք՝ չատ
հետևուրիւններ առաջ կուգան ուղղամը-
տուրեան հակառակ, որով պէտք կըլլար
ըսել թէ մարդ մի որ երկրին արդիւնքն
ժողվեր է, և իրեն համար զգեստ յօրի-
ներ է, անասուններ մեծցուցեր է և տուն
չիներ է՝ ամենևին իրաւունք մի չէ ունե-
ցած այս նիւթոց վրայ, և աւելի զօրաւոր
մի կրնայ զանոնք առանց իրաց յափշտա-
կել։ Մարդ ով չտեսներ թէ որպիսի ան-
կարգուրեան չէինք հասներ այսպիսի են-
թադրուրեամբ։ Նոյն բանն ըսելու է նաև
մշակուած երկրի վրայ. վասն զի եթէ եր-
կիրն առացուածք չտեպուեր՝ ապագային
վրայ ապահովուրիւն մի չէր ըլլար, և ա-
մէնէն ծանր աշխատուրեանց պտուղն ալ
կը կորսուէր։ Եւս առաւել որ եթէ մարդ
իրեն և իր յաջորդաց համար առացուածք
ունենալու բնական յօժարուրեամբն չը-
յորդորուէր աշխատելու՝ աշխոյժ ալ չէր
ունենար, և մարդկային ընկերուրիւնն կը
զրկուէր այն մեծամեծ գործոց և հարկա-

ւոր աշխատանաց համար պէտք եղած զօրաւորագոյն ժղուէն ։

Ա.յն իրաւունքէն որ ամէն ստացաւէր ունի իր ուզածին պէս իր ստացուածքն գործածելու՝ բնականապէս առաջ կուգայ փոխանցոջական իրաւունքն ալ . որովհետև կըսէ . Ես իմ ստացուածքս վայելելու իրաւունք ունիմ , և ինձ ըլլալով ուզածիս պէս կրնամ գործածել . ապա կրնամ ուրիշի մի ալ տալ . ուրեմն հայր մի կրնայ տալ զաւակներ իր որդւոյն կենդանութեան ժամանակ կամ մեռնելու առեն ։ Ասկէց կը ծագի ժառանգական օրէնքն . ծնողաց կամքն այն ըլլալով որ զաւկներն իրենց ինչքն ժառանգեն , ապա ժառանգութիւնն ճըշմարիտ ստուգութիւն մի է իրենց կողմանէ ։ Նոյն սկզբան զօրութեամբ եթէ ստացաւէրն իրաւունք ունի իր ստացուածքն իրեն պարզ ատրք մի տալու , ունի նաև իրաւունք զանիկայ փոխանցելու՝ պայմանաւ ։ Այս պայմաններս շատ անգամ կը բովանդակին 'ի փոխառակոչական փոխանցեալ ստացուածոց համարժէք իրի մի հետ թէ հիւր եղեր է և թէ արժէք ներկայացուցիչ որպիսի են դրամք , և այս փոխառնակութիւնս ալ կըսուի վաճառական ։

Ընծնիս համառօտենք . ստացման հիմն կամ սկզբան 'ի սկզբան գրաւման կանխատրոջական և վաստակոց կամ աշխատանքի վրայ է . յետոյ օրինաւորապէս փոխանցեալ 'ի ձեռն սրոց կամ փոխառնա-

կոչեան : Հինն իրաւանց տուողեան՝ կամ պատճառն՝ որով տուողում ի իրաւունք ի կը հաստատէ , մարդկային բնութենէն ուղիղ կը ծագի , ինչպէս որ քաղաքացինք : Եւ յիրաւի ոչղղամտութեան ինձ կը ցուցնէ թէ իրաւացի և լաւ կարգի է՝ որ մարդիկ իրենց բնական գոյութեանն համանպատակ պայմաններն պահեն իրարու նկատմամբ , առանց որոյ մարդկանց մէջ կարգ և խաղաղութիւն չինար : Պատշաճաւոր է որ առողջութիւն յարգուի , և բարեբանչիւրոց պարտքն է անոր չվնասելն . հետևապէս գողութիւնն կամ օտարի ինչքն իրեն սեպհականելն բնական օրինաց հակառակ է :

Ի սկզբանէ հետէ ընտանիք քան զընտանիս աւելի բազմութիւ և մեկմեկէ աւելի ճարտար եղած պիտի ըլլան : Այս ընտանիքս իրենց կալուածքն աւելի լաւ մշակելով հարստութիւննին աւելցուցին , և բնականապէս աւելի զօրաւոր եղան : Եւ ճոխութեանց անհաւասարութիւնն բնական հետևութիւն մի եղած է՝ հզօրց և մարմնոյ կարողութեանց անհաւասարութիւն . այս միշտ անհաւասարութիւն մի է բնութեան անդ է :

Հինգ բաղադրեալ իրաւունք .

Ինչպէս որ բացատրեցինք՝ սեռացումն իրաւունք մի կը հաստատէ , և պէտք է որ մարդիկ իրարու ներումամբ այս իրաւունքս յարգեն : Սրդ սեռացման իրաւունքն՝ ինչպէս նաև կենաց և պատուոյ և ազատ գործոց պաշտպանութիւնն ապահովելու համար՝ հարկ եղաւ հաստատակաց զօրութիւն մի սահմանել որ կարենայ ամէնուն չահն պաշտպանել : Եւ որպէս զի այս զօրութիւնն ըստ կամի և հարստահարիչ չըլլայ՝ հարկ էր որ կարգաւորեալ ըլլար , այսինքն իր գործերն օրինաց համեմատ ըլլային : Իսկ սրդ օրէնքն պէտք է որ ըստ ինքեան սրդարար ըլլան և իրաւանց վրայ հաստատեալ :

Իրաւունքն սրդարութեան գաղափարին հետ կը նոյնանայ . վասն զի ընդհանուր և բացարձակապէս մուծեալ իրաւանց գաղափարն՝ սրդարութեան գաղափարին հետ նոյն է՝ որուն մէջ կը բովանդակին բարոյական հաւատարմութեան և զգօնութեան սկզբունքն . ասոնք ալ սերիշ բան չեն՝ բայց եթէ նոյն իսկ իրաւանց սկզբունքն . օրինակի համար այս առաջնեկս «Ինձմէ ստացուածս իրեն չկատածն տալու է . Մի՛ չուներ ոչիշի այն բանն՝ զոր չես ուզեր որ քեզի չունեն , և այլն :

Երբոր իրաւունքն յընդհանուրս չմտածուէր՝ այլ առանձինն այս և այն նիւթոյն վրայօք, և անոնց բնութեան համեմատ կը գանազանի, այն առեն այլ և այլ անուններ կունենայ : Երբ քաղաքային ընկերութեան վրայ կը մտածուի և քաղաքային օրինաց հիման և սկզբան մտքով կառնուի՝ կըսուի իրաւունք քաղաքային. կրօնական ընկերութեան վրայ առնուելով կըսուի իրաւունք կանոնական կամ պարզապէս կանոն. հռոմէական օրէնսդրութեան վրայ՝ կըսուի իրաւունք հռոմէական, ֆրանկական օրէնսդրութեան վրայ՝ իրաւունք ֆրանկական և այլն :

Քաղաքային իրաւանց հիմն է յարմարութիւն ժանիօրոշութեան իրաւանց. քաղաքային ընկերութեան արդարութեանն և օրէնսդրութեանն վրայ. և քաղաքային ընկերութեան էական պայմաններէն մէկն ալ՝ առաջնման իրաւանցն յարգութիւնն է, որով այս ալ քաղաքային իրաւանց մասն կըսուի :

Հարկաւոր չէ դարձեալ յիշելն որ ինչպէս ամենայն իրաւանց՝ այսպէս ալ քաղաքային իրաւանց հետ զուգընթացաբար անոնց համեմատ պարտքեր :

Գ. Դար ընդհանուրն և պատուոյ. — Վերն գրած սկզբունքներէս կը հետևի որ ամենայն դար հակրտակ բանաւոր ազատութեան մարդոյ՝ ապօրինաւոր է. վասն զի ազատութիւնն ալ բնական բարիք մի է՝ զոր ամէն մարդ իրաւապէս կը

ստանայ հասարակաց իրաւանց զօրութեամբն, բանաւորութեան սահմանին և հասարակաց օգտին համեմատ:

Նախընթացէն կը հետևի զարձեալ՝ որ եթէ վնասու պատճառ եղած ենք՝ հատուցանելու կը պարտաւորիմք, թէ և անկէ մեզի օգուտ մի եղած չըլլայ. ատոր պատճառն այն է՝ որ պարտաւոր եմք տալ ընկերոջ այն բանն՝ որ իրապէս իրեն կը վերաբերի:

Իսկ չարախօսութիւնք և զրպարտութիւնք և այլ ուրիշ որ և իցէ կերպով ընկերոջ պատուոյն եղած վնասն որչափ կարելի է հատուցանելու պարտքն ամենուն ծանօթ է, թէ և մեր բարի համբաւոյն վնաս հասնի այն հատուցմամբ:

ՀԱՏՈՒԱԾ Բ

Պարտք վարդոյ վասնզաւոր.

Մարդկային ընկերութիւնն ընդհանրապէս մտածեալ՝ երկու վիճակ կունենայ. ընկերութիւն առանձին և ընկերութիւն հասարակաց. առաջին այսպիսանն է տնական ընկերութիւն կամ գերդաստան ըսածն, իսկ երկրորդն քաղաքական ընկերութիւն կամ պետութիւն: Պետութեան մէջն է ազգն և քաղաքն կամ հասարակութիւնն, որոնք գերդաստաններէ կը ձևանան: Մարդս՝ ի

ձեռն գերդաստանի կըլլայ քաղաքացի, և առավալ մասն ազգի։

Վերջի առեններս կենցաղագիտաց մէջ ընդունայն վէճեր ելաւ՝ որով կուզէին ուրանալ գերդաստանի սեպհական եղած բնական անկախութիւնն. բայց ողջամիտ կարծիքն յաղթեց։ Ապա պետական իրաւունքն պահած առեններս՝ պէտք է պաշտպանենք նաև գերդաստանի իրաւունքն, որպէս զի բնութեան վրայ հաստատուած այս ընտանութիւնն՝ պայմանագրական և դիպուածական ընտանութեանց մէջ չընկղմի, ինչպէս որ են պետութիւնները որոշող պարտքեր ունի կատարելու եթէ իբրև անդամ գերդաստանի և թէ իբրև անդամ ընկերութեան որով պետութիւնն կը կազմի։

§. Ա.

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՏՆԱԿԱՆ։ — Պարտք առ գերդաստան.

Մարդուս գերդաստանի մէջ ունեցած պարտուց ծանօթութիւնն՝ բնական իրաւանց այնպիսի պարզ ճանաչմանցն վրայ հաստատուած է, և այնչափ ընտանի է ամենուն, որ երկայն բացատրութիւններ հարկաւոր չենք սեպեր տալ աս նիւթոյս վրայ, այլ համառօտ կերպով մի մինակ չարենք։

Մարդս զերդաստանի մէջ որդի, այր, հայր, տէր կամ ծառայ է։

Իբրև որդի պարտական է իր ծնողացն սէր, յարգութիւն, հնազանդութիւն, եւ պահպանութիւն ընելու։

Իբրև այր պարտական է իր ամուսնոյն սէր, հաւատարմութիւն, հաճոյականութիւն և պաշտպանութիւն ընելու։ Այր մարդ անժխտելի առաւելութիւն և տիրութիւն ունենալուն՝ զերդաստանի մէջ իշխանութիւնն անոր ձեռքն է. բայց պէտք է որ այս իշխանութիւնն սիրելի ընէ, և իր ամուսնին իրեն իշխանութեանն հաղորդ ընէ՝ որչափ որ պատշաճ է։

Իբրև հայր իր որդւոց երեք տեսակ պատիւարութիւնն ալ տալու է, բնական, բարոյական և մտաւորական. և անհոգ չըլլայ բարի օրինակ տալու անոնց. ապա թէ ոչ օրինակն զիրարուն կաւրեն, և զերդաստանի մէջ բարոյական դաստիարակութիւն չմնար։

Մտաւորական ընդունակութեան զանազանութենէն և բաղդի արկածներէն և ուրիշ պարագաներէ առաջ կուգան մարդկանց մէջ պայմանաց անհաւասարութիւններն, և հետևապէս տիրական և ծառայական վիճակներն։ Այս զանազանութիւնս թէ և յաճախ կերևնայ զերդաստանաց մէջ սակայն անոր էական մասն չսեպուիր։ Տիրոջ առ ծառայն ունեցած

պարտքն է բարեպաշտութիւն, արդարութիւն, հոգեւոյն և մարմնոյն խնամք։ Իսկ ծառայն պարտի իր տիրոջն հաւատարմութիւն, աշխատասիրութիւն, խոհեմութիւն և յարգութիւն։

Դաստիարակաց և աշակերտաց իրարու ունեցած յարաբերութիւններն ալ ծնողաց և որդւոց պէս պէտք է ըլլայ, որովհետև վարպետք ալ հայրական իշխանութեան աւանդապահք և ներկայացուցիչք են. ապա հայրական և որդիական պարտուց հետևոյն են իրենց անդրադարձ պարտքերն ալ՝ բաց հարկաւոր զանազանութենէ։

§. Բ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ.

Քաղաքական ընկերութեան սահմանն է «Միաբանուիլն մարդկան ընդ միմեանս հասարակաց պետութեամբ»։ Քաղաքական կամ քաղաքային ընկերութիւն ըսելով կը հասկցուի քաղաքն և ազգն. այս զանազանութենէ մեամբ որ քաղաքին բառն մանաւանդ պէս կը գործածուի ցուցնելու՝ ինչ որ քաղքին կամ հասարակութեան կը վերաբերի. իսկ քաղաքականն գլխաւորապէս ընդհանուր ազգին վերաբերեալն կը նշանակէ։

Ա. Քաղաքական ընկերութեանց ծագումն. — Տարակոյս չկայ որ առաջին մարդն իր գերդաստանին վրայ իշխանութիւն ու-

նեցած է՝ անոր հայրն և գլուխն ըլլալով։ Իր տղաքն ալ նոյն իշխանութիւնն ունեյան իւրաքանչիւր գերդաստանաց վրայ, և այս գերդաստանք մանր ընկերութիւններ կազմեցին՝ որ առջի բերան իրենք գիրենք հոգալու չափ կարողութիւն ունէին։ Բայց քիչ առնէն այս անջատ գերդաստանք բաւական ուժ չունեցան՝ ոչ իրենք գիրենք ուրիշներու զրկանքէն պաշտպանելու, և ոչ կատաղի գազանաց դէմ դնելու. և պէտք իմացան միանալու և մէկ ընկերութիւն ձևանալու. ահա այս է քաղաքաց և թագաւորութեանց ծագումն։ Ամէնէն ղօրաւոր գերդաստանին գլուխն՝ բնականապէս գլուխ սեպուեցաւ նաև միացեալ գերդաստանաց, թագաւոր կամ ուրիշ համանիշ անունով մի. կամ թէ որ հասարակաց ապահովութեան համար միացած ընտանեաց մէջ մարդ մի կար խօսքով և գործով զօրաւոր, և բազմութեան վրայ մեծ ազդեցութիւն ընող, այս մարդս բնականապէս գործոյ գլուխ կըլլար. և յետոյ այն նորածին ընկերութեան անդամոց յայտնի կամ լռելեայն հաւանութեամբն նոյնն իրաւունք կը ստանար։ Մարդկանց չափին այս բնական յօժարութիւնն՝ որով կամաւորապէս տեղի կուտայ հզօրագունին՝ կը տեսնուի չատ անգամ մարդկանց իրարու հետ ունեցած առընչութեանց մէջ, նաև ընդհանրապէս ազգաց ընտրութեանց և պայմանադրու-

թեանց մէջ. յաճախ նաև տղայոց խաղերուն մէջ որոնք մեծի մի առաջնորդութեան կը հնազանդին։

Սոյն դիտողութեանցս ճշմարտութիւնն կը գտնենք ամէն ազգաց պատմութեանց մէջ որով հեռաւոր դարերու ատեն անհամար փոքր քաղաքական ընկերութիւններ ձևացած են ի թագաւորաց ղեկավարեալ։ Այս ժողովուրդներս առջի բերան սակաւաթիւ ըլլալով՝ կամաց կամաց չատցան թէ բնական ճամբով, և թէ նորանոր յաւելմամբ, աշխարհակալութեամբ և դաշնակցութեամբ, յորոց ծագեցին կայսերութիւնք մեծամեծք։ Եւրէն գերագոյն իշխանութիւնն մասնաւոր ձևեր առաւ. և թէպէտ սովորաբար յաջորդական էր, բայց երբեմն ալ ընտրականի փոխուեցաւ, և միապետութեանց յաջորդեցին հասարակապետական կառավարութիւնք. ինչպէս որ հին ատենուան ամէնէն անուանի Աթէնքի և Հռովմայ հասարակապետութիւնքն՝ առաջ միապետութիւնք էին։

Ե. Քաղաքական իշխանութեան զանազան ձևերն. — Քաղաքական իշխանութիւնն գլխաւոր երկու ձև կունենայ միապետական և հասարակապետական որուն մէջ ալ այլև այլ չափով կառաւելու ազնուապետական կամ ամբոխապետական տարրն։

Միապետութիւնն ընկերութիւն մի է յորում գերագոյն իշխանութիւնն մէկ հոգւոյ ձեռքն է՝ թագաւոր կամ կայսր անու-

նով. և կը զանազանի 'ի միապետութիւն
քաղաքական, ուր որ միապետին կամքն ևեթ
օրէնք է, ինչպէս 'ի բազում աշխարհս ա-
րևելից. և 'ի միապետութիւն չափաւորեալ,
ուր որ միապետին կամքն որոշեալ սահ-
ման մի ունի: Միապետութիւնն սովորա-
բար յաջորդական է, թէ և տեսանուած են
նաև միապետութիւնք ընտրականք, ինչ-
պէս էր 'ի Լեհաստան:

Հասարակապետութիւն կամ ազնուապե-
տական է և կամ ռամկապետական ըստ
որում երկու տարբերք մէկն աւելի շատ է
մէջն: Ազնուապետութիւն ընկերութիւն մի
է յորում իշխանութիւնն մասնաւոր զա-
տու մի ձեռքն է՝ որպէս ազնուականք կամ
իշխանք. այսպէս էր երկայն ատեն Վե-
նետկոյ հասարակապետութիւնն: Իսկ ռամ-
կապետութիւն ընկերութիւն մի է յորում
իշխանութիւնն ազգին ընդհանուր ժողով-
քին ձեռքն է, ինչպէս էին Աթենայ և հին
ատենի անուանի հասարակապետութիւն-
քըն: Կան հասարակապետութիւնք որ
դաշնակիցք կըսուին, որոնք շատ ուրիշ պե-
տութիւններէ կը ձևանան՝ դաշնակցու-
թեամբ իրարու հետ միացած. այս պետու-
թիւններս ամէն մէկն իր առանձին կառա-
վարութիւնն ունի, այլ դաշնակցութեան
ընդհանուր գործերն միատեղ խորհրդա-
կցութեամբ կըլլան. այսպէս է սահմանա-
դրութիւնն Հելուետիոյ կամ Շվիցերայի և
Միացեալ պետութեանց Ամերիկոյ: Այս

դաշնակցութեան ձևս միապետական պե-
տութենից ալ կը յարմարի՝ ինչպէս կերե-
ւի Գերմանական դաշնակցութեան վրայ։

Արդեօք պետութեան մի համար ամէ-
նէն լաւ սահմանադրութիւնն ո՞րն է։ Կի-
կերոն այսպէս կըսէ իր Յաղագս Հասա-
րակապետութեան գրոց մէջ. «Լաւագոյնն
՚ի քաղաքական սահմանադրութենից այն
է՝ որ զերեսին սկզբունս պետութեանն
զուգակշիռ միացեալ ունիցի, և որ իցէ
միանգամայն թագաւորական, ազնուա-
պետական և ժողովրդական... Ի Լակե-
դեմոն ՚ի Կարթագինէ և ՚ի Հռոմ՝ և սա-
կաւ խառնուածն երից ձևոցս, այլ ոչ բնաւ[1]
զուգակշռութիւն նոցին»։ Հիմակուան
պետութենց մէջ որ երևոյթական կամ սահմանադրական կըսուին՝ կը ջա-
նան այս զուգակշռութիւնս հաստատելու.
որոնց առջի օրինակն Անգլիա տուաւ.
Փրանկիոյ կառավարութիւնն ալ նոյնպէս
էր 1848 փետրուարի յեղափոխութենէն
առաջ, որուն յաջորդեց հասարակապե-
տութիւնն. քանի մի տարի ետքն միապե-
տութիւնն նորէն հաստատուեցաւ քուէ-
արկութեամբ ազգին՝ կայսրութեան անու-
նով։

Քաղաքական սահմանադրութենց յա-
րաբերական լաւութեան գալով՝ պէտք է
յիշել թէ կառավարութեան մէջ կատա-

[1] Գլուխ ը. թ. 23։

բեալն վինտռել չըլլար՝ այլ նուազ անկատարն . և գարճեալ իւրաքանչիւրն ալ ազգին ղէկ կը սեպուի՝ եթէ ազգին բնութեանն ու պիտոյից յարմարի . և շատ դժուար է որոշել թէ ո՛րն աւելի լաւ կը յարմարի ո՛րոշեալ ժամանակի մի մէջ այս կամ այն ազգին :

Գ. Գերագոյն իշխանութեան սկիզբն . — Գերագոյն իշխանութեան ինչ սկզբան վրայ հաստատուած ըլլալուն խնդիրն՝ այնպէս միացած է ընկերութեանց սահմանադրութեանն հետ՝ որ չենք կրնար բոլորովին զանց առնել և համառօտ ալ չբացատրել . բաւական սեպելով, ա . դնել այն առարկութիւնները որ կելլեն բացարձակ մտքով առնուած ժողովրդական իշխանութեան սկզբանն դէմ . բ . դնենք համառօտիւ թէ մենք գերագոյն իշխանութիւնն յորմէ հաստատեալ կարծեմք :

Ժողովրդեան իշխանութեանն բացարձակ սկզբան դէմ այս դժուարութիւնները կը դրուին .

Ա . Որովհետև այդ սկզբունքն կենթադրէ՝ թէ ամէն մարդ բնականապէս անկախ է՝ ապա նոյն սկզբան համաձայն օրինաւոր իշխանութիւն մի հաստատելու համար՝ անհատից հաւանութիւնն հարկաւոր է . և այս դիպուածիս մէջ մեծագոյն մասին հաւանութիւնն բաւական չէ . որովհետև անկախութիւնն յամենայն անհատս հաւասար ըլլալով, և

այն ենթադրութեան իշխանութիւնն ու-
րիշ բան չըլլալով բայց պարզ տուուչու-
թիւն մի անոնց կողմանէ որոնց վրայ պիտի
բանեցուի , ապա որոնք որ այն տուուչու-
թիւնն չեն ըրած՝ այն իշխանութիւնն ա-
նոնց վրայ չկրնար զօրել . իսկ արդ միա-
ձայն և ընդհանուր հաւանութիւն մի ան-
կարելի կրնանք ըսել . վասն զի , ա . ինչպէս
որոշելի է թէ ինչուան ո՛ր հասակն իշխա-
նութիւն մի կրնայ զօրել տղայոց վրայ ա-
ռանց բռնաբարութեան . և սուսել երբ
մտածենք թէ ոմանք ուրիշներէն առաջ ա-
զատութեան յարմար են : Դարձեալ ին-
չո՞ւ կանայք ալ հասարակաց իրաւանց
մասնակից պիտի չըլլան , որովհետև չատ
միապետական պետութեանց սովորու-
թեան համեմատ՝ թագաւորելու ևս յար-
մար են . բ . ամէն տեղ միթէ փորձն չ՚ցու-
ցըներ որ միշտ փոքրագոյն մաս մի կայ որ
տիրապետած է մեծագոյն մասին հպատա-
կել , և հետևապէս այս դիպուածիս մէջ
իր իրաւունքն կորսընցուցած և ընկճած կը
սեպուի : Եւ այս խորհրդածութիւնս աւե-
լի կը զօրանայ՝ եթէ դիտենք որ ժողովըր-
դական իշխանութեան դրութեամբն՝ որ և
իցէ համաձայն հաւանութիւն կամ դաչն
կարելի ևս ըլլայ՝ չկրնար ապագայ սե-
րունդն պարտաւորել , և իշխանութիւնն
թէ որ մեր դատաքննած սկզբան վրայ հաս-
տատուած է , պէտք է որ միշտ խնդրոյ և
վիճից ենթակայ ըլլայ :

ե. Բայց ենթադրելով ալ որ կարելի ըլլայ միաճայն և ընդհանուր հաւանութիւն մի ունենալ՝ արդեօք ժողովրդական իշխանութեան բացարձակ սկիզբն՝ անիշխանութեան սերմն չ՚բովանդակեր իր մէջն։ Եւ յիրաւի այս դրութեամբ ժողովուրդն կրնայ նաև առանց պատճառի իր դրած պետն փոխել. ինչպէս որ ըսաւ Ռուսսոյ իր Դաշն ընկերական գրոց մէջ[1]. «Գործադիր իշխանութեան աւանդապահներն՝ ժողովրդեան տէրերն չեն՝ այլ պաշտօնեայներն, զորս կրնայ հաստատել և փոխոխել որպէս և կամի»։ Եւ Ժիւրիէօ[2] թէ «Ժողովուրդն պատճառի կարօտ չէ իր գործերն վաւերացնելու համար»։ Արդ յայտնի չ՚երևնար որ այս հետևութիւններս ընկերութիւնն անիշխանութեան և քայքայման կը տանին։

Ահա ժողովրդական իշխանութեան բացարձակ դրութեան դէմ՝ ուղղամտութեան գլխաւոր դժուարութիւններն ասոնք են։ Հիմա չանանք բանաւոր բացատրութիւն մի տալու այն սկզբանն որուն վրայ յենած է ընկերական իշխանութիւնն։

Նախ և առաջ գիտնալու է որ չնորհաւոր քրէարկութիւն ըսուածն՝ թէ և պետութեան մի գլուխ ընտրելու համար ըլլայ՝

1 Գիրք գ. գլ. ժԸ։
2 Թուղթ ժԸ. Տես՝ի Պոսիւէ Եըրտրդ Ազգաբատութիւն առ Բողոքականս Թ. 49.

վերի բացատրուած մտքով ժողովրդական իշխանութիւն չենթադրեր: Սակայն ընդհանուր քուէարկութեամբ ազգն իրեն գլուխ մի կընտրէ՝ որուն ձեռքն կը յանձնէ իր անկախութեան մէկ մասն, և որուն հնազանդելու պարտական է Սահմանադրութեան մէջ որոշեալ սահմանաց և պայմանաց համեմատ: Ազգին և իշխանութեան մէջ փոխադարձ պարտաւորութիւն մի կայ՝ երկու դաշնադիր կողմանց ալ հաւասարապէս պարտաւորիչ, սակայն առանց՝ի բաց առնելոյ այն փոփոխութիւնները որ կրնան ըստ պատահմանց հարկաւոր ըլլալ:

Ա. Մարդկային ընկերութեան պետն կամ գլուխն՝ իշխանութեան առանձնահատկութիւններուն օրինաւորապէս հաստատուելէն ետև, ինչպէս որ բացատրեցինք Քաղաքական ընկերութենանց ծագմանն մէջ, և նոյն իշխանութիւնն փոխանցելու կարգաւորեալ միջոցներն որոշուելէն ետև, իշխանութեան իրաւունքներ կը ծագին՝ զորս մարդ չկրնար բռնաբարել՝ առանց՝ նախախնամութեան վճռոյ դէմ վնասելու և աստուածային կամաց դէմ պատերազմելու. վասն զի բանաւորութիւնն կը տեսնէ զմեզ հաւատալ՝ թէ Աստուած զմարդ ընկերութեան համար ստեղծած ըլլալով՝ հարկաւ ուզեր է որ ընկերական իշխանութեան էական պայմաններն պահուին՝ՙի խզճէ մարդկան, այն սկզբան համեմատ որ կըսէ. « Ով հաճի ընդ վախ-

ճանն՝ հաճի և ընդ միջնորդան »։ Այդ իշխանն այսու ևեթ կը զգենու իշխանութիւն մի՝ որուն սկիզբն աստուածային կամաց վրայ հաստատեալ է։ Իսկ արդ այս բնութեամբ սկիզբ մի յայտնապէս բաւական է ընկերական պետութեան իրական իշխանութիւն մի տալու՝ ամենևին անկախ մարդկային կրից և կարծեաց անհաստատութենէն. և նոյն սկիզբն զօրաւոր կերպով կը պատուիրէ ժողովրդոց գլխարգ և գնազանդութիւն առ իշխանն։

Ե. Թագաւորք և օրէնադիրք սովորաբար յանուն Աստուծոյ խօսեցան, և ժողովրդեան հնազանդութիւնն և հաւատարմութիւնն պահանջեցին՝ իբրև տեղապահք Աստուծոյ՝ որ մարդկային ազգի գերագոյն պետն է. որուն ապացոյցն է այս ճշմարտութեան ընդհանուր հաւանութեամբ ընդունուած ըսլալն եթէ « Ոչ ուստեք է իշխանութիւն եթէ ոչ յԱստուծոյ [1] »։

Նախընթաց խորհրդածութիւններէս կը հետևի թէ իշխանութեան ծագումն սկզբնապէս և հիմնապէս յԱստուծոյ կուգայ, այլ միջնորդութեամբ ազգակցութեանց մարդկան. Պօսիւէ ևս կըսէ [2] « Իշխանութիւն պետաց չէ այնպէս յԱստուծոյ՝ զի չիցէ միանգամայն և՝ ի հաւանութենէ ժողովրդոյ, զոր ոչ ոք ժխտէ »։

1 Առ հռոմ. ԺԳ. 1։

2 Պաշտպանութիւն յայտարարութեան գլուխ Դ. գլ. ԻԱ. (տպագիր Վէրսայլի հա. ԼՒ. էջ 85։

Գիտենք որ Պօսիւէ իր գրուածոց մէջ միշտ իշխանութեան նախանձաւոր պաշտպան կերևնայ. և իր կենցաղագիտութիւն հանելով՝ գրուածքին մէջ վերն յիշուած առաքելոյն խօսքն յիշելէնետև՝ կաւելցնէ. «Ձիք բնաւ ազգ իմն պետութեան և սահմանադրութիւն մարդկային՝ անմասն յանպատեհութեանց, այնպէս զի հարկ է կալ ճնալ՝ի պայմանին յոր երկրութեամբ ժամանակաց սովորեալ է ազգըն: Վասն որոյ և Աստուած ընդ խնամովք իւրովք կարգէ զամենայն պետութիւնս օրինաւորապէս սահմանեալս որով օրինակաւ և իցէ. և որ ոք դղրդել զնոյն հնարիցի՝ ոչ միայն ազգին, այլ և Աստուծոյ իսկ թշնամի զանձն յարդարէ [1]»:

Բայց արդեօք այս սկզբունքէս կը հետևի՞ թէ նոյն իսկ բռնաւորական իշխանութիւնն ճնշմունքէն ալ դուխս քաշել չըլլար: Նախ յիշենք Սրբոյն Թովմայի հռչակաւոր խօսքերն՝ որով իր կարծիքն կը բացատրէ. սուրբ վարդապետս տէրութեան դէմ նեղգաւորութիւնն ու ապստամբութիւնն ընդհանուր կերպով ծանր յանցանաց տեղ դնելէն ետքն՝ զոր աստուածաբանութիւնն մահացու մեղք կը կոչէ, այս դիտողութիւնս կընէ թէ բռնաւորական պետութիւն մի հասարակաց բարւոյ օգուտ մի ջնջի՝ այլ միայն բռնաւորին անձնական

1 Գլխ. 6. յօդ. 1. նախադաս 12:

զոհութեան, յետոյ կը յաւելու [1]. «Վասն որոյ վրդովել զայսպիսի պետութիւն ոչ ՚ի պատճառս խռովութեան է, բայց թերևս յայնժամ՝ յորժամ բռնաւորին պետութիւն այնպէս անկարգս վրդովիցի, զի հպատակելոյ ժողովրդեան առաւելագոյն հասցէ վնաս ՚ի խռովութենէն քան ՚ի բռնաւորին պետութենէն»: Յայտնի է որ այս տրուած լուծմունքն գործադրութեան մէջ շատ դժուարութիւններ ունի, և դիւրաւ զեղծմանց պատճառ կըլլայ: Վասն զի նախ գիտնալու է թէ ինչ է բռնաւորութիւնն, և թէ որո՛նք են զանիկայ վերցնելու ներեալ միջոցներն, և թէ ինչպէս գիտնալու է թէ գործածուած միջոցներն աւելի անկարգութեանց պատճառ պիտի չըլլան և աւելի չարիք պիտի չբերեն քան նոյն իսկ բռնաւորութիւնն: Վերջապէս պարզ խօսելով՝ եթէ կրօնական սկզբանց միտ գնենք և առջի դարերուն օրինակներն գիտենք՝ ապստամբութիւնն ոչ երբէք ներելի է. այս սկզբունքներս քանի մի տարի առաջ նորէն հրատարակուեցան ՚ի Ս. Գաւհէն ամենածանր պարագայից մէջ[2]:

Դասագրոցս չափն ու սահմանն չներեր՝ աւելի մանրամասն բացատրութիւններ տալ այս նիւթոյս վրայ:

1 Բովանդակ աստուածաբ. 2ն 2ր խնդիր 42 յօդուած 2:

2 Երջաբերական թղթ 1832:

Գլուխ ութերորդ.

Օրինաւորապէս սահմանեալ պետութիւն մի՝ հարկաւ ՚ի ներքս ածէ բնական իրաւունքներ՝ որուն կը համապատասխանեն պարտքեր՝ թէ ՚ի կողմանէ հպատակաց՝ նկատմամբ պետութեան, և թէ ՚ի կողմանէ պետութեան՝ նկատմամբ առ հպատակս: Առանց այս իրաւունքներս յարգելու և այս պարտքերս կատարելու՝ ընկերութեան մէջ չկրնար մնալ ոչ ազատութիւն և ոչ կարգ հասարակաց. այլ ընդհակառակն կը տիրէ անկարգութիւն և շփոթութիւն, հարստահարութիւն և անիշխանութիւն, որովհետև շահք և կիրք առանց կարգաց և սանձուց միշտ իրարու հետ պատերազմի մէջ կելլան:

Քաղաքական ընկերութեան տարերքն կամ անձինքն՝ տնական ընկերութեան կամ գերդաստանի անհատքն են, որոնցմէ մինակ կը ձևանայ օրինաւոր պետութիւն մի: Մէկ մտքով կրնայ ըսուիլ որ պետութիւնն կը բովանդակէ զազգ, զքաղաք և զգերդաստան. սակայն սովորաբար պետութիւն ըսելով կը հասկցուի ազգն ընդհանուրս առեալ և իւր կառավարութիւնն: Գերդաստանի պարտուց վրայ արդէն խօսեցանք՝ կը մնայ ըսել քանի մը խօսք քաղաքացւոյ և ազգայնոյ պարտուց վրայ:

Պարտք քաղաքացւոյ : Գաղաքն կամ հա-
ստատուրիւնն կը կազմի՛ ի պաշտօնեից և՛ ի
սուկականաց . կամ թէ ըսենք քաղաքացին
կրնայ ըլլալ մարդ հաստատակաց և մարդ
առանձինն : Պաշտօնեայն պէտք է պատուէ
և պատուել տայ զօրէնս . իսկ սուկականն
պէտք է յարգէ և հնազանդի իշխանու-
թեան ըստ սահմանի օրինաց :

Պարտք ազգայնոյ : Ազգն կը ճևանայ շիշ-
խտոյց և շիխնցկոց : Իշխողք պարտին
իշխեցելոց զարդարուքիւն, զապահովու-
թիւն , և զմիջոցս կատարելագործելոյ՛ ի
բարոյականին, ՛ի մտաւորականին և՛ ի բը-
նականին . որոնց վրայ աւելցնելու է բա-
րի օրինակն , ըստ բանից նախնի քերթո-
ղին « աշխարհս կրթի զհետ օրինակի թա-
գաւորաց[1] » . որ մեր օրերուն համար ևս
մեծաւ մասամբ ճշմարիտ է :


Իսկ պարտք իշխեցելոց առ իշխեցողս
սոքա են . ա . պատուել զիշխանն և ընդ-
հանրապէս զիշխանութիւն . բ . հնազան-
դել օրինաց և հպատակել սահմանադրու-
թեանց պետութեանն , միայն թէ յայտ-
նապէս արդարութեան դէմ չըլլան : Իսկ
երբ հրամանքն յայտնապէս անիրաւ ըլ-
լան՝ կրաւորական ընդդիմութիւն մի միայն
ընել՝ հրաժարելով՛ի գործելոյ՝ հիմնեալ՛ի
վերայ իրաւանց. օրինակի համար եթէ պե-
տութիւնն հրամայէ անմեղ մի սպաննել

1 Կլաւդիանոս Դ. Հիւպատ. Ոնոր. տող 299 :

կամ զրպարտել և այլն. գ. վերադասել հասարակաց բարին քան զբարին անձնական :

Ա.յս իշխողաց և իշխեցելոց զնոհանուր պարտքերն՝ գործադրութեան մէջ կը գանեն նախանին հասարակաց պաշտամանց բնութեան համեմատ. և իրաքանչիւր պաշտօնէից մանաւանդ պարտքեր առաջ կը բերեն, որպիսի են երեսփոխանաց, դատաւորաց, գաւառապետաց և զօրավարաց պարտքերն՝ իրենց իշխեցելոցն համեմատ։

Տնական և քաղաքական զնկերութեանց պարտքերն պէտք է ճիշդ զուգակշռութիւն մի ունենան և իրարու նեցուկ ըլլան. վասն զի եթէ զերդաստանաց երջանկութենէն և հանգստութենէն պետութիւնն կը յառաջանայ, պետութեան բարեկարգութիւնն ալ հարկաւոր է զերդաստանաց ապահովութեան համար : Ա.յլ և պէտք է որ ընտանեկան պարտքերն պետութեան պարտուց տակն ըլլան, նոյն իսկ զերդաստանին օգտին համար. վասն զի այս օրինաց զանցառութիւնն այնպիսի անկարգութիւններ կը յարուցանէ ընկերութեան մէջ, որոնց չար հետևանքն զերդաստանաց վրայ անկանի :



ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Աստուածաբանութիւն 7
Մասն Առաջին. — Յաղագս գոյութեան Աստուծոյ 11
Աստուծոյ գոյութեան բարոյական ապացոյցքն . . . . . »
Առաջին ապացոյց. — Միաձայն հաւանութիւն ազգաց 12
Երկրորդ ապացոյց. — Բնական օրէնք. . 26
Աստուծոյ գոյութեան բնական ապացոյցքն 27
Առաջին ապացոյց. — Ստեղծագործութենէ նիւթոյ . . . . . »
Երկրորդ ապացոյց. — կարևորութենէն առաջին շարժուոյ 31
Երրորդ ապացոյց. — Կարգ համապոյից . 35
Աստուծոյ գոյութեան բնաբանական ապացոյցքն. 48
Առաջին ապացոյց. — Էակ հարկաւոր . »

Երկրորդ տպացոյց. — Գաղափար կատա-
րեալ էակի 57
Աստուծոյ գոյութեան այլև այլա-
պացոյցերուն վրայ դիտելիք . . 59
Դրութիւն անաստուածութեան . 64
Մասն Երկրորդ. — Յաղագս գլխաւոր ատ-
րոգելեացն Աստուծոյ . . . 65
Յաւիտենականութիւն Աստուծոյ . 67
Պարզութիւն Աստուծոյ . . . 69
Միութիւն Աստուծոյ 70
Անսահմանութիւն Աստուծոյ . . 73
Ինքնիշխանութիւն Աստուծոյ . . 74
Անփոփոխութիւն Աստուծոյ . . »
Բարութիւն Աստուծոյ 75
Իմացականութիւն և գիտութիւն
Աստուծոյ 76
Կարողութիւն և ազատութիւն Աս-
տուծոյ 80
Նախախնամութիւն Աստուծոյ. . 81
Զուգընթացութիւն կամ օժանդա-
կութիւն Աստուծոյ՝ ի մարդկային
գործս 86
Յաղագս չարի 88
Բնական չարէ առաջ եկած առար-
կութեանց քննութիւն . . . 90
Բարոյական չարէ առաջ եկած ա-
ռարկութեանց քննութիւն. . 98

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ — *Նիւթ բարոյախօսութեան* 107

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ. — *Բարոյական ընդհանուր* . . 110

ՀԱՏՈՒԱԾ Ա. — *Հիմունք բարոյականի* . 111

§. Ա. *Յաղագս բարոյական խղճի* . . . »

Չանազանութիւն բարւոյ և չարի . 116

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. — *Բարին և չարն զանազանին հատանին* 121

Բարոյական խղճի բաժանումներն. 129

§. Բ. *Յաղագս բարոյական օրինաց* . . 130

Բարոյական պարտաւորութիւն սկզբանն վրայ 132

Բնական օրինաց վրայ 135

ՀԱՏՈՒԱԾ Բ. — *Չանազան պատճառք գործոց մերոց* 138

Մեր գործոց պատճառներուն համեմատութեամբ՝ իրարու ունեցած կարևորութեան վրայ . . 147

ՀԱՏՈՒԱԾ Գ. — *Վաւերացուցին բարոյականի* 152

Արդեանց և ապարդեանց, առաքինութեանց և մեղաց վրայ . . 153

Պատժոց և վարձուց վրայ . . . 155

Այս կեանց մէջ բարոյականի վաւերացման անբաւականութեանն . 160

ՀԱՏՈՒԱԾ Դ. — *Վախճան մարդոյ* . . 166

Ապացոյցք անմահութեան հոգւոյ . 168

Առաջին ապացոյց. — ի կատարելութենէ Աստուծոյ. 170
Երկրորդ ապացոյց. — ի միաձայն հաւանութենէ ազգաց 172
Երրորդ ապացոյց. — ի թերութենէ հաւատոյ անհերքնականութենէ արդի կենաց ընդ կարօտութենէ և ընդ բնական որամադրութենէ հոգւոյ մարդոյն 175
Չորրորդ ապացոյց. — ի կարևորութենէ վաւերացման բարոյականի . . 186
ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ. — Բարոյական մանաւանդ. Բաժանութեան պարտուց 191
ԳԼՈՒԽ Ա. — Պարտք մարդոյ առ Աստուած 192
Պաշտօն ներքին 193
Պաշտօն արտաքին 196
Պաշտօն հրապարակական . . . 198
ՅԱՒԵԼՈՒԱԾ. — Աստուածային յայտնութեան վրայ 200
ԳԼՈՒԽ Բ. — Պարտք մարդոյ առ անձն իւր 206
ՀԱՏՈՒԱԾ Ա. — Հոգւոյն վերաբերեալ պարտքեր . . . . . »
§. Ա. — Զգայողութեան վերաբերեալ պարտքեր 207
§. Բ. — Իմացողութեան վերաբերեալ պարտքեր 210
§. Գ. — Կամեցողութեան վերաբերեալ պարտքեր 214
ՀԱՏՈՒԱԾ Բ. — Մարմնոյն վերաբերեալ պարտքեր 216
ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. — Անհնազանդութենէն ազօրինաւոր է 218

ԳԼՈՒԽ Գ. — Պարտք մարդոյ առ նմա-
նէս իւր 224
ՀԱՏՈՒԱԾ Ա. — Պարտք մարդոյ ընդհա-
նուր 225
§. Ա. — Հատատական պարտքեր . . 226
§. Բ. — Աւրգեւական պարտքեր . . . 227
ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ. — ՄեծամարտուԹիւն
ապօրինաւոր է 230
Հիմն ստացման 234
Հիմն քաղաքային իրաւանց . . . 239
ՀԱՏՈՒԱԾ Բ. — Պարտք մարդոյ մասնա-
ւոր 241
§. Ա. — ԸնկերուԹիւն անական. – պարտք
առ գերդաստան 242
§. Բ. — ԸնկերուԹիւն քաղաքական . . 244
Պարտք առ տէրուԹիւն . . . 256

ԱԶԳ. ԴԱՐԱՆԱՅ ՓՐՈՏՈՊԵՏ
ՊՈՒՅԱՃԵԱՆՑ
ՀԱՅՈՑ ՎԱՆՔԻ
Ա. ՍՈՒՐԲ ԱՐԱԿԱՑ